

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՃՈՆ ՊԻՎԻՐ

ԷՏԻՍԸՆ ՊԻՎԻՐԻ ՀԵՏ

Թանկագի՛ն ընկեր,

Դուք Աստուծոյ ուրախութիւնն ու Անոր սրտի ցնծութիւնն էք: Ան կը փափաքի ճանչնալ ձեզ եւ ճանչցուիլ ձեզմէ: Իր հետ աւելի մտերմանալուն համար Աստուած հրաւիրած է ձեզ համագործակցութեան՝ տարածելու Երկնքի արքայութիւնը երկրի վրայ: Ինչպէս ըսաւ Պօղոս առաքեալը՝ Աստուած «նորովի ստեղծեց մեզ Յիսուս Քրիստոսի մէջ՝ կատարելու այն բարի գործերը, որոնք Ան նախապէս ծրագրած էր մեզի համար» (Եփես. 2.10 NLT):

Մենք Աստուծոյ զաւակներն ենք, եւ բոլորս ալ կը փափաքինք հաճեցնել մեր Հայրը: Այնուամենայնիւ, յաճախ մենք չենք նկատեր այն, ինչ Յիսուսը պարզօրէն ըսաւ: Երբ մտերմօրէն հաղորդակցութիւն կ'ունենանք Սուրբ Հոգիին հետ, մենք զօրութիւն կը ստանանք՝ Աստուծոյ ծրագիրները իրականացնելու համար: Աստուած չի ցանկար, որ դուք պարզապէս գործէք Իրեն համար. Ան կը հրաւիրէ ձեզ գործելու Ի՛ր հետ: Ան կը փափաքի ձեր լաւագոյն ընկերը ըլլալ, բաժնեկցիլ ձեր հետ ձեր կեանքի իւրաքանչիւր պահը: Ան կը ցանկայ խօսիլ ձեզի հետ, խրախուսել եւ զօրացնել ձեզ: Չկայ աւելի հիանալի մտերմութիւն, քան այն, որ Աստուած կ'առաջարկէ ձեզի Իր Հոգիին միջոցով:

Տէրը խօսեցաւ սրտիս՝ դրողելով փոխանցել այս ուղերձը ձեզի եւ ամբողջ աշխարհի տարածքին գտնուող ձեր ծառայակից հոգեւոր աւագներուն: Կը խնդրեմ, ընդունեցէ՛ք այս ուղերձը սիրոյս եւ ջօակցութեանս հետ: Փոխանցեցէ՛ք այս ուղերձը անոնց, որոնց որ կը ճանչնաք: Ես կը հաւատամ, որ ասիկա կը դառնայ աւելի խորունկ ու յարատեւ հաղորդակցութեան սկիզբ Աստուծոյ հետ թէ՛ ձեր եւ թէ՛ ձեր խմբակներու անդամներուն համար:

Եթէ դուք Աստուծոյ զաւակ էք, Սուրբ Հոգին խոստացած է, որ երբեք չի ձգեր եւ չի լքեր ձեզ: Անոր ընկերութիւնը ձրիաբար ձեզի կը պատկանի: Այս գիրքի էջերուն մէջ գրուած ճշմարտութիւնները վերափոխած են իմ կեանքը, եւ ես կ'աղօթեմ, որ դուք նոյնպէս վճռորոշ եւ շրջադարձային յայտնութիւն ստանաք ուսումնասիրելով այս ճշմարտութիւնները Աստուծոյ խօսքէն: Սրտանց կը փափաքիմ գիտնալ, թէ ինչպիսի ազդեցութիւն ձգեց այս ուղերձը ձեր կեանքին եւ այդ մարդոց կեանքերուն մէջ, որոնց մասին դուք հոգ կը տանիք:

Ձեր եղբայրը Քրիստոսի մէջ՝

Ճոն Պիվիը



Ճոն Պիվիը
JohnBevere@ymail.com



Messenger
International
MessengerInternational.org

ՍՈՒՐԲ ԶՈԳԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՃՈՆ ՊԻՎԻՐ

ԷՏԻՍԸՆ ՊԻՎԻՐԻ ՀԵՏ

The Holy Spirit: An Introduction by John Bevere, Armenian (Western)
© 2014 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English as The Holy Spirit: An Introduction
Additional resources in Armenian (Western) by John & Lisa Bevere are
available for free download at: www.CloudLibrary.org
To contact the author: JohnBevere@ymail.com

«Մուրբ Հոգի. Ներածութիւն», հեղինակ՝ Ճոն Պիվիթ, արեւմտահայերէն
լեզուով
© 2014 Messenger International
www.MessengerInternational.org
Սկզբնապէս հրատարակուած է անգլերէնով, «The Holy Spirit: An
Introduction» վերնագիրով
Կրնաք անվճար ներբեռնել Ճոն եւ Լիզա Պիվիթներու այլ հեղինակային
նիւթեր արեւմտահայերէն լեզուով հետեւեալ կայքէջին մէջ.
www.CloudLibrary.org
Հեղինակին հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այս փոխգործուն գիրքին մասին	5
Ներածություն՝ Էտիսըն Պիվիրի կողմէն	7
1. Ո՛վ է Սուրբ Հոգին	9
2. Սուրբ Հոգին անհատականությունը.....	47
3. Փոխյարաբերություններու երեք մակարդակ	87
4. Զօրացած՝ Հոգիով.....	123
5. Հոգիի լեզուն	165
Յաւելեալ գլուխ. Հարցումներ եւ պատասխաններ Ճոն եւ Լիզա Պիվիրներու հետ	209
Յաւելուած. Ինչպէս փրկութիւն ստանալ	235
Նշումներ	237

Այս փոխգործուն գիրքին մասին

Դուք կրնաք ընթերցել այս գիրքը սկիզբէն մինչեւ վերջ, ինչպէս նաեւ մնացած բոլոր գիրքերը: Այնուամենայնիւ, մենք կը քաջալերենք ձեզ՝ գործածելու յաւելեալ փոխգործուն մասերը՝ նիւթը աւելի խորապէս ընկալելու համար:

Այս գիրքի իրաքանչիւր գլուխ բաժնուած է հինգ ամէնօրեայ ընթերցանութեան բաժիններու, իսկ գլուխի վերջաւորութեան իրաքանչիւր բաժին համապատասխան սերտողութեան նիւթ ունի: Դուք մէկ օրուան ընթացքին կրնաք ընթերցել մէկական բաժին՝ սերտողութեան նիւթին հետ, կամ ուսումնասիրել ներկայացուած մասերը ըստ ձեր նախընտրութեան: Մենք կ'առաջարկենք, որ խմբային ուսուցման մասնակիցները մէկ գլուխի մէջ տեղադրուած ընթերցանութեան բաժինները եւ սերտողութեան նիւթերը մէկ շաբթուան ընթացքին աւարտեն:

Եթէ դուք այս գիրքը կ'ընթերցէք «Մեսէնճր Հաւաքածոյ» շարքի «Սուրբ Հոգի. Ներածութիւն» դասընթացքի շրջանակներուն մէջ, մենք կ'առաջարկենք ձեզ դիտել կամ լսել իրաքանչիւր շաբթուան ուսումնական տեսանիւթը եւ ողջ խումբով պատասխանել քննարկման հարցումներուն: Ասկէ ետք գիրքէն իրեն համապատասխանող գլուխը կարդացէք, ինչպէս նաեւ սերտողութեան նիւթերը: Այս գիրքի իրաքանչիւր գլուխը մէկ ուսումնական տեսանիւթ ունի: Իրաքանչիւր գլուխի քննարկման հարցումները ներկայացուած են ամէնօրեայ սերտողութեան նիւթերէն յետոյ:

Այս ամէնը ձեզի՛ համար է:

Ներածություն

Երբ հայրս առաջին անգամ խնդրեց, որ օգնեի իրեն՝ գրելու այս գիրքը, ես անմիջապես անվստահություն զգացի: Մտածեցի. «Հաւանաբար ան դեռ չէ աղօթած այս մասին»: Անկեղծ ըլլալու համար չէի կարծեր, որ արժանի թեկնածու մըն էի: Երբ կը մտածէի իր խնդրանքին մասին, ստամոքսիս մէջ լարուածութիւն կը զգայի, ինչպէս որ մէկ անգամ՝ պրէք տէնսի մրցոյթի ամենաթէժ պահուն:

Յարգանքով ինչ խնդրեցի՝ քանի մը այլընտրանքային տարբերակներ դիտարկել եւ ժամանակ յատկացնել՝ այդ հարցին շուրջ լրջօրէն աղօթելու համար (թերեւս մէկ կամ երկու տարի): Այնուամենայնիւ, միօրեայ աղօթքէ ետք ան վստահ էր, որ ես ամենայարմար թեկնածուն էի այդ առաջադրանքին համար: Հօրս համար կարելոր է, որ Սուրբ Հոգին «արգիլուած» չդառնայ ւելի երիտասարդ սերունդներու համար: Ես մօտաւորապէս քսանհինգ տարեկան եմ, եւ ան կ'արժեւորէ իմ ներդրումը այս գործին մէջ: Հայրս եւ ես գիտենք, որ շատերը՝ թէ՛ երիտասարդ, թէ՛ տարեց մարդիկ, պիտի խուսափին այս թեմայէն, եթէ չհասկնան, թէ ով է Սուրբ Հոգին, եւ Ան ինչպէս կը գործէ:

Այնպէս որ, թէւ մտավախութիւն ունէի, սակայն ինչպէս կրնայի մերժել ինչ խնդրանքը. ես ստիպուած էի համաձայնիլ:

Այն, ինչ որ տեղի ունեցաւ անկէ ետք, կը նմանէր ճամբորդութեան մը, որ ամբողջ կեանքս վերափոխեց: Ես սկսայ Աստուածաշունչը նոր լոյսով տեսնել, երբ Աստուած բացաւ իմ աչքերը՝ ցոյց տալով Իր Հոգիին բազմաթիւ սքանչելիքները: Շուտով հասկցայ, որ Սուրբ Հոգին ամենասխալ հասկցուած անձնաւորութիւններէն մէկն է եկեղեցիին մէջ: Յաւոք, Անոր մասին մարդիկ շատ սահմանափակ եւ կաղապարուած կարծիքներ ունին, բայց մեզմէ քիչերն են միայն, որոնք իրապէս կը ճանչնան Ձինք:

Այս գիրքը իւրօրինակ ճամբորդութիւն է Սուրբ գիրքով, որուն նպատակն է ւելի դիւրին դարձնել Սուրբ Հոգիի անձնաւորութեան ներկայացումը: Որոշ բաներ այս գիրքին մէջ կրնան դժուարիմաց թուալ, բայց ես կը խոստանամ, որ կ'արժէ ձեր ժամանակն ու ուժերը տրամադրել՝ այս ճանապարհորդութիւնը կատարելու համար:

Այս գիրքի էջերը կարդալու ատեն խնդրեցէք Սուրբ Հոգիէն, որ առաջնորդէ ձեզ ամբողջ այս ճշմարտութեան մէջ: Ան կը հեռացնէ բոլոր այն համոզումները, որոնք հիմնուած չեն Իր Խօսքի վրայ: Դուք կը յայտնաբերէք, որ Ան չի «պատկանիր» որեւէ մէկ յարանուանութեան կամ շարժման, եւ Անոր անկարելի է սահմանափակել որեւէ մէկ սերունդի կամ տարիքային խումբի պատկանող մարդոցմով: Ան ուղարկուած է՝ յայտնելու Յիսուսը եւ զօրացնելու Քրիստոսի Մարմինը: Ան բնակուած է մեր սրտերուն մէջ եւ խոստացած է գործածել մեր կեանքերը դէպի բարին: Միակ բանը, որ պէտք է ընենք՝ մեր կեանքերը Իր վերահսկողութեան յանձնելն է:

Անկարելի է գտնել աւելի լաւ ընկեր կամ գործընկեր: Սուրբ Հոգին հաւատարմօրէն ձեզի հետ կ'ըլլայ թէ՛ դժուար եւ թէ՛ ուրախ պահերուն ընթացքին: Ան խոստացած է երբեք չձգել եւ չլքել ձեզ, որովհետեւ դուք՝ Անոր Սիրոյ եւ ցնծութեան առարկան էք: Պատրաստուեցէք բացայայտելու զարմանալի Սուրբ Հոգին:

— Էտիսըն Պիվիր, «Մեսէնճր Ինթընեշընլ»ի
Գլխաւոր գործառնական տնօրէն

«Բոլորս կրնանք Հօր մօտ գալ նոյն Սուրբ Հոգիին միջոցով՝ շնորհիւ անոր, ինչ որ Քրիստոսը ըրաւ մեզի համար» (Եփեսացիս. 2.18, NLT):

Ո՞վ է Սուրբ Հոգին

Բայց Մխիթարիչը (Խորհրդականը, Օգնականը, Բարեխօսը, Դասրապաշտպանը, Զորացնողը, Կողքին եղողը)՝ Սուրբ Հոգին, Որուն Հայրս Իմ անունով պիտի դրկե (Իմ փոխարեն, Զիս ներկայացնելու եւ Իմ փոխարեն գործելու համար), Ան կը սորվեցնէ ձեզի բոլոր բաները: Եւ Ան այնպէս կ'ընէ, որ վերջիշէք (կը յիշեցնէ ձեզ, ձեր միտքը կը բերէ) այն ամէնը, ինչ որ Ես ձեզի ըսած եմ»:

— (Յովհաննէս.14.26 AMP)

Օր 1

Նոր տարուան նախորդող օրն էր: Մէջս աղօթելու եւ ծոմ պահելու մղում զգացի: Ես հարցուցի Տէրոջ.

- Աստուածաշունչի դ՛ր գիրքը պէտք է կարդամ:

Ի զարմանս ինձ, ես լսեցի.

- Գործք առաքելոց գիրքը:

Զարմանքիս պատճառը այն էր, որ նախորդ անգամ, երբ երկարատեւ ծոմապահութեան եւ աղօթքի կը պատրաստուէի, ես ստացայ ճիշդ նոյն հրահանգը՝ «Կարդա՛ Գործք առաքելոց գիրքը»: Նախորդ ծոմապահութեանս ընթացքին Պօղոս առաքելի կեանքին մէջ նպատակի եւ գործողութիւններու հակասութիւնը յայտնուեցաւ ինձի, թէ ինչի պատճառով ան շատ դժուարութիւններ կրեց: Առիթ տուէ՞ք բացատրել:

Պօղոսը Աստուծմէ՛ ընտրուեցաւ՝ Աւետարանը հեթանոսներուն քարոզելու համար: Ան ըսաւ. «...ես քարոզիչ եւ առաքեալ կարգուեցայ ու հեթանոսներուն վարդապետ» (Բ. Տիմոթէոս 1.11): Ասիկա յստակ, որոշակի հրահանգ է: Ան իր կեանքին ընթացքին քանի մը անգամ խօսեցաւ իր առաքելութեան մասին: Իր առաջին առաքելական ճանապարհորդութեան ժամանակ Պօղոսը յայտարարեց հրեաններուն. «...ահա մենք հեթանոսներուն կը դառնանք: Վասնզի Տէրը այսպէս պատուիրած է մեզի. «Քեզ հեթանոսներուն լոյս դրի...»» (Գործք առաքելոց 13.46-47): Իր երկրորդ ճանապարհորդութեան ընթացքին ան համարձակօրէն յայտարարեց. «...ասկէ յետոյ հեթանոսներուն պիտի երթամ» (Գործք առաքելոց 18.6): Ան հռո-

մէացիներուն գրեց. «...ես հեթանոսներուն առաքեալն եմ» (Հռովմայեցիս 11.13): Ան յարատեւ նման յայտարարութիւններ ըրած էր թուրթերուն մէջ:

Սակայն իր հրեայ ազգակիցներուն հանդէպ ունեցած իր մեծ սիրոյն մղումով եւ անոնց փրկութիւնը տեսնելու փափաքով՝ Պօղոսը գրեթէ իրաքանչիւր քաղաքի մէջ, որ կ'այցելէր, ժողովարաններ կը գտնէր: Ըստ իր սովորութեան, սկիզբը ան հրեաներուն հետ կը խօսէր, մինչեւ որ կարենար հեթանոսներուն հասնիլ. իրականութեան մէջ յաճախ հրեաներուն մերժումն էր, որ զինք դէպի հեթանոսները կը մղէր: Ինչպէս կը տեսնենք, հրեաները Պօղոսին ամենախիստ հալածանքներուն եւ ամենամեծ դժուարութիւններուն պատճառը դարձան: Անոնք խռովութիւններ յառաջացուցին հեթանոս բնակչութեան մէջ եւ թշնամութիւն ստեղծեցին առաքեալներուն եւ հեթանոս կառավարիչներուն միջեւ: Անոնց պառակտիչ ծրագիրները Պօղոսի դէմ կազմակերպուած խռովութիւններուն, անոր ձերբակալութիւններուն, ձեծերուն եւ նեղութիւններուն մեծ մասի պատճառը դարձան: Թոյլատրեցէք կարեւոր զգուշացում մը կատարել. Աստուած խորապէս կը հոգայ հրեաներուն մասին: Ահա թէ ինչու Յակոբոսը, Պետրոսը եւ Յովհաննէսը ուղարկուեցան անոնց քով. «Յակոբոսը, Պետրոսը եւ Յովհաննէսը, որոնք որպէս եկեղեցոյ սիւներ յայտնի էին... խրախուսեցին մեզ, որ շարունակենք քարոզել հեթանոսներուն, մինչ դեռ անոնք կը շարունակէին իրենց աշխատանքը հրեաներուն հետ» (Գաղատացիս. 2.9 NLT):

Նախորդ ծոմապահութեանս ժամանակ ես հետեւեալ ուղերձը ստացայ. «Որդիս, մնա՛ այն շնորհքի շրջանակներուն մէջ, որուն համար ես կանչած եմ քեզ: Մի՛ ձգեր, որ քու բնական զգացումները կամ սէրը ինչ որ բաներու հանդէպ հեռացնէ քեզ այն աստուածային յանձնառութիւններէն, որ ունիս»: Քանի որ ես շատ յստակ կը յիշէի այդ վերապրումը, ես զարմացայ, երբ Աստուած խնդրեց մէկ անգամ ես ամբողջութեամբ կարդալ Գործք առաքելոց գիրքը: Ի վերջոյ, ուրիշ վաթսունհինգ գիրքեր կային՝ ընտրութեան համար:

Ես այնքան ուրախ եմ, որ հնազանդեցայ. այս անգամ, Գործք առաքելոց գիրքը կարդալով, բոլորովին տարբեր բան նկատեցի (ինչ որ կ'ապացուցէ, թէ Աստուծոյ Խօսքը իսկապէս կենդանի է): Այս անգամ ես պարզօրէն տեսայ, թէ առաջին եկեղեցոյ առաջնորդներն ու անդամները ինչքան շատ կը յենուէին Սուրբ Հոգիին վրայ եւ կը համագործակցէին Իր հետ, ինչքան կախուած

էին Սուրբ Հոգիէն եւ ինչքան շատ կը խօսէին Իր մասին: Սուրբ Հոգին անոնց կեանքի կարեւորագոյն մասն էր. Ան ներգրաւուած էր եկեղեցւոյ առաջնորդներու եւ անդամներու բոլոր գործերուն մէջ: Ան մշտապէս բացառիկ տեղ կը զբաղեցնէր անոնց հասարակական ծառայութեան, հաւաքոյթներուն եւ խորհրդաժողովներուն մէջ. Ան յարատեւ ներգրաւուած էր անոնց գործունէութեան մէջ: Ահա շարք մը արտայայտութիւններ, որոնք ամբողջ ուշադրութիւնս գրաւեցին:

- «...ինչհո սատանան քու սիրտը լեցուց, որ դուն Սուրբ Հոգիին տուտ խօսիս» (Գործք առաքելոց 5.3):
- «...ինչ է, որ դուք միաբանեցաք՝ Տէրոջը Հոգին փորձելու» (Գործք առաքելոց 5.9):
- «Մենք այս բաներուն համար անոր վկաներն ենք, ու Սուրբ Հոգին ալ» (Գործք առաքելոց 5.32):
- «...դուք ամէն ատեն Սուրբ Հոգիին հակառակ կը կենաք» (Գործք առաքելոց 7. 51):
- «Հոգին ալ ինծի ըսաւ, որ անոնց հետ երթամ» (Գործք առաքելոց 11.12):
- «Անոնցմէ մէկը... իմացուց Հոգիին զօրութիւնովը, թէ մեծ սով մը պիտի ըլլայ» (Գործք առաքելոց 11.28):
- «...Սուրբ Հոգիէն դրկուած...» (Գործք առաքելոց 13.4):
- «Վասնզի աղէկ երեւցաւ Սուրբ Հոգիին ու մեզի ալ» (Գործք առաքելոց 15.28):
- «...Սուրբ Հոգին արգիլեց, որ Աստուծոյ Խօսքը Ասիայի մէջ խօսին» (Գործք առաքելոց 16.6):
- «...կը ջանային դէպի Բիթանիա երթալ, եւ Հոգին թող չտուաւ անոնց» (Գործք առաքելոց 16.7):
- «...Պօղոսին հոգին եռանդով վառուած ըլլալով՝ կը վկայէր...» (Գործք առաքելոց 18.5):
- «...երբ հաւատացիք, Սուրբ Հոգին առիք արդեօք» (Գործք առաքելոց 19.2):
- «Պօղոսը հարկադրուած կը զգար Սուրբ Հոգիէն՝ Մակեթոնիա երթալու» (Գործք առաքելոց 19.21, NLT):
- «Սուրբ Հոգին կ'ըսէ ինծի քաղաքէ՛ քաղաք...» (Գործք առաքելոց 20.23 NLT):
- «Ուրեմն զգուշացէ՛ք ձեր անձերուն եւ բոլոր հօտին համար, որուն մէջ Սուրբ Հոգին ձեզի վերակացունէր դրաւ» (Գործք առաքելոց 20.28):

Այսպիսի խօսքեր այս գիրքի էջերուն մէջ շարունակ աչքի կը զարնեն: Յաւալի իրականութիւնը անիկա է, որ մենք նոյն բաները ժամանակակից եկեղեցիին մէջ չենք տեսներ:

Այն, ինչ որ Գործք առաքելոց գիրքի հաւատացեալներուն համար սովորական էր, այսօր հազուագիւտ երեւոյթ դարձած է: Ես այլ մարդոց նկատի չունիմ. նախ եւ առաջ ես իմ մասին կը խօսիմ: Կարդալու ժամանակ կը գիտակցէի, որ յաճախ Աստուծոյ Հոգիի առաջնորդութենէն, ընկերակցութենէն, համագործակցութենէն եւ ազդեցութենէն կը հեռանայի. ես չէի վայելեր այս ամէնը, չէի ձգտեր այս ամէնուն եւ կախուած չէի այս ամէնէն: Երբ այս ճշմարտութիւնը ակնյայտ դարձաւ ինծի համար, ինչպէս կրնայի չբաժնեկցիլ ձեզի հետ:

Նախնական հաստատումներ

Թոյլ տուէք քանի մը նախնական հաստատումներ ընել, որոնք աւելի ու աւելի պարզ կը դառնան, երբ այս կարեւոր թեման շարունակենք.

Նախ, ըստ էութեան, չկայ քրիստոնէական կեանք՝ առանց Սուրբ Հոգիին:

- Առանց Սուրբ Հոգիին՝ քրիստոնէութիւնը չոր, միակտուր եւ ձանձրանալի է:
- Առանց Սուրբ Հոգիին՝ մեր գործերը հիւծիչ ու յոգնեցուցիչ են:
- Առանց Սուրբ Հոգիին՝ Աստուծոյ հետ հաղորդակցութիւն չկայ:

Հետազոյցէք Սուրբ Հոգին որեւէ մէկ եկեղեցիէ, եւ կը կատարուի այս երկուքէն մէկը.

- Եկեղեցին կը վերածուի հասարակական ակումբի:
- Եկեղեցին կը դառնայ կրօնական հաստատութիւն:

Ճշմարտութիւնը այն է, որ ...

- Առանց Սուրբ Հոգիին յայտնութիւն չկայ: Իրականութեան մէջ, առանց Սուրբ Հոգիին՝ Աստուածաշունչը մահաբեր կը դառնայ, որովհետեւ գրուած է. «...գիրը կը սպաննէ, բայց հոգին կ'ապրեցնէ» (Բ. Կորնթացիս 3.6):

- Չկայ տեսիլք՝ առանց Սուրբ Հոգիին:
- Չկայ ուրախություն՝ առանց Իրեն:
- Չկայ խաղաղություն՝ առանց Իրեն:
- Չկայ ազատություն՝ առանց Սուրբ Հոգիին:

«Տէրը՝ Հոգին է, եւ ուր որ Տէրոջը Հոգին է, այնտեղ ազատություն է»
(Բ. Կորնթացիս 3.17 NLT):

Ուշադրություն դարձուցէք «ուր որ Տէրոջ Հոգին է» արտայայտության: Եկէք մտածենք այս մասին: Աստուծոյ Հոգին ամենագոյ է՝ Ան ամէնուր է ամէն ժամանակ: Դաւիթ կ'ըսէ. «Ո՛ւր երթամ քու Հոգիէն եւ քու երեսէն ընդ փայտիցիմ» (Սաղմոս 139.7): Պատասխանը միանշանակ է՝ ոչ մէկ տեղ: Դաւիթ կը շարունակէ. «Եթէ Երկինք մագլցիմ, Դուն այնտեղ ես: Եթէ գետնի տակ իջնեմ, Դուն այնտեղ ես: Եթէ արշալոյսին թեւերով դէպի հեռաւոր արեւմտեան հորիզոնը թռչիմ, Դուն կը գտնէի զիս մէկ ականթարթի մէջ. Դուն արդէն այնտեղ կը սպասես զիս» (Սաղմոս 139.8-10, MSG): Պարզէն աւելի պարզ, որ Ան *ամէնուր* է ամէն ժամանակ:

Այս պարագային, մենք պէտք է յաջորդ հարցը տանք. «Արդե՞ծք *ամէնուր* ազատություն կայ»: Կրկին կարդացէք Պողոսին խօսքերը. «Ուր որ Տէրոջը Հոգին է, այնտեղ ազատություն է»: Մենք ապացուցեցինք, որ Ան *ամէնուր* է, այնպէս որ, կրկին՝ արդե՞ծք *ամէնուր* ազատություն կայ: Պատասխանը ակնյայտ է՝ ո՛չ: Չկայ ազատություն հասարակաց տուներուն, ճաշարաններուն, բանտերուն եւ հիւանդանոցներուն մէջ: Ես եղած եմ տարբեր թաղամասերու, դպրոցներու, ընտանիքներու եւ նոյնիսկ եկեղեցիներու մէջ, ուր ազատություն չկայ: Այդ պարագային, Աստուածաշունչը ինչ կը հոչակէ այս խօսքով: Ըստ ինձի, հետեւեալ խօսքը աւելի ճշգրիտ թարգմանություն է.

Ուր որ Հոգին *Տէր* է, այնտեղ ազատություն է:
(Բ. Կորնթացիս 3.17, հեղինակի բառափոխումը):

Յունարէնի մէջ «Տէր» բառը «կիրիոս»ն է: Անիկա կը սահմանուի որպէս «գերագոյն իշխանություն ունեցող»: Սուրբ Հոգիին առիթ չեն տար, որ իշխէ ճաշարաններու, բանտերու, հիւանդանոցներու կամ ընտանիքներու մեծամասնութեան մէջ, եւ նոյնիսկ բազմաթիւ եկեղեցիներու մէջ: Այնուամենայնիւ, դուք կրնաք ազատություն եւ արդարություն գտնել բոլորին համար այնտեղ, ուր որ Ան կ'ընդունուի որպէս գերագոյն իշխանություն ունեցող:

Այս ուղերձին նպատակը

Այս ուղերձին նպատակը՝ ծանօթացնել ձեզ Սուրբ Հոգիին հետ՝ որպէս *Անձնատրոփին*: Անոր մասին կարելի է հատորներ գրել: Անոր մասին կարելի է խօսիլ օրեր, ամիսներ, նոյնիսկ՝ տարիներ շարունակ:

Ես, աւելի քան երեսուն տարի է, որ ամուսնացած եմ կնոջս՝ Լիզային հետ: Հակառակ, որ զինք շատ լաւ կը ճանչնամ, ես տակաւին իր անհատականութեան, հետաքրքրութիւններուն, ցանկութիւններուն եւ վարուելակերպին մէջ այնպիսի կողմեր կը բացայատեմ, որոնց մասին բոլորովին չէի գիտեր: Վերջերս քանի մը օր միասին անցուցինք՝ տօնելով մեր ամուսնութեան երեսուներորդ տարեդարձը: Այս ընթացքին ես որոշ բաներ գիտցայ իր երազանքներուն, նախընտրութիւններուն եւ նոյնիսկ՝ կարողութիւններուն մասին, որոնցմէ բոլորովին անտեղեակ էի:

Ինչ կը վերաբերի Լիզային կարողութիւններուն, ես գաղափար նոյնիսկ չունէի, որ ան կոլֆ խաղալու մեծ տաղանդ ունի: Լիզան գիտէ, թէ որքան հաճելի է ինձի համար այդ մարզածելը, եւ ան առաջարկեց, որ միասին խաղանք գեղեցիկ կոլֆի դաշտի մը մէջ ինը փոսիկով, այսինքն՝ սկսելով դաշտի կէսէն: (Ես ընդամենը մէկ խաղ խաղցայ իր հետ, որովհետեւ մենք միասին որոշած էինք անցընել այդ ժամանակը): Եօթներորդ փոսիկը ձորին միւս կողմն էր: Կինս միշտ դժուար առաջարկներու սիրահար եղած է, այնպէս որ ես հարցուցի, թէ արդե՞օք ան կը փափաքէր գնդակը ձորին միւս կողմը անցընել: Գնդակը պէտք է թռչէր 140 մեթր՝ անցնելով 60 մեթր խորութիւն ունեցող ձորին վրայէն. եթէ հարուածը թոյլ ըլլար, գնդակը ովկիանոսին մէջ կ'իյնար: Ես Լիզային համար հին գնդակ մը գտայ (քանի որ չէի մտածեր, որ կրկին կը տեսնէ ատիկա): Ան նշանառութեան համար նախատեսուած հատուածին մէջ կեցաւ եւ այնպէս հարուածեց, որ գնդակը 160 մեթր թռաւ՝ իյնալով միւս կողմի փոսիկը շրջապատող խոտին վրայ: Ափսոս, այս նոր տաղանդը ամուսնութեան երեսուներորդ տարեդարձին միայն յայտնաբերուեցաւ:

Ամէն իրիկուն, ընթրիքի ժամանակ Լիզան կը բաժնեկցէր գիտութեամբ, իմաստութեամբ, հետաքրքրութիւններով եւ ձգտումներով, որոնց մասին նախկին օրերուն չէր պատմած ինձի: Կարճ ըսելով՝ ես երկիւղով համակուած էի իրմէ, թէ որքան խորութիւն

կայ այդ զարմանալի անձնաւորութեան մէջ, որուն ես իմ կինը կ'անուանեմ:

Քանի մը գլուխներով եւ նոյնիսկ բազմաթիւ հատորներով, անկարելի է պատմել այն ամէնը, ինչ ես գիտեմ Լիզային մասին: Ամէն պարագային, ես կրնամ ձեզի ըսել՝ ինչպէս ծանօթանալ եւ հաղորդակցիլ անոր հետ: Ես կրնամ պատմել, թէ ինչը հաճելի է անոր համար, ան ինչ հետաքրքրութիւններ ունի եւ ինչպէս կարելի է աշխատիլ եւ հաղորդակցիլ անոր հետ: Ես կրնամ պատմել ձեզի անոր ուժեղ եւ թոյլ կողմերուն մասին: Ես կրնամ պատմել, թէ ան ինչ կը սիրէ կամ ինչը բոլորովին չի հետաքրքրեր զինք: Այս ներածական գիտելիքը, որպէս հարթակ կը ծառայէ՝ անոր հետ մտերիմ յարաբերութիւն կառուցելու համար:

Եթէ Լիզային կեանքին մասին ամբողջովին պատմելը անկարելի է, որ ընդամէնը քանի մը տասնեակ տարիներ ապրած է, ինչպէ՛ս կրնամ նոյնիսկ փորձել ամբողջութեամբ պատմել ձեզի Սուրբ Հոգիին մասին, Որուն կեանքը յաւիտեանս յաւիտենից է: Պարզապէս ատիկա անկարելի է: Այնուամենայնիւ, ես կրնամ ներկայացնել ձեզի, թէ ով է Ան: Ես կրնամ պատմել ձեզի Իր անհատականութեան եւ հետաքրքրութիւններուն մասին, նաեւ այն մասին, թէ ինչ կը սիրէ Ան: Անոր հետ ես կրնամ սահմանել մեր փոխյարաբերութիւնները եւ ձեր հետ բաժնեկցիլ քանի մը միջոցներով, որոնցմով կարելի է Անոր հետ հաղորդակցիլ: Ես կրնամ պատմել, թէ մեր յարաբերութիւնը Սուրբ Հոգիին հետ որքան կարեւոր է, եւ թէ ինչպէս Ան կը զօրացնէ մեզ, որպէսզի կատարենք Աստուծոյ ցանկութիւնները մեզի համար: Այս հիմքային գիտելիքները կ'օգնեն ձեզ՝ հաղորդակցելու Անոր հետ անելի խոր եւ բովանդակալից կերպով:

Օր 2

Լուրջ թիրըմբոնում

Սխալ մը կայ, որ շատերը կը գործեն. մարդիկ կը փորձեն հասկնալ Սուրբ Հոգիին *գործելակերպը* եւ *զօրութիւնը*՝ առանց նախապէս ճանչնալու Ձինք՝ որպէս *Անձնաւորութիւն*:

Անսահման կարեւոր է, որ մեր սրտերուն եւ միտքերուն մէջ հե-

տեսեալը որոշենք. արդեօք մենք կը հաւատանք, որ Սուրբ Հոգին աստուածային Անձնաւորութիւն է եւ անսահմանօրէն սուրբ, իմաստուն եւ զօրաւոր է, բայց եւ հրաշալիօրէն մեղմ, զգայուն եւ գթասիրտ է: Արդեօք մենք կը հաւատանք, որ Ան արժանի է ընդունելու մեր երկիւղածութիւնը, համակրանքը, հաւատքը, սէրը եւ նուիրումը: Արդեօք կը հաւատանք, որ պէտք է ամբողջութեամբ անձնատուր ըլլալ Անոր: Թէ փոխարէնը մենք համոզուած ենք, որ Սուրբ Հոգին պարզապէս Աստուծմէ բխած ներգործութիւն է՝ ինչ որ աստուածային, առեղծուածային զօրութիւն: Թերեւս մենք միտքով կը զուգորդենք Անոր «առատածեռնութեան հոգի» կամ «մրցակցութեան հոգի» արտայայտութիւններէն յառաջացող պատկերացումներուն հետ:

Վերջին տեսանկիւնը մակերեսային է եւ ոչ հասուն: Ատիկա նոյնիսկ հերձուածութիւն է (ճշմարտութենէն շեղուած): Այս ձեւով հաւատալու պարագային, մենք դիրութեամբ առիթ կու տանք հոգեւոր գոռոզութեան եւ հպարտութեան, որոնց պատճառով կը սկսինք վարուիլ այնպէս, կարծես «քրիստոնէական վերնախաւի» ներկայացուցիչներ ենք:

Սակայն եթէ մենք նկատի ունենանք, որ Ան անսահման է Իր մեծութեամբ, փառքով, շուքով, իմաստութեամբ, գիտութեամբ, եւ սրբութեամբ ու եթէ մենք կը հաւատանք, որ Ան՝ որպէս Անձնաւորութիւն, կրնայ Հօր եւ Որդիին հետ միասին իշխել մեր կեանքին մէջ եւ գործածել ատիկա դէպի բարին, մենք երեսնիվայր, սուրբ երկիւղով կ'իյնանք Անոր առջեւ:

Այն մարդը, որուն կարծիքով Աստուծոյ Հոգին ներգործութիւն կամ գերագոյն զօրութիւն է, մշտապէս կ'ըսէ. «Ես կը փափաքիմ աւելի շատ ստանալ Հոգիէն»: Ի հակադրութիւն ասոր՝ այն մարդը, որ կը դիտարկէ Աստուծոյ Հոգին որպէս հրաշալի Անձնաւորութիւն, կ'ըսէ. «Ինչպէս կրնամ աւելի շատ նուիրուիլ եւ յանձնուիլ Անոր»:

Մեր պատկերացումը Անոր մասին

Պատճառներէն մէկը, թէ ինչու շատերը Աստուծոյ Հոգին կը պատկերացնեն որպէս զուտ ներգործուն ուժ, այլ ոչ թէ Անձ, այն է, թէ մարդիկ Անոր մասին ինչպէս կը խօսին: Դուք երբեք լսած էք, որ ինչ

որ մէկը Սուրբ Հոգիին հետ վարուի այնպէս, ինչպէս առարկայ մը: Ես արդէն երեսուն տարի է, որ կը ծառայեմ, եւ եթէ ինձի մէկական տոլար տային ամէն անգամուան համար, որ ես լսած եմ ինչ որ մէկուն, Սուրբ Հոգիին մասին խօսած ժամանակ՝ որպէս առարկայ, ես հարուստ մարդ կը դառնայի: Դժբախտաբար, մեզմէ շատ-շատերը չեն վայելեր Հոգիին ներկայութեան լիութիւնը, որովհետեւ մենք կը հրաժարինք պատուել Անոր՝ որպէս Անձնաւորութիւն: Աստուծոյ Հոգին չի դրսեւորուիր այնտեղ, ուր որ Անոր պատիւ չեն ցուցաբերեր (տե՛ս Մատթէոս 13.54-58 Սաղմոս 89.7):

Նշեմ, որ Սուրբ Հոգիին «Անձնաւորութիւն» անուանելով՝ ես չեմ ցանկար ըսել, որ Ան մարդկային բնութիւն ունի: Ես պարզապէս նկատի ունիմ, թէ Անոր յատուկ են այն յատկանիշները, որոնք անձնական կը համարուին: Սուրբ Հոգին Աստուածութիւն է, ոչ թէ մարդ: Բայց մենք պէտք է յիշենք, որ մարդիկ ստեղծուած են Աստուծոյ պատկերով: Այնպէս որ, ոչ թէ Ան մեզի նման է, այլ մենք Անոր նման ենք:

Մենք, այսինքն՝ եկեղեցին, որոշած ենք դիտարկել Զինք, որպէս «սուրբ էութիւն», ոչ թէ որպէս *Ամենասուրբ Անձնաւորութիւն*: Ան կը փափաքի մեր ամենամտերիմ ընկերը ըլլալ, սակայն մենք սահմանափակած ենք Անոր մասնակցութիւնը մեր կեանքին մէջ: Ցաւալի ճշմարտութիւնը այն է, որ մենք անփութօրէն մերժած ենք ամենաշատ բաւականութիւն պատճառող փոխյարաբերութիւնը, որ երբեւէ կրնանք ճաշակել:

Եկէ՛ք քննենք որոշ սուրբգրային հատուածներ, որոնք կատարելապէս կը նկարագրեն Սուրբ Հոգիին անհատականութիւնը.

- Ան միտք ունի (տե՛ս Հռովմայեցիս 8.27):
- Ան կամք ունի (տե՛ս Ա. Կորնթացիս 12.11):
- Ան զգացումներ ունի, օրինակ՝ սէր եւ ուրախութիւն (տե՛ս Հռովմայեցիս 15.30 եւ Գաղատացիս 5.22):
- Ան կը մխիթարէ (տե՛ս Գործք առաքելոց 9.31):
- Ան կը խօսի (տե՛ս Եբրայեցիս 3.7). ւաւելին՝ Ան պարզ կը խօսի (տե՛ս Ա.Տիմոթէոս 4.1):
- Ան կը սորվեցնէ (տե՛ս Ա. Կորնթացիս 2.13):
- Անոր կրնան տրտմեցնել (տե՛ս Եփեսացիս 4.30):
- Անոր կրնան նախատել (կամ՝ հայիոյել) (տե՛ս Եբրայեցիս 10.29):

- Անոր կրնան հակառակիլ (տե՛ս Գործք առաքելոց 7.51):
- Անոր կրնան ստել (տե՛ս Գործք առաքելոց 5.1-11):

Եթէ այս յատկանիշները ակնյայտօրէն ներկայացուած են Սուրբ գիրքին մէջ, մենք պէտք է հարցնենք. ինչո՞ւ մարդիկ այդքան սխալ պատկերացում ունին Սուրբ Հոգիին մասին:

Աղանի

Շատերը, մտածելով Սուրբ Հոգիին մասին, անմիջապէս աղանի կը պատկերացնեն: Ինչո՞ւ ասիկա առաջին համեմատութիւնն է, որուն յաճախ կը հանդիպինք: Արդե՞ծք Սուրբ Հոգին երբեք յայտնուած է աղանիի կերպարանքով: Պատասխանը միանշանակ է՝ ո՛չ: Բոլոր չորս Աւետարաններուն մէջ մենք կը կարդանք, որ Աստուծոյ Հոգին Յիսուսին վրայ իջաւ *աղանիի* պէս (տե՛ս Մատթէոս 3.16, Մարկոս 1.10, Ղուկաս 3.22, Յովհաննէս 1.32): Արդե՞ծք մենք սովորաբար չենք ըսեր. «ան կը վազէ քամիի պէս», կամ «ան ցուլի պէս ուժեղ է»: Եթէ ըսեմ, որ որդիս ցուլի պէս ուժեղ է, միթէ իմ խօսքերը կը նշանակեն, որ ան չորքոտանի կենդանի է: Անշուշտ ո՛չ: Նմանապէս, ըսել, որ Հոգին աղանիի պէս իջաւ, չի նշանակեր՝ ըսել, որ Ան աղանի է:

Ինչ որ մէկը կրնայ ըսել. «Բայց ճո՛ն, Ան ներկայացուած է որպէս բորբոքած կրակ Աստուծոյ գահին առջեւ (տե՛ս Յայտնութիւն 4.5): Այո, ճիշդ է, բայց Աստուածաշունչին մէջ նոյնպէս կ'ըսուի. «Տեսայ, թէ... երէցներուն մէջտեղ կայնած Գառնուկ մը կար, որպէս թէ մորթուած...» (Յայտնութիւն 5.6): Ահա թէ ինչպէս Յովհաննէսը կը նկարագրէ Յիսուսը: Մենք կասկած անգամ չունինք. Յիսուսը չորքոտանի կենդանի չէ: Միեւնոյն կերպով, Սուրբ Հոգին առեղծուածային կրակ չէ, որ Աստուծոյ գահին առջեւ կ'այրուի:

Այս պարագային, Ո՛վ է Սուրբ Հոգին

Աստուածաշունչին մէջ պարզօրէն կ'ըսուի, որ Սուրբ Հոգին Աստուածութեան երրորդ Անձն է: Ծննդոց 1.26-ին մէջ գրուած է. «Եւ Աստուած ըսաւ. *Մեր* պատկերով եւ *Մեր* նմանութեան պէս մարդ

շինենք...»: Ուշադրութիւն դարձուցէք, որ Աստուած չ'ըսէր. «մարդ շինեմ»: Արարչագործութեան ներկայացումը կը պահանջէր երեք առանձին Դերակատարներ, Որոնք երեք առանձին դերեր պիտի կատարէին. Աստուած կը խօսէր Իր մասին՝ Ինքզինք անուանելով Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի:

Եկէք կարդանք Գործք 10.38-ը՝ տեսնելու համար Հօրը, Որդին եւ Սուրբ Հոգին՝ որպէս առանձին Անձերու:

«Այն *Յիսուսը*, որ Նազարէթէն է, թէ ինչպէս *Աստուած* Անոր *Սուրբ Հոգիով* եւ զօրութիւնով օժեց, որ պտըտեցաւ բարիք ընելով ու սատանայէն բոլոր հարստահարուածները բժշկելով, քանզի Աստուած Անոր հետ էր»:

Այս խօսքին մէջ մենք կը տեսնենք, թէ ինչպէս *Հայրը* կ'օժէ *Յիսուսը Սուրբ Հոգիով*. մենք կը տեսնենք երեք առանձին Անձեր, Որոնք կը համագործակցին յանուն ընդհանուր մէկ նպատակի:

Դիտարկենք մէկ օրինակ եւս.

«Երբ *Յիսուս* մկրտուեցաւ, շուտ մը ջուրէն դուրս ելաւ, եւ ահա Երկինքը բացուեցաւ ու տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղաւնիի պէս կ'իջնէր ու կու գար Իր վրայ: Եւ ահա Երկինքէն ձայն մը եկաւ, որ կ'ըսէր. «Ասիկա է Իմ սիրելի Որդին, Որուն հաւաներ եմ»» (Մատթէոս 3.16-17):

Յիսուսի մկրտութեան նկարագրութեան մէջ դուք մէկ անգամ եւս կը նկատէք, թէ ինչպէս Աստուածութիւնը կը յայտնուի երեք առանձին Անձերով: Նախ՝ *Յիսուսը* մկրտուեցաւ Յովհաննէսին կողմէն, անկէ ետք *Աստուծոյ Հոգին* իջաւ Անոր վրայ, եւ, ի վերջոյ *Հայր Աստուած* Երկինքէն հռչակեց. «Ան Իմ սիրելի Որդին է, Որուն ես հաւաներ եմ»: Կրկին՝ Աստուածութեան երեք Անձերը համագործակցած են յանուն մէկ ընդհանուր նպատակի:

Թոյլ տուէք բերելու պարզ օրինակ մը, որ կ'օգնէ ձեզի նկարագրելու այս ճշմարտութիւնը: Ջուրը (H₂O) երեք տարբեր վիճակներ ունի: Կախուած ջերմաստիճանէն՝ H₂O-ն ամուր, հեղուկ կամ կազային վիճակի մէջ է: Ջուրը՝ որպէս նիւթ, բոլորովին չի փոխեր իր տարրական կառուցումը, բայց ջուրի դրսեւորումը կը փոխուի՝ կախուած միջավայրէն (ջերմաստիճանէն): Նոյն ձեւով, Աստուծոյ էութիւնը չի փոխուիր: Տեսնելով Որդին՝ դուք կը տեսնէք Հայրը. նոյնպէս, Հոգին ուղարկուեցաւ, որպէսզի մեզի Որդին յայտնէ (տես Յովհաննէս 17.21, Եփեսացիս 1.17-18): Աստուած մէկ է Իր

նպատակով. այնուամենայնիւ, Ան երեք արտայայտութիւն (Անձեր) ունի, Որոնք առանձին գործառոյթներ կը կատարեն: Թէեւ երեք Անձեր կան, կայ միայն մէկ Աստուած: Երկրորդ Օրինաց 6.4-ին մէջ գրուած է. «Լսէ՛, ի՛վ Իսրայէլ, մեր Եհովա Աստուածը՝ Եհովան մէկ է»: Հռովմայեցիս 3.30-ին մէջ գրուած է. «...մէկ Աստուած է, որ կ'արդարացնէ...»: Յակոբոս 2.19-ին մէջ նմանապէս գրուած է. «Դուն կը հաւատամս, թէ Աստուած մէկ է: Աղէկ կ'ընես»: Այս ճշմարտութիւնը այս գիրքի մնացեալ մասերուն անկիւնաքարն է. կան երեք առանձին Անձեր, բայց միայն՝ մէկ Աստուած:

Օր 3

Առաջին Անձնաւորութիւնը

Իրականութեան մէջ, Սուրբ Հոգին Աստուածութեան առաջին Անձն է, որ Սուրբ գիրքին մէջ կը յայտնուի: Ծննդոց 1.1-ին մէջ գրուած է. «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց»: Այժմ երկրորդ խօսքը կարդանք. «Երկիրը անձեւ ու պարապ էր, եւ անդունդին վրայ խաւար կար, ու Աստուծոյ Հոգին ջուրերու վրայ կը շարժէր»: Մենք Սուրբ Հոգին ճիշդ այստեղ կը տեսնենք՝ Ծննդոց 1.2-ին մէջ: Ան Աստուածութեան առաջին Անձն է Սուրբ գիրքին մէջ, որ Իր անունով կը նշուի:

Ինչ որ մէկը կրնայ հարցնել. «Բայց ճոն, առաջին խօսքին մէջ գրուած է՝ «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց»: Ինչպէ՛ս կրնաս ըսել, որ Սուրբ Հոգին Աստուածութեան առաջին Անձն է, Որուն մասին Սուրբ գիրքին մէջ գրուած է, եթէ առաջին խօսքին մէջ գրուած է Հայր Աստուծոյ մասին: Շատ լաւ հարցում է: Կը յիշէ՞ք, ըսաւ. «Մեր պատկերով... մարդ շինենք»: Առաջին խօսքին մէջ նշուած «Աստուած» բառը կը վերաբերի ընդհանուր Աստուածութեան, ոչ թէ Աստուածութեան առանձին Անձերէն մէկուն: Այդ պատճառով իսկ, Աստուածութեան առաջին Անձը, Որուն Աստուածաշունչին մէջ գործելու ատեն կը տեսնենք, Սուրբ Հոգին է: Երկրորդ խօսքին մէջ գրուած է. «Աստուծոյ Հոգին (Սուրբ Հոգին) ջուրերու վրայ կը շարժէր»: Վերադառնանք մեր սկզբնական հարցին. ի՛վ է Սուրբ

Հոգին: Ես կրնամ փաստել, որ Ան ամենէն զարմանալի, հրաշալի, բարի, մեղմ, զգայուն եւ զօրաւոր Անձն է այս երկրին վրայ: Թերեւս դուք պատասխանէք. «Ճո՛ն, այս երկրի վրայ»: Անշուշտ, այս երկրի վրայ: Մենք պէտք է հասկնանք, որ Հայրը այստեղ՝ երկրի վրայ չէ. Ան նստած է Իր գահին վրայ՝ Երկնքի մէջ: Նմանապէս, Յիսուս այստեղ՝ երկրի վրայ չէ: Ես միշտ կը լսեմ, թէ ինչպէս մարդիկ կ'ըսեն. «Յիսուս սրտիս մէջն է», սակայն Սուրբ գիրքը պարզօրէն ցոյց կու տայ, որ Ան նստած է Հօր աջ կողմը (տես Մարկոս 16.19): Գործք 1.9-11-ին մէջ գրուած է.

«Եւ երբ այս բաները ըսաւ, մինչ անոնք կը նայէին, համբարձաւ: Ամպ մը Զանիկա անոնց աչքէն ծածկեց: Երբ աչքերնին տնկած՝ դէպի Երկինք կը նայէին Անոր ետեւէն, ահա երկու ճերմակ հանդերձներով մարդիկ իրենց քով կայնեցան, որոնք ըսին. «Ո՛վ գալիլիացի մարդիկ, ինչո՞ւ կայներ դէպի Երկինքը կը նայիք. այս Յիսուսը, որ ձեզմէ Երկինք համբարձաւ, այսպէս պիտի գայ՝ ինչպէս տեսաք Անոր Երկինք երթալը»:

Այդ երկու մարդիկ, որոնք իրականութեան մէջ հրեշտակներ էին, պարզ յայտնեցին աշակերտներուն, որ Յիսուս նոյն ձեւով պիտի վերադառնայ, ինչպէս որ գնաց: Ան չի վերադառնար երկիր, մինչեւ իր գալուստը՝ ամպերու վրայ: Արդե՛ծք Յիսուս արդէն վերադարձած է ամպերու վրայ: Ակնյայտ է, որ ոչ: Ասիկա կը նշանակէ, որ ներկայիս Յիսուս դեռ Աստուծոյ աջ կողմն է՝ Երկնքի մէջ:

Յիշեցէք Ստեփանոսի քարկոծման պատմութիւնը: Գործք 7.55-56-ին մէջ գրուած է. «Իսկ անիկա, (Ստեփանոսը) Սուրբ Հոգիով լեցուած, Երկինք նայեցաւ եւ տեսաւ Աստուծոյ փառքը ու Յիսուսն ալ, որ Աստուծոյ աջ կողմը նստած էր եւ ըսաւ. «Ահա կը տեսնեմ Երկինքը բացուած, ու Որդին Մարդոյ՝ Աստուծոյ աջ կողմը կայնած»:

Փորձեցէք պատկերացնել Յիսուսը Իր ամբողջ փառքով՝ կեցած ի պատիւ Իր նահատակին՝ ակնկալելով այդ սրբազան պահը, որ պիտի յիշուէր սերունդներ շարունակ: Թէեւ այս հատուածը Յիսուսին հետ Ստեփանոսի փառաւոր վերամիաւորման մասին է, այս պատմութիւնը եւս մէկ անգամ կը յիշեցնէ այն անհերքելի ճշմարտութիւնը, որ Յիսուս ներկայիս Իր Հօր կողքին է:

Իրականութեան մէջ, արդէն մօտաւորապէս երկու հազար տարի է, որ Յիսուս Իր այս փառաւոր դիրքին մէջ կը գտնուի: Ան այստեղ՝ երկրի վրայ չէ: Ես գիտեմ՝ մեզի համար հաճելի է ըսել, որ Ան կը

բնակի մեր սրտերուն մէջ, սակայն իրականութեան մէջ Սուրբ Հոգին՝ Յիսուս Քրիստոսի Հոգին է, որ մեր սրտերը իր բնակութեան վայրը դարձուցած է:

Կարեւոր է, որ հասկնանք՝ Սուրբ Հոգին կը կոչուի թէ՛ Հայր Աստուծոյ Հոգի եւ թէ՛ Յիսուս Քրիստոսի (Որդիի) Հոգի: Դիտարկենք քանի մը օրինակ:

Փիլիպպեցիս 1.19-ին մէջ Պօղոս կը գրէ. «Քանզի գիտեմ, որ ասոր վախճանը իմ փրկութեանս համար պիտի ըլլայ ձեր աղօթքներով ու *Յիսուս Քրիստոսի Հոգիին* օգնութիւնովը»: Յիսուս շատ պարզ ըսաւ, որ Ինք պէտք է երթայ, որպէսզի Սուրբ Հոգին կարենայ գալ իր փոխարէն: Ակնյայտ է, որ այս խօսքին մէջ Պօղոս կը խօսի Սուրբ Հոգիին (Օգնականին) մասին, ոչ թէ մարմնաւորուած Յիսուսին, որովհետեւ Յիսուս այլեւս երկրի վրայ չէ:

Մատթէոս 10.20-ին մէջ Յիսուս կը հռչակէ. «Վասնզի ոչ թէ դուք էք, որ պիտի խօսիք, հապա ձեր *Հօրը Հոգին*, որ ձեր ներսիդին կը խօսի»: Յիսուս այն ժամանակուան մասին կը խօսէր, երբ իր աշակերտները Աւետարանին պատճառով կը հալածուէին եւ նեղութիւններու կ'ենթարկուէին: Հօր Հոգին (Սուրբ Հոգին) պիտի առաջնորդէր եւ ճիշդ խօսքեր պիտի տար իրենց:

Նոյնիսկ հիմա, երբեսկը գրեմ, այսգիրքի խօսքերը իմ գիտելիքներու կամ փորձառութեան արդիւնքը չեն: Իմ Հօր Հոգին է, որ իմ միջոցով կը սորվեցնէ: Ես փորձած եմ իմ ուժերով սորվեցնել. կը վստահեցնեմ ձեզի, այսպիսի փորձեր դատապարտուած են ձախողութեան: Անոր շնորհքով՝ Սուրբ Հոգիին զօրացման պատճառով է, որ ես այն եմ, ինչ եմ: Բարի լուրը այն է, որ Ան երբեք մինակ չի ձգեր ինձի. Ան միշտ օգնութեան եկած է: Երբ ես խոնարհութեամբ կը նուիրուիմ Շնորհքի Հոգիին (տես Եբրայեցիս 10.29), Ան հաւատարմօրէն կերպով կը զօրացնէ ինձի իմ տկարութիւններուն մէջ:

Ինչպէ՞ս կը գործեն Աստուծոյ Երեք Անձերը

Այս «երեքը՝ մէկի մէջ» հասկացողութիւնը կրնայ շատ դժուարըմբռնելի թուալ, քանի որ անիկա հակառակ է մեր մարդկային պատկերացման: Ա. Կորնթացիս 12.5-7-ը ցոյց կուտայ, թէ ինչպէս Երեքը կը գործեն՝ որպէս Մէկ:

«Նաեւ պաշտօնները զանազան են, բայց նոյն Տէրը կու տայ: Նոյնպէս ներգործութիւնները զանազան են, բայց նոյն Աստուածն է, որ կը ներգործէ ամէնքը ամէն բանի մէջ: Բայց ամէն մէկուն Հոգիին յայտնութիւնը տրուած է բոլորին շահուն համար»:
(Ա. Կորնթացիս 12.5-7)

Կարդալով այս հատուածը՝ մենք կը բացայայտենք, որ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին տարբեր պարտականութիւններ կը կատարեն: Հայրը կը ձեռնարկէ կամ կը նախաձեռնէ (խօսք 6), Որդին կը տնօրինէ (խօսք 5), իսկ Սուրբ Հոգին կը յայտնէ (խօսք 7). այնուամենայնիւ, Անոնք միասին կը գործեն՝ յանուն մէկ ընդհանուր նպատակի:

Եթէ մենք որոշենք տուն կառուցել, ինչ պէտք է ընենք: Մենք պէտք է ճարտարապետ, ընդհանուր աշխատանքի ղեկավար եւ շինարարներ վարձենք՝ տունը կառուցելու համար: Ըստ այս օրինակին՝ Հայր Աստուած ճարտարապետն է, Յիսուս՝ ընդհանուր աշխատանքին ղեկավարն է, իսկ Սուրբ Հոգին՝ շինարարները, որոնք տունը կը կառուցեն. Հոգին՝ արարչագործութիւնը «յայտնողն» է: Երեք դերերն ալ անսահման կարելոր են որեւէ տուն մը կառուցելու համար:

Աստուծոյ Մատր

Եկէք նոյն իրադարձութեան մասին սուրբգրային երկու նկարագրութիւն ուսումնասիրենք: Յիսուս դիտարար մը բժշկեց: Մարդիկ զարմացան, բայց փարիսեցիները մտածեցին. «Ան դեւերը կը հանէ սատրանային օգնութեամբ» (տես Մատթէոս 12.23-24): 28-րդ խօսքին մէջ գրուած է Յիսուսին պատասխանը՝ ուղղուած իրենց միտքերուն. «Բայց եթէ ես Աստուծոյ Հոգիովը կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ արքայութիւնը ձեր վրայ հասած է»:

Ղուկաս նոյնպէս կը յիշատակէ այս խօսքը, բայց անիկա քիչ մը կը տարբերի Մատթէոսի նկարագրութենէն: Ղուկաս 11.20-ին մէջ գրուած է. «Բայց եթէ ես Աստուծոյ մատովը կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ արքայութիւնը ձեր վրայ հասած է»: Եւ Ղուկասը, եւ Մատթէոսը կը խօսին Սուրբ Հոգիին մասին: Ղուկասը լուծումի

մը կը դիմէ, որ գրողները յաճախ կը կիրառեն. ան կը նկարագրէ այն գործառոյթը, որ յատուկ է Սուրբ Հոգիին՝ խօսելով Անոր Անձին մասին: Այստեղէն կրնանք եզրակացնել, որ Սուրբ Հոգիին կարելի է նկարագրել որպէս «Աստուծոյ մատը»:

Սուրբ Հոգիին գործառոյթը կարելի է նկարագրել ոչ միայն որպէս Աստուծոյ մատը, այլ նոյնպէս՝ *Աստուծոյ ձեռքը* եւ *Աստուծոյ բազուկը*: Սուրբ գիրքը կը յայտարարէ, որ Աստուած Իր ժողովուրդը ազատեց «Զօրեղ ձեռքով եւ տարածուած բազուկով» (Սաղմոս 136.12): Սաղմոս 8.3-ին մէջ գրուած է. «Երբ տեսնեմ Երկինքը՝ քու մարտերուդ գործը՝ լուսինն ու աստղերը, որոնք դուն հաստատեցիր...»: Հաւատացեալներուն մեծամասնութիւնը չի գիտակցիր, որ Սուրբ Հոգին աստղերն ու մոլորակները երկինքին մէջ տեղադրած է: Ան յայտնած է ամբողջ ստեղծագործութիւնը: Յիշեցէք՝ Ծննդոց 1.2-ին մէջ գրուած է. «Աստուծոյ Հոգին ջուրերուն վրայ կը շարժէր»: Ան կը սպասէր, որ Հայրը արարչագործութիւնը նախաձեռնէր: Որդին պէտք է տնօրինէր այն՝ խօսելով. «Թող լինի ըլլայ», որովհետեւ Յիսուս՝ Աստուծոյ Խօսքն է: Երբ «Թող լինի ըլլայ» արտայայտութիւնը հնչեց, Որդին՝ Հօր կամքը տնօրինեց, եւ Սուրբ Հոգին ստեղծեց այն, ինչ որ Որդին խօսեցաւ:

Սուրբ Հոգիին մեծութեան եւ փառքի մասին գրուած իմ ամենասիրելի հատուածներէն մէկը՝ Եսայեայ 40.12-15-ն է: Գրուած է.

«Ուրիշ Ո՞վ բռնած է ովկիանոսները Իր ափով: Ո՞վ չափած է երկինքները Իր մատներով: Ուրիշ Ո՞վ գիտէ երկրին կշիռը կամ կշռած է լեռներն ու բլուրները կշիռքներու վրայ: Ո՞վ կրնայ խորհուրդ տալ Տէրոջ Հոգիին: Ո՞վ բաւականաչափ գիտէ՝ Անոր խորհուրդ տալու կամ սորվեցնելու համար: Արդե՞ծք Տէրը որեւէ մէկ ատեն պէտք ունեցած է ունէ մէկուն խորհուրդը: Արդե՞ծք Ան հրահանգներու պէտք ունի այն մասին, թէ որ մէկն է բարին: Արդե՞ծք ինչ որ մէկը սորվեցուցած է Անոր, թէ որն է ճշմարիտը, կամ ցոյց տուած է Անոր արդարութեան ճամբան: Ո՛չ, որովհետեւ աշխարհի բոլոր ազգերը պարզապէս կաթիլ մըն են դոյլի մէջ: Անոնք կշիռքի մը վրայ փոշիէ մը աւելին չեն: Ան կը բարձրացնէ ամբողջ երկիրը, կարծես աւազահատիկ մը ըլլար: (Եսայեայ 40.12-15, NLT):

Տասներկրորդ խօսքին մէջ գրուած է. «Ո՞վ չափած է երկինքները Իր մատներով»: Դուք կրնաք տեսնել, որ Սուրբ Հոգին կը նկարագրուի այս գործառոյթով, որ յատուկ է միայն Իրեն: Մտածեցէք այս մասին.

Տէրոջ Հոգին ամբողջ ովկիանոսը Իր ափին մէջ պահած է: Արդե՞ծք կը տեսնէք, թէ որքան զօրատու է Ան: Եւ, այնուամենայնիւ, Ան խոնարհեցուցած է Իրեն ու համաձայնած է Հօր եւ Որդուն հետ՝ գալու եւ բնակելու մեր մէջ: Ինչպիսի գարմանալի ճշմարտութիւն. անիկա երկիւղածութեան ներշնչումն է:

Օր 4

Սուրբ Հոգին Աստուած է

Տեսնենք, թէ ինչպիսին էր Սուրբ Հոգիին դերը մարդու ստեղծման մէջ: Գրուած է. «Տէր Աստուած գետնին հողէն շինեց մարդը եւ անոր ռնգունքներէն կենդանութեան շունչ փչեց, ու մարդը կենդանի հոգի եղաւ» (Ծննդոց 2.7): Սուրբ Հոգին Ան է, որ իրականութեան մէջ «շինեց» Ադամը եւ կեանք փչեց անոր ռնգունքներուն մէջ: Ուրկէ՞ ես գիտեմ ասիկա: Յոբայ 33.4-ին մէջ գրուած է. «Զիս Աստուծոյ Հոգին ստեղծեց, ու Ամենակարողին շունչը ինծի կեանք տուաւ»: Սուրբ Հոգին ոչ միայն «շինեց» Ադամը եւ կեանք փչեց անոր ռնգունքներուն մէջ. Ան նոյնպէս «շինեց» մեզ եւ մեր մէջ կեանք փչեց: Սաղմոս 139.13-ին մէջ գրուած է. «Վասնզի Դուն ստեղծեցիր իմ երիկամունքները ու իմ մօրս որովայնին մէջ Դուն ինծի ծածկեցիր»: Իրականութեան մէջ Աստուծոյ Հոգին ստեղծած է այն ամէնը, ինչ որ մենք այժմ կը տեսնենք, որովհետեւ Առակաց 26.10-ին մէջ գրուած է. «Մեծ Աստուած, որ ստեղծեց ամէն ինչ...» (NKJV): Այն արարչագործութիւնը, որ մենք կը տեսնենք, ի յայտ եկաւ, որովհետեւ Սուրբ Հոգին Հօր ստեղծարար փափաքը իրագործեց:

Յոյսով եմ՝ այժմ ձեզի համար ակնյայտ է, թէ ով է Սուրբ Հոգին: Եկէ՛ք ուսումնասիրենք Անոր անուններէն քանի մը հատը, որոնք Աստուածաշունչին մէջ կը գործածուին:

- Սուրբ Հոգի (96 անգամ)
- Տէրոջ Հոգի (28 անգամ)
- Աստուծոյ Հոգի (26 անգամ)
- Յաւիտենական Հոգի (Եբրայեցիս 9.14)

- Օգնական (4 անգամ Յիսուսին կողմէն՝ Յովհաննէսի Աւետարանին մէջ)
- Մխիթարիչ (յաճախ կը գործածուի «էմփիլֆայտ» Աստուածաշունչին մէջ (AMP))
- Սուրբ (Սաղմոս 78.41)
- Տէր (Բ. Կորնթացիս 3.17)
- Ճշմարտութեան Հոգի (4 անգամ)
- Քրիստոսի Հոգի (Հռովմայեցիս 8.9, Ա. Պետրոս 1.11)
- Յիսուս Քրիստոսի Հոգի (Փիլիպպեցիս 1.19)
- Խորհուրդի Հոգի (Եսայեայ 11.2)
- Գիտութեան Հոգի (Եսայեայ 11.2)
- Զօրութեան Հոգի (Եսայեայ 11.2)
- Հանճարի Հոգի (Եսայեայ 11.2)
- Իմաստութեան Հոգի (Եսայեայ 11.2)
- Տէրոջ երկիւղի Հոգի (Եսայեայ 11.2)
- Ձեր Հօր Հոգին (Մատթէոս 10.20)
- Փառքի Հոգի (Ա. Պետրոս 4.14)
- Շնորհքի Հոգի (Զաքարեայ 12.10, Եբրայեցիս 10.29)
- Իրաւունքի Հոգի (Եսայեայ 4.4))
- Այրող Հոգի (Եսայեայ 4.4)
- Կեանքի Հոգի (Հռովմայեցիս 8.2)
- Սիրոյ Հոգի (Բ. Տիմոթէոս 1.7)
- Զօրութեան Հոգի (Բ. Տիմոթէոս 1.7)
- Զգաստութեան Հոգի (Բ. Տիմոթէոս 1.7)
- Մարգարէութեան Հոգի (Յայտնութիւն 19.10)
- Յայտնութեան Հոգի (Եփեսացիս 1.17)
- Սրբութեան Հոգի (Հռովմայեցիս 1.4)
- Սուրբ Աստուծոյ Հոգի (4 անգամ Դանիէլի գիրքին մէջ)

Ան արժանի է. Ան զօրաւոր է. Ան հրաշալի է:

Յիսուս բոլորովին կախուած էր Սուրբ Հոգիէն

Յիսուս բոլորովին Սուրբ Հոգիէն կախուած էր: Անոր ծնունդը Սուրբ Հոգիէն էր, Ան սորված էր Հոգիէն: Յորդանան գետին մօտ

Հոգին զօրացուց Ձինք, եւ նոյնիսկ մէկ հրաշք չգործեց, մինչեւ Հոգիով մկրտուիլը (տես Յովհաննէսի պատմութիւնը Յիսուսի գործած առաջին հրաշքին մասին, Գալիլիոյ Կանային մէջ. Յովհաննէս 1.29-34 եւ 2.1-11): Ան կ'առաջնորդուէր Հոգիով եւ միայն կը խօսէր այն, ինչ որ Հոգիէն կը լսէր:

Յովհաննէս 14.10-ին մէջ Յիսուս ըսաւ. «...այն բանը (կամ խօսքերը), որ Ես ձեզի կը խօսիմ, ո՛չ թէ Ինքնիրմէս կը խօսիմ, հապա *Հայրս*, որ *Իմ մէջ բնակած է*, Ան կը գործէ այդ գործերը»: Ուշադրութիւն դարձուցէք, որ Յիսուս չըսաւ. «Հայրը Երկինքին մէջ»: Ան ըսաւ. «Հայրը, որ Իմ մէջ բնակուած է»:

«Մէկ վայրկեան, Ճոն. կ'ուզեմ ըսել, որ Յիսուս Սուրբ Հոգիին Հայր կ'անուանէ»:

Լաւ, իսկ ինչո՞ւ ոչ: Ահա թէ ինչ ըսաւ Հրեշտակը Յովսէփին. «... մի'վախնար Մարիամը իբր կին առնելէ, վասնզի անոր ներսիդին ծնածը Սուրբ Հոգիէն է» (Մատթէոս 1.20, NLT): Յիսուսի ծնունդը Սուրբ Հոգիէն էր, այնպէս որ կարելի է հասկնալ, թէ ինչու Ան Սուրբ Հոգիին կ'անուանէր «Հայրը, որ Իմ մէջ բնակուած է»:

Իրականութեան մէջ, Յիսուսն ու Սուրբ Հոգին մշտապէս կը համագործակցէին Յիսուսի երկրային կեանքի ընթացքին: Յիսուս հետեւեալը ըսաւ. «Որդին Ինքնիրմէն բան մըն ալ չի կրնար ընել...» (Յովհաննէս 5.19, NLT): Եթէ անձամբ Յիսուսը՝ Աստուծոյ Որդին, պէտք ունէր մշտապէս համագործակցելու Սուրբ Հոգիին հետ՝ Իր առաքելութիւնը կատարելու համար, իսկ մենք որքան աւելի Հոգիին պէտքը ունինք, որպէսզի մեր առաքելութիւնները կատարենք:

Ոչ մէկը կը ճանչնայ Սուրբ Հոգին աւելի լաւ, քան Յիսուսը, այնպէս որ եկէք տեսնենք, թէ Յիսուս ինչ ըսաւ Սուրբ Հոգիին դերին, անձնաւորութեան, յատկանիշներուն, զօրութեան եւ այլ կարողութիւններուն մասին մեր կեանքին մէջ:

Յովհաննէս 14.15-18-ին մէջ Յիսուս կը հռչակէ.

«Եթէ Ձիս կը սիրէք, Իմ պատուիրաններս պահեցէք: Եւ Ես ալ Հօրը պիտի աղաչեմ եւ ուրիշ Մխիթարիչ մը(կամ՝ Օգնական) պիտի տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ բնակի: Ճշմարտութեան Հոգին, Որուն այս աշխարհը չի կրնար ընդունիլ, վասնզի չի տեսներ Անոր, եւ ոչ ալ կը ճանչնայ Անոր, բայց դուք կը ճանչնաք Անոր, որովհետեւ ձեր քով կը բնակի եւ ձեր մէջ պիտի ըլլայ: Ձեզ որք չեմ թողուր, կու գամ ձեզի»:

Այս հատուածին մէջ շատ գանձեր կան: Առաջինը՝ դուք նկատեցիք, որ Յիսուս ըսաւ. «Եթէ Ձիս կը սիրէք, Իմ պատուիրանները պահեցէք»: Հետաքրքրական է, որ նախքան Սուրբ Հոգին մասին խօսիլը, Յիսուս կը յիշեցնէ Իր գերագոյն իշխանութիւնը ճանչնալու մասին: Ան անսահմանօրէն կը կարելորէ մեր հնազանդութիւնը Իր պատուիրաններուն հանդէպ: Պետրոս կը հաստատէ այս ճշմարտութիւնը. «Մենք այս բաներուն համար Անոր վկաներն ենք, ու Սուրբ Հոգին ալ, որ *Աստուած Իրեն հնազանդ եղողներուն տրուաւ*» (Գործք 5.32): Աստուած Սուրբ Հոգին կու տայ անոնց, որոնք կը հնազանդին Իրեն:

Այժմ ուշադրութիւն դարձուցէք, թէ Յիսուս ինչ ըսաւ Յովհաննէս 14.16-ին մէջ. «Ես ես ալ Հօրը պիտի աղաչեմ, եւ ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ ձեզի»: Տեսնենք, թէ ինչ կը նշանակէ «ուրիշ» թարգմանուած յունարէն այդ բառը: Նոր կտակարանին մէջ երկու յունարէն բառեր կան, որոնք կը թարգմանուին «ուրիշ» բառով: Այս յունարէն բառերը «*հետերոս*»ն ու «*ալլոս*»ն են: «Հետերոս»ը կը նշանակէ «*մէկը ուրիշը՝ փարբեր տեսակի*», իսկ «ալլոս»ը՝ «*մէկ ուրիշը՝ նոյն տեսակի*»²: Հարցումը հետեւեալն է. այս բառերէն զոր մէկը Յիսուս օգտագործեց այս խօսքին մէջ:

Մինչեւ պատասխանելս, թոյլ տուէք բերելու օրինակ մը, որ այս երկու բառերուն միջեւ տարբերութիւնը ցոյց կու տայ: Պատկերացուցէք, որ ես որեւէ մէկ պտուղ կու տամ ձեզի, օրինակ՝ խնձոր: Երբ ուտէք անիկա, ես կը հարցնեմ ձեզի. «Մէկ ուրիշ պտուղ կը փափաքի՞ք»:

Եթէ դուք «այո» պատասխանէք, եւ նարինջ մը ստանաք ինձմէ, կը նշանակէ՝ ես «ուրիշ» պտուղ տուի ձեզի: Այնուամենայնիւ, ես տուի ձեզի *մէկ ուրիշը՝ փարբեր տեսակի*: Նարինջը նոյնպէս պտուղ է, բայց տարբեր է խնձորէն: Ասիկա «հետերոս» բառի օրինակն է:

Իսկ եթէ դուք խնդրէք ինձմէ ուրիշ պտուղ մը եւ երկրորդ խնձորը ստանաք, կրնաք ըսել, որ ես տուի ձեզի տուի *ուրիշը՝ նոյն տեսակի*: Ասիկա «ալլոս» բառին օրինակն է:

Վերադառնանք մեր հարցին: Երբ Յիսուս կ'ըսէ, որ Հայրը մեզի «ուրիշ» Մխիթարիչ կու տայ, զոր բառը Ան կը գործածէ: Ան կը գործածէ «ալլոս» բառը: Ան կ'ըսէ. «Հայրը ձեզի մէկ ուրիշ Մխիթարիչ կու տայ, որ ճիշդ Ինձի նման է»: Ուրիշ խօսքերով՝ Յիսուսը ի նկատի ունի, որ եւ Ինքը, եւ Սուրբ Հոգին նոյն տեսակի են:

Օր 5

Մեր Ընկերը ամբողջ կեանքի ընթացքին

Մէկ ուրիշ բառ, որ Յիսուս կը գործածէ Յովհաննէս 14.16-ին մէջ, Մխիթարիչ (կամ՝ Օգնական) բառն է: Յունարէնով «մխիթարիչ» բառը՝ «պարակլետոս»ն է: Յիսուս նոյնպէս «Պարակլետոս» կ'անուանուի Յովհաննէսի թուղթերուն մէջ. «Որդեակներս... Հօրը քով՝ Բարեխօս (Պարակլետոս) ունինք՝ Յիսուս Քրիստոս արդարը» (Ա. Յովհաննէս 2.1): Թէ՛ Յիսուսը, եւ թէ՛ Սուրբ Հոգին կը կատարեն օգնականի կամ «պարակլետոս»ի դերը: Ուրեմն, ինչ կը նշանակէ այս բառը: Նոր կտակարանի ժամանակներուն մէջ այս բառը կը գործածուէր՝ նկարագրելու համար դատապաշտպանը, որ կը պաշտպանէ ինչ որ մէկուն գործը³: Անիկա նոյնպէս կը գործածուէր՝ նկարագրելու համար անձնական խորհրդական մը, կամ խորհրդատու մը, որ կեանքի մէջ յաջողութեան հասնելու գաղտնիքը կը սորվեցնէ:

«Պարակլետոս»ը բաղադրեալ բառ է. անիկա բաղկացած է երկու յունարէն բառերէ՝ «պարա» եւ «կալիոյ»: «Պարա» կը նշանակէ՝ «շատ մօտ»⁴: Պօղոս այս բառը կը գործածէր՝ նկարագրելու համար իր փոխարաբերութիւնները Տիմոթէոսին հետ: Պօղոս առաքեալը Տիմոթէոսէն աւելի մտերիմ անձնաւորութիւն չունէր (տես Փիլիպպեցիս 2.20): Կինս՝ Լիզան, «պարա» է ինծի: Այս երկրին վրայ չկայ աւելի մտերիմ անձ մը ինծի, ինչպէս ինքը: Ուստի, ես այս բառը կը գործածեմ, որպէսզի նկարագրեմ իմ փոխարաբերութիւնը Լիզային հետ:

Երկրորդ յունարէն բառը՝ «կալիոյ»ն, կը նշանակէ՝ «ձեռքի շարժումով կանչել» կամ պարզապէս «կանչել»⁵: Այս բառը Սուրբ գիրքին մէջ յաճախ կը գործածուի, երբ առաքեալները կը նկարագրէին իրենց կոչումները: Օրինակ՝ երբ Պօղոս ըսաւ. «Ես կանչուած եմ, որպէս հեթանոսներու առաքեալ», ան յունարէն «կալիոյ» բառը գործածեց: «Կոչում» հասկացողութիւնը կը վերաբերի կեանքի ընթացքին եւ գործունէութեան:

Միացնելով այս երկու յունարէն բառերը՝ մենք շատ աւելի լաւ կը հասկնանք Յիսուսի խօսքերուն իմաստը: Ըստ էութեան, Ան կ'ըսէ, որ Սուրբ Հոգին մշտապէս կանչուած է՝ մեզմէ իւրաքանչիւրին կողքին կենալու համար, որպէսզի մեզի տայ խորհրդատուութիւն,

ցուցմունքներ, հրահանգներ եւ խրատներ ամբողջ կեանքի ընթացքին: Ասիկա Անոր կոչումը կամ յանձնառութիւնն է: Ան յաւիտեան մեզի հետ է, որպէսզի օգնէ, եւ Ան երբեք չի յոգնիր: Յիսուս ըսաւ, որ Սուրբ Հոգին յաւիտեան կը բնակի մեզի հետ (տես Յովհաննէս 14.16): Ան երբեք չի ձգեր եւ չի քեր մեզ: Ինչպիսի՞զարմանալի խոստում: Ըստ էութեան, Յիսուս կ'ըսէ, որ Սուրբ Հոգին պիտի շարունակէ Իր (Յիսուսին) աշխատանքը եւ առաքելութիւնը մեր կեանքերուն մէջ:

Յաճախ ես կը լսեմ, թէ ինչպէս մարդիկ կ'ըսեն. «Երանի՜ես կարենայի Յիսուսին հետ քալել. ես այնքան շատ հարցումներ կը հարցնէի Անոր»: Ինչո՞ւ այդ հարցումները Սուրբ Հոգիին չտալ: Ասիկա կարեւոր բնագաւառ մըն է, ուր մեր պատկերացումները Սուրբ Հոգիին մասին ակնյայտ կը դառնան: Եթէ մենք համարենք, որ Ան պարզապէս անորոշ էակ մըն է, մենք չենք մօտենար Անոր՝ որպէս մէկուն, որ կրնայ մեզի սորվեցնել եւ մեր խորհրդատուն ըլլալ: Սուրբ Հոգին Աստուածութիւն է, ոչ թէ անդէմ էակ: Եթէ մենք ճշմարտապէս կը հաւատանք, որ Ան այնպիսին է, ինչպիսին նկարագրուած է Խօսքին մէջ, մենք երկիւղածութեամբ կը մօտենանք Անոր՝ գիտակցելով, որ Ան ամենագէտ եւ ամենագոր է, որ Ան թէ՛ կը փափաքի, թէ՛ կրնայ սորվեցնել, օգնել եւ խորհուրդներ տալ մեզի: Այո՛, Ան կը փափաքի մտերմօրէն հաղորդակցելու մեզի հետ:

Յաւալի է, բայց Սուրբ Հոգին, հաւանաբար, ամէնէն անտեսուած Անձնաւորութիւնն է Եկեղեցիին մէջ: Քանի՜անգամ միասին հաւաքուած ենք, եւ Ան պատիւ չէ ստացած, եւ նոյնիսկ չէ յիշուած մեր կողմէն: Որքան յաճախ կը պատահի, որ ամբողջ օրուան ընթացքին մենք նոյնիսկ մէկ բառ չենք ըսեր Անոր, որ կանչուած է յաւիտեան մեզի հետ բնակելու եւ քալելու համար:

Զարմանալի արտայայտութիւն

Յիսուս աներեւակայելի բան մը ըսաւ Յովհաննէս 16.7-ին մէջ. «Բայց ես ճշմարիտը կ'ըսեմ ձեզի...»

Մինչեւ որ այս հատուածը շարունակենք կարդալ, թոյլ տուէք, որ պատկեր մը ձեւաւորեմ ձեր մտքին մէջ: Յիսուս կը խօսի Իր աշակերտներուն հետ: Երեք տարիէն աւելի է՝ Ան այս մարդոց հետ է: Այդ բոլորը, որ Յիսուս ըսած էր իրենց, կատարուած է: Ան ըսած է.

«Քամի՛, հանդարտի՛ր», եւ անիկա հանդարտած է: Ան ըսած է. «Դուք էջ մը պիտի գտնէք այսինչ վայրին մէջ», եւ այդպէս ալ պատահած է. ճիշդ այդ վայրին մէջ անոնք էջ կը գտնեն: Ան գիտէր, որ Իր աշխատակազմին մէջ դաւաճան կար՝ նոյնիսկ՝ այդ դաւաճանը որեւէ քայլ մը չձեռնարկած: Ան պատուիրեց թզենիին, որ չորնայ, եւ անիկա քսանչորս ժամուան ընթացքին չորցաւ: Այն ամէնը, ինչ Յիսուս ըսած էր, կատարուեցաւ, բայց չնայած ատոր՝ Ան ստիպուած էր Իր խօսքը նախորդելու «Բայց ես ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի» արտայայտութեամբ: Ըստ էութեան, Յիսուս աներեւակայելի բան մը պիտի ըսէր աշակերտներուն, այնպէս որ պէտք է վստահեցնէր անոնց, որ Իր ըսածը ճշմարտութիւն էր:

Այսպիսով, Յիսուս ինչ ըսաւ անոնց: «Բայց ես ճշմարտը կ'ըսեմ ձեզի. Աղէկ է ձեզի, եթէ ես երթամ. քանզի եթէ ես չերթամ, Մխիթարիչը (Պարակլետոսը) ձեզի չի գար. բայց եթէ երթամ, զԱնիկա ձեզի պիտի դրկեմ» (Յովհաննէս 16.7): «Նիու Լիվինկ» թարգմանութեան մէջ գրուած է. «Իմ երթալը՝ լաւագոյնն է ձեզի համար»:

Դուք ձեզ աշակերտներուն տեղը պատկերացուցէք: Ձեր առաջնորդը, ինչպէս որ գիտէք, Աստուծոյ Որդին է, հազիւ նոր ըսաւ, որ պէտք է ձգէ ձեզ, եւ որ Անոր հեռանալը ձեր օգտին համար է: Այդ խօսքերը անհեթեթ կը թուան ինծի: Եթէ Ան Աստուած է, արդե՞՞ծք ձեզի համար աւելի օգտաւէտ չէր ըլլար Անոր մնալը: Համոզուած եմ՝ աշակերտները նոյնը կը մտածէին: ճիշդ այս պատճառով, Յիսուս նախորդեց Իր խօսքը «Ես ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի» արտայայտութեամբ:

Ինչո՞ւ աշակերտներուն եւ հաւատացեալներուն գալիք սերունդներուն համար (որոնց կարգին կը սեպուինք նաեւ մենք) աւելի լաւ է, որ Յիսուսը երթար: Մտածեցէք այսպէս. եթէ Յիսուս երկրէն չհեռանար, Սուրբ Հոգին չէր գար՝ մեր կողքին ըլլալու համար: Այնպէս որ, եթէ ես փափաքէի Յիսուսէն որեւէ բան մը ստանալ, ես պէտք է հազարաւոր քիլոմետրեր անցնէի՝ պարզապէս Անոր հանդիպելու համար: Իմ ճամբորդութիւնը, հաւանաբար, թռիչքով կը սկսէր դէպի Թել Աւի (որը աշխարհի ամենածանրաբեռնուած օդակայանը կ'ըլլար): Ատկէ յետոյ ես պէտք է ինքնաշարժ մը վարձէի, երթայի Գալիլիա եւ յոյս ունենայի, որ պիտի կարենամ պատշաճ կացարան մը գտնել (բոլոր հիւրանոցները խճողուած կ'ըլլային): Յետոյ ես պէտք է փորձէի Յիսուսը գտնել, որ շատ դժուար պիտի չըլլար, որովհետեւ միլիոնաւոր մարդիկ պիտի սպասէին՝ Իր հետ խօսելու

համար: Չինք գտնելին ետք ես պետք է կարգի անցնեի ամենաբարդ համակարգով, որ երբեք մարդկության յայտնի չէ եղած, որովհետեւ բոլորը պիտի փափաքեին հարցումներ տալ Յիսուսին կամ որեւէ մէկ խնդրանքով դիմել Անոր:

Քանի որ շարքը խիստ երկար պիտի ըլլար, իմ հանդիպումը Յիսուսին հետ, հաւանաբար, ամենաշատը վաթսուն վայրկեանով պիտի սահմանափակուէր, այնպէս որ, ես պետք է նախապէս պատրաստէի իմ հարցումներն ու խնդրանքները: Եւ յիշեցէք՝ Ան պետք է քնանար եւ ուտէր, այնպէս որ, Ան, հաւանաբար, բազմութեան պետք է տասնչորս ժամ տրամադրէր: Այդ պարագային, Յիսուս օրական 840 մարդու հետ պիտի կարենար հանդիպիլ, այն պայմանով, որ 60 վայրկեան անցընէր իւրաքանչիւր անձի հետ: Այսպիսով, մէկ միլիոն մարդու հանդիպելու համար Յիսուսէն 1 190 օր (3.26 տարի) կը պահանջուէր: Բայց նկատի ունեցէք, որ շարքերուն մշտապէս նոր մարդիկ պիտի աւելնային... Իսկ ինչ պիտի կատարուէր, եթէ «հրատապ» շարք մը ըլլար անոնց համար, որոնք իսկապէս կարեւոր եւ հրատապ կարիքներ ու խնդրանքներ ունին: Այդ մարդիկ միշտ առջեւ կ'անցնէին, ճիշդ է: Կը կարծեմ՝ կարելի է ենթադրել, որ Յիսուսին հանդիպիլը գրեթէ անկարելի եւ անհաւանական պիտի ըլլար:

Բարի լուրը անիկա է, որ Սուրբ Հոգին միշտ հասանելի է մեզի համար: Ան քնանալու կամ ուտելու պետք չունի: Ան կրնայ միաժամանակ խօսիլ միլիառաւոր մարդոց հետ: Երբ մենք առիթ տանք, որ մեր պատկերացումը Սուրբ Հոգիին մասին հիմնովին Աստուծոյ խօսքով վերափոխուի, մենք կը սկսինք հասկնալ, թէ ինչու Յիսուս ըսաւ. «Լաւ է ձեզի համար, որ ես երթամ»:

Յիշեցէք, որ Սուրբ Հոգին ճիշդ Յիսուսի նման է: Ան Յիսուսին պէս կը սորվեցնէ, Ան կը բացայատէ աստուածային ճշմարտութիւնները Յիսուսին նման, եւ այժմ Ան մեզի հետ է: Արդեօք սկսա՞ք հասկնալ, թէ որքան զարմանալի է Ան: Նոյնիսկ հիմա, երբ ես այս տողերը կը գրեմ, Հոգին կը բանայ իմ աչքերը՝ ցոյց տալով, թէ ինչպէս ես սահմանափակած եմ Անոր ձայնն ու ներկայութիւնը կեանքիս մէջ: Կրկին Ան մեր առաջնորդը, խորհրդականը, պահապանը եւ խորհրդատուն է: Մեզի անհրաժեշտ է, որ Ան գործուն կերպով ներգրաւուած ըլլայ մեր կեանքերուն մէջ:

Յաջորդ գլուխին մէջ կը քննարկենք, թէ ինչ կը նշանակէ մտերիմ ըլլալ մեր զարմանալի Աստուծոյն հետ:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՆ. ՕՐ 1

ՃԱՄՉՑԷՔ ՀՈԳԻՆ

*«Ես կը խնդրեմ Հօրը, եւ Ան կու տայ ձեզի մէկ ուրիշ Միտիթարիչ
(Խորհրդական, Օգնական, Բարեխօս, Դատաւարացի, Գործակալ,
Զօրացնող, Կողքին եղող), որպէսզի Ան ձեզի հետ մնայ յաւիտեան՝
Ճշմարտութեան Հոգին...»:*

— Յովհաննէս 14.16-17, AMP

Սուրբ Հոգին իսկապէս զարմանալի է: Փրկութենէն յետոյ, որ Քրիստոսին միջոցով ստացանք, Ան լաւագոյն պարգեւն է, որ երբեւէ կրնանք ստանալ: Ո՞վ է Սուրբ Հոգին: Է. Ու. Թօզըրը, որ փորձառու գրող էր եւ հովիւ՝ մինչեւ իր կեանքին աւարտը, կը գրէ.

«Սուրբ Հոգին խանդավառութիւն չէ... Ան անձ է: Թող ասիկա տպաւորուի ձեր մէջ. Սուրբ Հոգին պարզապէս էակ մը չէ, որ գոյութեան մէկ ուրիշ ձեւ ունի. Ան անձ է՝ անձնաւորութեան բոլոր յատկանիշներով եւ ոնակութիւններով հանդերձ: Ան նիւթ չէ, բայց Ան նիւթականի հիմքն է... Սուրբ Հոգին ունի կամք, մտածողութիւն, զգացումներ, գիտելիք, գութ, կարողութիւն՝ սիրելու եւ տեսնելու, մտածելու եւ լսելու, խօսելու եւ փափաքելու՝ նոյն ձեւով, ինչպէս ռեւէ մէկ անձ»¹:

Ինչպէս կը պատկերացնէիք Սուրբ Հոգին՝ այս դասընթացքը չսկսած:

Այս գլուխը ինչպէս ընդարձակեց ձեր պատկերացումը այն մասին, թէ ով է Ան անձամբ ձեզի համար:

Ուշադրութեամբ խոկացէք Աստուածաշունչէն վերցուած Սուրբ Հոգիի անուններու ցուցակին շուրջ (էջ 25-26): Այս անունները ի՞նչ կը յայտնեն ձեզի Անոր մասին:

Աստուծոյ հետ առողջ փոխյարաբերութիւններ կառուցելու համար կենսականօրէն կարելոր է այն գիտելիքը, որ Սուրբ Հոգին՝ Հօրը եւ Որդիին հաւասար Անձ է: Թօզըրը կը շարունակէ...

«... Որդիին էութիւնը՝ Սուրբ Հոգիին էութիւնն է, եւ Հօր էութիւնը՝ նոյնպէս Սուրբ Հոգիին էութիւնն է, եւ Սուրբ Հոգին Իր Եկեղեցիին մէջ է: Ուրեմն, ինչպիսին կ'ըլլայ Ան: Ան միշտ Յիսուսին նման կ'ըլլայ: Դուք ձեր Նոր կտակարանին մէջ կարդացած էք, եւ գիտէք, թէ ինչպիսին է Յիսուսը. Սուրբ Հոգին Ճիշդ Յիսուսին նման է, որովհետեւ Յիսուս Աստուած է, եւ Սուրբ Հոգին Աստուած է, եւ Հայրը Ճիշդ Որդիին նման է: Եւ Դուք կրնաք գիտնալ ինչպիսին է Յիսուս՝ գիտնալով, թէ ինչպիսին է Հայրը, եւ դուք կրնաք գիտնալ, թէ ինչպիսին է Հոգին՝ իմանալով, թէ ինչպիսին է Յիսուսը»²:

Արդե՞ծք նոր ձեւով կը տեսնէք Սուրբ Հոգին: Արդե՞ծք Անոր բնաւորութեան տարբեր կողմերը կը քաջալերեն ձեզ եւ ցանկութիւն կը յառաջացնեն ձեր մէջ, որ Ան աւելի մեծ մասնակցութիւն ունենայ ձեր կեանքին մէջ:

Հետագայ ուսումնասիրութեան համար...
Յովհաննէս 12.44-45, 14.8-11, Բ. Կորնթացիս 4.4, Կողոսացիս 1.15-19, Եբրայեցիս 1.3

ԱՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ Է, ՈՉ ԹԷ ԱՆԴԷՄ ԷԱԿ

«Տէրը եւ Հոգին մէկ են եւ նոյնն են...»:

— (Բ. Կորնթացիս 3.17, CEV)

Որպէս Աստուծոյ գաւակ՝ ձեզի տրուած է Անոր սուղ, խոստացուած պարգեւը՝ Անոր Սուրբ Հոգին (տե՛ս Գաղատացիս 4.6): Անոր Հոգին պարզապէս առեղծուածային զօրութիւն կամ ուժ մը չէ, որ կը շարժի ամբողջ գալակտիկայով (արեգակնային համակարգով) մէկ: Անոր Սուրբ Հոգին՝ *հնքն է*, Իր էութեան ամբողջական լիութիւնը:

Էնտրու Սյուրին, որ տասնիններորդ դարի ծառայող եւ աւելի քան 200 գիրքի հեղինակ էր, կը գրէ, որ Սուրբ Հոգին «մէկ է Հօր եւ Որդիին հետ», եւ Ան կու տայ Աստուծոյ փառքի «ամբողջական եւ կատարեալ յայտնութիւնը»: Ան կը շարունակէ.

«Այժմ **Սուրբ Հոգին** պէտք է մերը դարձնէ այն ամէնը, ինչ որ Աստուած խոստացած էր Հին Ուխտին մէջ, եւ այն ամէնը աստուծային շնորհքէն, որ յայտնուեցաւ եւ մօտեցաւ մեզի Յիսուսի մէջ: *Անոր միջոցով Աստուծոյ բոլոր խոստումները կ'իրականան, ամբողջ շնորհքը եւ փրկութիւնը Քրիստոսի մէջ կը դառնայ մեր անձնական սեփականութիւնը եւ վերապրումը*»:³

Դուք հասկցմք ասիկա: Աուրբ Հոգիին միջոցով Աստուծոյ բոլոր խոստումները կ'իրականանան եւ կը դառնան մեր անձնական սեփականութիւնն ու վերապրումը: Ասիկա պարզապէս մարդկային կարծիք չէ, այլ՝ սուրբգրային ճշմարտութիւն: Ուշադրութեամբ կարդացէք այս խօսքերը եւ խոկացէք ասոնց շուրջ:

«Թող Օրհնութիւնը (փառաբանութիւնն ու գոհութիւնը) ըլլայ Աստուծոյն եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին (Մեսիային) Հօրը, որ մեզ օրհնեց Քրիստոսով *ամէն հոգեւոր* (Սուրբ Հոգիին կողմէն տրուած) օրհնութիւններով երկնային թագաւորութեան մէջ:

— (Եփեսացիս 1.3, AMP)

«Այն ամէնը, ինչը կը վերաբերի կեանքին եւ Աստուծոյ հաճեցնելուն, հրաշքով տրուած է մեզի՝ Աստուծոյ մօտ մեզ Հրաւիրողին [Սուրբ Հոգիին] անձամբ եւ մտերմօրէն ճանչնալու միջոցով: Ասիկա լաւագոյն հրաւերն է, որ մենք երբեւէ ստացած ենք»:

— (Բ. Պետրոս 1.3, MSG)
{Բառերը քառակուսի փակագիծերուն մէջ
աւելցուած են յստակ ըլլալու համար}

«Բայց ինչպէս գրուած է. «Աչքը չէ տեսած, ո՛չ ալ ականջը լսած է, ո՛չ ալ մարդու սիրտը մտած են այն բաները, որ Աստուած պատրաստած է Զինք սիրողներուն համար: Բայց Աստուած, *Հոգիի միջոցով*, թոյլ տուած է, որ մենք իմանանք Իր գաղտնիքը: Որովհետեւ Հոգիէն ոչ մէկ բան պահուած է, նոյնիսկ Աստուծոյ խոր իմաստութիւնը»:

— (Ա. Կորնթացիս 2.9-10, J.B Philips)

Սուրբ Հոգին ի՞նչ կը յայտնէ ձեզի այս խօսքերուն միջոցով:

Արդե՞ծք դուք կը սահմանափակէք Սուրբ Հոգիին ներկայութիւնն ու զօրութիւնը ձեր կեանքին մէջ այն պատկերացումներուն պատճառով, որ ունիք Անոր մասին: *Կեցէք եւ աղօթեցէք*: Խնդրեցէք Անոր, որ ցոյց տայ ձեզի, թէ ի՞նչ պարագային ունիք Անոր օգնութեան կարիքը՝ այդ պատկերացումները փոխելու համար: Գրեցէք այն, ինչ որ Ան կը յայտնէ:

Հետագայ ուսումնասիրութեան համար...
Օգտագործեցէք աստուածաշնչեան խօսքերու համացանցային փնտռողի միջոցներ (օրինակ՝ biblia.com կայքէջը)՝ գտնելու համար «Հոգիով», «Հոգիի միջոցով» եւ «Հոգիէն» բառեր պարունակող աստուածաշնչեան խօսքեր: Նոյնպէս, կարդացէք հետեւեալ հատուածները.
Ա. Կորնթացիս 12.4-11, Գաղատացիս 5.5, Բ. Թեսաղոնիկեցիս 2.13:

ՍԵՐՍՈՂՈՒԹԻՆ. ՕՐ 3

ԱՆ ԿԵԱՆՔԻ ՀՈԳԻՆ Է

«Քանզի Քրիստոս Յիսուսով կեանքի Հոգիին օրէնքը զիս ազատեց
մեղքի եւ մահուան օրէնքէն»:

— (Հռովմայեցիս 8.2)

Սուրբ Հոգին կեանքի Հոգին է: Ինչպիսի՜ անուն. մտածեցէ՛ք այս մասին: Կեանքը *ամէն ինչ է*. անիկա կ'ընդգրկէ առողջութիւնը, աճը, թարմութիւնը, ուժը, եռանդը եւ աշխուժութիւնը: Կեանքի Հոգիին մէջ մահուան ոչ մէկ շուք կայ՝ հիւանդութիւն կամ տկարութիւն, յոգնութիւն կամ թուլութիւն, լճացում կամ քայքայում. Անոր մէջ մահուան ոչ մէկ դրսեւորում կայ:

Կեանքի Հոգին արարչագործութեան պահուն ներկայ էր. Ան աշխարհով մէկ կեանք կը փչէր: Միջազգային միսիոներ եւ աւետարանիչ **Լէսթըր Սամրալը** այս միտքը կը հաստատէ՝ գրելով.

«Առաջին հատուածը Աստուծոյ գրուած Խօսքին մէջ, ուր կը տեսնենք Սուրբ Հոգիին գործունէութիւնը, Ծննդոց 1.2-ն է: Ուշագրաւ է, որ Աստուածաշունչի առաջին էջը եւ երկրորդ խօսքը ցոյց կու տան Սուրբ Հոգիին գործունէութիւնը... Ան դուրս հանեց տիեզերքը, գեղեցկութիւնը եւ սքանչելիքները քառուէն: Երկիրը անձեւ ու դատարկ էր: Աստուած կ'իրագործէր Իր ստեղծագործութեան գլուխգործոցը, եւ Սուրբ Հոգին շարժեցա՝ Անոր օգնելու համար: Աստուծոյ Հոգին շարժեցաւ ջուրերու վրայ, եւ *տիեզերքը* քառուէն յառաջացաւ»⁴:

Ձեր կեանքի զոր բնագաւառներուն մէջ դատարկութիւն կամ քառս կը զգաք: Ո՞ր կարիք ունիք, որ Սուրբ Հոգին *գեղեցկութիւն, կարգ ու կանոն եւ ազատութիւն* բերէ: Աղօթեցէ՛ք ու խնդրեցէ՛ք Անոր, որ ցոյց տայ ձեզի այդ բնագաւառները: Աղօթքի միջոցով անոնք Սուրբ Հոգիին յանձնեցէ՛ք՝ խնդրելով Անոր, որ շարժի այդ բնագաւառներուն մէջ եւ կարգ ու կանոն բերէ արարչագործութեան ժամանակուան պէս:

Կարդացէ՛ք Փիլիպպեցիս 4.6-8, Ա. Պետրոս 5.7, Սաղմոս 37.4-6

Արդե՛ծք թուլցած էք ձեր զբաղուածութեան կամ ապրելակերպին պատճառով: Կեանքի Հոգին կը փափաքի զօրացնել ձեզ Իր կարողութեամբ: Երբ ժամանակ անցընէք Անոր հետ եւ սկսիք ճանչնալ Զինք, Ան կը նորոգէ ձեր ուժը: Պահ մը մտածեցէ՛ք Աստուծոյ այս զօրաւոր խոստումներուն շուրջ:

«Արդե՛ծք լուր չէք ունեցած: Արդե՛ծք չէք լսած: Յաւիտենական Աստուած՝ Տէրը, երկրի ծայրերուն Արարիչը, չի յոգնիր եւ չի թուլնար. Անոր հասկացողութիւնը անքննելի է: Ան յոգնածին եւ թուլցածին ուժ կու տայ եւ ան կ'աւելցնէ կարողութիւն չունեցողի ուժը՝ [աւելցնելով եւ շատցնելով այն]:»

— (Եսայեայ 40.28-29, AMP)

«Արդէն հասկնալի է, այնպէս չէ՛, որ եթէ կենդանի եւ ամենագոյ Աստուած, որ Յիսուսին մեռելներէն յարութիւն տուաւ, մուտք կը գործէ ձեր կեանքը, Ան նոյնը կ'ընէ ձեր մէջ, ինչ որ ըրաւ Յիսուսին մէջ՝ կենդանացնելով ձեզ Իրեն համար: Երբ Աստուած կ'ապրի եւ կը շնչէ ձեր մէջ (եւ Ան այդպէս ալ կ'ընէ, ինչպէս որ Յիսուսին մէջ) դուք կ'ազատիք այդ մահուան կեանքէն: Քանի որ Իր Հոգին ձեր մէջ է, ձեր մարմինը նոյնքան կենդանի կ'ըլլայ, որքան Քրիստոսինը»:

— (Հռովմայեցիս 8.11, MSG)

«Քրիստոսի մէջ ես ամէն ինչի համար ուժ ունիմ. Ան զիս կը զօրացնէ [Ես պատրաստ եմ որեւէ մէկ բանի կամ՝ որեւէ բան մը ընելու կարողութիւն ունիմ Անոր միջոցով, որ ներքին ուժ կը ներարկէ մէջս...]:»

— (Փիլիպպեցիս 4.13, AMP)

Սուրբ Հոգին ինչ կ'ըսէ ձեզի այս խօսքերուն միջոցով: **Աղօթք գրեցէ՛ք՝** խնդրելով կեանքի Հոգիէն, որ ներքին ուժ ներարկէ ձեր մէջ եւ դարձնէ ձեզ նոյնքան կեանքով լեցուն, որքան Յիսուսն էր, երբ Ան այս երկրին վրայ կը քալէր:

Հետագայ ուսումնասիրութեան համար...
Ծննդոց 1.2, Նեէմեայ 9.6, Եսայեայ 40.12-15, Սաղմոս 8.3-9, Յոբայ 33.4

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՆ. Օր 4

ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԲՈԼՈՐՈՎԻՆ ԿԱԽԵԱԼ ԸԼԼԱՆՔ ԱՆՈՐՄԷ

*«...Դուն յաջողութեան չես հասնիր կարողութեամբ կամ զօրութեամբ,
հապա՛ Իմ Հոգիով,- կ'ըսէ Զօրքերու Տէրը»:*

— (Զաքարեայ 4.6, GW)

Յիսուս Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին, բոլորովին կախեալ էր Սուրբ Հոգիէն՝ Հօր Հոգիէն: Ամէն ինչ Անոր կեանքին մէջ՝ Մարիամի յղանալէն մինչեւ Իր յարութիւնը, Հոգիին աշխատանքի արդիւնքն էր: Սուրբ գիրքին մէջ գրուած է, որ...

Ան ծնած էր Հոգիէն - **Մատթէոս 1.20, Ղուկաս 1.31-35**

Ան կ'առաջնորդուէր Հոգիով - **Մատթէոս 4.1, Ղուկաս 4.1.**

Ան Կը զօրանար Հոգիով - **Ղուկաս 4.14, 18-19, Յովհաննէս 3.34**

Ան կը սորվէր Հոգիէն եւ կը հնազանդէր Անոր - **Յովհաննէս 5.19-20, 30, 14.10**

«Յիսուս ըսաւ հրեաներուն. «Կրնամ հասարարապէս ըսել այս ճշմարտութիւնը. Որդին Ինքնիրմէն բան մը չի կրնար ընել: Ան միայն կրնայ ընել այն, ինչ որ Հօրմէն կը տեսնէ: Որդին իսկապէս կ'ընէ՝ ճիշդ այն, ինչ Հայրը կ'ընէ: Հայրը կը սիրէ Որդին եւ ամէն բան կը ցուցնէ Անոր՝ ինչ որ Ինքը կ'ընէ... Ես Ինքնիրմէս բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ Հօրը, այնպէս կը դարձեմ: Իմ դատարարանները արդար են, վասնզի Ես չեմ փորձեր ընել այն, ինչ Ես կը փափաքիմ, այլ այն, ինչ կը փափաքի Զիս Ուղարկողը»:

— (Յովհաննէս 5.19-20, 30, GW)

Ուշադրութեամբ խոկացէք Յիսուսի յայտարարութեան շուրջ Յովհաննէս 5-րդ վերոյիշեալ գլուխին մէջ, ուր Ան կը խօսի Սուրբ Հոգիէն կախեալ ըլլալուն մասին: Սուրբ Հոգին ինչ կը յայտնէ ձեզի՝ Յիսուսին եւ Իր փոխարարբերութիւններուն մասին: Այս յայտարարութիւնը մարտահրաւէր, թէ՛ խթան է ձեզի համար:

Կարդացէք Գործք 5.32, Հռովմայեցիս 8.16, Գաղատացիս 4.6, Ա. Յովհաննէս 3.24 եւ 4.13 խօսքերը: Կրնա՞ք նկատել կրկնուող երկու ճշմարտութիւն Սուրբ Հոգիին եւ Անոր հետ մեր փոխյարաբերութիւններուն մասին:

Ինչպէս Գաղատիոյ եկեղեցիի հաւատացեալները՝ մենք ալ երբեմն կը մոռնանք, թէ որքան Սուրբ Հոգիին կարիքը ունինք: Ուշադրութեամբ կարդացէք Գաղատացիս 3.2-9 եւ Ղուկաս 11.13-ի խօսքերը: Ինչ դասեր կրնաք քաղել Սուրբ Հոգիին շարունակական օգնութիւնը ընդունելու մասին, եւ ինչպէ՞ս կրնաք կիրառել անոնք ձեր կեանքին մէջ:

ԱՆ ՁԵՐ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՆ Է

*«Ես կը խօսիմ Հօր հետ, եւ Ան կու տայ ձեզի մէկ այլ Ընկեր, որպէսզի
դուք մշտապէս ինչ որ մէկուն ունենաք ձեզի հետ: Այս Ընկերը՝
Ճշմարտութեան Հոգին է»:*

— (Յովհաննէս 14.16-17, GW)

«Սուրբ Հոգին կը փափաքի ձեր լաւագոյն ընկերը ըլլալ: Ան կը փափաքի ըլլալ ձեր Օգնականը, որ միշտ ձեր կողքին է՝ օրը քսանչորս ժամ եւ շաբաթը եօթ օր: Սուրբ գիրքը կը հոչակէ. «Այն Հոգին, Որուն Ան մեր մէջ բնակեցուց, կը փափաքի մեզի: Ան կը փափաքի, որ Հոգին [ընդունուի] նախանձաւոր սիրով» (Յակոբոս 4.5, AMP):

Սուրբ Հոգին հետ ճշմարիտ ընկերութիւնը անգին է: Անոր ներկայութիւնը եւ զօրութիւնը կու տան մեզի յաւերժական բաւականութիւն, որ անգերազանցելի է: Խօսելով Սուրբ Հոգին մասին՝ Յիսուս ըսաւ. «...Բայց անոնք, որոնք կը խմեն այն ջուրէն, որ ես կու տամ անոնց, երբեք պիտի չծարաւին: Այն ջուրը, որ ես կու տամ անոնց, կը դառնայ անոնց ներսիդին աղբիւր մը, որ կենսատու ջուր կը մատակարարէ անոնց եւ յաիտենական կեանք կու տայ» (Յովհաննէս 4.13-14, GNT): Մեկնաբանելով այս խօսքը՝ աւետարանիչ եւ ուսուցիչ **Ռ. Ա. Տորէյը** կը պնդէ.

«Ձուրը այս խօսքին մէջ՝ Սուրբ Հոգին է: Աշխարհը երբեք չի կրնար բաւականութիւն պատճառել: Ամէն ուրախութեան մասին, որ կայ այս աշխարհին մէջ, պէտք է ըսուի հետեւեալը. «Ով որ այս ջուրէն խմէ, նորէն պիտի ծարաւնայ»: Բայց Սուրբ Հոգին զօրութիւն ունի՝ բաւարարելու մարդկային անծի իրաքանջիւր ցանկութիւն: Սուրբ Հոգին եւ միայն Ան կրնայ բաւականութիւն տալ մարդու սրտին:

Եթէ ձեր բոլոր սրտով Սուրբ Հոգիի աղբիւրին նուիրուիք, երբեք պիտի չծարաւնաք: Ինչպիսիք անպատմելի ուրախութեամբ եւ աներեւակայելի բաւականութեամբ Սուրբ Հոգին Իր կենդանի ջուրը լեցուցած է բազմաթիւ մարդոց մէջ: Արդե՞ծք այս կենդանի աղբիւրը ձեր ներսը ունիք: Արդե՞ծք այս աղբիւրը գոցուած չէ: Արդե՞ծք անիկա կը բխի յաիտենական կեանքի համար»:

Խոկացէք Տորէյի հարցումներուն շուրջ. «Արդե՞ծք իմ ներսը կայ այս կենդանի աղբիւրը: Արդե՞ծք ես Հոգիի աննկարագրելի բաւականութիւնը կը վերապրիմ: Եթէ ոչ, Ի՞նչն է պատճառը»: Անկէ յետոյ խնդրեցէք Սուրբ Հոգիէն, որ ցոյց տայ ձեզի, թէ ինչ կրնաք ընել, որպէսզի ամէն օր աւելի ազատօրէն յանձնուած ըլլաք Անոր ընկերութեան: Գրեցէք այն, ինչ որ Ան կը յայտնէ ձեզի:

Լոռութեամբ մօտեցէ՛ք Տէրոջը (որ Սուրբ Հոգին է): Խնդրեցէ՛ք, որ Ան յայտնէ Ինքզինք ձեզի՝ աւելի շատ, քան նախկին օրերուն: Խնդրեցէ՛ք Անորմէ, որ ձեր վրայ տեղայ Իր սէրը, բարեհաճութիւնը եւ խաղաղութիւնը՝ անձրեւի պէս: Մի՛ աճապարէք: Հանդարտեցէ՛ք եւ փորձառաբար ճանչցէ՛ք, որ Ան է Տէրը: Գրեցէ՛ք որեւէ բան, որ Ան կ'ըսէ ձեզի:

Դուք կրնաք ազատօրէն ըլլալ այնպիսին, ինչպիսին էք՝ Սուրբ Հոգիին հետ հաղորդակցելով: Ան բոլորովին կը ճանչնայ ձեզի: Երբեմն կը թուայ, թէ չէք կրնար «դուք ձեզ գտնել», բայց Ան կրնայ ցոյց տալ, թէ «ուր» էք դուք: Ան մշտապէս կը բնակի ձեր մէջ, որպէսզի զօրացնէ, քաջալերէ եւ առաջնորդէ ձեզ: Դիմեցէ՛ք Անոր որեւէ մէկ պահուն, ուր ալ ըլլաք: Դուք չէք կրնար յոգնեցնել կամ ձանձրացնել Զինք: Ան ձեր լաւագոյն Ընկերն է:

Աղօթք
Սուրբ Հոգի՛, բոլորովին եւ հիմքերէն ընդարձակէ իմ պատկերացումը Քու մասին: Օգնէ՛ ինձի, որ տեսնեմ Քու անհատականութիւնը եւ դերը՝ որպէս իմ Օգնական: Օգնէ՛ ինձի, որ այլեւս երբեք չսահմանափակեմ Քու ներկայութիւնը, զօրութիւնը կամ ձայնը կեանքիս մէջ: Ես այս աղօթքը կ'ընեմ ինձի, ընտանիքիս եւ Քու ամբողջ Եկեղեցիին համար: Յիսուսի Անունով, ամէն:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Եթէ կ'ուսումնասիրէք «Սուրբ Հոգի. Ներածութիւն» գիրքը՝ որպէս «Մեւեմնաբանական հարցազարկ»ի ամբողջական դասընթացքի մաս, կը խնդրենք, որ ուսումնական տեսանկիւթ 1-ը դիտէք:

- 1| Մեր քրիստոնէական կեանքը առանց Սուրբ Հոգիին՝ չոր, միալար եւ անզօր կը դառնայ: Այդ պարագային, ինչպիսին պէտք է ըլլայ մեր կեանքը Սուրբ Հոգիին հետ: Անուանեցէք Հոգիով լեցուած կեանքի դրական դրսեւորումներ եւ կողմեր, որքան կրնաք:

«Որովհետեւ Տէրը՝ Հոգին է, եւ ուր որ Տէրոջը Հոգին է, հոն ազատութիւն է»:

— (Բ. Կորնթացիս 3.17, NLT)

- 2| Սուրբ Հոգին անդէմ էակ չէ, եւ ոչ ալ որեւէ աստուածային, հանելուկային զօրութիւն: Ան Աստուածութեան Անձն է, որ Հայր Աստուծոյ եւ Որդի Աստուծոյ լիութիւնը կը կրէ: Ինչպիսի հետեւանքներ կ'ըլլան, երբ Սուրբ Հոգիին կը սեպեն որպէս անդէմ էակ կամ հանելուկային զօրութիւն: Ինչպիսի դրական արդիւնքներ կ'ըլլան, երբ Սուրբ Հոգիին կը դիտարկեն այնպիսին, ինչպիսին է Ան իրականութեան մէջ՝ որպէս Աստուած:
- 3| Սուրբ Հոգիին մասնակցութիւնը սովորական էր առաջին հաւատացեալներուն համար, բայց ան աւելի հազուադէպ երեւոյթ է մեր ժամանակուան հաւատացեալներու կեանքին մէջ: Ըստ ձեզի, ինչը չի ձգեր մեզի, որ Աստուծոյ Հոգին վայելենք, փնտոենք, կախեալ ըլլանք Անոր առաջնորդութենէն եւ զօրաւոր ազդեցութենէն: Թուեցէք քանի մը պատճառներ:
- 4| Յիսուս Քրիստոսը ո՞ր է այս պահուն: Եթէ դուք հաւատացեալ էք, արդե՞ծք Ան ձեր սրտին մէջ կ'ապրի: Ինչպէ՞ս կրնաք աւելի ճշգրտօրէն նկարագրել ձեր փրկութիւնը եւ խորհուրդը այն

մասին, թէ ինչպէս Աստուած բնակութիւն կը հաստատէ ձեր սրտին մէջ:

Աագներ. Յանձնարարեցէք ձեր խմբակի անդամներուն կարդալ՝ Մարկոս 16.19, Գործք 1.9-11, 7.55-56, Հռովմայեցիս 8.34, Կողոսացիս 3.1 եւ Եբրայեցիս 10.12-13 խօսքերը՝ այս հարցումի առաջին բաժինին համար, եւ Հռովմայեցիս 8.9-10, Ա. Կորնթացիս 3.16, 6.19 եւ Ա. Յովհաննէս 3.24 խօսքերը՝ յաջորդ բաժինին համար:

«Յիսուս պատրաստան րուսա ու ըսաւ անոր. «Եթէ մէկը Զիս կը սիրէ, Իմ խօսքը պիտի պահէ, ու Իմ Հայրս զանկէս պիտի սիրէ, եւ անոր մօտ պիտի զանք ու Անոր քով օթեանս պիտի ընենք»:

— (Յովհաննէս 14.23)

5| Տէրը՝ մեր Աստուածը, Մէկ է, սակայն Ան երեք առանձին դրսեւորումներ ունի՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի: Նկարագրեցէք Աստուածութեան իւրաքանչիւր Անձի հիմնական գործառոյթները, եւ թէ ինչպէս Անոնք կը համագործակցին՝ Աստուծոյ կամքը իրականացնելու համար:

Աագներ. Յանձնարարեցէք ձեր խմբակի անդամներուն կարդալ Ա. Կորնթացիս 12.5-7-ը, նաեւ արարչագործութեան պատմութիւնը Ծննդոց 1-ին եւ Յիսուսին խօսքերը Յովհաննէս 5.17, 19-20-ին մէջ:

Հայր Աստուծոյ Հոգի = Քրիստոսի Հոգի = Սուրբ Հոգի

6| Յիսուս ըսաւ, որ Սուրբ Հոգին մեր Օգնականն է, մեր Պարակլէտոսը: Ասիկա կը նշանակէ, որ Ան «մշտապէս կանչուած է մեզմէ իւրաքանչիւրին կողքին ըլլալու համար, որպէսզի սորվեցնէ մեզի եւ մեր խորհրդատուն դառնայ Աստուծոյ հետ մեր ամէնօրեայ ընթացքին մէջ»: Ինչպէ՞ս գիտելիքը այս մասին կը քաջելերէ եւ կը խթանէ ձեզ՝ Աստուծոյ հետ ձեր ամէնօրեայ շփումին մէջ:

7| Սուրբ Հոգիի Անձնաւորութեան ինչպիսի՞ նոր յատկանիշներ կը տեսնէք, որոնց մասին չէք լսած անցեալին: Գիտելիքը այս մասին ինչպէ՞ս բացած է ձեր աչքերը եւ ընդլայնած ձեր պատկերացումը այս մասին, թէ Ով է Ան ձեր կեանքին մէջ:

ԳԼՈՒԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- **Սուրբ Հոգին** Աստուածութեան Անձերէն մէկն է, որ Հայր Աստուծոյ եւ Որդի Աստուծոյ լիութիւնը կը կրէ:
- Ան անդէմ էակ կամ հանելուկային զօրութիւն մը չէ. Ան Աստուած է:
- Ան ժամանակով կամ տարածութեամբ սահմանափակուած չէ. Ան կրնայ միաժամանակ հաղորդակցիլ բազմաթիւ մարդոց հետ եւ օգնել անոնց:
- Ան մտերմօրէն ներգրաւուած էր առաջին հաւատացեալներու կեանքին մէջ: Այսօր ալ Ան անսահման կը ցանկայ, որ ներգրաւուած դառնայ մեր կեանքի իւրաքանչիւր բնագաւառին մէջ:
- Ըստ էութեան, չկայ քրիստոնէական կեանք առանց Անոր: Այն մարդիկ, որոնք կ'ընդունին Անոր զարմանալի ընկերութիւնը եւ շփումը, անոնց յագեցած, արկածախնդրային եւ հետաքրքրական կեանք մը կը սպասուի:
- Անձնապէս ճանչցէք Ձինք:

Սուրբ Հոգիին անհատականությունը

*«Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի զարմանալի շնորհքը, Աստուծոյ աստար
սէրը ու Սուրբ Հոգիին մերեքիմ ընկերությունը ձեր ամէնուն հետ ըլլայ»:*

— (Բ. Կորնթացիս 13.13 MSG)

Օր 1

Ինչ որ մէկու մը հետ մտերիմ փոխյարաբերություններ կա-
ռուցելու համար մենք նախ՝ պէտք է ձգտինք հասկնալ, թէ
ինչ կայ իր սրտին մէջ: Աւելի խոր գիտելիքները այն մասին, թէ ինչը
հաճելի է այդ մարդուն համար, իսկ ինչը՝ ո՛չ, թէ ինչ նպատակներ
եւ ձգտումներ ունի ան, որ կ'օգնեն մեզի՝ ավելի մտերմանալու իր
հետ: Նմանապէս, եթէ մենք կը պատրաստուինք մտերմօրէն հա-
ղորդակցելու Սուրբ Հոգիին հետ, մենք նախ՝ պէտք է հասկնանք
Անոր անհատականութիւնը:

Նախորդ գլուխին մէջ մենք կարդացինք Յիսուսին զարմացող
խօսքերը. «...աղէկ է ձեզի, եթէ ես երթամ, քանզի եթէ ես չերթամ,
Մխիթարիչը ձեզի չի գար. բայց եթէ երթամ, զԱնիկա ձեզի պիտի
ղրկեմ: (Յովհաննէս 16.7): Հոս նոյն Յիսուսն է, որ մէկ անգամ ըսաւ.
«Ես Իմ բերանը առականերով պիտի բանամ, որոնք, աշխարհի
սկիզբէն ի վեր, ծածկուած են» (Մատթէոս 13.35, AMP): Յիսուս, որ
ամենամեծ Ոսուցիչն է, որ աշխարհը ստեղծուելէն ի վեր ծածկուած
հանելուկները յայտնեց, կը փորձէ համոզել Իր ամենամօտ
հետեւորդները, որ ոչ թէ Ինքը՝ Յիսուս, որ մարմինով անոնց հետ
էր, այլ՝ Աստուծոյ Հոգին պիտի ըլլայ անոնց եւ գալիք սերունդներու
հաւատացեալներուն լաւագոյն ընկերը: Զարմանալի է: Չեմ գիտեր,
թէ ինչ կը մտածէք ասոր մասին, բայց ես, հասկնալով Անոր խօսքերը,
կը փափաքիմ ավելին գիտնալ Սուրբ Հոգիին մասին:

Եկէք սկսինք՝ կարդալով Բ. Կորնթացիս 13.13-ը: Պօղոս կը գրէ.

*«Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը եւ Աստուծոյ սէրը ու Սուրբ Հոգիին
հաղորդութիւնը ձեր ամէնուն հետ ըլլայ»:*

Պօղոսը կ'ընդգծէ Աստուածութեան իւրաքանչիւր Անծի ակնառու դերը մեր կեանքին մէջ: Ան կը սկսի՝ գրելով. «Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը...»: Որպէս հաւատացեալներ՝ մենք երբեք պէտք չէ մոռնանք մեր ճիշդ դիրքը Աստուծոյ առջեւ, որ Սուրբ Հոգիին հետ զարմանալի փոխյարաբերութիւններու անկիւնաքարն է, անկարելի կ'ըլլար, եթէ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքը չըլլար: Անկարելի է այս շնորհքը վաստկիլ կամ արժանանալ անոր. շնորհքը՝ Անոր կեանքի զօրաւոր պարգեւն է, որուն միջոցով մենք կը ներենք, փրկուինք եւ զօրութիւն կը ստանանք:

Պօղոսը կը շարունակէ. «...եւ Աստուծոյ սէրը...»: Երբ մտածեմ այն մասին, թէ որքան կը սիրեմ զաւակներս, չեմ կրնար պատկերացնել, թէ կեանքս ինչպէս կ'ըլլար, եթէ ընդամէնը մէկ զաւակ ունենայի: Սակայն եթէ պատկերացնեմ եւ մտածեմ, որ ընդամէնը մէկ զաւակ ունիմ եւ պէտք է ուղարկեմ զինք՝ մահանալու թշնամիներու համար, անհաւանական կը թուար: Այնուամենայնիւ, մենք Աստուծոյ թշնամիներն էինք, երբ Ան ծրիաբար Իր միակ Որդին մեզի համար տուաւ: (տես Հռովմայեցիս 5.10): Ինչպիսի՞ զարմանալի սէր: Արդեօք ուրախ չէք, որ Հայրը կը սիրէ ձեզ: Թէեւ դուք Անոր թշնամին էիք, հիմա դուք Անոր զաւակներն էք. ուրեմն որքան աւելի առատօրէն Ան Իր սէրը կը շնորհէ ձեզի: Ան կը սիրէ ձեզ անզուգական եւ լիակատար սիրով՝ հարազատի պէս:

Ես այնքան կը սիրեմ իմ զաւակները, սակայն անոնց սիրելու եւ անոնցմով ուրախանալու իմ կարողութիւնը չի կրնար նոյնիսկ համեմատուիլ այն սիրոյ հետ, որ Աստուած մեզի հանդէպ կը տածէ: Անոր Խօսքը կ'ըսէ. «...ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակներ, ոչ իշխանութիւններ, ոչ զօրութիւններ, ոչ ներկայ բաներ, ոչ գալու բաներ, ոչ բարձրութիւն, ոչ խորունկութիւն, եւ ոչ ուրիշ արարած կրնան մեզ զատել Աստուծոյ սէրէն, որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով է» (Հռովմայեցիս 8.38-39): Ինչպիսի՞ զարմանալի խոստում: Արդեօք շնորհակալ չէք, որ ոչ մէկ բան կրնայ բաժնել ձեզ Հօր սէրէն:

Իսկ հիմա, կարդանք Բ. Կորնթացիս 13.13-ի վերջին մասը՝ մտապահելով, որ ասիկա Պօղոսին վերջին նամակն է կորնթացիներուն: Այս գիրքը (որ, իրականութեան մէջ նամակ է) լեցուն է արտասովոր իմաստութեամբ եւ յայտնութիւններով: Պօղոսը, Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ, կ'ընտրէ հետեւեալ խօսքը՝ որպէս այս խոր նամակին վերջաբան. «Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր

ամենուն հետ»։ Ուշադրություն դարձուցէք, որ Պօղոսը «հաղորդություն» բառը Սուրբ Հոգիին հետ կը կապէ։ Ես Կաթողիկէ եկեղեցիի մէջ մեծցած եմ, եւ *հաղորդություն* բառը զուգորդած եմ հացի եւ գինիի հետ։ Սակայն ակնյայտ է, որ այս խօսքին մէջ Պօղոսը նկատի չունի ատիկա։ Իսկ ինչ կը նշանակէ «Սուրբ Հոգիի հաղորդություն»ը։ Եթէ անդրադառնանք յունարէն բնագրին, կը պարզենք, որ «հաղորդություն» բառը յունարէն «կոինոնիա»ն է։ Ահա այս յունարէն բառին քանի մը սահմանումներ, որոնք յաջողեցայ գտնել. «*շփում, ընկերակցություն, հաղորդակցություն, մտերմություն, բաժնեկցում, փոխյարաբերություններ, համագործակցություն, գործակցում եւ սերտ ընկերակցություն*»։ Ասիկա երկար եւ տպաւորիչ ցուցակ է։ Թոյլ տուէք բաժնելու այս ցուցակը երեք հիմնական խումբերու.

- Շփում
- Համագործակցություն
- Մտերմություն

Հաղորդությունը կը նշանակէ՝ շփում

Իմ բառարանին մէջ «*շփում*» բառը կը սահմանուի որպէս «*ընկերական փոխյարաբերություն, ընկերակցություն, բաժնեկցում*»։ Մտերիմ ընկերները կը շփուին իրարու հետ։ Անոնք կը բաժնեկցին եւ կը զրուցեն, ինչպէս նաեւ մշտապէս մէկը միւսին գործերուն մասին տեղեակ կ'ըլլայ։

Ինչպէս նշեցի, ինծի համար շատ հաճելի է կոլֆ խաղալ։ Սովորաբար ես կոլֆ կը խաղամ մօտիկ ընկերներէս քանի մը հատին հետ, եւ մենք ամբողջ խաղի ընթացքին կը զրուցենք։ Ատիկա լաւագոյն միջավայրերէն մէկն է լաւ ժամանակ անցընելու համար, քանի որ քիչ շեղող հանգամանքներ կան։ Ինծի համար շատ հաճելի է թենիս խաղալ համալսարանին մէջ, բայց խնդիրը անիկա է, որ թենիս խաղցած ժամանակ չեմ կրնար խօսիլ խաղակիցիս հետ։ Կոլֆը նախընտրելու հիմնական պատճառներէն մէկը խաղակիցներուս հետ շփուիլն է։ Ես աւելի շատ մտերիմ փոխյարաբերություններ շինած եմ կոլֆի դաշտին մէջ, քան որեւէ այլ վայրի մէջ։ Ահա թէ ուր տեղի կ'ունենայ իմ «*շփումը*»։ Այժմ դուք, հաւանաբար, կը հասկնաք, թէ ինչու ես *սրտանց* կը փափաքիմ կնոջս հետ կոլֆ խաղալ. պատճառը

անիկա է, որ ամբողջ աշխարհին մէջ չկայ այնպիսի մարդ մը, որուն հետ ես կը փափաքիմ շփուիլ ատի շատ, քան անոր հետ:

Իմ ամենամտերիմ ընկերներէն քանի մը հոգին «Մեսէնճր Ինթընէշընլ» խումբի անդամներ են: Մենք յաճախ կը խօսինք մտադրութիւններու, դժուարութիւններու եւ նպատակներու մասին: Ես իսկապէս կը յենիմ անոնց փորձառութեան եւ ընկերութեան վրայ: Չեմ գիտեր, թէ ուր կ'ըլլայի այսօր՝ առանց այդ հրաշալի խումբին:

Մենք միշտ կը շփուինք: Առանց այդ շարունակական շփումին՝ անկարելի կ'ըլլար իրականացնել «Մեսէնճր Ինթընէշընլ»ի առաքելութիւնը, որուն նպատակը սորվեցնել, հասնիլ եւ փրկելն է:

Սուրբ գիրքին մէջ ակնյայտօրէն կ'երեւի, որ առաքեալները բուրրովին կախեալ էին այն շփումէն, որ Սուրբ Հոգիին հետ ունէին: Գործք առաքելոց գիրքին մէջ գրուած է. «Եւ հիմա ես [Պօղոսը] կապուած եմ Հոգիով՝ Երուսաղէմ երթալու համար: Ես չեմ գիտեր, թէ ինչ կը պատահի ինծի հետ՝ բացի անկէ, որ Սուրբ Հոգին կ'ըսէ ինծի քաղաքէ՝ քաղաք, որ բանտ եւ տառապանք կը սպասեն ինծի» (Գործք 20.22-23 NLT): Պօղոսը Սուրբ Հոգիին հետ կը խօսէր այն մասին, թէ ինչ պիտի ըլլայ իր հետ: Ուշադրութիւն դարձուցէք, որ Սուրբ Հոգին չյայտնեց, թէ անոր բանտ եւ տառապանք կը սպասեն, միայն *մէկ* քաղաքի մէջ: Փոխարէնը՝ քանի որ Պօղոսը միշտ կը շփուէր Սուրբ Հոգիին հետ, ան կը գիտնար, թէ այն *քաղաքներուն* մէջ, ուր որ ինքը կ'ըլլար, իրեն դժուարութիւններ կը սպասուին:

Չեմ գիտեր՝ ինչպէս դուք, բայց եթէ գործընկերս, որուն հետ ես մտերիմ շփում ունիմ, եթէ ըսէր, թէ ամէն տեղ, ուր որ երթայի, ինծի տառապանքներ կը սպասեն, ես հաւանաբար կը սկսէի վիճարկել անոր խօսքերը: Թերեւս ըսէի. «Դուն դեռ չե՞ս փոխած միտքդ», կամ՝ «Իսկ եթէ քիչ մը փոխենք խօսքերդ», կամ՝ «Չ'արժէր փոխարինել նեղութիւնները քանի մը աննշան անյարմարութիւններով»: Սուրբ Հոգին չէր ուրախանար այդ պատճառով, որ Պօղոսին տառապանքներ կը սպասուին. փոխարէնը՝ Ան կը պատրաստէր Պօղոսը ամէն ինչի համար, որ առջեւն էր, եւ Ան կրնար ընել ատիկա, քանի որ անոնք մտերիմ շփում ունէին:

Երբեմն Սուրբ Հոգին այնպիսի բաներ ըսած է ինծի, որոնք չէի փափաքեր լսել: Ես յարատեւ կը հարցնէի Անոր լսածիս մասին (յուսալով, որ ուրիշ պատասխան կը ստանամ), բայց օրըստօրէ նոյն ուղերձը կը ստանայի: Երբ մենք նոյն ձեւով կը վարուինք Սուրբ Հոգիին հետ, ի վերջոյ Ան կը լռէ: Ան կարծես կը փափաքի ըսել. «Ես

արդեն պարզ ըսած եմ քեզի. այժմ դուն պետք է որոշես՝ արդե՞ծք պիտի ընդունիս Իմ ցուցմունքները»: Երբ մտերիմ էք Սուրբ Հոգիին հետ, երբեմն Ան կ'ըսէ ձեզի այնպիսի բաներ, որ դուք պարզապէս չէք փափաքիր լսել:

Գործք առաքելոց 10-րդ գլուխին մէջ Պետրոսը այսպիսի ցուցմունք մը ստացաւ Սուրբ Հոգիէն: Աստուած տեսիլք մը տուաւ Պետրոսին՝ ցոյց տալով, որ Ան կը ցանկայ փրկութիւն շնորհել նաեւ հեթանոսներուն: 19-րդ խօսքին մէջ գրուած է. «Երբ Պետրոս այն տեսիլքին վրայով կը մտածէր, Սուրբ Հոգին ըսաւ անոր. «Ահա երեք մարդիկ քեզ կը փնտռեն»»: Այդ մարդիկ եկած էին, որ Պետրոսին ուղեկցէին դէպի հեթանոս հարիւրապետին տունը, ուր Պետրոսը՝ որպէս նուիրեալ հրեայ, ոչ մէկ պարագային չէր երթար: Այդ իսկ պատահով, Սուրբ Հոգին պարզօրէն ըսաւ անոր. «Լսէ, վարի բաժինը այցելուներ կը սպասեն քեզ, եւ Ես կը ցանկամ, որ երթաս անոնց հետ: Ինձի պէտք է, որ կատարես այս յանձնառութիւնը»: Սուրբ Հոգին գիտէր, որ Պետրոս ուրախութեամբ պիտի չընդունէր այդ ցուցմունքը: Այնուամենայնիւ, Ան յանձնարարեց Պետրոսին՝ ընել այն, ինչ որ Ինքը կը փափաքէր՝ առանց յաւելեալ բացատրութիւններ տալու:

Քանի մը գլուխ առաջ մենք կը գտնենք մէկ օրինակ եւս, ուր պէտքը կար վստահելու Սուրբ Հոգիին: «Տէրոջ *հրեշտակը* Փիլիպպոսին խօսեցաւ՝ ըսելով. «Ելիր ու գնա՛ հարաւային կողմը, այն ճամբան, որ Երուսաղէմէն դէպի Գազա կ'իջնէ...»» (Գործք 8.26): Հոս գրուած է, որ Տէրոջ հրեշտակը ցուցմունք տուաւ Փիլիպպոսին: Այստեղ չէ գրուած, որ Փիլիպպոսին հրեշտակ *յայտնուեցաւ*. փոխարէնը գրուած է. «Տէրոջ հրեշտակը *խօսեցաւ* Փիլիպպոսին հետ»: Այս հատուածը նոյն կերպով գրուած է բոլոր թարգմանութիւններուն մէջ: Ասիկա ինչո՞ւ կարեւոր է: Այս հատուածէն մենք կրնանք եզրակացնել, որ Փիլիպպոսը կը զանազանէր հրեշտակային ձայնը Սուրբ Հոգիին ձայնէն, որովհետեւ աւելի ուշ նոյն գլուխին մէջ գրուած է. «Հոգին ալ ըսաւ Փիլիպպոսին. «Մօտեցիր եւ այդ կառքին քով գնա՛»» (Գործք 8.29): Փիլիպպոսը կը ճանչնար Սուրբ Հոգիին ձայնը, նոյնիսկ այն աստիճան, որ կարողութիւն ունէր զանազանելու Հոգիին ձայնը հրեշտակին ձայնէն: Ես այնքան յստակօրէն կը ճանչնամ կնոջս ձայնը, որ կրնամ ամէն տեղ տարբերել, նոյնիսկ եթէ չտեսնեմ զինք: Թերեւս մենք իրարմէ հեռու ըլլանք մարդոցմով լեցուն սրահի մը մէջ, բայց երբ ան խօսի, ես կը ճանչնամ անոր ձայնը տասնեակ այլ ձայներէն, որոնք այդ սրահին մէջ կը հնչեն: Ահա թէ ինչպէս

առաջին հաւատացեալները կը ճանչնային Հոգիին ձայնը: Կրնամ պատկերացնել, թէ ինչպէս Փիլիպպոսը այս պատմութիւնը կը պատմէր Ղուկասին, որ Գործք առաքելոց գիրքը կը գրէր: Թերեւս Փիլիպպոսը կ'ըսէր. «Ո՛չ, Ղուկաս, Հոգին չէր, որ հետս խօսեցաւ քաղաքին մէջ: Խօսողը՝ հրեշտակ էր: Բայց Հոգին ըսաւ ինձի, որ մօտենամ կառքին»: Արդե՞ծք մենք այդ աստիճան կը ճանչնանք Անոր ձայնը: Թերեւս Հոգիին հետ աւելի մեծ մտերմութիւն կայ, որ մենք տակաւին չունինք:

Երբ Փիլիպպոսը անապատին մէջ էր, Սուրբ Հոգին պատուիրեց անոր մօտենալ կառքի մը: Ինչո՞ւ այդ հանդիպումը կարեւոր էր: Կառքին մէջ նստած մարդը Եթովպիայի երրորդ իշխանաւորն էր: Այդ եթովպիացիին փրկութիւնը Աւետարանի տարածման սկիզբը դարձաւ իր երկրին մէջ՝ շնորհիւ այն իշխանութեան եւ ազդեցութեան, որ ան ունէր: Եթէ Փիլիպպոսը զգայուն չըլլար Հոգիին առաջնորդութեան, ան մեծ հնարաւորութիւն կը կորսնցնէր:

Քանի մը գլուխ անց, մենք մէկ այլ պատմութիւն կը գտնենք Տիմոթէոսին, Պօղոսին եւ Շիղային մասին:

«Փոռիգոյ ու Գաղատացիներու կողմերը պտըտեցան [Տիմոթէոսը, Պօղոսն ու Շիղան]. հոն Սուրբ Հոգին արգիլեց, որ Աստուծոյ խօսքը Ասիայի մէջ խօսին: Երբ, Միսիայի կողմերը երթալով, կը ջանային դէպի Բիթանիա երթալ. Հոգին թոյլ չտուաւ անոնց: (Գործք 16.6-7)

Ուշադրութիւն դարձուցէք. գրուած է, որ անոնք «արգիլուեցան» Սուրբ Հոգիին կողմէն, եւ, որ «Հոգին թոյլ չի տուաւ անոնց»:

Արդե՞ծք սկսաք հասկնալ, թէ առաջին հաւատացեալները որքան շատ կը շփուէին Սուրբ Հոգիին հետ: Արդե՞ծք այսօր ամէն ինչ պէտք է ուրիշ ձեւ ըլլայ: Արդե՞ծք մենք Աստուծոյ ծառայելու աւելի հնարաւորութիւն ունինք, քան Սուրբ Հոգիով առաջնորդուիլը: Արդե՞ծք առաջին Եկեղեցւոյ առաջնորդներուն մեթոտները չափազանց պարզ էին այն պատճառով, որ անոնք չէին տիրապետեր ժամանակակից թէքնոլոկիաներուն: Անշուշտ՝ ո՛չ: Ոչ մէկ թէքնոլոկիա կամ միջոց չեն կրնար փոխարինել Սուրբ Հոգիին ձայնը: Այդ առաջնորդները կ'ակնկալէին, որ Հոգին մտերմօրէն ներգրաւուած ըլլար իրենց կեանքերուն մէջ. անոնք կ'ողջունէին եւ կը պատուէին Անոր ներկայութիւնը եւ յարգանքով կը վերաբերէին Անոր նկատմամբ: Ոչ մէկ բան փոխուած է. այսօր Հոգին կը փափաքի նոյն մտերիմ շփումը ունենալ մեզի հետ:

Ինչպէ՞ս կարելի է պատկերացնել, որ Լիզան եւ Ես ժամեր ու օրեր

անցընենք մեր տունին մէջ՝ առանց մէկ բառ փոխանակելու: Որքան ծիծաղելի կ'ըլլար: Ո՞վ կը փափաքի այսպիսի ամուսնութիւն ունենալ: Ես կը սիրեմ իմ կնոջը եւ կը փափաքիմ մօտ ըլլալ անոր: Աւելի քան երեսուն տարի է՝ մենք ամուսնացած ենք, բայց եթէ ան ամուսնացած չըլլար (փառք Աստուծոյ, որ այդպէս չէ), ես յարատեւ կը սիրահետէի անոր: Ան միակ մարդն է ամբողջ աշխարհին մէջ, որուն հետ ես ամէնէն շատ կը փափաքիմ շփուիլ: Նոյն կերպով, Սուրբ Հոգին կը փափաքի մտերմօրէն շփուիլ ձեզի հետ:

Քսանչորս տարի է՝ պարբերաբար պանդոկի մէջ կը գիշերեմ, եւ երբեք չեմ ձանձրացած: Ինչպէ՞ս կրնամ ձանձրանալ, երբ ամէն վայրկեան Աստուծոյ հետ եմ: Ան իմ սենեակիս մէջ է՝ ինծի հետ: Ահա թէ ինչու այն ժամանակ, որ ես պանդոկի մէջ անցուցած եմ, պաշտպանուած է: Ես յաճախ կ'ըսեմ. «Ես չեմ փափաքիր ժամանակ անցընել իմ ճամբորդութեան խումբին հետ. ես կը փափաքիմ առանձնանալ, որպէսզի Սուրբ Հոգիին հետ շփուիմ»: Ես կը սիրեմ լսել Ձինք: Սխալ մի՛ հասկնաք ինծի. ինծի համար հաճելի է մարդոց հետ շփուիլը. իրականութեան մէջ ես շատ ընկերային մարդ եմ: Ես բոլորովին մինակութիւն սիրող կամ ճգնաւոր չեմ: Ես շատ կը սիրեմ մարդոց, բայց իսկապէս ես կ'արժեւորեմ իմ ժամանակը եւ շփումը Սուրբ Հոգիին հետ:

Օր 2

Հաղորդութիւնը կը նշանակէ՝ համագործակցութիւն

Յաջորդ բառը, որ կարելի է գործածել՝ «կոհնոնիա»ն նկարագրելու համար, *համագործակցութիւնն* է: Մենք «համագործակցութիւն» բառին օրինակը Ղուկաս Աւետարանին մէջ կը տեսնենք. «Ու երբ զայս ըրին, խիստ շատ ձուկեր ժողվեցին մէջը, ու իրենց ուռկանը կը պատռէր: Եւ այք կ'ընէին միւս նաւուն մէջ եղող իրենց *ընկերներուն*, որ գան՝ օգնեն իրենց. եւ եկան ու երկու նաւերն ալ լեցուցին, մինչեւ որ ընկղմելու մօտ էին» (Ղուկաս 5.6-7): «Ընկերներ» բառը յունարէնին մէջ «մետոքոս»ն է (*կոհնոնիայի* հոմանիշներէն մէկը), որ կը սահմանուի որպէս «գործընկեր, գործակից, աշխատակից»¹:

Այդ մարդիկ գործընկերներ էին: Մենք կը հասկնանք անոնց օրինակէն, որ յաջող համագործակցութեան համար կը պահանջուի եւ հաղորդակցութիւն, եւ գործողութիւն: Անոնք պէտք է նշան ընէին իրենց գործընկերներուն, իսկ վերջիններս պէտք է օգնութեան գային:

Այժմ կարդանք խօսք մը, որ, թերեւս ամենաշատ երկիւղածութիւն ներշնչող խօսքերէն մէկն է Նոր կտակարանին մէջ: Պօղոս կը գրէ. «Մենք Աստուծոյ գործակիցներն ենք» (Ա. Կորնթացիս 3.9): Արդեօք զարմանալի չէ: Հաճելի է ինծի համար այս խօսքը՝ Վէյմութի թարգմանութեամբ. «[Մենք] գործակիցներ ենք Աստուծոյ հետ եւ Աստուծոյ համար»: Մեզի հնարաւորութիւն տրուած է աշխատելու երկինքի եւ երկրի Արարիչին հետ եւ Անոր համար: Այս ճշմարտութիւնը կարելի է մէկ ուրիշ ձեւով ըսել. մենք կ'աշխատինք՝ *համագործակցելով Աստուծոյ հետ*: Ինչպիսի՞ զարմանալի հրաւեր:

Արդիւնաբեր գործընկերները կը սորվին սերտօրէն համագործակցիլ: Ես Միշիկըն լիճի մօտ մեծցած եմ, եւ շատ ժամանակ տրամադրած եմ նաւարկութեամբ զբաղելուն: Ես հաճոյքով կը վարէի մեր ընտանեկան առագաստանաւը: Անկէ բացի՝ ես երկու տարի յաճախած եմ նաւարկութեան դպրոց եւ նոյնիսկ մրցոյթներու մասնակցած եմ:

Առաջին մրցութային նաւարկութիւններէն մէկուն ժամանակ ինձմէ խնդրեցին, որ աշխատիմ յայտնի նաւապետի խումբին հետ, որուն անձնակազմը լաւագոյն կազմերէն մէկն էր: Խումբի անդամները ոգեշնչուած էին՝ գիտնալով, որ ես իրենց պիտի միանայի: Սակայն մեր առաջին նաւարկութեան ժամանակ ես ինծի աւելորդ զգացի: Նաւապետը կարգադրութիւններ կ'ընէր, եւ անձնակազմը արագօրէն գործի կ'անցնէր: Ամէն մէկը ճշգրտօրէն գիտէր, թէ ինչ պէտք է ըներ. անոնք իրենց տեղերը կ'առնէին նախն վրայ, մինչդեռ ես խիստ շփոթուած կը զգայի: Հակառակ որ ինծի հրահանգներ տրուած էին, բայց ես տակաւին իմ դերին չէի ընտելացած: Անձնակազմի միւս անդամները միաբան գործունէութեան շարժաչափ ունէին, որ ես դեռ պէտք է սորվէի:

Սուրբ Հոգիին հետ համագործակցիլը շատ նման է այդ անձնակազմին անդամը ըլլալուն: Դուք պէտք է աշխատիք Անոր հետ: Իմ առաջին քարոզիկն ընթացքին կինս եւ անոր ընկերուհին առաջին շարքին վրայ քնացան: Պատճառը այն էր, որ ես սերտօրէն

չէի համագործակցեր Սուրբ Հոգիին հետ: Որոշ ժամանակ մը պահանջուեցաւ, մինչեւ որ սորվեցայ համագործակցիլ Անոր հետ, երբ կը քարոզէի: Նոյնը կատարուեցաւ, երբ սկսայ գիրքեր գրել: Ես գրեցի իմ առաջին գիրքը մէկ տարուան ընթացքին: Այդ տարին լեցուն էր յուսահատութիւններով, բայց ես Անոր հետ համագործակցիլ կը սորվէի: Վերջաւորութեան, ես սկսայ շատ անլի դիրին եւ արագ գրել: Ես գիտցայ, որ այս երկու բնագաւառներուն մէջ ալ Ան Իր դերը ունի, իսկ ես՝ իմս, եւ որ այս տեսակի համագործակցութիւնը՝ Անոր կամքն է:

Գործք առաքելոցի 15-րդ գլուխին մէջ կը տեսնենք համագործակցութեան ձեւերէն մէկը՝ գործողութեան մէջ: Առաքեալները նամակ կը կազմէին, որ պէտք է բոլոր հեթանոս հաւատացեալներուն ուղարկուեր: Անոնք գրեցին. «Վասնզի աղէկ երեւցաւ Սուրբ Հոգիին եւ մեզի ալ...» (Գործք 15.28): Ահա թէ ինչպիսին է համագործակցութիւնը: Այս առաջնորդները յստակօրէն արտայայտեցին թէ Սուրբ Հոգիին, թէ իրենց կարծիքը տուեալ հարցին առնչութեամբ: Երկու կողմերը միասնաբար որոշում կայացուցին: Երկու կողմերն ալ իրենց դերերը ունէին. անոնք գործընկերներ էին Աստուծոյ թագաւորութեան գործին մէջ:

Համագործակցութեան նոյն գաղափարը կարելի է Հին կտակարանին մէջ տեսնել: Յիշեցէք, երբ Աստուած Աբրահամին կաղնիի ծառերուն մօտ այցելեց, որպէսզի քննարկէր Իր ծրագիրը Սողոմը եւ Գոմորը ոչնչացնելու մասին (տես Ծննդոց 18): Ակնյայտ է, որ Աստուած կը նայէր Աբրահամին, որպէս իր գործընկերը: Աստուած եւ Աբրահամ քալելով բարձրացան ժայռի մը վրայ, եւ Աստուած ըսաւ. «Ես իսկապէս կը ցանկամ պայթեցնել այս երկու քաղաքները: Ինչ կ'ըսես Աբրահամ» (հեղինակի բառափոխումը): Աբրահամը խիստ մտահոգուեցաւ, որովհետեւ իր զարմիկը այդ քաղաքներէն մէկուն մէջ կ'ապրէր: Բաւականաչափ քննարկումներէ յետոյ ան, ի վերջոյ, համոզեց Աստուծոյ, որ չկործանէ այդ քաղաքները, եթէ անոնց մէջ հնարաւոր ըլլար նոյնիսկ տասը արդար մարդ գտնել:

Ակնյայտ է, որ Աստուած արժեւորեց Աբրահամին ներդրումը: Ան Ծննդոց 18.17-ին մէջ կ'ըսէ. «Արդե՞ք ինչ որ պիտի ընեմ, Աբրահամէն պիտի պահեմ»: Մենք պարզ կը տեսնենք՝ Աստուած կը ցանկար, որ Աբրահամը տեղեակ ըլլայ Իր ծրագիրներուն մասին: Պատճառը այն էր, որ Աբրահամ մտերիմ հաղորդութիւն ունէր կամ մտերմօրէն *կը համագործակցէր* Աստուծոյ հետ:

Այսպիսի դեպք մը նաեւ Մովսէսին կեանքին մէջ կատարուեցաւ: Աստուած ըսաւ Մովսէսին. «Ուստի հիմա զիս առանձին թողրիւր, որպէսզի իմ բարկութիւնս անոնց վրայ բորբոքի ու փճացնեմ զանոնք [Իսրայէլի զաւակներուն]: Բայց քեզ մեծ ազգ մը ընեմ» (Ելից 32.10): Լսելով ասիկա՝ Մովսէս սկսաւ համոզել, որ Աստուած ձգէր Իր բարկութիւնը եւ փոխէր Իր ծրագիրները: Այսօր մենք դիրութեամբ կը կարդանք այդ հատուածը եւ նշանակութիւն չենք տար եղած պատահարին: Բայց պահ մը մտածեցէք. Մովսէս կարողութիւն ունէր Աստուծոյ յիշեցնելու այն մասին, թէ որ մէկը լաւ էր իր եւ իր ժողովուրդին համար, նոյնիսկ այն բանէն յետոյ, երբ Աստուած ըսաւ. «Թող տուր Ինձի»: Պատճառը այն էր, որ Մովսէս սերտօրէն կը համագործակցէր Աստուծոյ հետ:

Այնուամենայնիւ, կարեւոր է, որ հետեւեալը հասկնանք. Աստուած Ամենակարող է, եւ Ան մշտապէս արժանի է մեր երկիւղածութեան: Միայն Անոր շնորհքով եւ զօրութեամբ է, որ մենք կրնանք Անոր գործակիցը ըլլալ: Ան որոշած է մեզ Իր տիեզերական ծրագրին մասնիկը դարձնել, եւ կայացնելով այդ որոշումը՝ Ան աներեւակայելի արտօնութիւն շնորհած է մեզի:

Մենք երկու տպաւորիչ պատմութիւններ դիտարկեցինք Հին կտակարանէն, բայց փաստը այն է, որ Աբրահամն ու Մովսէսը չունէին այն, ինչ որ այսօր մենք ունինք: Այս հաւատքի հսկաները կրնային նոյն ձեւով եւ միայն հազուագիւտ դէպքերու մէջ համագործակցիլ Աստուծոյ հետ: Այնուամենայնիւ, Սուրբ Հոգին կ'ապրի մեր ներսը օրը քսանչորս ժամ եւ շաբաթը եօթը օր: Պէտք չկայ, որ սպասենք Անոր այցելութիւնը կաղնիի ծառերուն մօտ կամ բարձրանանք Սինա լեռան վրայ՝ Անոր հետ հաղորդակցելու համար: Ան մեզի համար հասանելի է ամէն ժամանակ: Եւ ամենակարեւորը այն է, որ Ան կը ցանկայ համագործակցիլ մեզի հետ. Ան կը ցանկայ առաջնորդել մեր քայլերը եւ լսել, թէ ինչ կը մտածենք մենք:

Հոգին մշտապէս մեր մէջ է, եւ բացի անկէ՝ Ան քնանալու ոչ մէկ կարիք ունի: Վերջերս, ես գիշերը՝ ժամը 2:20-ին արթուն էի, ոգեւորութենէս չէի կրնար քնանալ, քանի որ յաջորդ օրը ամբողջութեամբ պիտի ծառայէի: Այնպէս որ ես ելայ անկողինէս եւ Գործընկերոջս հետ խօսեցայ: Եւ գիտէք ինչ. Ան արթուն էր: Զարմանալիէ: Ան չըսաւ. «Ճոն, ինչո՞ւ արթնցուցիր Զիս»: Եթէ փորձէի կնոջս հետ խօսիլ, ան կ'ըսէր. «Ճոն, ինչո՞ւ այսքան շուտ կ'արթնցնես

զիս»: Եթէ պատասխանէի. «Սիրելիս, ես պարզապէս կը փափաքիմ հետդ զրուցել», ան հաւանաբար բարձով զարնէր ինձի: Ան իր քունի ժամերը կ'արժեւորէր, եւ ես գիտեմ, որ պէտք չէ արթնցնել զինք (նոյնը կը վերաբերի ինձի՝ հակադարձ հանգամանքներու պարագային): Բայց Սուրբ Հոգին կ'ընդունի զիս որեւէ մէկ ժամուն: Ան ոգետրուած կը ցանկայ ինձի հետ գալիք օրը քննարկել, եւ երբեմն որոշ դրուագներ ցոյց կու տայ այդ իրադարձութիւններէն, որոնք այդ օրուան ընթացքին տեղի պիտի ունենան: Ահա թէ ինչու ես կը սիրեմ ամէն օր Անոր ներկայութեան մէջ սկսիլ: Ան իմ Գործընկերն է, եւ մեր հաղորդութիւնը՝ կենսականօրէն իմ օրուան կարեւոր մասն է:

Կարեւոր է նշել, որ Սուրբ Հոգին՝ աւագ Գործընկերն է այս փոխյարաբերութեան մէջ: Պօղոսը Եփեսոսի եկեղեցիի երէցներուն ըսաւ. «Ուրեմն զգուշացէք ձեր անձերուն եւ բոլոր հօտին համար, որուն վրայ *Սուրբ Հոգին ձեզ տեսուչ դրաւ՝ Աստուծոյ* եկեղեցին հովուելու, զոր Իր արիւնովը ստացաւ (կամ՝ գնեց)» (Գործք 20.28): Ուշադրութիւն դարձուցէք՝ Պօղոսը չըսաւ. «...այն հօտը, որուն մէջ Յիսուս ձեզ տեսուչ դրաւ»: Այս խօսքը կատարելապէս կը նկարագրէ Յիսուսին համագործակցութիւնը Սուրբ Հոգիին հետ: Յիսուս Աստուծոյ եկեղեցին գնեց «Իր արիւնով»: Սուրբ Հոգին՝ որպէս Աստուածութեան Անձ, որ ներկայիս երկրի վրայ կը բնակի, եկեղեցիին վերակացուները կը նշանակէ եւ եկեղեցիին գործերը կը տնօրինէ: Ան Ղեկավարն է, կամ, եթէ ուրիշ ձեւով ըսենք, աւագ Գործընկերը: Պօղոս քաջ տեղեակ էր այն փաստին մասին, որ Սուրբ Հոգին կը բնակի մեզի հետ եւ մեր մէջ:

Այս մասին մէկ այլ օրինակ կարելի է գտնել Գործք 13-ին մէջ. «Երբ ասոնք Տէրոջը պաշտօնին մէջ էին եւ ծոմ կը պահէին, Սուրբ Հոգին ըսաւ. «Ինձի համար զատեցէք Բառնաբասը եւ Սօղոսը այն գործին համար, որ ես կանչեր եմ զանոնք... անոնք ալ, Սուրբ Հոգիէն դրկուած, Սելեւկիա իջան...» (խօսքեր 2 եւ 4): Կրկին, այս օրինակին մէջ Սուրբ Հոգին կը համագործակցէր (հաղորդութեան մէջ) առաքեալներուն հետ: Յիշեցէ՛ք՝ Յիսուսը Իր Հօր հետ է՝ Երկինքին մէջ: Սուրբ Հոգին ուղարկուեցաւ երկիր, որպէսզի համագործակցի մեզի հետ այս զարմանալի կեանքին ընթացքին:

Օր 3

Սերտ ընկերակցություն

Եկէք մէկ անգամ եւս կարդանք Բ. Կորնթացիս 13.13-ը. «Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը եւ Աստուծոյ սէրը ու Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր ամէնուն հետ ըլլայ»: Այժմ, երբ մենք սահմանեցինք Սուրբ Հոգիին *հաղորդութիւնը*, որպէս *շփում* եւ *համագործակցութիւն*, սկսէք ընկալել այս խօսքը՝ համաձայն այս երկու բառերուն, որոնք մենք ուսումնասիրեցինք: Արդե՞ծք կը հասկնաք Պօղոսին արտայայտութեան մեծութիւնը: Բայց ասիկա դեռ ամէնը չէ: *Կոհնոնիա* բառը նոյնպէս կը նշանակէ՝ «սերտ ընկերակցութիւն»:

Ես «կը մատնեմ» իմ տարիքը այս օրինակով. մտածելով *սերտ ընկերակցութեան* մասին՝ ես կը յիշեմ «Պիթըլզ» խումբը: Երբ երիտասարդ էի (Պիթըլզ խումբի բաժանումէն շատ առաջ), եւ երբ ինչ որ մէկը ըսէր՝ Փօլ Մաքքարտնի, ես անմիջապէս կը մտաբերէի «Պիթըլզ» խումբի միւս մասնակիցները՝ Ճոն Լենոնը, Ճորճ Հարիսընը եւ Ռինկօ Սթարը: Այդ ժամանակ ես նոյնիսկ իրենց մասին չէի մտածեր՝ որպէս առանձին մարդիկ. անոնք պարզապէս «Պիթըլզ» խումբն էին:

Սերտ ընկերակցութեան մէկ այլ օրինակ է «Երեք ծաղրատեղ» ֆիլմը: Անոնք «երեք ծաղրատեղ» չէին ըլլար, եթէ Մոյին, Լերին եւ Գանգրահերը միասին չըլլային: Այդ ֆիլմին մէջ որեւէ մէկ դրուագ՝ վերոյիշեալ հերոսներէն միայն մէկուն մասնակցութեամբ, անիմաստ ու տարօրինակ կը թուար: «Երեք ծաղրատեղ» ֆիլմը ճոխ էր, քանի որ երեք հերոսները միասին էին: Անոնք մէկը միւսէն կախեալ էին:

Երբ կը մտածեմ Սուրբ Հոգիին հետ սերտ ընկերակցութիւն ունեցող մարդոց մասին, առաջիններէն մէկը, որուն կը յիշեմ, սօքթօր Տէյվիտ Եոնկի Չօն է: Տօքթօր Չօն աշխարհի ամենամեծ եկեղեցիներէն մէկուն հովին է: Ես երբեք չեմ մոռնար, երբ առաջին անգամ հանդիպեցայ անոր 1980-ական թուականներուն: Ան առաջին անգամ կ'այցելէր այն եկեղեցին, որուն ես կ'անդամակցէի: Ես կ'աշխատէի այդ եկեղեցիին մէջ, եւ իմ պարտականութիւններուն մէջ կը մտնէր հիւր քարոզիչներուն դիմաւորելն ու հիւրընկալելը: Մինչեւ սօքթօր Չոյին հանդիպիլս, արդէն քանի մը տարի էր, որ այդ ծառայութեան մէջ էի, այնպէս որ, հաւանաբար, արդէն հիւրընկալած

էի քանի մը տասնեակ քարոզիչներ: Այնուամենայնիւ, իմ հանդիպումը սօքթօր Չոյին հետ բացառիկ էր: Երբ ան իմ ինքնաշարժը նստաւ, Տէրոջ ներկայութիւնը անոր հետ միասին ներս մտաւ: Ես անմիջապէս սկսայ լալ. արցունքները այտերուս վրայ կը հոսէին: Ես փորձեցի լուռ մնալ, քանի որ չէի փափաքեր անհանգստացնել զինք մինչեւ ծառայութեան սկիզբը, բայց ի վերջոյ չդիմացայ: Մեղմ եւ զգաստ ձայնով ըսի.

- Տօքթօր Չօ, Աստուած այստեղ է՝ մեր ինքնաշարժին մէջ:

Ան ժպտաց եւ գլուխը շարժեց.

- Ես գիտեմ:

Այն, ինչ որ տեղի ունեցաւ, օրինաչափ կը թուայ ինծի, երբ կը մտաբերեմ, թէ սօքթօր Չօն որքան գրած ու քարոզած է Սուրբ Հոգիին հետ հաղորդութեան մասին: Ես լսած եմ, թէ ան ինչպէս կ'ըսէր, որ օրական երկուքէն չորս ժամ կ'աղօթէր, հիմնական՝ Սուրբ Հոգիով: Տօքթօր Չօն առաջնային կը համարէր Սուրբ Հոգիին հետ արժանաւոր ժամանակ անցընելը. այդ պատճառով իսկ, Աստուծոյ ներկայութիւնը զօրաւոր կերպով կը յայտնուէր իր կեանքին մէջ:

Տարիներ առաջ, մեծ եկեղեցիի մը մէջ, կիրակնօրեայ հաւաքոյթի մը ժամանակ ես Սուրբ Հոգիին մասին կը քարոզէի: Այդ օրը, երբ եկեղեցի վերադարձանք՝ երեկոյեան ծառայութիւնը անցընելու համար, երկրպագութենէն յետոյ ես մօտ քառասունհինգ վայրկեան պէտք է քարոզէի: Փոխարէնը՝ Սուրբ Հոգին սկսաւ գործել. մարդիկ կը բժշկուէին եւ կը փրկուէին: Գրեթէ երկու ժամուան ընթացքին ես չկրցայ վերցնել բարձրախօսը: Ի վերջոյ, երբ բեմ բարձրացայ, եկեղեցիին հովիւը (որ բնաւ մեղմ կամ թոյլ տղամարդ չէր) մօտեցաւ ինծի՝ արցունքները աչքերուն, եւ ըսաւ.

-Ճո՛ն, ութ տարուան ընթացքին, որ ես այս եկեղեցին առաջնորդած եմ, երբեք այսքան զօրաւոր կերպով Աստուծոյ ներկայութիւնը չեմ զգացած:

Ես անմիջապէս պատասխանեցի.

- Պատճառը այն է, որ այսօր առաւօտեան մենք խօսեցանք Սուրբ Հոգիին մասին: Երբ խօսիս Անոր մասին, Ան կը յայտնուի:

Այս օրինակը կատարելապէս ցոյց կու տայ, թէ, ինչ կը կատարուի, եթէ մենք՝ «պարզ» հաւատացեալներս, Սուրբ Հոգիին հետ սերտ ընկերակցութիւն ունենանք:

Հաղորդութիւնը կը նշանակէ՝ մտերմութիւն

Կոհնոնիա բառի վերջին իմաստը՝ «մտերմութիւն» է, որ իրականութեան մէջ, ամէնէն շատ կը համապատասխանի Բ. Կորնթացիս 13.13-ին մէջ եղող այս բառի գործածութեան: Մտերմութիւնը կրնայ զարգանալ միայն շփման կամ փոխյարաբերութիւններու շնորհիւ, բայց ան անելին է, քան այս երկուքը: Մտերմութիւնը՝ խոր փոխյարաբերութիւն է, որ կ'ընդգրկէ սրտի միտքերը, գաղտնիքները եւ ցանկութիւնները:

Աստուածաշունչի «Ուղերձ» (Մեսէճ) կոչուող թարգմանութեան մէջ (MSG) գրուած է. «Սուրբ Հոգիի մտերիմ ընկերութիւնը ձեր բոլորին հետ» (Բ. Կորնթացիս 13.13): Ինծի համար մտերմութիւնը՝ ընկերութեան ամենախոր մակարդակն է: Երբեք մի՛ մոռնաք, որ Սուրբ Հոգին կը ցանկայ ըլլալ ձեր ընկերը. Ան կը փափաքի հաղորդակցիլ ձեզի հետ: Յակոբոս 4.5-ին մէջ գրուած է. «...Նախանձի կը փափաքի մեր մէջ բնակող Հոգին»: Ան նախանձաւոր է եւ կը փափաքի ձեր ժամանակն ու ուշադրութիւնը ստանալ: Պարզապէս մտածեցէք. Սուրբ Հոգին՝ Աստուած է, եւ Անորմէ ոչ մէկ բան պահուած է: Անոր գիտութիւնը, իմաստութիւնը եւ հանճարը անսահման են, եւ Ան կը փափաքի Ինքզինքը յայտնել ձեզի: Երբ ես գիտեմ, որ ինչ որ բան մը մեծ արժէք կամ կարեւորութիւն ունի, ես սրտանց կը փափաքիմ այդ արժէքը իմ մտերիմներուն հետ բաժնեկցիլ: Հաւանաբար, ասիկա նաեւ ձեզի կը վերաբերի: Սուրբ Հոգին նոյնպէս բացառութիւն չէ:

Շատ յաճախ հաւատացեալները կը փորձեն Յիսուսին մօտենալ՝ առանց Սուրբ Հոգիին հետ հաղորդակցելու: Ասիկա կը նմանի փարիսեցիներուն սխալին: Անոնք կ'ըսէին Յիսուսին. ««Մենք անօրէն զաւակներ չենք... Միակ Հայրը, որ ունինք, Ինքը Աստուածն է»: Յիսուս ըսաւ անոնց. «Եթէ Աստուած ձեր Հայրը ըլլար, պիտի սիրէիք Ձիս, վասնզի ես այստեղ Աստուծմէ եկած եմ: Ես Ինքնիրմէս չեկայ. Աստուած ուղարկեց Ձիս»» (Յովհաննէս 8.41-42, NIV): Փարիսեցիները կը փափաքէին հաղորդակցիլ Հօր հետ՝ առանց Յիսուսին: Անոնք չէին փափաքեր ընդունիլ, որ Աստուած այլ ծրագիր ունի: Յիսուս բացատրեց փարիսեցիներուն, որ Ինքը եւ Իր Հայրը՝ մէկ են: Աւելի ուշ Ան նոյնիսկ ըսաւ. «Եթէ իրականութեան մէջ Ձիս ճանչնաք, Դուք Իմ Հօրս ալ կը ճանչնաք...» (Յովհաննէս 14.7, NIV): Բայց փարիսեցիները պարզապէս չփափաքեցան լսել Ձիսը: Քանի որ անոնք կը հրաժարէին մօտենալ Հօրը՝ Որդիին միջոցով, հետեւաբար անոնք ճշմարիտ շփում չունէին Հօր հետ:

Նոյն կերպով, Յիսուս պարզորեն ցոյց կու տայ մեզի, որ Ան այլևս երկրի վրայ չէ, եւ որ Հայրը ուղարկեց Սուրբ Հոգիին (Անոր, որ ճիշդ մեր փրկիչին նման է)՝ մեր Օգնականը ըլլալու համար (տես Յովհաննէս 16.7): Հոգին ուղարկուեցաւ՝ Յիսուսը յայտնելու համար, ինչպէս որ Որդին ուղարկուած էր՝ Հայրը յայտնելու համար: Մենք պէտք է յիշենք, որ Սուրբ Հոգին կը սիրէ փառաւորել Յիսուսը: Այնպէս որ, եթէ իսկապէս կը փափաքիք աւելի ճանչնալ Յիսուսը, դուք պէտք է ժամանակ անցընէք Սուրբ Հոգիին հետ: Հոգին պարզորէն կը յայտնէ Յիսուսը: Բայց Սուրբ Հոգին կը յայտնուի միայն այնտեղ, ուր պատիւ կը ստանայ: Երբ կը պատուենք Հոգին, Ան կը յայտնէ Ինքզինքը մեզի: Այդ պարագային մենք եւ կը վայելենք Անոր զարմանալի ներկայութիւնը, եւ աւելի խոր գիտութիւն կը ստանանք Անոր մասին, որուն Ան կը յայտնէ:

Ըլլալով ծառայութեան մէջ աւելի քան երեսուն տարիներ՝ ես երբեք այս ճշմարտութենէն որեւէ բացառութիւն չեմ տեսած. այն մարդիկ, որոնք մտերմորէն Յիսուսը կը ճանչնան, նոյնպէս շատ մտերիմ են Սուրբ Հոգիին հետ: Այս փաստը օրինաչափ է, որովհետեւ Հոգին կը յայտնէ Յիսուսը:

Հասկնալ Հոգիին անհատականութիւնը

Եթէ կը փափաքիք մէկու մը հետ մտերիմ ըլլալ, պէտք է ձգտիք ճանչնալու անոր անհատականութիւնը: Այդ ժամանակ մեր շփումը աւելի հարուստ կը դառնայ, իսկ մտերմութիւնը՝ աւելի խոր:

Բաւական երկար ժամանակ է, որ ես նոյն կերպով կը վերաբերիմ իմ չորս որդիներուն հետ: Բնական է, նոյն վերաբերմունքի հետեանքով խնդիրներ յառաջացան: Ինչո՞ւ դաստիարակութեան այս ձեւը ապարդիւն է: Որովհետեւ որդիներէս իւրաքանչիւրը յատուկ անհատականութիւն ունի: Իմ կինը զգայուն էր այս հարցին մէջ, եւ սորվեցուց ինձի, թէ անոնց տարբերութիւնները ինչպէս նկատի առնեն: Երբ սկսայ իմ որդիներուն եզակի առանձնայատկութիւնները հասկնալ, իմ շփումը անոնց հետ մեծապէս բարելաւուեցաւ: Քանի որ ես շատ մտերիմ եմ կնոջս հետ, ես կրնամ հասկնալ, թէ ան ինչպէս կ'արտայայտուի: Մենք այդքան մտերիմ դարձած ենք, որովհետեւ աւելի քան երեսուն տարի է, որ մենք ամուսնացած ենք, իսկ մտերմութիւնը՝ միմիանց հետ արժանաւոր ժամանակ անցընելու

արդիւնք է: Լիզան կրնայ մէկ հայեացք ուղղել ինծի, եւ ես կրնամ էջեր գրել այն մասին, թէ ան ինչ կը փափաքի ըսել: Այլ պարագային, ես արդէն գիտեմ, թէ Լիզան ինչ կը ցանկայ՝ առանց մէկ բառ լսելու: Եթէ ըսէիք ինծի. «Ճոն, ես առաւօտեան խոզի ապխտացած միս, հաւկիթ եւ վարսակով շիլա (հացահատիկով ճաշատեսակ) պիտի հիւրասիրեմ», ես կրնայի վստահութեամբ պատասխանել. «Գիտէք, Լիզան խոզի ապխտացած միս եւ վարսակով շիլա չի փափաքիր»: Պէտք չէր ըլլար Լիզային այդ մասին հարցնելու. ես արդէն գիտեմ, որ խոզի ապխտացած միսը եւ վարսակով շիլան իրեն համար հաճելի չեն: Ասիկա շատ մակերեսային օրինակ է, բայց ճշմարիտ է աւելի անձնական հարցերու պարագային: Այս տեսակի մտերմութիւնը մէկ օրուան մէջ չես կրնար շահիլ: Ան տարիներու ընթացքին ձեւաւորուած է՝ իրարու արժանաւոր ժամանակ տրամադրելով եւ մտերմօրէն հաղորդակցելով: Ոչ ոք ինձմէ աւելի գիտէ կնոջս ճաշակը, եւ ոչ ոք գիտէ իմ ճաշակը կնոջմէս աւելի: Նմանապէս, մենք աւելի ու աւելի կը ճանչնանք Սուրբ Հոգին, երբ որոշում կը կայացնենք հաղորդակցիլ Անոր հետ եւ ժամանակ անցընել Անոր ներկայութեան մէջ:

Օր 4

Ճանչնալ Անոր բնութիւնը

Յովհաննէս Աւետարանի 14-16 գլուխներուն մէջ, Յիսուս, Սուրբ Հոգիին մասին խօսելով, տասնինը անգամ կը գործածէ «Ան», «Անոր» եւ «Իր» դերանունները: Աւելի քան ակնյայտ է, որ Սուրբ Հոգին անձ է: Անոր անձ անուանելով՝ ես դարձեալ նկատի չունիմ մարդ արարած: Յիշեցէք, որ մարդիկ Աստուծոյ նմանութեամբ ստեղծուած են: Ասիկա կը նշանակէ, որ «անձնաւորութեան» յատուկ յատկանիշները նախեառաջ կ'արտացոլեն այն, ինչ գոյութիւն ունի Աստուծոյ մէջ, բայց Աստուած՝ մեր ճշգրիտ նմանութիւնը չէ: Ան այնպիսի յատկանիշներ ունի, որոնք երբեք չեն տեղաւորուիր մարդկային «կաղապարին մէջ»:

Վերջերս ես յայտնագործութիւն մը ըրի, որ իսկապէս կ'օգնէ ինծի՝ Սուրբ Հոգիին հետ հաղորդակցելու համար: Ես կ'ուսումնասիրէի այն դերանունները, որոնք Սուրբ Հոգիին կը վերաբերին՝ Նոր կտակարանի յունարէն բնագիրին մէջ, եւ նկատեցի, որ այդ յունարէն

դերանունը, որ յաճախ կը գործածուի Սուրբ Հոգին անուանելու համար, չէզոք սեռի է (այսինքն՝ անիկա յստակօրէն արական կամ իգական չէ): Իրականութեան մէջ անիկա կրնայ գործածուիլ թէ՛ արական, թէ՛ իգական իմաստով, եւ նկարագրել միայն մէկ անձ (ինչպէս հայերէն «ան» դերանունը, թարգմ. մէջբ.):

Անգլերէն լեզուին մէջ այսպիսի դերանուն մը չկայ: Անգլերէնին մէջ կան «he», «she», «it» դերանունները: «It» դերանունը առարկայի կամ կենդանիի կը վերաբերի: «He» դերանունը արական է, իսկ «she» դերանունը՝ իգական: Անգլերէնին մէջ չկայ եզակի թիով չէզոք սեռի դերանուն, որ կրնայ թէ՛ արական, թէ՛ իգական իմաստ ունենալ: Յունարէնին մէջ այսպիսի դերանուն մը կայ, եւ անիկա յաճախ կ'օգտագործուի, երբ խօսքը Սուրբ Հոգիին մասին է: Կրկին, այս դերանունը կենդանի էակի կը վերաբերի, եւ ոչ թէ առարկայի:

Այսպիսի առանձնայատկութիւն մը կայ նաեւ Հին կտակարանին մէջ: Եբրայերէն բնագիրներուն մէջ կան շատ դէպքեր, երբ Սուրբ Հոգիին վերագրուող գործողութիւնը իր գործառոյթով իգական սեռի է (ոչ թէ իգական՝ ձեւով): Հրեաները յաճախ բառերը կ'օգտագործէին ըստ գործառոյթի (առաջին հերթին նշելով գործողութիւնը, ոչ թէ գործող անձը կամ առարկան): Աստուածաշունչին մէջ Սուրբ Հոգին ոչ մէկ տեղ նկարագրուած է՝ որպէս իգական անձնատրութիւն, բայց Անոր գործողութիւններէն ոմանք իգական յատկանիշներ ունին:

Ասիկա խորունկ թեմա է, որ ես չեմ կրնար մանրամասն ներկայացնել այս գիրքի շրջանակներուն մէջ, բայց թոյլ տուէք շատ պարզ ձեւով հետեւեալը ըսելու. ես չեմ կարծեր, որ Սուրբ Հոգին՝ իգական սեռի է: Թոյլ տուէք կրկին եւ անլի պարզ գրելու. Սուրբ Հոգին իգական սեռին չի պատկանիր: Կան մարդիկ, որոնք այսպիսի բան կը սորվեցնեն, բայց իմ կարծիքով՝ այդ ուսմունքը անհիմն է եւ խիստ զգացմունքային ընկալման արդիւնք: Կը խնդրեմ, որ ամէնքդ հեռացնէք այդ հասկացողութիւնը ձեր մտքէն: Սուրբ Հոգին աստուածուի չէ:

Ես կը փափաքիմ հետեւեալը ըսել: Մենք պէտք է յիշենք, որ Աստուած մեր պատկերով չէ ստեղծուած. մենք ստեղծուած ենք Անոր պատկերով: Ես գիտեմ, որ ճշմարտութիւնը տարրական կը թուայ, բայց եւ խիստ կարեւոր է մեր հետագայ ուսումնասիրութեան համար: Ծննդոց 1.27-ին մէջ գրուած է. «Աստուած ստեղծեց *մարդ արարածները* Իր պատկերովը: Աստուծոյ պատկերովը ստեղծեց զանոնք՝ արու եւ էգ» (NLT): Այլ թարգմանութիւններու մէջ գրուած

է. «Աստուած ստեղծեց մարդը» կամ «մարդկութիւնը»: Կարծիքովս, «մարդ արարածներ»ը կամ «մարդկութիւն»ը՝ այս խօսքի թարգմանութեան լուսազոյն տարբերակն է: Այնպէս որ, Ծննդոց գիրքին մէջ մենք կը տեսնենք, որ Աստուած *Իր պատկերով* ստեղծեց տղամարդիկն ու կիները: Մենք պէտք է հետեւեալ հարցումը ուղղենք. եթէ Ան Իր պատկերով ստեղծած է թէ՛ տղամարդիկը, եւ թէ՛ կիները, արդե՞՞ք չի նշանակեր, որ «կանացի» համարուող յատկանիշները նոյնպէս Աստուծմէ յառաջացած են: Արդե՞՞ք կարելի է, որ Սուրբ Հոգիին Անհատականութիւնը կը գերազանցէ մեր պատկերացումը արականի կամ իգականի մասին: Պէտք է որ այդպէս ըլլայ, քանի որ եւ տղամարդիկ, եւ կանայք Աստուծոյ պատկերով ստեղծուած են:

Համոզուած եմ, որ նկատած էք. խօսելով Սուրբ Հոգիին մասին՝ ես մշտապէս ի նկատի ունիմ արական սեռը, եւ կը շարունակեմ այդպէս վարուիլ: Գաղափարը այն մասին, որ Սուրբ Հոգիին որոշ յատկանիշները լեզուական տեսանկիւնէն կրնան իգական համարուիլ, եւ այս մէկը բաւականին բարդ ու շփոթեցուցիչ է: Այնուամենայնիւ, ես այս մասին յատուկ նպատակով գրեցի: Ես այս նիւթին մասին չէի անդրադառնար, եթէ չհամարէի, որ գիտնալով այս մասին՝ դուք կը կարենաք աւելի լաւ հասկնալ Սուրբ Հոգիին եւ աւելի մտերօրէն հաղորդակցիլ Անոր հետ:

Ան մեղմ եւ զգայուն է

Մինչեւ շարունակելը, թոյլ տուէք քիչ մը անցեալէս պատմեմ: Հայրս Երկրորդ համաշխարհային պատերազմի վեթերան է: Ան իննսունինը տարեկան է, եւ ես անսահման կը սիրեմ զինք: Հօրս դասերը մեծապէս օգնած են ինծի ամբողջ կեանքիս ընթացքին: Այնուամենայնիւ, բան մը կար, որուն համար ան չէր պատրաստած զիս. Ան չէր սորվեցուցած, թէ ինչպէս պէտք է վարուիլ ապագայի կնոջս հետ: Մէկ անգամ Պետրոս ըսաւ. «Հասկացողութեամբ վարուեցէք ձեր կնոջ, որուն հետ որ կ'ապրիք (Ա. Պետրոս 3.7, NLT): Երբ Լիզային հետ ամուսնացայ, ես անոր հետ «հասկացողութեամբ» չէի վարուեր: Լիզան կեանքիս առաջին սէրն էր: Անորմէ առաջ ես ոչ մէկ կնկայ հետ մտերիմ փոխյարաբերութիւն ունեցած եմ՝ այնպէս որ, ես կը շփուէի անոր հետ այնպէս, ինչպէս իմ ընկերներէն մէկուն հետ կը շփուիմ: Հասկնալի է, որ այդ մօտեցումը անյաջող էր: Ես պէտք է սորվէի, թէ ինչպէս կարելի է վարուիլ անոր հետ՝ *որպէս կնոջ*:

Օրինակ՝ ես պետք է սորվեի մեղմօրէն խօսիլ Լիզային հետ: Դժբախտաբար, երբեմն ես կոշտութեամբ կը խօսեի ընտանիքիս անդամներուն հետ: Գոհութիւն Աստուծոյ, որ Սուրբ Հոգին կը յանդիմանէ, եւ անկէ յետոյ ես կրնամ ներողութիւն խնդրել եւ շտկել մեր փոխյարաբերութիւնները: Մէկ անգամ ես շատ կոպիտ խօսեցայ որդիներէս մէկուն հետ եւ ստիպուած էի ներողութիւն խնդրել իրմէ: Որդիս արագօրէն ներեց ինծի, եւ մեր հաղորդակցութիւնը վերականգնուեցաւ: Բայց Լիզան ուրիշ ձեւով արձագանգեց իմ վարքին: Ան վշտացած էր քանի մը օրեր շարունակ: Ան չէր վիրաւորուած ինծմէ, պարզապէս ան փոխյարաբերութիւններու մէջ զգայուն էր: Որդիս եւ ես գրեթէ անմիջապէս հաշտուեցանք, բայց ես պետք է քիչ մը ջանայի, որպէսզի իմ շփումը կնոջս հետ վերականգնուէր: Այդ միջադէպէն երկու օր անց Լիզան ըսաւ ինծի.

-Մինչեւ հիմա մարմինս կը սկսի դողալ, երբ կը յիշեմ, ինչպէս խօսեցար մեր զաւակին հետ:

Ես հասկցայ, որ ատիկա Լիզային պարգեւներէն մէկն է: Ինչպէս կիններուն մեծամասնութիւնը, ան սերտօրէն կապուած է իր հարազատներուն հետ եւ խիստ պաշտպանողական վերաբերմունք ունի անոնց հանդէպ, որոնք իրեն մօտիկ են:

Արդե՞ծք հնարաւոր է, որ Սուրբ Հոգին նոյնպէս ունենայ այս սերտ կապուածութեան յատկանիշը, որ մենք սովորաբար կանացի կը համարենք: Աստուածաշունչին մէջ կ'ըսուի. «Մի՛ տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին» (Եփեսացիս 4.30): Ինչպէս կը նշէ Ռիք Ռեննէրը «Յունարէնի գանձերը» գիրքին մէջ, «*տրտմիլ*» բառը բնագիրին մէջ ունի «խոր տրտմութիւն եւ վիշտ» իմաստը: Ասիկա մէկ բառէ կը ծագի, որ կը նշանակէ այնպիսի ցաւ, որ կարելի է միայն երկու մարդոց միջեւ զգալ, որոնք խորապէս կը սիրեն զիրար: Պօղոսը, իրականութեան մէջ, հետեւեալը կ'ըսէ. «Մի՛ վշտացնէք եւ ցաւ մի՛ պատճառէք Անոր, որ խորապէս կը սիրէ ձեզ»: Այժմ, եկէք խօսքը կարդանք իր համահատուածով.

«Մի՛ օգտագործէք անպարկեշտ կամ վիրաւորական բառեր: Թող ամէն ինչ, որ կ'ըսէք, բարի եւ օգտակար ըլլայ, որպէսզի ձեր բառերը քաջալերական ըլլան խողներուն համար: Եւ *մի՛ տրտմեցնէք* [վշտացնէք] Աստուծոյ Սուրբ Հոգին ձեր ապրած կեանքով: Յիշեցէ՛ք՝ Ան համարած է ձեզ Իրենինը՝ երաշխաւորելով, որ դուք փրկուած կ'ըլլաք փրկութեան օրը: Ազատեցէ՛ք բոլոր դառնութենէ, զայրոյթէ, բարկութենէ, կոպիտ բառերէ եւ չարախօսութենէ, ինչպէս եւ ամէն

տեսակ չար վարքէ: Փոխարէնը՝ բարի եղէք մէկդ միասին հանդէպ, մեղմօրէն վարուեցէք իրարու հետ՝ ներելով մէկդ միասին ճիշդ այնպէս, ինչպէս Աստուած Քրիստոսի միջոցով ներեց ձեզ: (Եփեսացիս 4.29-32, NLT):

Արդեօք Սուրբ Հոգիին մեղմութիւնը կը տեսնէք:

Մեղմութիւնը ճշմարիտ զօրութիւն է, որ հիացնունքի արժանի է: Պօղոս կը պատուիրէ, որ մեղմօրէն վերաբերինք մէկս միսին նկատմամբ: Եթէ ես կը փափաքիմ առողջ, կենդանի փոխարաբերութիւններ ունենալ կնոջս հետ, աւելի լաւ է մեղմօրէն վարուիմ եւ հանդարտօրէն խօսիմ զաւակներուս հետ: Նմանապէս, եթէ կը փափաքիմ առողջ եւ կենդանի շփում ունենալ Սուրբ Հոգիին հետ, մենք պէտք է զգայուն ըլլանք այն ամէն ինչի նկատմամբ, որ կը տրտմեցնէ Ձինք: Շատ հետաքրքրական է, որ Պօղոսը կը նոյնացնէ Սուրբ Հոգիին տրտմութիւն պատճառելը հետեւեալ վարքագիծին հետ՝ *անպարկեշտ կամ վիրատրական խօսքեր, զայրոյթ, բարկութիւն, կոպիտ բառեր եւ չարախօսութիւն*: Կինս գրեթէ նոյն վարքէն կը տրտմի: Արդեօք ասիկա վկայութիւն չէ այն մասին, թէ Հոգիին բնորոշ է սերտ կապուածութեան յատկանիշը, որ մենք սովորաբար կանացի կը համարենք:

Ուշադրութիւն դարձուցէք, որ Պօղոսը չի գրեր. «Մի տրտմեցնէք Յիսուսը»: Նմանապէս ան չի գրեր. «Մի տրտմեցնէք Հայրը»: Ան մասնատրապէս կը նշէ. «Մի տրտմեցնէք Սուրբ Հոգին»: Սուրբ Հոգին կը բնակի մեր սրտերուն մէջ: Ան կ'երթայ այնտեղ, ուր մենք կ'երթանք. Ասիկա կը վկայէ մտերիմ փոխարաբերութեան մասին: Այդ պատճառով իսկ, Ան խորապէս կ'ազդուի ամէն ինչէն, որ մենք թոյլ կու տանք մեր կեանքերուն մէջ:

Նայեցէք այս հատուածին, մէկ ուրիշ տեսանկիւնէ: Եթէ ինչ որ մէկը կոշտ ձեւով խօսի հետս, ասիկա այնքան ալ չ'անհանգստացներ զիս: Բայց եթէ ինչ որ մէկը կոպտօրէն կնոջս հետ խօսի, ան լուրջ խնդիրներ կ'ունենայ: Յիսուս այսպիսի միտք մը արտայայտեց, երբ ըսաւ. «Ով որ Որդի Մարդոյ [Յիսուսին] դէմ բան ըսէ, պիտի ներուի անոր, բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ ըսէ, պիտի չներուի, ո՛չ այս աշխարհին մէջ եւ ո՛չ գալու աշխարհին մէջ» (Մատթէոս 12.32): Արդեօք հետաքրքիր չէ, որ Հայր Աստուած (յայտնուած Որդիին միջոցով, որ միայն Իր Հօր կամքին համաձայն կը խօսէր) Իր պաշտպանութիւնը կը դնէ Սուրբ Հոգիին վրայ: Հայրը նոյն տեսակի պաշտպանութիւն չսահմանեց այն փոխարաբերութիւններուն մէջ, որ մենք Յիսուսին կամ Իր հետ ունինք, բայց ասիկա Սուրբ Հոգիին համար ըրաւ:

Փոխյարաբերությունը Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին միջեւ հետաքրքրական եւ հանելուկի պէս է, եւ որ մենք թերեւս բոլորովին չենք կրնար հասկնալ: Հետաքրքրական է նշել այս առանձնայատկությունը Սուրբ Հոգիին եւ մեր փոխյարաբերություններուն մէջ: Մենք պէտք է արժեւորենք եւ պաշտպանենք Անոր հետ ունեցած մեր շփումը: Կարելոր է՝ յիշենք, որ մենք կրնանք տրտմութիւն պատճառել Անոր, եւ երբեմն նոյնիսկ խոր տրտմութիւն: Ինչո՞ւ այդչափ կարելոր է գիտնալ ասոր մասին: Պատճառը անիկա է, որ Անոր ներկայութիւնը չի դրսեւորուիր ձեր կեանքին մէջ, եթէ չհասկնաք, թէ ինչպէս պէտք է հաղորդակցիլ Անոր հետ:

Օր 5

Ան զգայուն է, բայց նաեւ՝ ուժեղ

Սուրբ Հոգին կը կոչուի Մխիթարիչ, այնպէս չէ: Մանուկները սովորաբար որո՞ւ մօտ կը վազեն, երբ իրենք իրենց վիրաւորուած զգան. մայրերու մօտ: Նկատի ունենալով ասիկա՝ քանի մը նահանգներ ԱՄՆ-ի մէջ օրինագիծեր ստեղծած են, որոնցմով կ'ընդգծուի կին սպաներու դերը՝ անչափահաս յանցագործներու հետ աշխատելու ընթացքին: Հաւայեան կղզիներուն մէջ օրինագիծ կայ, որ կը քաջալերէ վերջերս ձերբակալուած անչափահասներու առաջին հաղորդակցութիւնը կին սպայի հետ: Անոնք հասկցած են, որ դեռահասները անելի լաւ կ'արձագանգեն կին սպաներուն: Կիները բնականօրէն մխիթարելու եւ սփոփելու ներքին կարողութիւն ունին: Կրկին խօսելով ասոր մասին՝ ես ի նկատի չունիմ, որ Սուրբ Հոգին կին է:

Ինչ որ առումով, ես Սուրբ Հոգին կը նմանցնեմ Դաւիթ թագաւորին: Երբեք նկատած էք, թէ որքան մեղմ էր Դաւիթը, որքան գթասիրտ եւ զգայուն էր ան: Երբ Աբիսողոմը մահացաւ, ան լացաւ, թէւ ինքը բանակին հրամայած էր՝ վերջ տալու Աբիսողոմին ապստամբութեան (տէս Բ. Թագաւորաց 19): Բազմաթիւ առիթներով Դաւիթ կու լար եւ երգեր կը գրէր: Անոր փոխյարաբերությունը Յովնաթանին հետ ընկերութեան լաւագոյն օրինակներէն մէկն է Սուրբ գիրքին մէջ: Բայց մի՛ մոռնաք, որ Դաւիթը պատերազմող էր, ան պարտութեան մատնեց հսկայ Գողիաթը եւ հազարաւոր մարդոց սպաննեց: Ան

Զօրաւորներուն առաջնորդն էր, որ, հաւանաբար, ամենասահեղ մարտական խումբն էր Իսրայէլի պատմութեան մէջ (տե՛ս Բ. Թագաւորաց 23): Մէկ անգամ Դաւիթ նոյնիսկ որոշեց սպաննել մարդ մը, որ հրաժարեցաւ ջուր եւ սնունդ տալու իր հետեւորդներուն (տե՛ս Ա. Թագաւորաց 25): Դաւիթ թուամորթ չէր. ան պատերազմող էր, բայց անոր հետ միասին ան մեղմ ու զգայուն էր:

Թոյլ տուէք յիշեցնելու ձե՛զ, որ Սուրբ Հոգիին անուններէն մէկը՝ Զօրութեան Հոգի է (տե՛ս Եսայեայ 11.2): Ան ամենազօր է. Ան բնաւ թոյլ կամ անկարող չէ: Միեւնոյն ժամանակ, Ան բարեսիրտ եւ խորապէս զգայուն է: Ինչպիսի՞ զարմանալի Աստուած:

Մի՛ տագնապիք, եթէ դժուարանաք հասկնալ Անոր Անհատականութիւնը: Մենք պէտք է մշտապէս յիշենք, որ Անոր Անհատականութիւնը չի կրնար բոլորովին մեր սահմանափակ մարդկային հասկացողութեամբ ընկալուիլ: Այնուամենայնիւ, Ան խոստացած է յայտնել Ինքզինքը մեզի, եթէ մենք մօտենանք Անոր: Ինչպիսի՞ հրաւեր:

Ինչպէս արդէն նշած էի, կարելի չէ բոլորովին նկարագրել Սուրբ Հոգիին գաղտնիքը եւ փառքը (տե՛ս Ա. Կորնթացիս 2.6-16): Նպատակս է՝ պարզապէս ներկայացնել Զինք, որպէսզի դուք սկսիք բացայայտել Անոր մեծութիւնը եւ վայելէք Անոր ներկայութիւնը ձեր կեանքին մէջ:

Զգոյշ եղէ՛ք, որ չտրամեցնէք Զինք

Վերջերս, գրեթէ հեռատեսիլ չէի դիտեր: Ես աղօթքի եւ Խօսքի մէջ էի ու զօրաւոր կերպով կը հաղորդակցէի Աստուծոյ հետ: Այդ ընթացքին մէկ անգամ ես մտայ մեր հիւրասենեակը, ուր զաւակներս գեղարուեստական ֆիլմ կը դիտէին: Այդ ֆիլմը վատ չէր, բայց ես սպանութեան դէպքի ժամանակ սենեակ մտայ: Տեսնելով անիկա՝ անմիջապէս դուրս ելայ սենեակէն: Քանի որ շատ զգայուն դարձած էի Սուրբ Հոգիին հանդէպ մեր հաղորդակցութեան ընթացքին, ես կրնայի զգալ, որ այդ պատկերները տրտմութիւն կը պատճառէին Անոր:

Մենք պէտք չէ մոռնանք երբեք, որ Հոգին մշտական բնակութիւն հաստատած է մեր մէջ: Երբ սինեմա կ'երթաք՝ որեւէ ֆիլմ մը դիտելու, դուք ձեզի հետ կը տանիք Անոր՝ տիեզերքի Աստուծոյն, որ սուրբ եւ

անսահմանօրէն զօրաւոր է: Ան մշտապէս ձեզի հետ է, որովհետեւ Ան խոստացաւ, որ երբեք չի ձգեր եւ չի լքեր ձեզ: Բայց դուք կը յայտնաբերէք հետեւեալը. երբ ստիպէք Սուրբ Հոգիին, որ յայտնուի այնպիսի իրավիճակներուն մէջ, որոնք կը տրտմեցնեն Ձինք, Ան կը լռէ:

Ինչպէ՞ս վարուիլ, եթէ տրտմութիւն պատճառած ենք Հոգիին: Մենք պէտք է անմիջապէս ներողութիւն խնդրենք, բայց ներողութիւնը պէտք է խոր եւ անկեղծ ըլլայ: Երբ ես կը տրտմեցնեմ կնոջս, արագօրէն ըստած «եկո՛ւր ամէն ինչ մոռնանք» արտայտութիւնը օգուտ չի տար: Լիզան գիտէ, թէ ինչ կայ մտքիս մէջ: Ան կը զգայ, երբ ես պարզապէս կը փափաքիմ մոռնալ տեղի ունեցածին մասին, եւ երբ անկեղծօրէն կը փափաքիմ անդրադառնալ այն խնդիրին, որ մեր փոխարարբերութիւնը խզելուն պատճառը դարձաւ: Լիզային նպատակը՝ ինծի դատապարտելը չէ, այլ համոզուիլը, որ մեր փոխարարբերութիւններուն մէջ չկայ կեղծաւորութիւն կամ արհեստական վերաբերմունք: Նոյն կերպով, Աստուծոյ Հոգին նախանձաւոր է մեզի հանդէպ. Ան չի փափաքիր մակերեսային փոխարարբերութիւններ ունենալ, այլ անկեղծ մտերմութիւն:

Աւելի շուտ այս գլուխին մէջ ես պատմեցի, թէ ինչպէս մէկ անգամ կոշտ ձեռով խօսեցայ զաւակներէս մէկուն հետ: Յաջորդ քանի մը օրերուն ընթացքին Սուրբ Հոգին շարունակ կը յիշեցնէր ինծի այդ իրադարձութիւնը՝ անձնական աղօթքիս ժամանակ: Ան չէր դատապարտեր զիս, այլ՝ կ'անդրադառնար Իր հետ ունեցած իմ հաղորդութեան: Ես չէի հասկնար, թէ որքան շատ տրտմեցուցած էի Ձինք: Սկիզբը ես քանի մը անգամ ներողութիւն խնդրեցի, սակայն այդ ներողութիւնը դրդուած չէր ճշմարիտ աստուածային տրտմութենէն: Ես ւսելի շատ կը ցանկայի մոռնալ այդ դէպքը եւ դէպի առաջ շարժիլ: Այնուամենայնիւ, անոր մեղմ շարունակական մղումը ճշմարիտ, խոր, աստուածային տրտմութիւն յառաջացուց իմ մէջ, ինչ որ, իր կարգին, մաքրեց իմ անձը (միտքը, կամքը եւ զգացումները):

Պօղոս նոյն ձեռով կորնթացիներու եկեղեցիին դիմեց այն բանէն յետոյ, երբ անոնց յարաբերութիւնները Աստուծոյ հետ խզուած էին անհնազանդութեան պատճառով: Ան գրեց (եւ կարդալով անոր խօսքերը՝ մտապահեցէք, որ ատոնք Աստուծոյ Հոգիէն են).

«Պարզապէս տեսէք, թէ ինչ կատարեց ձեր մէջ այս աստուածային տրտմութիւնը: Ինչպիսի՞ փութաջանութիւն, ինչպիսի՞ մտահոգութիւն՝ ձեր անձերը մաքրելու մասին, ինչպիսի՞ վրդովմունք, նաեւ տագնապ, ինչպիսի՞ ձգտում՝ զիս տեսնելու համար: (Բ. Կորնթացիս 7.11, NLT)

Փառք Աստուծոյ, որ մենք ներուած եւ մաքրուած ենք Գառնուկին արինով: Բայց թէ մենք՝ հաւատացեալներս, ճիշդ դիրք ունինք Աստուծոյ առջեւ, մենք դեռ պէտք է նորոգենք մեր հաղորդակցութիւնը Սուրբ Հոգիին հետ այն պարագային, եթէ տրտմեցուցած ենք Ձինք: Պօղոս առաքեալը յանդիմանեց կորնթացիները, մինչեւ որ անոնք ճշմարտապէս զղջացին. նոյն կերպով, Սուրբ Հոգին շարունակ կը յանդիմանէ մեզ, որովհետեւ Ան նախանձաւոր է եւ կը ցանկայ, որ մենք անկեղծօրէն շփուինք Իրեն հետ: Այն աստուածային տրտմութիւնը, որ ես վերապրեցայ, անկեղծ ջերմեռանդութիւն յառաջացուց մէջս՝ իրավիճակը շտկելու համար: Բացի ասկէ՝ իմ ներսը ձգտում յառաջացաւ՝ վերականգնելու իմ հաղորդութիւնը Աստուծոյ հետ: Փառք Աստուծոյ, որ Սուրբ Հոգին արագօրէն կը ներէ մեզ:

Երբեք մի՛ մոռնաք. Սուրբ Հոգին մեղմ, գթասիրտ եւ մխիթարող է (յատկանիշներ, որոնք յաճախ կը վերագրուին կիներուն), բայց նոյնպէս ուժեղ եւ զօրաւոր է, եւ նման է պատերազմողի (յատկանիշներ, որոնք յաճախ կը վերագրուին տղամարդոց): Մենք պէտք է աւելի ու աւելի ճանչնանք Անոր անհատականութիւնը, եթէ կը փափաքինք մտերմօրէն շփուիլ Անոր հետ: Մենք պէտք է հաղորդակցինք Անոր հետ՝ Անոր պայմաններով: Երբ կը սկսինք աւելի հասկնալ, թէ ով է Սուրբ Հոգին, մենք կը կարենանք աւելի խորունկ հաղորդակցութիւն ունենալ Ամենակարողին հետ:

Երբեմն ես կը փորձեմ խօսիլ կնոջս հետ կովֆի մասին: Ես կրնամ, օրինակ, ըսել.

-Սիրելիս, գիտե՞ս, ես այսօր 68 միաւոր հաւաքած եմ:

Որդիներս կ'ոգեշնչուին եւ կ'ըսեն.

-Հայրիկ, պատմէ՛ մեզի ամէն մէկ հարուածի մասին:

Իսկ կնոջս աւելի կը հետաքրքրէ, թէ ինչի մասին խօսեցայ խաղակիցներուս հետ կովֆի դաշտին մէջ: Փոխյարաբերութիւններն են, որ իրականութեան մէջ կ'ոգեշնչեն զինք: Եթէ ես փափաքիմ Լիզային հետ հաղորդակցիլ իր մակարդակին համեմատ, ես պէտք է խօսիմ այն թեմաներուն շուրջ, որոնք կը հետաքրքրեն զինք: Նոյն ձեւով, մենք պէտք է յայտնաբերենք, թէ ինչը կը հետաքրքրէ եւ կը հաճեցնէ Աստուծոյ Հոգին: Երբ ուսումնասիրենք Անոր մեծութիւնը՝ կարդալով Խօսքը եւ արժանաւոր ժամանակ անցընելով Անոր ներկայութեան մէջ, Ան հաւատարմօրէն Ինքզինքը կը յայտնէ մեզի:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ. Օր 1

ԴՈՒՔ ԿՐՆԱՔ ԼՍԵԼ
ԱՍՏՈՒԾՈՅ ՁԱՅՆԸ

«Ան որ Աստուծոյ կը պարկանի, կը լսէ այն, ինչ որ Աստուած կ'ըսէ...»:

— (Յովհաննէս 8.47, NIV)

Այո, դուք կրնաք լսել Աստուծոյ ձայնը: Ան տակաւին կը խօսի Իր ժողովուրդին հետ այսօր, եւ Ան կը խօսի մեզի հետ Իր արժէքաւոր Սուրբ Հոգիին միջոցով: Հեղինակներ Հենրի Պլեքեպիի եւ Քլայօ Քինկի ձգտումն է, որ քրիստոնեաները ւաւելի խոր, ւաւելի անձնական փոխյարաբերութիւններ ունենան Աստուծոյ հետ: Անոնք կը գրեն.

«Աստուած պարզօրէն կը խօսէր Իր ժողովուրդին հետ Գործք առաքելոց գիրքին մէջ: Ան պարզօրէն կը խօսի մեզի հետ այսօր: Գործք առաքելոց գիրքէն մինչեւ օրս, Աստուած խօսած է Իր ժողովուրդին հետ *Սուրբ Հոգիով*: ...Քանի որ Ան յարատեւ ներկայ է հաւատացեալին ներսը, Ան կրնայ պարզօրէն խօսիլ ձեզի հետ որեւէ մէկ պահուն եւ որեւէ մէկ ձեռով, որ Ան կ'ընտրէ»¹:

Յիսուս յայտարարեց, որ Ինքն է Բարի Հովիւր, իսկ մենք՝ Իրեն գառնուկները, որոնք կրնան լսել եւ ճանչնալ Իր ձայնը: Խոկացէք Անոր խօսքերուն մասին Յովհաննէս 10.3-5, 11, 14, 27-ին մէջ: Սուրբ Հոգին ձեզի ինչ կը յայտնէ:

Սուրբ Հոգիին անուններէն մէկը՝ *Ճշմարտութեան Հոգի* է: Ինչո՞ւ և այսպիսի անուն տրուած է Անոր: Պլեքեպիին կը շարունակէ.

«...Մենք չենք կրնար հասկնալ Աստուծոյ ճշմարտութիւնը, եթէ Աստուծոյ Սուրբ Հոգին չյայտնէ անիկա: Ան մեր Ուսուցիչն է: Երբ Ան կը սորվեցնէ ձեզի Աստուծոյ Խօսքը, նստէք Անոր առջեւ եւ արձագանգեցէք Անոր: Երբ կ'աղօթէք, ուշադրութիւն դարձուցէք, թէ ինչպէս Ան կը գործածէ Աստուծոյ Խօսքը, որպէսզի ձեր սրտին մէջ հաստատէ այն խօսքը, որ ստացած էք Աստուծմէ: Հետեւեցէք, թէ Ան

ինչ կ'ընէ ձեր շուրջը՝ ձեր հանգամանքներուն մէջ: Այն Աստուածը, որ կը խօսի ձեզի հետ, երբ դուք կ'աղօթէք, եւ այն Աստուածը, որ կը խօսի ձեզի հետ Սուրբ գիրքէն՝ նոյն Աստուածն է, որ ձեր շուրջը կը գործէ: Աստուած կը խօսի Սուրբ Հոգիին միջոցով ամբողջ Աստուածաշունչին մէջ: Ան կը խօսի աղօթքի, իրավիճակներու եւ եկեղեցիին միջոցով, որպէսզի յայտնէ Իր նպատակներն ու Իր ճանապարհները»²:

Այսպիսով, Սուրբ Հոգին ինչ կրնայ յայտնել ձեզի: Ուշադրութեամբ կարդացէք Յիսուսին խօսքերը Յովհաննէս 14.26, 15.26 եւ 16.12-15-ին մէջ եւ առանձնացուցէք հինգ բան, որ Հոգին կը սորվեցնէ:

Ո՞րն է Աստուծոյ ձայնը ճանչնալու բանալին: Պլեքեպին եւ Քինկը կը շարունակեն.

«Աստուծոյ ձայնը ճանչնալու բանալին՝ բանածեւ չէ: Ատիկա մեթոտ չէ, որուն կրնաք հետեւիլ: Աստուծոյ ձայնը ճանչնալը Աստուծոյ հետ սիրային, մտերիմ փոխյարաբերութենէն կը բխի: ...Ձեր հաղորդակցութեան ընթացքին, երբ Աստուած ձեզի հետ կը խօսի, իսկ դուք կը պատասխանէք, կու գայ ժամանակ մը, երբ դուք ատելի դիւրին կը ճանչնաք Անոր ձայնը»³:

Աստուծոյ ձայնը ճանչնալու եւ լսելու բանալին՝ *շփումն* է: Ենովքը, Նոյը, Աբրահամը եւ շատ ուրիշներ անձամբ վերապրած են ասիկա, եւ դուք կրնաք նոյնը ընել: Ինչ սկզբունք կայ Ամովս 3.7, Դանիէլ 2.22 եւ Սաղմոս 25.14 խօսքերուն մէջ, որ կ'արտացոլուի Յովհաննէս 15.5, Ա. Կորնթացիս 2.9-10 եւ Եփեսացիս 1.9 խօսքերուն մէջ: Արդե՞՞ք ասիկա կը քաջալերէ ձեզ՝ որպէս «վերջին օրերու» հաւատացեալ:

Օրինակներու համար, **կարդացէք** Ենովքի (Ծննդոց 5.21-24), Նոյի (Ծննդոց 6.9-18), Աբրահամի (Ծննդոց 18.16-22) եւ Պետրոսի (Գործք 10.9-23) կեանքերուն մասին:

ԱՆՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՁԵՐ ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆ Է

«Դուն ըսիր. «Իմ երեսը փնտրեցէ՛ք [որոնեցէ՛ք Իմ ներկայութիւնը եւ ունեցէ՛ք անոր պահանջքը՝ որպէս ձեր կենսական կարիք]»: Իմ սիրտը կ'ըսէ Քեզի. «Քու երեսը (Քու ներկայութիւնը) պիտի փնտրեմ, ով Տէր»:

— Սաղմոս 27.8, AMP

Դաւիթ չէր նմաներ այդ սովորական մարդոց, որոնց կը ճանչնաք: *Մէկ բան* կար, որ իր սրտին մէջ կը վառէր. մէկ ձգտում, որ անոր գիտակցութիւնը կը կլանէր: Ան Աստուծոյ ներկայութիւնը կը փափաքէր: «*Մէկ բան* կը խնդրեմ Տէրոջմէն,- ան ըսաւ,-Այն բանը, որ ամէնէն շատ կը փնտռեմ՝ կեանքիս բոլոր օրերը Տէրոջը տան մէջ ապրիլ՝ զմայելով Տէրոջ կատարելիութիւններով եւ Անոր տաճարին մէջ խոկալով» (Սաղմոս 27.4, NLT):

Ոչինչ, բացարձակապէս ոչինչ այնքան արժէքաւոր է, որքան Աստուծոյ ներկայութիւնը, որ կը բնակի մարդուն հետ, եւ Աստուծոյ համագործակցութիւնը մարդու կեանքին մէջ: Քանի որ Հայրը եւ Որդին Երկինքն են, Սուրբ Հոգին է, որ Աստուծոյ ներկայութիւնը կը յայտնէ երկրի վրայ, իրաքանչիւր հաւատացեալի ներսը եւ անոր միջոցով: Նիքոլաս Հերմընը, որ առաւել յայտնի է **Եղբայր Լոուրէնս** անունով, սորվեցաւ «գործադրել Աստուծոյ ներկայութիւնը»: Անոր առաքելութիւնն էր՝ օգնել այլ մարդոց՝ վերապրելու նոյն ներկայութիւնը: Ըստ այս վանական ծառայողին, որ տասնեօթերորդ դարուն կ'ապրէր.

«Ամենասուրբ եւ անհրաժեշտ սովորութիւնը մեր հոգեւոր կեանքին մէջ՝ Աստուծոյ ներկայութիւնը գործադրելն է: Ասիկա կը նշանակէ՝ շարունակական վայելք զգալ Անոր աստուածային ընկերակցութեան մէջ, խոնարհաբար եւ սիրով խօսիլ Անոր հետ ամէն ժամանակ եւ իրաքանչիւր պահուն՝ առանց որեւէ ձեւով սահմանափակելու այդ խօսակցութիւնը»⁴:

Կեցէ՛ք եւ մտածեցէ՛ք. *որքանո՞վ Աստուծոյ ներկայութիւնը կարեւոր է կեանքիս մէջ: Ինչպիսի՞ն կ'ըլլայ կեանքը՝ առանց Անոր:*

Պատկերացուցէք, որ առաւօտեան արթննաք՝ առանց Սուրբ Հոգիին ներկայութեան: Վերանայեցէք Անոր անուններու ցուցակը (տես էջ 25-26), եւ նորոգուած տեսանկիւնով գրեցէք, թէ որքան կարեւոր է Անոր ներկայութիւնը ձեզի համար:

Ո՛ր եւ երբ մենք պէտք է վերապրինք Սուրբ Հոգիին ներկայութիւնը: Լոռութենաւ կը շարունակէ.

«Անհրաժեշտ չէ, որ մնանք եկեղեցիին մէջ՝ Աստուծոյ ներկայութեան մէջ մնալու համար: Մենք կրնանք մեր սրտերը անձնական աղօթքատուններ դարձնել եւ մտնել այդտեղ ամէն ժամանակ՝ Աստուծոյ հետ առանձին զրուցելու համար: Այս զրոյցները կրնան անսահման սիրով լեցուն եւ հեզաբարոյ ըլլալ, եւ իրաքանչիւր անձ այս ձեւով կրնայ շփուիլ Աստուծոյ հետ: Արդեօք որեւէ մէկ պատճառ կայ՝ այդ շփումը չսկսելու համար»⁵:

Անկասկած, ձեզի անհրաժեշտ է արժանաւոր ժամանակ անցընել Սուրբ Հոգիին ներկայութեան մէջ, երբ բոլորովին կը կեդրոնացնէք ձեր ուշադրութիւնը Անոր վրայ: Այս ժամանակը հետեւեալը կ'ընդգրկէ. կարդալ Անոր Խօսքը, խօսիլ Անոր հետ եւ լսել Զինք, գոհանալ Անորմէ, ու գովերգել Անոր, եւ պարգապէս լուռ նստիլ: Կեցէք եւ աղօթեցէք. «Սուրբ Հոգի, ինչպիսին պէտք է ըլլայ Քեզի հետ մենիկ պահս կեանքիս այս շրջանին»: Գրեցէք, թէ Ան ինչ կը յայտնէ:

Ինչպէս կրնաք Աստուծոյ ներկայութիւնը գործադրել: Եղբայր Լոռութենաւ կը գրէ. «Պարզապէս Աստուծոյ առջեւ եկէք... եւ ձեր ուշադրութիւնը սեւեռեցէք Անոր ներկայութեան վրայ: Եթէ ձեր միտքը երբեմն կը թափառի, մի՛ անհանգստանաք, որովհետեւ

անհանգստությունը միայն անելի կը շեղէ ձեզ: Թոյլ տուէք, որ ձեր կամքը մեղմօրէն ձեր ուշադրությունը Աստուծոյ վերադարձնէ... *զարգացուցէք Անոր հետ յաճախ խօսելու սուրբ սովորությունը*»⁶: Կեցէք եւ աղօթեցէք. «Սուրբ Հոգի, ինչ կրնամ ընել, որպէսզի ուշադրութիւնս անելի կեդրոնացնեմ Քու վրայ»: Լսեցէք, թէ ինչ կը պատասխանէ Ան, եւ ձեր կեանքին մէջ գործադրեցէք այն, ինչ որ կ'ըսէ ձեզի:

Հետագայ ուսումնասիրութեան համար...

Կարդացէք Ա. Մնացորդաց 16.9-11, Սաղմոս 22.26, 105.3-4, Առակաց 8.17-18, Եսայեայ 55.1-3, 6, Երեմեայ 29.11-13, Մատթէոս 6.33, Եբրայեցիս 12.1-2:

Սերտողութիւն. Օր 3

ԱՆ ԿՐ ՅԱՆԿԱՅ ՄՕՏԻԿ ԸԼԼԱԸ ՁԵԶԻ

«Ահա՛: Ես դուռին առջեւ կեցած եմ եւ մշտապէս կը թակեմ: Եթէ մէկը լսէ, թէ ինչպէս Ես կը կանչեմ անոր, եւ բանայ դուռը, Ես ներս կը մտնեմ ու կը հաղորդակցիմ անոր հետ եւ ան Ինձի հետ»:

— (Յայտնութիւն 3.20, TLB)

Աստուած, Սուրբ Հոգի Անձին միջոցով, կը ցանկայ աւելի մօտիկ ըլլալ ձեզի, աւելի քան ոեւէ մէկ մարդ, որ կ'ապրի այս երկրին վրայ: Ան կը փափաքի *մտերմութիւն*' փոխյարաբերութիւններու ամենախոր մակարդակը, որ կարելի է վերապրիլ:

Ինչ որ մէկը ըսած է, որ Աստուծոյ հետ մտերիմ ըլլալը կը նմանի անոր, որ «Աստուած իմ ներսը կը տեսնէ», եւ աստիկա ճիշդ է: Սուրբ Հոգին կրնայ մտնել այնտեղ, ուր ոչ մէկ մարդ կրնայ՝ մեր շունչին եւ հոգիին ներսը: Ան սահմանափակուած չէ ժամանակով ու տարածութեամբ: Հոգին ոչ միայն կը քննէ եւ գիտէ մեր սրտերը, այլ նոյնպէս կը քննէ եւ գիտէ Աստուծոյ սիրտը: Ան կը յայտնէ մեզի Աստուծոյ խորունկ միտքերը, գաղտնիքներն ու ցանկութիւնները, որպէսզի մենք կարենանք «տեսնել Անոր ներսը»:

«Տէրոջ [քաղցր, բաւականութիւն պատճառող ընկերութեան] գաղտնիքը ունին անոնք, որոնք կը վահնան Անորմէ (երկիւղածութիւն կը տաճեն Անոր հանդէպ եւ կը երկրպագեն Անոր), եւ Ան ցոյց կու տայ անոնց Իր ուխտը եւ կը յայտնէ անոնց [խորունկ, ներքին] նշանակութիւնը»:

— (Սաղմոս 25.14, AMP)

Կրկին, Սուրբ Հոգին՝ «Ճշմարտութեան Հոգին» է, որ կ'առաջնորդէ մեզ ամէն ճշմարտութեան մէջ: Կայ արդեօք որեւէ մէկ հարցում Աստուծոյ կամ Յիսուսին մասին, որուն պատասխանը կը ցանկաք ստանալ, կամ որեւէ սուրբգրային հատուած, որ կը փափաքիք հասկնալ: Աղօթեցէք եւ խնդրեցէք Սուրբ Հոգիէն, որ ցոյց տայ անոր ճշմարիտ, խոր իմաստը, նաեւ թէ ինչպէս աստիկա կը վերաբերի ձեզի: Գրեցէք այն, ինչ որ Ան կը յայտնէ:

«Եւ Յիսուս բացատրեց անոնց այն, ինչ ըսուած էր Իր մասին բոլոր Սուրբ գիրքին մէջ՝ սկսելով Մովսէսի գիրքերէն եւ բոլոր մարգարէներու գրուածքէն»:

— (Ղուկաս 24.27, GNT)

Հոգին կը յայտնէ ճշմարտութիւնը ոչ միայն Սուրբ գիրքին մասին, այլ նոյնպէս՝ մեր մասին եւ այն ամէն ինչի մասին, որ կայ մեր կեանքին մէջ:

Կայ արդեօք որեւէ բնագաւառ ձեր *կեանքին մէջ*, որ դուք պարզապէս չէք հասկցած: Թերեւս յանկարծակի կը բարկանաք կամ վախով կը լեցուիք որոշակի իրավիճակներու մէջ՝ առանց ակնյայտ պատճառներու: Սուրբ Հոգին գիտէ, թէ ինչու այդպէս կը վարուիք: Կեցէք եւ աղօթեցէք. «Սուրբ Հոգի, ինչն է այսպիսի վարքի մը իրական, հիմքային պատճառը: Տո՛ւր ինձի Քու աչքերը՝ տեսնելու համար: Ինչ պէտք է փոխեմ կեանքիս մէջ, որպէսզի յաղթահարեմ ասիկա»: Գրեցէք այն, ինչ որ Ան կը յայտնէ:

Արդեօք կայ որեւէ *հանգամանք*, ձեր անցեալին կամ ներկային մէջ, որ դուք չէք հասկցած: Հոգին կը հասկնայ ատիկա: Կեցէք եւ աղօթեցէք. «Սուրբ Հոգի, ցոյց տո՛ւր ինձի ճշմարտութիւնը իմ իրավիճակին մասին: Դուն ինչպէս կը տեսնես անիկա: Ինչ կը փորձես փոխել մէջս, եւ ինչպէս կրնամ համագործակցիլ Քու հետ»: Գրեցէք այն, ինչ որ Ան կը յայտնէ:

Հետագայ ուսումնասիրութեան համար...

Յիսուս մտերիմ էր Հօր հետ. Մատթէոս 14.22-23, 17.1-5, Մարկոս 1.35, 6.31, 46-47, Ղուկաս 5.16, 6.12,

Աստուծոյ Հոգին կը մօտենայ մեզի, երբ մենք կը մօտենանք Անոր. Սաղմոս 16.8, 34.18, 73.28, 145.18, Եբրայեցիս 10.22, Յակոբոս 4.8

Սերտողութիւն. Օր 4

ԶԳՈՅՇ ԵՂԷՔ, ՈՐ ՉՏՐՏՄԵՑՆԷՔ ԶԻՆՔ

«Եւ մի՛ փրորմէցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին ձեր կեանքի ոճով:
Յիշեցէ՛ք՝ Ան համարած ձեզ Իրենիւր...»:

— (Եփեսացիս 4.30, NLT)

Սուրբ Հոգիին հետ շփումը անգնահատելի է: Անոր յայտնուած ներկայութիւնը կեանք կը պարգեւէ մեր կեանքի իրաքանչիւր բնագաւառին մէջ: **Քեթրին Քուլմանի** համար Անոր հետ շփումը՝ կեանքի ոճ էր: Միլիոնաւոր մարդիկ լսեցին, թէ ինչպէս ան կը խօսէր Աստուծոյ սիրոյն եւ Անոր Հոգիին զօրութեան մասին. շատերը վերապրեցան Անոր հրաշագործ բժշկութիւնը: Իր գիրքին մէջ, որ կը կոչուի «Մեծագոյն զօրութիւնը աշխարհին մէջ», Քուլմանը կը բացատրէ, թէ ինչը կը տրտմեցնէ Հոգին:

«...Թէեւ Սուրբ Հոգին՝ Երրորդութեան կարող զօրութիւնն է, Ան զգայուն է, եւ Զինք դիւրութեամբ կարելի է տրտմեցնել: Անկասկած՝ այս հրաշալի Անձնաւորութիւնը կրնայ տրտմիլ դառնութեան, բարկութեան, զայրոյթի եւ չարախօսութեան պատճառով: Այլ խօսքերով՝ Ան կրնայ տրտմիլ մարդու կեանքին մէջ որեւէ մէկ բանէն, որ հակառակ է հեզութեան, երկայնամտութեան, սիրով իրար համբերելուն եւ Հոգիին միաբանութիւնը խաղաղութեան կապով պահելու ջանքերուն»⁷:

Անսահման կարեւոր է հասկնալ, թէ ինչը կը տրտմեցնէ (կը տխրեցնէ) Հոգին, եւ կը դրդէ Զինք, որպէսզի Ան Իր ներկայութիւնը մեր կեանքին մէջ յայտնէ: Ուշադրութեամբ կարդացէ՛ք Եփեսացիս 4-րդ գլուխը, որ կը բացատրէ, թէ ինչ կը նշանակէ՝ տրտմեցնել Սուրբ Հոգին (յատկապէս ուշադրութիւն դարձուցէ՛ք 1-6 եւ 17-32) խօսքերուն:

Ինչպիսի՞ վերաբերմունքներ, մտածելակերպեր եւ արարքներ նշուած են 17-24 խօսքերուն մէջ, որոնք կը տրտմեցնեն Սուրբ Հոգին:

Եփեսացիս 4.17-24-ին մէջ նկարագրուած է այն կենսաճը եւ մտածելակերպը, որ կը տրտմեցնէ Հոգին եւ կը բաժնէ մեզ Անոր յայտնուած ներկայութենէն:

Ամփոփեցէք 25-31 խօսքերուն մէջ նշուած ընդհանուր վարքագիծերը, որոնք կը տրտմեցնեն Հոգին: Ժամանակ յատկացուցէք եւ նոյնպէս գրեցէք այդ առանձին գործերը, որոնք այս հատուածին մէջ նշուած են:

Եփեսացիս 4.25-31-ը ցոյց կու տայ, թէ մարդոց հանդէպ ինչ տեսակի արարքները կրնան տրտմութիւն պատճառել Հոգիին եւ բաժնել մեզ Անորմէ:

Այո, մենք կրնանք տխրեցնել Հոգին, բայց բարի լուրը այն է, որ մենք նոյնպէս կրնանք ուրախացնել Զինք: Ուշադրութեամբ կարդացէք Եփեսացիս 4.1-7, 14-15, 25, 29 եւ 32 խօսքերը եւ թուեցէք այն վարքագիծերը, որոնք ուրախութիւն կը պատճառեն Հոգիին:

Ձեր պատասխանը պատրաստած ժամանակ ուշադրութիւն դարձուցէք Հոգին տրտմեցնող արարքներու հականիշներուն վրայ:

Սուրբ Հոգին չտրտմեցնելու բանալին՝ *սրբութեան եւ միաբանութեան* հոգիին ձգտիլն ու զանիկա պահպանելն է: Այն պարագային, երբ հպարտութիւնը եւ պղծութիւնը կը դադրեցնեն Հոգիին աշխատանքը, *խոնարհութիւնը* բուռն ընթացք կու տայ անոր: *Լռութեամբ եկէք Աստուծոյ առջեւ: Հարցուցէք Անոր. «Արդե՞՞ք ես այդպիսի բան մը կ'ընեմ, որ կը տրտմեցնէ Քեզ»:* Ապաշխարեցէք այն ամէն ինչի համար, որ Ան կը յայտնէ ձեզի, եւ խնդրեցէք Անոր շնորհքը, որպէսզի վարուիք խոնարհութեամբ ու սրբութեամբ, քանի որ նմանատիպ վարքը կ'ուրախացնէ Անոր եւ կը հրաւիրէ Զինք գործելու ձեր կեանքին մէջ:

ԴՈՒՔ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԷՔ

«Անշուշտ դուք գիտէք, թէ դուք Աստուծոյ տաճարն էք,
եւ որ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:

— (Ա. Կորնթացիս 3.16, GNT)

Ամենակարող Աստուած՝ ամենագէտ, ամենազօր Արարիչը, որ ամէն ինչ ստեղծած է՝ փոքրագոյն մասնիկներէն մինչեւ հսկայածաւալ գալակտիկաները, որոշած է բնակիլ ձեր սրտին մէջ: Այո, եթէ դուք հաւատացեալ էք, նոյն Հոգին, որ Յիսուս Քրիստոսին յարութիւն տուաւ մեռելներէն, ձեր մէջ կ'ապրի:

Հովիւ, հեղինակ եւ յունարէն լեզուի մասնագէտ **Ռիք Ռեննէրը** կը բացատրէ, թէ ինչ կը նշանակէ՝ ըլլալ Աստուծոյ Հոգիին տունը:

«Գալով ձեր սրտի մէջ՝ Սուրբ Հոգին տուն մը պատրաստեց: Այդ տունը այնքան յարմարաւէտ էր, որ Ան ուրախ էր, թէ պիտի բնակի ձեր ներսը: Հոգին տեղափոխուեցաւ, հաստատուեցաւ եւ մշտապէս բնակեցաւ ձեր սրտին մէջ՝ Իր նոր տունը:

Երբ դուք փրկուեցաք, ամենամեծ հրաշքը ձեր սրտին մէջ տեղի ունեցաւ: Սուրբ Հոգին վերցուց ձեր հոգին, որ մահացած էր անօրէնութեան ու մեղքի մէջ, եւ յարութիւն տուաւ այն նոր կեանքին համար: Անոր գործը այնքան փառաւոր էր ձեր ներսը, որ երբ աւարտեցաւ, Ան յայտարարեց, որ դուք՝ Իր գլուխգործոցն էք (Եփեսացիս 2.10): Այդ պահուն ձեր Հոգին Աստուծոյ հիասքանչ տաճարը դարձաւ»⁸:

Դուք Աստուծոյ Հոգին ձեր հետ կը տանիք ամէն տեղ, ուր որ կ'երթաք: Դուք Անոր կ'ընդգրկէք բոլոր խօսակցութիւններուն մէջ, որուն ներկայ էք, եւ կը ներգրաւէք Անոր ամէն գործի մէջ, որուն կը մասնակցիք: Կեցէ՛ք եւ մտածեցէ՛ք ասոր մասին:

Արդե՞ծք այս ճշմարտութիւնը կը խրախուսէ, կ'ոգեշնչէ եւ կը զօրացնէ ձեզ: Ինչպէ՞ս կ'ազդէ անիկա ձեր աղօթքներուն վրայ:

Կարդացէ՛ք Աստուծոյ խոստումները Եփեսացիս 3.14-20, Ղուկաս 12.11-12, Յովհաննէս 14.12-17, Կողոսացիս 1.27, Բ. Տիմոթէոս 1.13-14 եւ Հռովմայեցիս 8.1-17 խօսքերուն մէջ:

Արդե՞ծ այս ճշմարտությունը մարտահրաւեր կը նետէ կամ կը յանդիմանէ ձեզ: Արդե՞ծ ձեր պատասխանները աղօթքի կը մղեն ձեզ:

Ատածեցէք անոր մասին, թէ ինչ կը դիտէք եւ կը լսէք, այն մարդոց մասին, որոնց հետ կը շփուիք, եւ այն զբաղումներուն մասին, որոնց կը մասնակցիք:

Ինչպէ՞ս կը նկարագրէիք Սուրբ Հոգիին հետ ձեր ներկայ հաղորդութեան մակարդակը: Արդե՞ծ կը վայելէք Անոր շփումը, համագործակցութիւնը եւ մտերմութիւնը: Արդե՞ծ կը լսէք Անոր ձայնը եւ կը վերապրիք Անոր իրական, յայտնուած ներկայութիւնը ձեր կեանքին մէջ: Իսկ թերեւս ձեր ներսը «ընդհանուր մաքրման» պէտք ունի՞, որպէսզի Ան Ինքնիրեն աւելի յարմարաւէտ կարենայ զգալ ձեր մէջ՝ ինչպէս Իր տունը: Աղօթեցէք եւ խնդրեցէք Անորմէ, որպէսզի ցոյց տայ ձեր սրտին վիճակը: Ի՞նչ կ'ըսէ Ան: Ի՞նչ քայլեր կը խնդրէ, որ ձեռնարկէք:

«Արդ՝ թանկագին եղբայրներ եւ քոյրեր, կ'աղաչեմ ձեզի՝ ձեր մարմինները փուէք Աստուծոյ այն ամէնի շնորհիւ, ինչ Ան ըրած է ձեզի համար: Թող որ անոնք կենդանի եւ սուրբ գոհ ըլլան՝ այնպիսին, որ Ան ընդունելի համարէ: Ասիկա՝ Սուրբ Հոգիին ճշմարտապէս երկրպագելու ձեւն է: Եւ մի՛ ընդօրինակէք այս աշխարհի վարքագիծն ու սովորութիւնները, այլ թոյլ փուէք Աստուծոյ՝ վերափոխելու ձեզ նոր մարդու՝ ձեր մրտաճակերպը փոխելով...»:

— (Հոովմայեցիս 12.1-2, NLT)

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Եթէ դուք կ'ուսումնասիրէք «Սուրբ Հոգի. Ներածություն» գիրքը՝ որպէս «Մեսէնճր Հաւաքածոյ»ի ամբողջական դասընթացքի մաս, կը խնդրենք, որ ուսումնական 2-րդ տեսանիւթը դիտէք:

Մենք **հաղորդութիւն** ունինք Սուրբ Հոգիին հետ:

Հաղորդութիւն բառը յունարէնով *կոինոնիա* բառն է, որ կը նշանակէ. «շփում, ընկերակցութիւն, հաղորդակցութիւն, մտերմութիւն, բաժնեկցում, փոխյարաբերութիւններ, համագործակցութիւն, գործակցում եւ սերտ ընկերակցութիւն»: Հաղորդութեան այս տեսակները կարելի է երեք հիմնական խումբերու բաժնել՝ շփում, համագործակցութիւն եւ մտերմութիւն:

- 1| Սուրբ Հոգին կը ցանկայ անխափան հաղորդութիւն (կոինոնիա) ունենալ մեր՝ Սատուծոյ որդիներուն եւ դուստրերուն հետ: Այս հաղորդութիւնը կ'ընդգրկէ *շփումը*՝ ընկերային փոխյարաբերութիւնները եւ բաժնեկցումը կամ կեանքը իրարու հետ կիսելը: Ինչո՞ւ կարեւոր է պատրաստակամօրէն ընդունիլ Սուրբ Հոգիին ընկերութիւնը եւ քաջատեղեակ ըլլալ այս մասին: Ինչ կրնայ տեղի ունենալ, եթէ մենք ասիկա չընենք:
- 2| Շփումին հետ մէկտեղ, Սուրբ Հոգին կը ցանկայ *համագործակցիլ* մեզի հետ: Ինչպիսի՞ գործնական քայլեր կը ձեռնարկեն գործընկերները, որպէսզի օգնեն իրար՝ յաջողութեան հասնելու համար: Սուրբ Հոգիին հետ համագործակցութիւնը ինչո՞վ յատուկ է մեր օրերուն մէջ՝ համեմատելով այն համագործակցութեան հետ, որ Աստուծոյ հետեւորդները ունէին, օրինակ՝ Աբրահամը կամ Մովսէսը Հին կտակարանին մէջ: Դուք կը քաջալերուի՞ք՝ գիտնալով ասոր մասին:
- 3| Հաղորդութիւնը Սուրբ Հոգիին հետ աւելի խորունկ է, քան պարզապէս շփումը կամ համագործակցութիւնը: Անկա նոյնպէս կ'ընդգրկէ *մտերմութիւնը*՝ սերտ ընկերակցութիւնը: Ինչպէ՞ս մենք՝ հաւատացեալներս, կրնանք այս մակարդակի հաղորդութիւն ունենալ Սուրբ Հոգիին հետ:

Պատիւ

*Յարգանքի կամ բարձր գնահատականի որեւէ մէկ արտայայտութիւն՝ խօսքով կամ գործողութիւնով:
Ըստ էութեան, պատուել կը նշանակէ՝ գնահատել, արժեւորել, յարգանք ցուցաբերել եւ համակրանքով վերաբերիլ:*

— Մէջբերուած է **Նոյ Վէպսերի** Անգլերէն լեզուի ամերիկեան 1/3-րտարանէն (1828)

- 4| Սուրբ Հոգիին գլխաւոր առաջադրանքն է՝ յայտնել, թէ ով է Յիսուսը, եւ պատիւ ու փառք բերել Անոր: Ան կը յայտնէ Քրիստոսը, նաեւ կը յայտնէ Իր Անձը, եթէ անկեղծ պատուի արժանանայ: Ուշադրութեամբ կարդացէք պատուի սահմանումը: Մենք ինչպէս կրնանք պատուել Սուրբ Հոգին անձամբ եւ միասնաբար՝ որպէս Անոր Եկեղեցին:

- 5| Թէեւ Սուրբ Հոգին (Աստուծոյ Հոգին) երբեք չի նկարագրուիր Սուրբ գիրքին մէջ՝ որպէս իգական սեռի ներկայացուցիչ, Անոր վարքագիծերը երբեմն իգական են՝ ըստ գործառոյթի: Ուշադրութեամբ կարդացէք Ծննդոց 1.27-ը եւ բացատրեցէք, թէ այս խօսքը ինչ կը յայտնէ Աստուծոյ բնաւորութեան մասին, որ կ'ընդգրկէ Սուրբ Հոգիին բնաւորութիւնը: Ինչպէս այս ճշմարտութիւնը կ'ազդէ ձեր եւ Սուրբ Հոգիին շփման վրայ:

- 6| Սուրբ Հոգին շատ նուրբ, մեղմ եւ մխիթարող բնաւորութիւն ունի: Եթէ ուշադիր չըլլանք, մենք կրնանք տրտմեցնել կամ մարել Հոգին. մենք կրնանք տխրեցնել Անոր եւ այնպէս ընել, որ Ան դադրի գործելէն մեր կեանքերուն մէջ: Ուշադրութեամբ խոկացէք Եփեսացիս 4.29-32 խօսքերուն շուրջ եւ նշեցէք որոշ գործողութիւններ, որոնք կը տրտմեցնեն Հոգին: Ինչո՞վ Հոգին տրտմեցնելը կը տարբերի Հոգին մարելէն, որուն մասին գրուած է Ա. Թեսաղոնիկեցիս 5.19-22-ին մէջ: Մենք ինչպէս կրնանք զգուշանալ այս երկուքէն:

- 7| Մարդոց յայտնի իւրաքանչիւր մեղք կրնայ ներուիլ՝ բացի մէկէն՝ Սուրբ Հոգիին հայհոյելէն: Կարդացէք Յիսուսին զգուշացումը Մատթէոս 12.22-32-ին մէջ (ինչպէս նաեւ՝ Մարկոս 3.22-30 եւ Ղուկաս 12.10): Այս խօսքերուն լոյսին տակ նկարագրեցէք, թէ ինչ կը նշանակէ հայհոյել Սուրբ Հոգիին: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Յիսուսը այսքան խստօրէն խօսեցաւ այս մեղքին դէմ:

ԳԼՈՒԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Սուրբ Հոգին կը փափաքի շարունակական հաղորդություն ունենալ մեզի հետ:
- Հաղորդությունը բաղկացած է՝ շփումէն, համագործակցութենէն եւ մտերմութենէն:
- *Շփումը*՝ միացեալ կապ է հաղորդակցման եւ բաժնեկցման կամ կեանքը իրարու հետ կիսելու միջոցով:
- *Համագործակցութիւնը*՝ միացեալ աշխատանքն է. անիկա մեր հաղորդակցման գործողութիւնը կ'աւելցնէ:
- *Մտերմութիւնը* ընկերութեան ամենախոր մակարդակն է, որուն մէջ մենք կը կիսուինք սրտի մտքերով, ցանկութիւններով եւ գաղտնիքներով Սուրբ Հոգիին հետ, իսկ Ան կը բաժնեկցի մեզի հետ այն, ինչ որ կայ Իր սրտին մէջ:
- Սուրբ Հոգին, որ բոլորովին Աստուած է, ընտրած է մեր սրտերը (հոգիները) որպէս Իր տունը՝ հոն մշտապէս բնակելու համար:
- Մենք պէտք է զգոյշ ըլլանք, որպէսզի չտրտմեցնենք Անոր, որովհետեւ Ան մեղմ ու հեզ է, եւ կրնայ շատ տրտմիլ մեր սխալ արարքներուն պատճառով:

Փոխյարաբերութիւններու երեք մակարդակ

«Յանուն ձեր ասանդութեան (կանոններուն, որոնք փոխանցուած են ձեր նախահայրերէն)՝ որպէս մէկ կողմ դրած էք Աստուծոյ Խօսքը [գրկելով այն ուժէն եւ հեղինակութենէն՝ անարդիւնաւէտ դարձնելով անիկա]:

Ձեւացող մարդիկ (կեղծատրներ), Եսայեան փայլուն կերպով եւ ճշմարտապէս մարգարէութիւն ըրաւ ձեր մասին՝ ըսելով. «Այս մարդիկը միայն իրենց բերանովը կը մօտենան Ինծի եւ իրենց շրթունքով Ջիս կը պարունեն, բայց իրենց սրտերը ետ պահուած եւ հեռացած են Ինծմէ: Անոնք ապարադիւն կ'երկրպագեն Ինծի, որովհետեւ անոնք կը սորվեցնեն մարդոց պարտօրանները՝ որպէս վարդապետութիւններ»»:

— Յիսուս (Մատթէոս 15.6-9, AMP)

Օր 1

Յիսուս դիմեց փարիսեցիներուն այս սթափեցնող խօսքով, որովհետեւ անոնք թոյլ տուած էին, որ *ասանդոյթը* աւելի կարեւորուէր, քան Աստուծոյ Խօսքը: Բառարանը կը սահմանէ «*ասանդոյթ*» բառը, որպէս «միտքերու, գործողութիւններու կամ վարքի ժառանգուած, ընդունուած ձեւ»: Ակնյայտ է, որ ասանդոյթը ինքնին վատ բան չէ: Կան շատ հրաշալի ասանդոյթներ, որոնք կը պահենք թէ՛ ես, թէ՛ ընտանիքս, եւ թէ՛ ընկերներս: Այնուամենայնիւ, փարիսեցիները բարձրացուցին ասանդոյթը (միտքերու ընդունուած ձեւը) աւելի, քան Աստուծոյ Խօսքը, որուն պատճառով Աստուծոյ Խօսքը անարդիւնաւէտ դարձաւ անոնց կեանքերուն մէջ: Այս ճշմարտութիւնը վաւերական է նաեւ այսօր: Մենք պէտք է համոզուած ըլլանք, որ մեր պատկերացումը ճշմարտութեան մասին Աստուծոյ Խօսքով կը սահմանուի, ոչ թէ անցողիկ զգացումներով, ասանդոյթներով կամ մարդկային փիլիսոփայութիւններով:

Յիսուս շարունակեց բացատրել, որ փարիսեցիներուն ասանդոյթը խզած էր իրենց փոխյարաբերութիւնները Արարիչին հետ: Փաստօրէն, Ան յայտարարեց, որ նոյնիսկ անոնց երկրպագութիւնը առ Աստուած ապարդիւն էր, որովհետեւ անոնք աւելի շատ հաւատք ունէին մարդոց վարդապետութիւններուն (ուսմունքներուն եւ պատկերացումներուն)

հանդէպ: Փարիսեցիները երբեք հնարաւորութիւն չէին ունենար ճշմարտապէս մտերիմ ըլլալու Աստուծոյ հետ, քանի որ դեռ չէին ապաշխարած իրենց կուրութենէն եւ չէին ընդունած ճշմարտութիւնը: Նմանապէս, Հոգիին շփումը վայելելու համար մենք պէտք է մէկ կողմ դնենք մարդոց միտքերն ու ասանդոյթները, եւ ընդունինք Աստուծոյ մասին այն ճշմարտութիւնը, որ ակնյայտօրէն գրուած է Իր Խօսքին մէջ: Այլապէս՝ Աստուծոյ հետ մտերմօրէն շփուելու մեր փորձերը անարդիւնաւէտ կ'ըլլան՝ փարիսեցիներուն նման:

Մեծագոյն Ուսուցիչը

Մինչեւ Սուրբ Հոգիին հետ մտերմանալը, ես կը կարդայի իմ Աստուածաշունչը եւ կը մտածէի. «*Ես ամբողջ սրտով կը սիրեմ զԱստուած, բայց այս ամէնը քիչ մը անհետաքրքրի է*»: Իրականութեան մէջ, ես չէի խնդրեր Սուրբ Հոգիէն, որ մասնակցի իմ աղօթքներուն եւ Աստուածաշունչի ուսումնասիրութեան: Ես յայտնաբերեցի, որ միայն Սուրբ Հոգին կը կենդանացնէ Աստուածաշունչը սրտիս մէջ: Շնորհիւ Անոր առաջնորդութեան՝ Աստուածաշունչը շատ աւելին կը դառնայ, քան պարզապէս Խօսքեր. անկապ կեանքի էութիւնը կը դառնայ: Բ. Կորնթացիս 3.6-ին մէջ գրուած է.

«Ան կարողութիւն տուած է մեզի Իր նոր ուխտի ծառայողները ըլլալու: Ասկա գրուած օրէնքներու ուխտ չէ, այլ՝ Հոգիի: Հին գրուած ուխտը կ'աւարտի մահով, բայց այս *նոր ուխտի* ներքեւ Հոգին կեանք կու տայ» (NLT):

Մեր «նոր ուխտը», որ Աստուծոյ Խօսքով արտայայտուած է, պարզապէս օրէնքներու եւ կանոններու ցուցակ չէ: Նոյնինքն՝ կեանքն է, եւ կեանք կը փչէ անոնց մէջ, որոնք կը հնազանդին Իր իշխանութեան: Մենք կրնանք վայելել այս նոր ուխտի կատարելութիւնը միայն Հոգիին միջոցով, որովհետեւ Ան կը յայտնէ զարմանալի առեղծուածը այն մասին, թէ ով ենք մենք Քրիստոսին մէջ (որ ուղղակի Նոր կտակարանի ուղերձն է): Ահա թէ ինչու մենք պէտք է հրաւիրենք մեծագոյն Ուսուցիչը՝ Հոգին, մասնակցելու մեր աստուածաշնչեան ուսումնասիրութեան:

Երբեք ուսուցիչ մը ունեցած էք, որ ջերմեռանդօրէն չէր

վերաբերեր այն նիւթին, որ կ'ուսուցանէր: Ես յայտնաբերած եմ, որ ամենավատ դասերը այսպիսի մարդոց հետ կ'անցնին: Անոնց դասերուն մասնակցիլը կը նմանի ակոյալի ցալի դիմանալուն: Նմանապէս, երբեք ուսուցիչ մը ունեցած էք, որ պարզապէս չէր սիրեր աշակերտները կամ ուսանողները: Ինչպիսի՞ թշուառ իրավիճակ: Բարի լուրը անիկա է, որ Սուրբ Հոգին ջերմեռանդօրէն կը ցանկայ յայտնել աստուածային իրողութիւնները, եւ Ան նոյնպէս անսահման կը սիրէ ձեզ: Ան կը ցանկայ, որ դուք ունենաք իրաքանչիւր պարգեւը, որ Քրիստոսը ձրիաբար շնորհած է ձեզի: Եթէ մենք խնդրենք եւ թակենք, Ան բոլորովին կեանքի խորհուրդները կը յայտնէ մեզի:

Մթնոլորտը եւ ներկայութիւնը

Դժբախտաբար, այնպիսի տպաւորութիւն է, որ մենք յաճախ կը փորձենք այս զարմանալի քրիստոնէական կեանքը ապրիլ՝ առանց մեր Առաջնորդին ներկայութեան եւ խորհուրդին: Գործնականին մէջ, այսօր Սուրբ Հոգին օտար է շատ մը եկեղեցիներու մէջ: Մենք անգիտակցաբար փոխարինած ենք Անոր ներկայութիւնը լաւ մթնոլորտով: Կը թուայ, թէ մենք գրեթէ Աստուծոյ Հոգիին դրսեւորումները կը խոչընդոտենք, որովհետեւ մէկ քանիները «տարօրինակ կերպով» արձագանգած են Անոր ներկայութիւնը կամ փորձած են կեղծել զայն:

Սխալ մի՛ հասկնաք ինձի. ես կը հաւատամ, որ մեր եկեղեցական ծառայութիւնները պէտք է հրաշալի մթնոլորտի մէջ անցնին: Վերջին քանի մը տարիներուն ընթացքին Եկեղեցիին մէջ շատ անհրաժեշտ մշակութային փոփոխութիւններ տեղի ունեցան, որոնք նաեւ մթնոլորտին կը վերաբերին: Եկեղեցին շատ առումներով աւելի համապատասխան է գրաւիչ դարձած է աշխարհին համար: Ես կը հաւատամ, որ ասիկա կը հաճեցնէ Աստուծոյ: Ինչպէս Պօղոս ըսաւ. «Ես նոյնպէս կը փորձեմ հաճեցնել ամէն մէկուն ամէն ինչի մէջ, որ կ'ընեմ: Ես չեմ ըներ պարզապէս այն, ինչ որ լաւ է ինձի համար. ես կ'ընեմ այն, ինչ որ լաւ է ուրիշներուն համար, որպէսզի շատերը կարենան փրկուիլ» (Ա. Կորնթացիս 10.33, NLT):

Մենք մեծ աշխատանք կատարած ենք. մենք մեր անհատական ստեղծարար կարողութիւնները գործադրած ենք եւ օգտուած ենք թէքնոլոկիական նորութիւններէն. քանի մը նորարար վայրեր, ուր

ես գտնուած եմ, եկեղեցիներ էին: Քրիստոսի մարմնի անդամները պէտք է նորարար մարդիկ ըլլան, որոնք հետետողականօրէն նորանոր ստեղծարար մակարդակներու կը բարձրանան: Բայց եկեղեցին երբեք չի գրաւեր իր զօրութեան, սիրոյ եւ իշխանութեան դիրքը այս երկրին մէջ, եթէ չհրաւիրէ Սուրբ Հոգին իր բոլոր գործերուն մէջ: Յիշեցէ՛ք՝ Ան մեր աւագ Գործընկերն է:

Բարի լուրն անիկա է, որ մենք կրնանք ունենալ թէ՛ հրաշալի մթնոլորտ, թէ՛ Անոր դրսեւորուած ներկայութիւնը: Ես այնքան կ'ոգեշնչուիմ, երբ հնարաւորութիւն կ'ունենամ եկեղեցիներ այցելելու, որոնք միաժամանակ ակնառու են այս երկու բնագաւառներուն մէջ: Ոչ մէկ պարագային զոհ չերթա՛ք այն գաղափարին, որ Սուրբ Հոգիին ներկայութեան դրսեւորումը կը խանգարէ մարդոց մուտքը դէպի Արքայութիւն: Մենք պէտք է յիշենք, որ կորսուածները կը ձգտէին առաքեալներուն, եւ ոչ թէ կը մերժէին անոնց, այն պատճառով, որ անոնք Սուրբ Հոգիին հետ կը համագործակցէին: Որեւէ յառաջընթաց, որ մենք, որպէս Եկեղեցի, կրնանք ունենալ՝ առանց Հոգիին մասնակցութեան, ի չիք կը վերածուի:

Նոյնիսկ Յիսուս՝ Աստուծոյ Որդին, ոչինչ ըրաւ, մինչեւ *Սուրբ Հոգիէն զօրութիւն* ստանալը (տես Ղուկաս 4.1-15): Ղուկաս 4.14-15-ին մէջ գրուած է. «Յիսուս *Հոգիին զօրութիւնով* Գալիլիա դարձաւ ու Անոր համբաւը այն գաւառին բոլոր կողմերը տարածուեցաւ: Ինք անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցնէր ու ամէնէն կը փառաւորուէր»: Ուշադրութիւն դարձուցէ՛ք. այս խօսքը կը յայտնէ մեզի, որ Ան «Հոգիի զօրութեամբ դարձաւ»: Այս հատուածին մէջ գրուած է, թէ ինչ կատարուեցաւ այն բանէն յետոյ, երբ Յիսուս քառասուն օր անապատին մէջ անցուց՝ սատանայէն փորձուելով: Ան անապատէն դուրս ելաւ *Հոգիին զօրութեամբ*, եւ վերադառնալով Նազարէթ՝ հոչակեց.

«Տէրօջը Հոգին Իմ վրայ է. վասնզի Զիս օծեց՝ աղքատներուն ւետարանը քարոզելու, Զիս դրկեց՝ կոտորած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն ազատութիւն եւ կոյրերուն տեսութիւն քարոզելու, հարստահարութիւն կրողները ազատելու, Տէրօջը ընդունելի տարին քարոզելու»: (Ղուկաս 4.18-19)

Յիսուս կրցաւ կատարել Իր Հօր կամքը այս երկրին վրայ, քանի որ Ան կը գործէր Աստուծոյ Հոգիին զօրութեամբ: Նոյն զօրութեամբ

Եկեղեցին պէտք է քարոզէ Աւետարանը հոգիով աղքատներուն, բժշկութիւն բերէ կոտորած սիրտ ունեցողներուն, ազատութիւն հոչակէ գերիներուն, առաջնորդէ մարդոց՝ պարզօրէն տեսնելու համար, ազատ արձակէ ճնշուածները եւ յայտնէ ճշմարտութիւնը այն մասին, որ Աստուծոյ ձեռքը չէ կարճցած՝ փրկելու համար: Բայց մենք երբեք չենք կրնար իրականացնել այս երկնային առաջադրանքը, եթէ *չենինք Հոգիի Զօրութեան վրայ*: Յիսուս Հոգիի զօրութեան կարիքը ունէր. արդեօք ասիկա մեզի չի վերաբերիր:

Օր 2

«Մենք աւելի շատ Յիսուսին կարիքը ունինք»

Ես սրտանց կը ցանկամ, որ բոլոր անոնք, որոնք մեր եկեղեցիները կը յաճախեն, վերապրին Յիսուս Քրիստոսի յայտնուած ներկայութիւնը: Ես մշտապէս կը լսեմ, թէ ինչպէս մարդիկ կ'ըսեն. «Մենք աւելի շատ մեր եկեղեցիներուն մէջ Յիսուսին կարիքը ունինք», եւ բոլորովին համաձայն եմ այս արտայայտութեան հետ: Բայց ի՞նչ կը յայտնէ մեզի Յիսուսը: Սուրբ Հոգին: Ինչպէս աւելի շուտ նշեցինք, Սուրբ Հոգին՝ միջոց չէ, որուն պէտք է ձգտինք: Ան Անձ է, որ պէտք է պատուենք եւ պատրաստակամօրէն ընդունինք: Ինչո՞ւ պէտք չէ ցանկանք, որ Ճշմարտութեան Հոգին ներկայ ըլլայ այն ամէն ինչին մէջ, որ մենք կ'ընենք: Մէկ անգամ Յիսուս ըսաւ Իր աշակերտներուն.

«Ձեզի տակաւին շատ բաներ ունիմ ըսելու, բայց հիմա չէք կրնար տանիլ: Իսկ երբ ինքը՝ ճշմարտութեան Հոգին՝ գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզ, վասնզի ոչ թէ ինքնիրմէն պիտի խօսի, հապա ինչ որ լսէ՝ գայն պիտի խօսի ու գալիքները ձեզի պիտի պատմէ: Անիկա [Սուրբ Հոգին] Զիս [Յիսուսը] պիտի փառաւորէ, վասնզի Իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ: Այն ամէն բաները, որոնք Հայրը ունի՝ Իմն են. անոր համար ձեզի ըսի, թէ Իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ»: (Յովհաննէս 16.12-15)

Սուրբ Հոգին կը փառաւորէ Յիսուսը: Սուրբ Հոգիին միջոցով է, որ Յիսուս կը յայտնուի մեզի: Մենք չենք կրնար շրջանցել Աստուծոյ

կողմէն սահմանուած կարգը: Եթէ մենք կը ցանկանք, որ Յիսուսին ներկայութիւնը աւելի շատ ըլլայ մեր կեանքերուն մէջ, մենք պէտք է աւելի մտերիմ հաղորդութիւն ունենանք Սուրբ Հոգիին հետ: Ահա թէ ինչու Սուրբ Հոգին կը կոչուի Քրիստոսի Հոգի (տես Ա. Պետրոս 1.11, Հռովմայեցիս 8.9): Երբ Հոգին մեզի հետ կը խօսի, Ան Յիսուսը կը ներկայացնէ: Սուրբ Հոգին պարզապէս «հաճելի յաւելում» մը չէ քրիստոնէական կեանքին. Ան՝ Քրիստոսի էութիւնն է երկրի վրայ: Անոր ներկայութեան դրսեւորումը չ'ըլլար այնտեղ, ուր որ Ան պատիւ չի ստանար: Այդ պատճառով իսկ, եթէ հրաժարինք պատուել Հոգին, մենք չենք վերապրիր Քրիստոսին ներկայութիւնն ու զօրութիւնը: Թերեւս ճիշդ ասիկա է պատճառը, որ աշխարհը (Քրիստոսի վերափոխող զօրութեան թիրախը) յաճախ կը համարէ, որ Եկեղեցին զուրկ է թէ կեանքէն եւ թէ զօրութենէն:

Աստուծոյ հետ Մտերիմ ընկերութիւն

Հաղորդակցութեան վերջնական նպատակը՝ մտերիմ, անձնական ընկերութիւնն է: Աստուծոյ Հոգին կը ցանկայ ձեր ընկերը ըլլալ: Ան կը փափաքի մտերմօրէն շփուիլ ձեզի հետ: Յակոբոս կ'ըսէ. «Նախանձի կը փափաքի մեր մէջ բնակող Հոգին» (Յակոբոս 4.5): Ինչ կը փափաքի Ան: Ան կը փափաքի մտերմութիւն ունենալ ձեր եւ ինծի հետ: Արդե՞ծք մենք չենք փափաքիր նոյնը այդ մարդոց հետ, որոնք շատ մօտիկ են մեզի: Ուշադրութիւն դարձուցէք, որ Ան *նախանձով* կը փափաքի: Պարզ ըսելով՝ ասիկա կը նշանակէ, որ Ան չի հանդուրժեր, եթէ մենք հետաքրքրուինք ուրիշ «սիրահետողներով», ինչպէս որ իմ կինը ինծի հետ իր սրտի գաղտնիքներով երբեք չի բաժնեկցիր, եթէ ես ուրիշ կնոջ հետ ընկերակցիմ եւ սիրահետեմ:

Աստուած կը փափաքի, որ մենք ամբողջութեամբ նուիրուինք Իրեն: Ընդամէնը մէկ խօսք առաջ, Յակոբոսի թողութիւն մէջ գրուած է հետեւեալը. «...Աշխարհին սէրը (կամ՝ ընկերութիւնը) Աստուծոյ դէմ թշնամութիւն է...» (Յակոբոս 4.4): «Թշնամութիւն» բառի բառարանային սահմանումը հետեւեալն է. «թշնամանքի, ատելութեան, չարակամութեան, ներհակութեան զգացում կամ վիճակ»: Այս բառերը բառական խիստ են: Մենք կրնանք հետեւեալ հարցումը տալ. աշխարհի հանդէպ սէրը Աստուծոյ հետ ինչո՞ւ թշնամութիւն կը յառաջացնէ:

Այս աշխարհին ընկեր ըլլալ կը նշանակէ՝ առաջնորդուիլ մարմնի ցանկութիւններով, ձգտիլ շահի, կարգավիճակի կամ դիրքի: Սուրբ Հոգին գիտէ, որ այս ամէնուն վերջը ունայնութիւն եւ դատարկութիւն է: Աստուած նախանձաւոր կերպով կը սիրէ մեզ, եւ Ան կ'ատէ՝ տեսնելով, թէ ինչպէս մենք սիրախաղ կ'ընենք այնպիսի բաներու հետ, որոնք մեր անձերը միայն անկման կը յանգեցնեն: Երբեք մի՛ մոռնաք, որ Աստուած կատարեալ Հայր է, եւ ինչպէս իրաքանչիւր հոգատար հայր՝ Ան կը ցաւի, որ Իր զաւակները կը բաւարարուին որեւէ մէկ այլ բանով՝ լաւագոյնէն բացի: Ահա թէ ինչու Ան չի հանդուրժեր մեր ընկերութիւնը այս աշխարհին հետ: Յիսուս կը փափաքի, որ դուք վերապրիք այս կեանքը աւելիով (տես Յովհաննէս 10.10), իսկ Հոգին կը յայտնէ Որդիին ցանկութիւնները: Յիշեցէք, որ Աստուածութիւնը մէկ է՝ Իր նպատակով: Աստուած սրտանց կը ձգտի մտերիմ փոխյարաբերութիւններ ունենալու Իր զաւակներուն հետ: Երբ սիրախաղ կ'ընենք այս աշխարհին հետ, մենք չենք կրնար խոր մտերմութիւն ունենալ Անոր հետ: Ինչպիսի՞ ողբերգական կորուստ. եւ ինչպիսի՞ խորունկ ցաւ կը պատճառէ ատիկա մեր Հօր սրտին:

Շատ աւելին, քան փրկութիւնը

Ես հասկցայ, որ Աստուծոյ մտադրութիւնները մեզի համար շատ աւելին են, քան փրկութիւնը: Փրկութիւնը պէտք չէ դառնայ մեր «վերջին կայանը»: Այո, մեր փրկութեան ճշմարտութիւնը այնքան հրաշալի է, որ վեր է մեր ըմբռնումէն. բայց մեր տեղը Երկնքին մէջ՝ ընդամէնը այն ամէնուն սկիզբն է, ինչ Աստուած կը փափաքի տալ մեզի: Աստուած ուղարկեց Իր Որդին, որպէսզի մենք կարենանք զարմանալի կեանք ունենալ նաեւ այստեղ՝ երկրի վրայ: Ինչհիւ: Որովհետեւ մեզի համար իսկապէս դժուար կ'ըլլայ արդիւնաւետ կերպով տարածել Անոր թագաւորութիւնը, եթէ մենք ճնշուած ըլլանք այս աշխարհին վախերով եւ ցանկութիւններով:

Անգամ մը Պօղոս ըսաւ. «Վասնզի մարմինին վարժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց աստուածապաշտութիւնը ամէն բանի օգտակար է, որ թէ՛ ներկայ եւ թէ՛ ապառնի կեանքին խոստմունքը ունի» (Ա. Տիմոթէոս 4.8): Ուշադրութիւն դարձուցէք *աստուածապաշտութիւն* բառին վրայ: Միայն ան, որ զԱստուած

կը ճանչնայ, կրնայ աստուածապաշտութիւն ունենալ, որովհետեւ *աստուածապաշտութիւն* կը նշանակէ՝ ըլլալ *Աստուծոյ պէս*: Ինծի համար դժուար է նմանիլ մէկու մը, որուն հետ հազուադէպ կը շփուիմ: Երբ ժամանակ անցընենք մարդոց հետ, անոնք սովորաբար կարգ մը բաներու մէջ կ'ընդօրինակեն մեզ: Ահա թէ ինչու Յակոբոսը աշխարհի հետ ընկերութեան մասին իր յաջորդ խօսքին մէջ հետեւեալը կը գրէ. «Մօտեցէք Աստուծոյ, եւ Ան կը մօտենայ ձեզի» (Յակոբոս 4.8): Աստուած կը փափաքի ժամանակ անցընել ձեզի հետ, որպէսզի դուք կարենաք Իր նման դառնալ: Մենք աստուածապաշտ կը դառնանք Աստուծոյ հետ մտերիմ փոխյարաբերութիւններ ունենալու միջոցով, իսկ Աստուծոյ հետ նման փոխյարաբերութիւններ ձեւաորելը կարելի է միայն Անոր Հոգիին միջոցով (տես Ա. Կորնթացիս 2):

Յաճախ, երբ հաւատացեալները կը կարդան. «Այս աշխարհի սէրը թշնամութիւն է Աստուծոյ դէմ», անոնք անմիջապէս կը փորձեն բոլորովին առանձնանալ աշխարհէն: Անշուշտ, ասիկա անիմաստ է: Ինչպէ՞ս Եկեղեցին կրնայ շահիլ աշխարհը, եթէ առանձնացնէ իրեն մարդոցմէն: Որպէս Եկեղեցի՝ մենք պէտք է հետեւինք Յիսուսի օրինակին: Կորսուածները կը ձգտէին շփուելու Յիսուսին հետ: Ան ժամանակ կ'անցընէր հարկահաւաքներուն եւ մարմնավաճառներուն հետ՝ այն մարդոց, որոնց կրօնական առաջնորդները վերէն կը նայէին: Ան նոյնիսկ անոնց երեկոյթներուն կը յաճախէր, բայց կը տարբերէր այդ մարդոցմէն: Յիսուս Իր օրինակով ցոյց տուաւ, թէ ինչ կը նշանակէ՝ ըլլալ այս աշխարհին մէջ, բայց ոչ՝ այս աշխարհէն: Անոր սիրտը կը ցաւէր այն մարդոց համար, որոնցմէ կը զգուէին նախանձաւոր կրօնասէրները: Ինչո՞ւ Ան այդ աստիճան նուիրուած էր «աստուածապաշտ» մարդոց կողմէն արհամարհուածներուն: Ան գիտէր, որ անոնք խոնարհ էին եւ աւելին կը ձգտէին: Ան չէր յաճախէր իրենց երեկոյթներուն՝ անոնց գործերուն մասնակցելու համար: Ան կ'երթար, որպէսզի նոր ճամբաներ ցոյց տար իրենց:

Նմանապէս, մենք կանչուած ենք հասնելու թէ՛ բարոյապէս ապականուած, թէ՛ բարոյապէս կոտորուած մարդոց: Եթէ Եկեղեցին չըլլայ Քրիստոսին ձեռքերն ու ոտքերը, հապա ղվ պիտի ըլլայ: Մենք, եւ միայն մենք ենք Անոր մարմինը: Այժմ մենք *Քրիստոսին մէջ* ենք շնորհքի վերափոխող զօրութեան շնորհիւ: Մենք կը ծառայենք՝ որպէս Անոր դեսպաններ (որոնք կը տարածեն Անոր անունը եւ կը ներկայացնեն Ձինք) երկրի վրայ: Եթէ մենք չտանինք Աստուծոյ ճշմարտութիւնը եւ լոյսը այս աշխարհին, այլեւս ոչ մէկը կը տանի:

Օր 3

Լուռ ազնուականը (ճենթըլմէն)

Շփուելով Սուրբ Հոգիին հետ՝ ես յայտնաբերեցի, որ Ան ազնուական է (ճենթըլմէն): Ան երբեք չի հասկցներ մեզի Իր կամքը: Եթէ մենք հրաժարինք հաղորդակցիլ Անոր հետ, Ան կը լռէ:

Աւելի, քան քսանհինգ տարի է, որ ես կը ճամբորդեմ եւ կը ծառայեմ: Այս ընթացքին որոշ դիտարկումներ ըրած եմ այն վարորդներուն մասին, որոնք կը դիմաորեն զիս օդակայաններուն մէջ: Անոնք մշտապէս բարի եւ անսահման սիրալիր են. վարորդները մանրամասնօրէն կը բացատրեն, թէ ես ուր պիտի հիւրընկալուիմ եւ որ ժամերուն տեղի պիտի ունենան իմ ծառայութիւնները: Բայց սովորաբար անոնք ինծի հետ չեն խօսիր, մինչեւ որ ես սկսիմ խօսիլ: Պատճառը այն է, որ հովիւները կ'ապսպրեն անոնց՝ ինծի հետ խօսակցութեան մէջ չմտնել, քանի որ թերեւս աշխատելու կամ ծառայութեան պատրաստուելու պէտք ունենան ինքնաշարժին մէջ: Իմ ծառայողական տարիներուն ընթացքին հանդիպած եմ բազմաթիւ ծառայող սիրտ ունեցող վարորդներու, եւ ես անսահման շնորհակալ եմ անոնց համար: Այդ իսկ պատճառով, ես մշտապէս կը հետաքրքրուիմ ինծի հանդիպող վարորդներուն, անոնց ընտանիքներուն եւ այն մասին, թէ անոնք ինչ ծառայութիւն ունին եկեղեցւոյ մէջ: Եթէ ես չսկսիմ զրուցել, թերեւս մենք ամբողջ ճանապարհը կ'երթանք՝ առանց որեւէ իմաստալից հաղորդակցութեան:

Ես կը հաւատամ, որ Սուրբ Հոգին այսպիսի բնատրութեան գիծ մը ունի: Ան չի հաղորդակցիր մեզի հետ, քանի դեռ մենք չենք փափաքիր Անոր ձայնը լսել: Եթէ մենք չմտենանք Անոր, Ան յաճախ լուռ կը մնայ: Յիշեցէք, երբ Յակոբոսը ըսաւ, որ Աստուած կը մօտենայ մեզի, երբ մենք կը մօտենանք Անոր: Մենք պատասխանատու ենք առաջին քայլը առնելու մէջ: Մենք պէտք է գիտակցաբար սկսինք հաղորդակցիլ Անոր հետ: Պարզապէս՝ ձեզի ուղղուած է բոլոր ժամանակներու մեծագոյն հրաւերը: Այժմ դուք պէտք է քայլ առնէք:

Շատ հաւատացեալներ տեղեակ չեն այս ճշմարտութեան մասին: Այս պատճառով ես յաճախ կը լսեմ, թէ ինչպէս մարդիկ կ'ըսեն. «Ինչո՞ւ Աստուած ինծի հետ չի խօսիր», կամ «Քանի մը տարի է, որ Աստուած հետս չէ խօսած»: Արդե՞՞ք այս մարդիկ կը ձգտին Աստուծոյ

հետ հաղորդութիւն ունենալու այնպէս, ինչպէս Աստուածաշունչը կը սորվեցնէ: Եթէ մենք կը ցանկանք Աստուծոյ մօտիկ ըլլալ, պէտք է ձգտինք ճանչնալու Զինք, եւ ասիկա կը նշանակէ, որ մենք պէտք է ձգտինք Անոր Հոգիին հետ ընկերանալու:

Ես կը քաջալերեմ ձեզ, որ ջանասիրաբար ձգտիք Սուրբ Հոգիին հետ հաղորդակցելու: Դուք կը զարմանաք՝ տեսնելով, թէ ինչպէս Ան կը պատասխանէ ձեզի: Ինչպէս իմ վարորդներէն շատերը, Սուրբ Հոգին ձեր հետ կը մնայ, անկախ անկէ՝ դուք կը հաղորդակցիք Անոր հետ, թէ՛ ոչ, որովհետեւ Ան խոստացած է, որ չի ձգեր եւ չի լքեր ձեզ (տե՛ս Եբրայեցիս 13.5): Բայց եթէ դուք առաջին քայլը չառնէք, Ան, որպէս կանոն, լուռ կը մնայ, եւ դուք երբեք ձեր կեանքին մէջ չէք վայելեր Անոր ներկայութեան լիարժէք դրսեւորումը եւ Անոր հետ ձեր ունեցած հաղորդակցութեան առաւելութիւնները:

Աստուծոյ խորին ճշմարտութիւնները

Մէկ անգամ ես կարդանք Յովհաննէս 16-ի այս հատուածը.

Կայ շատ անելիք, որ Ես կը փափաքիմ պատմել ձեզի, բայց հիմա չէք կրնար տանիլ ատիկա: Երբ ճշմարտութեան Հոգին գայ, Ան պիտի առաջնորդէ ձեզ ամէն ճշմարտութեան մէջ: Ան Իր նախաձեռնութեամբ չի խօսիր, այլ՝ կ'ըսէ ձեզի այն, ինչ որ Ան լսած է: Ան կը պատմէ ձեզի ապագային մասին: Ան փառք կը բերէ Ինծի՝ պատմելով ձեզի այն, ինչ կը ստանայ Ինծմէ: Այն ամէնը, ինչ որ կը պատկանի Հօրը, Իմն է. ահա թէ ինչու ես ըսի. «Հոգին կը պատմէ ձեզի այն, ինչ որ Ան կը ստանայ Ինծմէ» (Յովհաննէս 16.12-15, NLT):

Յիսուս խօսեցաւ այս մասին Իր խաչելութենէն առաջ, երբ որ աշակերտներուն հետ վերջին պահերը կ'անցընէր: Քիչ մը ուշ այդ երեկոյ Ան ձերբակալուեցաւ հռոմէացի սպաներուն կողմէն եւ մահուան դատապարտուեցաւ: Ակնյայտ է, որ այս պահերը կարեւոր եւ ծանրակշիռ խօսքերու համար էին:

Ուշադրութիւն դարձուցէք, որ Յիսուս կ'ըսէ. «Կայ շատ անելիք, որ Ես կը փափաքիմ պատմել ձեզի, բայց հիմա չէք կրնար տանիլ ատիկա» (խօսք 12): Յիսուս ամէն ինչ էր այս տղամարդոց համար, որոնք Անոր հետ էին քանի մը տարի շարունակ: Իւրաքանչիւրը

ծգած էր իր ընտանիքը, ընկերները եւ աշխատանքը՝ Անոր հետեւելու համար: Աշակերտները, հաւանաբար, կը մտածէին. «Հերաքրքրական է. թէ մեզի ինչ պէտք է՝ ամէն ինչ լիարժէք հասկնալու համար»: Բայց յանկարծ Յիսուս արտասովոր խոստում մը տուաւ. «Երբ ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշմարտութեան մէջ պիտի առաջնորդէ ձեզ» (խօսք 13): Այլ խօսքերով՝ «Թէեւ հիմա ես ձեզի հետ եմ (մարմինով), դուք այնպիսի վիճակի մէջ չէք, որ կարենաք ստանալ այն ամէնը, ինչ որ ես պէտք է տամ ձեզի: Բայց ես կ'ուղարկեմ Սուրբ Հոգին ձեր քով, եւ Ան Իմ խօսքերը կը խօսի, կը յայտնէ Իմ կամքը եւ կը պատրաստէ ձեզ այդ բոլորին համար, ինչ որ պէտք է կատարուի»: Ինչպիսի՞ խոստում: Յիշեցէք Յիսուսի խօսքերը, որ Ան ըսաւ նոյն գիշերուան ընթացքին.

«Բայց ես ճշմարտը կ'ըսեմ ձեզի. «Աղէկ է ձեզի, եթէ ես երթամ. քանզի եթէ ես չերթամ, Մխիթարիչը ձեզի չի գար, բայց եթէ երթամ, Ձանիկա ձեզի պիտի դրկեմ»» (Յովհաննէս 16.7):

Յոյսով եմ՝ դուք նորանոր կերպով կը սկսիք հասկնալ այս խօսքերը: Աստուած այնպէս չի խօսիր, որ մենք չի հասկնանք Ձինք, այլ ճիշդ հակառակը: Բոլորս կը փափաքինք մտերմօրէն ճանչնալ անոնց, որոնց կը սիրենք, եւ Աստուած ալ այդպիսին է: Երբ Յիսուս երկրի վրայ էր, Ան լիարժէք կերպով ցոյց տուաւ, թէ Հայրը ինչ տուած էր մարդոց (տես Եբրայեցիս 1.1-3, Կողոսացիս 1.15-19): Այնուամենայնիւ, ինչպէս գիտենք, այժմ Յիսուս երկնային Հօր աջ կողմն է: Սուրբ Հոգին՝ Աստուածութեան այն Անձն է, որ Աստուծոյ ժողովուրդին հետ եւ անոնց մէջ կը բնակի այստեղ՝ երկրի վրայ, այնպէս որ, Աստուծոյ խորին ճշմարտութիւնները ճանչնալու համար մենք պէտք է ճանչնանք Անոր Հոգին՝ ճշմարտութեան Հոգին:

Կասկածող Թովմասը

Այն բանէն յետոյ, երբ Յիսուս յարութիւն առաւ մեռելներէն, աշակերտներէն տասը հոգի տունի մը մէջ էին, որուն դուռը կղպուած էր: Յանկարծ Յիսուս յայտնուեցաւ. աշակերտները ապշած էին: Յիսուս ստիպուած էր համոզել անոնց, որ Ինքը ուրուական մը չէ:

Տասը աշակերտները յարութեան հրաշքին պատճառով ուրախացան, եւ կարճ ժամանակ մը անցընելէն ետք այդ մասին պատմեցին Թովմասին, որ անոնց հետ չէր, երբ Յիսուս յայտնուեցաւ: Լսելով այդ լուրը՝ Թովմաս իր տխրահոշակ պատասխանը տուաւ. «Եթէ Անոր ձեռքերուն վրայ բեւեռներուն նշանը չտեսնեմ, ու մատս բեւեռներուն տեղը չխոթեմ, եւ իմ ձեռքը Անոր կողը չխոթեմ, չեմ հաւատար» (Յովհաննէս 20.25):

Քանի մը օր անց տասնմէկ աշակերտները միասին էին մէկ ուրիշ տունի մը մէջ, երբ յանկարծ Յիսուս նորէն յայտնուեցաւ: Մինչեւ որբւէ ուրիշ բան ըսելը կամ ընելը, Ան անմիջապէս Թովմասին դիմեց՝ կարծես թէ ըսելով. «Լաւ, Թովմաս, եկո՛ւր անհաւատութեան հարցով զբաղի՛նք»: Յիսուս ըսաւ անոր. «Մատդ հոս բեր եւ նայէ Իմ ձեռքերուն ու բեր ձեռքդ եւ Իմ կողը խոթէ ու անհաւատ մի՛ ըլլար, այլ՝ հաւատացեալ» (Յովհաննէս 20.27): Թովմաս պատասխանեց. «Իմ Տէրս եւ իմ Աստուածս»: Այժմ կարդացէք, թէ Յիսուս ինչ պատասխանեց անոր.

«Որովհետեւ դուն տեսար Ձիս, ատոր համար հաւատացիր. *Երանի՛ անոնց, որ չեն տեսած եւ կը հաւատան*»: (Յովհաննէս 20.29)

Ըստ էութեան, Յիսուս կ'ըսէր. «Թովմաս, օրհնուած մարդոց խումբ մը կայ, որոնք կը հաւատան՝ առանց տեսնելու»: Ես կը մտածէի. «*Յիսուս, Դուն բաական խիստ վարուեցար անոր հետ: Այդ մարդը արդէն յարակը պառկած է: Ակնյայտ է՝ ան ինքնիրեն վաղ զգաց: Ան ապաշխարհեց: Իսկ Դուն կը նայիս անոր եւ կ'ըսես՝ Երանի՛ անոնց, որոնք չեն տեսած եւ կը հաւատան*»: Ես չէի կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ Յիսուս այդքան խստօրէն վարուեցաւ Թովմասին հետ: Բայց օր մը Տէրը խօսեցաւ ինձի հետ. «Ես չէի յանդիմաներ Թովմասը. Ես պարզապէս հետեւեալը կ'ըսէի. «Անոնք, որոնք կը ճանչնան Ձիս Իմ Հոգիով, կրնան մտերմութեան շատ աւելի բարձր մակարդակի հասնիլ, քան անոնք, որոնք ֆիզիքապէս կը ճանչնան զիս»»:

Օր 4

Փոխյարաբերություններու երեք մակարդակ

Իրականութեան մէջ Յիսուս ինչ նկատի ունէր՝ Թովմասին հետ խօսելով: Այս հարցումին պատասխանելու համար թոյլ տուէք, որ բացատրեմ, թէ ինչու հաւատքով կարելի է աւելի խոր մտերմութիւն ունենալ, քան երեւոյթով:

Կայ փոխյարաբերութիւններու երեք մակարդակ՝ ֆիզիքական, շնչաւոր եւ հոգեւոր: Ամենացած (ամենամակերեսային) մակարդակը՝ *բնական* կամ *ֆիզիքական* մակարդակն է: Շատ սիրային փոխյարաբերութիւններ կը սկսին այս մակարդակին վրայ, այսպիսի միտքերով. «Ան շատ հաճելի կին է», կամ «Ան շատ հաճելի տղամարդ է», կամ «Թերեւս սկսինք հանդիպիլ»: Դժբախտաբար, զոյգերու մեծ մասը ամուսնանալու ատեն միայն այս մակարդակի շփում կ'ունենան: Անոնք կը մտածեն. «Ես կրնամ անտեսել այն փաստը, որ մենք լաւ չենք ճանչնար իրար, որ իրականութեան մէջ չենք շփուած իրարու հետ եւ ընդհանուր համոզմունքներ կամ հետաքրքրութիւններ չունինք, այն պարճառով, որ այդ կինը կամ տղամարդը հաճելի է ինձի համար»: Այսպիսի դէպքերու մէջ, փոխյարաբերութիւններու շնչաւոր մակարդակը տակաւին զարգացած չէ: Հարսանեկան զանգերը կը ղօղանջեն, մեղրամիսը կ'աւարտի, եւ կեանքը կը սկսի: Այս ամուսինները ստիպուած կ'ըլլան հասկնալու, որ պէտք է աւելի մտերմանան իրարու հետ, հակառակ պարագային իրենց ամուսնութիւնը դժբախտ կ'ըլլայ: Եթէ անոնք չձգտին աւելի խոր մտերմութեան, կինը կ'ունենայ իր հետաքրքրութիւնները իր ընկերային միջավայրին մէջ, իսկ ամուսինը դարձեալ հետաքրքրութիւններ կ'ունենայ իր ընկերային միջավայրին մէջ: Ի վերջոյ, անոնք պարզապէս միասին կը գոյատեւեն: Անշուշտ, Աստուած չէ ծրագրած, որ ամուսնութիւնը այս ձեւով ըլլայ:

Փոխյարաբերութիւններուն յաջորդ մակարդակը կը վերաբերի մարդու *շունչին* կամ *անհատականութեան*: Դաւիթն ու Յովնաթանը այս մակարդակի փոխյարաբերութիւններ ունէին. «...Յովնաթանին սիրտը (կամ՝ անձը) Դաւիթին սրտին (կամ՝ անձին) հետ կապուեցաւ, ու Յովնաթան իր անձին պէս սիրեց զանիկա» (Ա. Թագաւորաց 18.1): Երբ Յովնաթան սպաննուեցաւ, Դաւիթը

ողբաց. «Քեզի համար շատ կը ցաւիմ, ո՛վ եղբայր իմ, Յովնաթան: Դուն ինձի խիստ սիրելի էիր. քու սէրդ ինձի զարմանալի էր, կանանց սէրէն աւելի էր» (Բ. Թագաւորաց 1.26): Դաւիթ չէր խօսեր այլասերուած մարմնական յարաբերութիւններուն մասին: Անոնց մէջ որեւէ մէկ մարմնական հրապուրանք մը չկար: Դաւիթին եւ Յովնաթանին փոխյարաբերութիւնները շնչաւոր մակարդակի վրայ էին, եւ անբնական մարմնային գործածութենէն բոլորովին ազատ էին: Այնուամենայնիւ, անոնք կրցան այնպիսի սերտ ընկերութիւն ձեւաւորել, որ շատ աւելի խորունկ էր ֆիզիքական յարաբերութիւններէն (որ Դաւիթը ի նկատի ունէր՝ խօսելով «կանանց սիրոյ» մասին):

Ամուսնութիւնը պէտք է շնչաւոր մակարդակի վրայ կառուցուած ըլլայ: Սխալ մի՛ հասկնաք ինձի. փոխյարաբերութիւններու ֆիզիքական կողմը շատ կարեւոր է: Իմ կինը անսահման գրաւիչ է ինձի համար. ես անոր աշխարհի ամենագեղեցիկ կինը կը համարեմ: Բայց փոխյարաբերութիւններու աւելի խոր մակարդակներ կան, որոնց ամուսինները կրնան ձգտիլ եւ պէտք է հասնին: Իրականութեան մէջ, Լիզային անհատականութիւնը շատ աւելի հմայիչ է, քան անոր մարմինը:

Դժբախտաբար, ես այդ մասին բազմաթիւ պատմութիւններ լսած եմ, թէ ինչպէս մարդիկ ձգած են իրենց ամուսինները կամ կիները ինչ որ մէկու մը պատճառով, որուն հետ ծանօթացած են համացանցով շփումի միջոցով: Քանի մը տարի առաջ ես եկեղեցիի մը մէջ կը քարոզէի, եւ ծառայութենէն յետոյ տղամարդ մը մօտեցաւ ինձի: Ան վեց փոքրիկ մանուկներով շրջապատուած էր: Երկուքը անոր ձեռքերուն վրան էին, միւս երկուքը անոր ոտքերը բռնած էին, եւ երկուքը սրահին մէջ կը վազվզէին: Քանի որ ան շատ տրտմած տեսք ունէր, ես հարցուցի.

-Դուք ձեզ լաւ կը զգամք:

-Ոչ,- ըսաւ ան:- Այսօր կինս ձգեց զիս եւ մեր վեց զաւակները՝ տղամարդու մը համար, որուն հետ համացանցի միջոցով ծանօթացած էր:

Այդ տղամարդուն հետ անոր «շնչաւոր» փոխյարաբերութիւնները այն աստիճան զարգացած էին, որ ան փափաքեցաւ ձգել այն տղամարդը, որուն հետ երկար տարիներէ ի վեր՝ ամուսնացած էր: Աւելին՝ շնչաւոր կապը այնքան զօրաւոր էր, որ բաժնեց այդ կնոջ

իր մանուկներուն մասին հոգալու եւ անոնց քով ըլլալու բնական հակուածութենէն:

Փոխյարաբերութիւններու շնչաւոր մակարդակը յաճախ նուազագոյն կամ ոչ մէկ ֆիզիքական շփում կը պահանջէ: Ահա թէ ինչու փոխյարաբերութիւնները, որոնք իրարմէ շատ հեռու գտնուող մարդոց միջեւ կը սկսին, յաճախ ամենայաջողակ ամուսնութիւններով կ'աւարտի: Պատճառը անիկա է, որ զոյգը կը կարողանայ իր շնչաւոր կամ անձնային կապի զարգացման վրայ կեդրոնանալ՝ առանց շեղելու ֆիզիքական հրապուրանքի վրայ:

Փոխյարաբերութիւններու բարձրագոյն մակարդակը

Փոխյարաբերութիւններու բարձրագոյն կամ ամենախոր մակարդակը *հոգեւորն* է: Ճիշդ այս մակարդակը Յիսուս ի նկատի ունէր՝ խօսելով Թովմասին հետ: Պօղոս կը գրէ. «Վասնզի մարդոցմէ ղվ գիտէ մարդուն *միտքերը*, բայց միայն մարդու հոգին, որ իր մէջ է» (Ա. Կորնթացիս 2.11, NASB): Այլ խօսքերով՝ դուք չէք կրնար մարդուն իրական մտքերը եւ դրդապատճառները գիտնալ, քանի դեռ կապ չէք հաստատած անոր հոգիին հետ:

Ինչպէս արդէն նշեցի, վերջերս ես եւ Լիզան մեր ամուսնութեան երեսուներորդ տարեդարձը տօնեցինք: Իմ ամենահաճելի յուշերէն մէկ քանիները այդ տարիներուն ընթացքին այն էր, որ մենք աւագանին մօտ կը նստէինք եւ կը խօսէինք Աստուծոյ ու Անոր Խօսքին մասին: Մենք շատ ժամանակ անցուցած ենք՝ զրուցելով այս գիրքին մասին: Երբ ես կը պատմէի, թէ Աստուած ինչ դրած էր սրտիս մէջ, ան կը պատասխանէր իմաստութեամբ եւ յայտնութեամբ, որոնք անելի կը լուսաւորէին, այն ինչ որ Հոգին կը յայտնէր ինծի: Քանի որ երկուքս ալ մտերիմ փոխյարաբերութիւններ ունինք Հոգիին հետ, մենք կրնանք հաղորդակցիլ խորունկ, հոգեւոր մակարդակի վրայ:

Հոգեւոր հաղորդակցութիւնը՝ այն հիմնական պատճառներէն մէկն է, թէ ինչու ես եւ Լիզան միասին կ'աղօթենք: Աղօթելու ատեն մենք կը շփուինք Հոգիին ճշմարտութիւններուն շուրջ, եւ մեր միջեւ հոգեւոր կապ կը ստեղծուի: Մենք նոյնպէս որոշած ենք, որ «Մեսէնճր Ինթրնետընը» ծառայութեան անձնակազմը ամէն աշխատանքային օր տասնհինգ վայրկեան տեւող միաբան աղօթքով սկսի, քանի

որ կը փափաքինք, որ մեր խումբի անդամներուն միջեւ հոգետոր կապ ըլլայ: Այս աղօթքի պահը զարմանալի կերպով ազդած է մեր աշխատակազմի անդամներու փոխյարաբերութիւններուն վրայ: Նոյն կեցուածքը ճշմարիտ է որեւէ մէկ փոխյարաբերութիւններու պարագային. շփումը Խօսքի եւ աղօթքի շուրջ կը զարգացնէ մտերմութեան ամենախոր մակարդակը մարդոց միջեւ, քանի որ անիկա հոգետոր կապ կը ստեղծէ:

Հոգետոր ճշմարտութիւններու մտաւոր քննարկման եւ հոգետոր շփումին մէջ տարբերութիւն կայ: Երբեմն մարդիկ ինծի հետ Աստուածաշունչի մասին կը խօսին, եւ ես գիտեմ, որ անոնք ընդամենը տեղեկութիւններ կը փոխանցեն: Ինչպէ՞ս կրնամ համոզուած ըլլալ ստոր մէջ: Այն, ինչ անոնք կ'ըսեն, անսահման յոգնեցուցիչ է. անիկա միտքս կը մաշեցնէ: Անոնք իրենց միտքէն կը խօսին եւ ոչ թէ հոգիէն: Բայց կան մարդիկ, որոնք իրենց հոգիէն հոգետոր ճշմարտութիւններու մասին կը խօսին: Ես կրնամ ժամերով զրուցել այսպիսի մարդոց հետ՝ առանց յոգնելու, որովհետեւ մեր կապը հոգետոր մակարդակի վրայ կ'ըլլայ:

Օր 5

Ճանչնալ Աստուծոյ Անոր Հոգիով

Այժմ ամբողջութեամբ կարդանք Ա. Կորնթացիս 2.11-ը.

Վասնզի մարդոցմէ ո՞վ կը ճանչնայ մարդուն *միտքերը*՝ բայց միայն մարդու հոգին, որ իր մէջ է: Նոյնպէս ալ Աստուծոյ *միտքերը* մէկը չի գիտեր, բայց միայն Աստուծոյ Հոգին: (NASB):

Այն յունարէն բառը, որ թարգմանուած է «մտքեր» բառով, լաւագոյնս սահմանուած է որպէս՝ «կեցութեան վիճակը կամ բաղադրութիւնը»: Ըստ էութեան, Պօղոս կ'ըսէ, որ մարդը չի կրնար Աստուծոյ ճշմարիտ «բաղադրութիւն»ը ճանչնալ (ի նկատի ունենալով այն, ինչ որ կայ Անոր սրտի խորքերուն մէջ)՝ առանց Աստուծոյ Հոգին ճանչնալու: Այս ճանաչողութիւնը շատ անյիշ է

այդ մակերեսային գիտելիքներէն, որ կը ստացուի նուազագոյն ջանք գործադրելով կամ առանց որեւէ ջանք գործադրելու: Գրեթէ Միացեալ Նահանգներու մէջ ամէն մարդ գիտէ, թէ ով է երկրի նախագահը, բայց մեծամասնութիւնը անձնական շփում չունի անոր հետ: Մենք չենք գիտեր անոր սրտի ցանկութիւնները, մղումները եւ իրական համոզմունքները: Նմանապէս, մենք չենք կրնար Աստուծոյ ճանչնալ «ընդհանուր գիտելիքէն» աւելի բարձր մակարդակի վրայ, եթէ չբացայայտենք Զինք՝ Իր Հոգիով:

Պօղոս կը շարունակէ. «Մենք չենք ընդունած այս աշխարհին հոգին, այլ այն Հոգին, որ Աստուծմէն է, որպէսզի կարենանք հասկնալ այն բաները, որոնք ձրիաբար Աստուծմէ տրուեցան մեզի» (Կորնթացիս 2.12, ESV): Ինչպիսի՞ զարմանալի արտայայտութիւն: Ոչ մէկը գիտէ Աստուծոյ միտքերը՝ բացի Անոր Հոգիէն (խօսք 11), բայց Ան Իր Հոգին տուած է մեզի: Այժմ, շփուելով Աստուծոյ Հոգիին հետ, մենք կրնանք մտերիմ ըլլալ Արարիչին հետ *հոգեոր մակարդակի վրայ, որ փոխյարաբերութիւններու բարձրագոյն մակարդակն է:*

Պօղոսը Հոգիին հետ կը շփուէր այս մակարդակի վրայ: Թէեւ ան երբեք չէր հանդիպած մարմնով եկած Յիսուսին, ան կը գրէր. «Կը ծանուցանեմ ձեզի, եղբայներ, այն աւետարանը որ ինձմէ քարոզուեցաւ, թէ անիկա մարդու բան չէ: Որովհետեւ ես ալ մարդէ չառի զանիկա, եւ մէկէ մըն ալ չսորվեցայ, հապա Յիսուս Քրիստոսին յարութենէն (Գաղատացիս 1.11-12): Ինչպէ՞ս Յիսուսը Պօղոսին յայտնած էր: Պօղոսը պարզ կ'ըսէր, որ այս յայտնութիւնը չէր ստացած ոեւէ մարդէ: Եթէ ան այս յայտնութիւնը չէր ստացած մարդէ եւ չէր շփուած մարմնով յայտնուած Յիսուսին հետ, ապա, հաւանաբար, այս յայտնութիւնը *Քրիստոսի Հոգիին* (Սուրբ Հոգիին) միջոցով ստացած էր:

Արդե՞՞ք կարելի է, որ Պօղոսը աւելի խոր շփում ունենար Յիսուսին հետ այն պատճառով, որ Անոր երբեք մարմնով չէր տեսած: Պետրոս, որ մարմնով շփուած էր յայտնուած Յիսուսին հետ, իր կեանքին վերջը նամակ մը գրեց, ուր նշեց. «...մեր սիրելի եղբայր Պօղոսը նոյնպէս գրեց ձեզի այն իմաստութեամբ, որ Աստուծոյ տուաւ անոր՝ խօսելով այս բաներուն մասին իր բոլոր նամակներուն մէջ: *Անոր մեկնաբանութիւններէն քանի մը հազը դժուարըմբռնելի են...*» (Բ. Պետրոս 3.15-16, NLT): Պետրոս անձնապէս Յիսուսին հետ շփում ունէր քանի մը տարի շարունակ: Ան ներկայ էր, երբ

Յիսուս փառաւորուեցաւ Այլակերպման լեռին վրայ: Ան տեսած էր Յիսուսին խաչելութիւնը, նաեւ հանդիպած էր Յիսուսին եւ շփուած էր Անոր հետ յարութենէն յետոյ: Այնուամենայնիւ, այն աշակերտը, որ մարմնով յայտնուած Յիսուսին հետ տարիներ շարունակ շփում վայելած էր, ըսաւ, որ Պօղոսին յայտնութիւններէն քանի մը հատը, որ ստացած էր Հոգիէն, դժուարիմաց են: Անձամբ ես կը հաւատամ՝ այս խօսքը ցոյց կու տայ, որ Պօղոսը աւելի խոր մտերմութիւն ունէր Յիսուսին հետ, քան Պետրոսը:

Պօղոսը Նոր կտակարանի գիրքերուն մեծ մասը Հոգիին ներշնչմամբ գրեց, սակայն Ան չէր շփուած մարմնով յայտնուած Յիսուսին հետ: Ան կրցաւ ընել ատիկա, քանի որ Հոգին է, որ ամբողջովին կը յայտնէ Յիսուսը: Յիշեցէք Յիսուսին խօսքերը. «Կայ շատ աւելին, որ ես կը փափաքիմ պատմել ձեզի, բայց հիմա չէք կրնար տանիլ ատիկա: Երբ ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշմարտութեան մէջ պիտի առաջնորդէ ձեզ [պիտի տայ ձեզի ամբողջական յայտնութիւնը] (Յովհաննէս 16.12-13, NLT): Պօղոս չէր կրնար հիմնել այն հաւատքը ֆիզիքական շփումին վրայ, որ ունէր Յիսուսին հանդէպ, քանի որ երբեք չէր հանդիպած մարմնով եկած Յիսուսին: Ան հարկադրուած էր հաւատալ եւ ստանալ՝ առանց տեսնելու: Ըստ էութեան, այս տեսակի շփումը հեռացուց որեւէ մէկ ֆիզիքական գործօն, որ կրնայ խանգարել այն ամէնը, ինչ որ Հոգին կը փորձէր յայտնել անոր: Ճիշդ ասիկա Յիսուս ի նկատի ունէր՝ դիմելով Թովմասին: Այն փաստը, որ Պօղոս շփում չունէր մարմնաւորուած Յիսուսին հետ, որուն վրայ կրնար հիմնուիլ, կը նշանակէր, որ ան պէտք է ամբողջովին Տէրոջ հետ *հոգեւոր փոխյարաբերութեան* վրայ հիմնուէր: Ան այլընտրանք չունէր:

Ինչպէս Պօղոսը, մենք ալ նոյնպէս հնարաւորութիւն ստացանք հետեւելու Յիսուսին՝ առանց հնարաւոր թիրըմբոնումներու, որոնք կրնան յառաջանալ ֆիզիքական շփման հետեւանքով: Զարմանալի է, որ մենք կրնանք աւելի մօտիկ ըլլալ Յիսուսին՝ առանց Անոր տեսնելու, քան Անոր տեսնելով: Քանի որ Յիսուսին հետ ֆիզիքապէս շփումի կարողութիւն չունինք, մենք պէտք է հաղորդակցինք Անոր հետ Քրիստոսի Հոգիով, որ կը բնակի մեր մէջ՝ կառուցելով խորունկ, հոգեւոր փոխյարաբերութիւններ Աստուծոյ հետ: Որքան հրաշալի է:

Հաղորդակցեցէք Անոր հետ աւելի խոր մակարդակի վրայ

Աստուած գիտէ, որ մեր մարմինը (տակաւին) փրկուած չէ: Մեր հոգիները փրկուած են. անոնք Յիսուսին ճշգրիտ պատկերն ու նմանութիւնը ունին (տես Ա. Յովհաննէս 4.17): Մեր անձերը փրկագնման ընթացքի մէջ են (տես Յակոբոս 1.21): Բայց մեր բնական մարմինները դեռ պէտք է փրկուին:

Արդե՞ծք նկատած էք, թէ որոշ բաներէ որքան դիւրին կը յոգնինք: Մարդ կրնայ նոր ինքնաշարժ գնել, եւ արդէն մէկ շաբաթ անցնելէն ետք, ատիկա հնաոճ կրնայ թուալ: Ասիկա չփրկագնուած մարմին բնութիւնն է: Մարմնական մակարդակը շատ քիչ խորութիւն ունի. անիկա կարճատեւ է եւ վաղանցուկ: Այդ իսկ պատճառով, Աստուած Իր բարութեամբ կ'ըսէ. «Ես Իմ ժողովուրդին ֆիզիքապէս չեմ յայտնուիր: Ես հնարաւորութիւն կու տամ անոնց, որ Ինձի հետ Իմ Հոգիով հաղորդակցին, որպէսզի կարենան իրապէս ճանչնալ Զիս»: Աստուած կարծես կ'ըսէ. «Ես հեռաւոր կապ կը պահպանեմ անոնց հետ, որոնց որ կը սիրեմ, որպէսզի անոնք կարողութիւն ունենան իրապէս ճանչնալու Իմ սիրտը»:

Որպէս Եկեղեցի՝ մենք Քրիստոսի հարսնացուն ենք: Աստուած մեզ աներեւակայելի ամուսնութեան կը պատրաստէ Իր հետ: Ան թոյլ կու տայ, որ ճանչնանք Զինք ամենախոր (հոգեւոր) մակարդակով, մինչեւ մարմնային մակարդակով ճանչնալը:

Ահա թէ ինչու Պօղոսը հետագային գրեց. «Ուստի ասկէ ետեւ մենք մէկը մարմնով չենք գիտեր. ու թէեւ Քրիստոսը մարմնով ճանչցանք, բայց հիմա ա՛լ այնպէս չենք ճանչնար» (Բ. Կորնթացիս 5.16): Մենք կը ճանչնանք Անոր Հոգիով՝ կենդանի Աստուծոյ Հոգիով: Կար ժամանակ, երբ Քրիստոսը մարմնով յայտնուած էր, բայց հիմա, քանի որ Ան այլեւս մարմնապէս այս երկրին վրայ չէ, մենք հնարաւորութիւն ունինք Անոր Հոգիով ճանչնալու:

Եթէ Հոգիին հետ հաղորդութիւնը անտեսենք, մենք Որդին ճանչնալու հնարաւորութենէն կը զրկուինք: Հոգին ամէն ինչ կը քննէ Աստուծոյ սրտին եւ մտքին մէջ, որպէսզի յայտնէ մեզի Յիսուսը: Եթէ կը փափաքիք խոր փոխյարաբերութիւններ ունենալ Աստուծոյ հետ, դուք պէտք է բարձրանաք այդ մակերեսային գիտելիքէն, որ ունիք Անոր մասին, եւ սկսիք բացայայտել Անոր ճշմարիտ ինքնութիւնը:

Այս ճանապարհորդությունը հնարաւոր է միայն Սուրբ Հոգիին հետ հաղորդութեան միջոցով: Ահա թէ ինչու մենք չենք կրնար յարիլ որեւէ մէկ ամանդոյթի (մտքերու ընդունուած ձեւի) Սուրբ Հոգիին մասին, որ չէ հիմնուած Աստուծոյ յաւիտենական Խօսքին վրայ: Եթէ մենք թոյլ տանք, որ թիրիմացութիւնները, անձնական նախապաշարմունքները կամ բացասական փորձառութիւնները խաթարեն մեր պատկերացումը Սուրբ Հոգիին մասին, մենք Աստուծոյ փառաւոր ներկայութեան խոստումը չենք վայելեր մեր կեանքերուն մէջ: Մենք չենք կրնար ճանչնալ զԱստուած՝ առանց Անոր Հոգիին:

Ես կը հաւատամ, որ դուք կրնաք այնպիսի փոխարաբերութիւններ ունենալ Հոգիին հետ, որ կը փափաքիք այն, ինչ որ Ան կը փափաքի, եւ կը զգաք այն, ինչ որ Ան կը զգայ: Փոխարաբերութիւններու ամենախոր՝ հոգեւոր մակարդակը հասանելի է ձեզի համար: Այս մակարդակին վրայ դուք կը բացայայտէք այնպիսի մտերմութիւն ձեր Արարիչին հետ, Որուն նմանը չկայ: Այնուամենայնիւ, դուք պէտք է ձգտիք ճանչնալու Սուրբ Հոգին, եթէ կը պատրաստուիք մտերմօրէն հաղորդակցիլ Անոր հետ: Ինչպէ՛ս կրնաք ճանչնալ Ձինք: Կարդալով Անոր Խօսքը եւ ժամանակ անցընելով Անոր ներկայութեան մէջ: Աստուած կը ցանկայ մօտենալ ձեզի: Դուք պէտք է ընդամենը Իրեն հանդէպ առաջին քայլը առնէք:

Պահ մը խոկացէք ստորեւ բերուած հատուածին շուրջ եւ թոյլ տուէք Հոգիին, որ ձեր սրտին մէջ աշխատանք կատարէ: Դիմեցէք Աստուծոյ. խնդրեցէք Անորմէ, որ հեռացնէ ամէն տեսակ մտածելակերպ (քօղ), որ թոյլ չէ տուած ձեզի վերապրելու Անոր ներկայութիւնը: Երբ այդ քօղերը հեռացուին, դուք կը կարենաք տեսնել Ձինք, ինչպէս երբեք: Երբ նայիք Անոր դէմքին (արժանաւոր ժամանակ անցընէք Անոր հետ՝ որպէս Անոր մտերիմ ընկեր), Ան ձեզ կը վերափոխէ Իր նմանութեամբ: Ես կ'աւարտեմ Պօղոս Առաքեալին հետեւեալ խօսքերով.

«Բայց երբ ինչ որ մէկը Տէրոջը կը դառնայ, այդ քօղը կը վերցուի: Որովհետեւ Տէրը՝ Հոգին է, եւ ուր որ Տէրոջ Հոգին է, այնտեղ ազատութիւն է: Այնպէս որ, որու քօղը հեռացուած է, կրնայ տեսնել եւ արտացոլել Տէրոջ փառքը: Եւ Տէրը, որ Հոգին է, մեզի կը դարձնէ աւելի եւ աւելի Իրեն նման, երբ մենք կը փոխուինք Անոր փառաւոր պատկերով»: (Բ. Կորնթացիս 3.16-18, NLT)

ԸՆԴՈՒՆԵՑԷՔ ԶԻՆՔ՝ ՈՐՊԷՍ ՁԵՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ

«Դուք սրացած էք Սուրբ Հոգին, եւ Ան կ'ապրի ձեր մէջ, այնպէս որ, դուք պէտք չունիք, որ որեւէ մէկը սորվեցնէ ձեզի, թէ ինչն է ճշմարտորդը: Որովհետեւ Հոգին կը սորվեցնէ ձեզի այն ամէնը, ինչի որ պէտքը ունիք, եւ այն ինչ որ Ան կը սորվեցնէ, ճշմարտութիւն է. եւ սուր չէ: Ուրեմն, ճիշդ այնպէս, ինչպէս Ան սորվեցուցած է ձեզի, մնացէք հաղորդակցման մէջ Քրիստոսի հետ»:

— Ա. Յովհաննէս 2.27, NLT

Սուրբ Հոգին բազմաթիւ դերեր կը կատարէ մեր կեանքին մէջ, բայց հաւանաբար մեծագոյնը՝ ուսուցիչի դերն է: Ան մշտապէս ինչ որ բան մը կը սորվեցնէ մեզի: Ան կատարեալ ծնող է, որ մշտապէս մեր ներսը կ'ապրի՝ առաջնորդելով եւ շտկելով մեզ Իր մեղմ, սիրալիր բնաւորութեամբ:

Սուրբ գիրքը՝ Հոգիին անժամանակեայ (յախտենական) դասագիրքն է. Աստուածաշունչին մէջ Աստուծոյ մտքերը գրուած են: Աստուծոյ պէս մտածելու, խօսելու եւ վարուելու համար մեզի անհրաժեշտ է Անոր Խօսքը եւ այդ Խօսքը հասկնալու կարողութիւնը: Մեր Ուսուցիչին նպատակն է՝ առաջնորդել մեզ ամբողջ ճշմարտութեան մէջ, եւ Ան կը կատարէ ատիկա՝ Աստուածաշունչէն ճիշդ ժամանակին յայտնելով այն խօսքերուն իմաստը, որոնց կարիքը մենք ունինք: Հեղինակ եւ հովի **Ֆրէնսիս Ֆրէնճիփէյնը** պերճախօսաբար կը պնդէ.

Տէրոջ Խօսքը, Սուրբ Հոգիին հետ միասին, այն փոխադրամիջոցն է, որ կը տանի մեզի դէպի վերափոխում՝ Քրիստոսի պատկերով... Խօսքը՝ Աստուած է: Սուրբ գիրքը Աստուած չէ, բայց այն Հոգին, որ այդ խօսքերուն ընդմէջէն կը փչէ, Աստուած է: Եւ այս Սուրբ Հոգին պէտք է պատուել, որպէս Աստուած: Այդ իսկ պատճառով, երբ Տէրոջը կը փնտռէք..., աղօթեցէք, որ Խօսքը միայն ձեր մտքով չկարդաք: Փոխարէնը, խնդրեցէք Սուրբ Հոգիէն, որ ձեր հետ Խօսքի միջոցով խօսի...: Երբ խոնարհութեամբ ծունկի կու գաք Տէրոջ առջեւ, Խօսքը կը սերմանոյ ձեր անձին մէջ՝ դառնալով ձեր էութեան մասը (Յակոբոս 1.21)¹»:

Կեցէք եւ դուք ձեզի հարցուցէք. «Ես ինչպէ՞ս կը մօտենամ Աստուծոյ Խօսքին: Արդե՞ծք ես կը հրաւիրեմ իմ Ուսուցիչը, որ սորվեցնէ ինձի: Արդե՞ծք ես ուշադրութեամբ կը կարդամ Խօսքը, կամ արդե՞ծք ինչ որ բաներ Խօսքէն կը ստանամ»: Իսկ հիմա հարցուցէք Հոգիին. «Ուրիշ ինչ կրնամ ուրիշ ձեռով ընել, որպէսզի Խօսքը կենդանանայ եւ էութեանս մէկ մասը դառնայ»: Գրեցէք եւ գործադրեցէք այն, ինչ որ Ան կը յայտնէ ձեզի:

Արդե՞ծք Աստուծոյ հետ ձեր անցուցած ժամանակը միակն է, երբ Սուրբ Հոգին կը սորվեցնէ: Ո՛չ: Ան միշտ կը սորվեցնէ, եւ եթէ դուք զգայուն էք Անոր ձայնին հանդէպ, Ան կրնայ սորվեցնել ձեզի ամէն քայլափոխի: Ֆրէնճիփէյնը կ'առաջարկէ.

«...Մշտապէս սեւագիր եւ գրիչ ունեցէք ձեր մօտ: ...Մենք կանչուած ենք Անոր մէջ բնակելու, ոչ թէ Անոր երբեմն այցելելու համար: ...Դուք պէտք է այդպիսի ականջ զարգացնէք, որ Հոգին կարենայ խօսիլ ձեզի հետ ամէնուր եւ ամէն ինչի մասին: Պատուեցէք Անոր, եւ Ան կը պատուէ ձեզ»²:

Ասիկա թերեւս կրնայ տարբեր կերպերով արտայայտուիլ իւրաքանչիւրին համար: Օգտագործեցէք այն միջոցը, առարկան կամ գործիքը, որ աւելի յարմար է ձեզի համար: Կարեւորը անիկա է, որ դուք լսէք, երբ Ան կը խօսի, եւ յիշէք այն, ինչ որ Ան կ'ըսէ:

Ուշադրութեամբ խոկացէք այս խօսքերուն շուրջ: Հոգին ինչ կը յայտնէ ձեզի Խօսքի մասին:

Բ. Տիմոթէոս 3.16-17, Բ. Պետրոս 1.12-21

Երկրորդ Օրինաց 6.6, 11.18, Սաղմոս 119.9-11, Կողոսացի 3.16

Սաղմոս 19.8, 119.105, 130, Առակաց 4.20-23, 6.20-23

Երրայեցիս 4.12, Յակոբոս 1.21, Երեմեայ 23.28-29

*«Կանչե՛ք Ինձի, եւ Ես կը պատասխանեմ քեզի: Ես կը պատմեմ սքանչելի
եւ զարմանալի բաներ, որ դուն երբեք չէիր կրնար հասկնալ»:*

— (Երեմեայ 33.3, MSG)

ՆՈՒԻՐՈՒԵՑԷՔ ԱՆՈՐ՝ ՈՐՊԷՍ ՏԵՐՈՋ

«Յիսուս պատասխանեց. «Ամենակարեւոր պատուիրանը ասիկա է. ...Տէրը՝ մեր Աստուած, մէկ եւ միակ Տէրն է: Եւ դուն պէտք է սիրես Տէրը՝ Քու Աստուծոյն, քու ամբողջ սրտով, քու ամբողջ անձով, քու ամբողջ մտքով եւ քու ամբողջ զօրութիւնով»»:

— (Մարկոս 12.29, NLT)

Տէրը, որ Հոգին է, սրտանց կը սիրէ մեզ եւ կը փափաքի, որ մեր սէրը միայն Իրեն ուղղուած ըլլայ: Ան չի փափաքիր, որ մեր սէրը կամ ուշադրութիւնը ուղղուած ըլլայ այս աշխարհին կամ որեւէ մէկ ուրիշ բանի, որ այս աշխարհին մէջ է: Ան կ'ըսէ.

«Մի սիրէք աշխարհի ճանապարհները: Մի սիրէք այս աշխարհին բարիքները: Աշխարհի սէրը ձեզմէ կը քամէ եւ կը հեռացնէ Հօր հանդէպ սէրը: Գրեթէ ամէն ինչ, որ կը կատարուի այս աշխարհին մէջ՝ ձեր կամքը կատարելու ցանկութիւնը, ամէն ինչ ձեզի համար ցանկալը եւ կարեւոր թուալու ցանկութիւնը, ոչ մէկ կապ ունի Հօր հետ: Ատիկա պարզապէս կը մեկուսացնէ ձեզ Անկէ: Աշխարհը եւ իր ամբողջ ցանկութիւնը, ցանկութիւնը, ցանկութիւնը կը մօտենայ վախճանին, բայց ան, որ Աստուծոյ կամքը կը կատարէ հաստատուած է յափտեան»:

— (Ա. Յովհաննէս 2.15-17, MSG)

Կարդացէք ասոր անչուող սուրբգրային հատուածները. Մատթէոս 16.24-26, Տիտոս 2.12-14, Յակոբոս 4.4-6, Յովհաննէս 15.18-21, Հռովմայեցիս 12.2:

ԴՈՒՔ ԻՆՉԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԷՔ: Անկեղծօրէն քննեցէք դուք ձեզ՝ հարցնելով.

Ո՞վ կամ ի՞նչը ժամանակիս եւ ուշադրութեանս մեծ մասը կը գրաւէ: Ես ինչո՞վ կը զբաղիմ, երբ ազատ ժամ ունենամ:

Ո՞վ կամ ինչը կը ոգետորէ զիս: Արդե՞ծք ժամանակակից նորութիւնները կամ նորածեւութեան հակումները պատշաճ տեղ կը զբաղեցնեն իմ կեանքին մէջ:

Ինչի՞ վրայ ես դրամ կը ծախսեմ:

Ամէնէն շատ ինչի՞ մասին կը մտածեմ: Ինչի՞ մասին ես յաճախ կը խօսիմ: Ինչի՞ մասին պարբերաբար կ'աղօթեմ:

Մեր խօսքերը կը յայտնեն, թէ մենք ինչին նուիրուած ենք: Յիսուս ըսաւ, որ մեր բերանէն դուրս կ'ելլէ, ինչով որ լեցուն է մեր սիրտը (տես Ղուկաս 6.45):

Վերստուգեցէք ձեր պատասխանները: Հարցուցէք Սուրբ Հոգիին. «Արդե՞ծք ես պէտք ունիմ, որ փոխես իմ առաջնահերթութիւնները: Արդե՞ծք ինչ որ բան կայ, որ կուռք դարձած է կեանքիս մէջ: Կայ արդե՞ծք ինչ որ բան մը, որուն ես ատելի շատ կը ձգտիմ, քան Քեզի»: Ինչ կը պատասխանէ Ան: Ինչպիսիքայլերու կը դրդէ ձեզի, որ ձեռնարկէք՝ ձեր նուիրուածութիւնը Իրեն վերադարձնելու համար:

Խոկացէք Աստուծոյ խօսքերուն շուրջ Մատթէոս 6.19-21-ին եւ Կողոսացիս 3.1-17-ին մէջ: Օգտագործեցէք այս խօսքերը, որպէսզի *նուիրման աղօթք գրէք՝* խնդրելով Սուրբ Հոգիէն, որ օգնէ ձեզի հաւատարիմ մնալու Տէրոջը՝ ձեր Աստուծոյն:

ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԱՃՈՒՄ՝ ԱՆՈՐ ՇՆՈՐՀՔՈՎ

*«Մենք կը կերպարանափոխուինք՝ Մեսիային ատելի նմանելով.
մեր կեանքերը աստիճանաբար ատելի պայծառ եւ ատելի գեղեցիկ
կը դառնան այն ժամանակ, երբ Աստուած մուրք կը գործէ մեր
կեանքերուն մէջ, եւ մենք Անոր նման կը դառնանք»:*

— (Բ. Կորնթացիս 3.18, MSG)

Խաչուելէն կարճ ժամանակ առաջ Յիսուս բանալի խօսք մը ըսաւ Սուրբ Հոգիին մասին. «Ձեզի տակաւին շատ բաներ ունիմ ըսելու, բայց հիմա դուք չէք կրնար տանիլ ատոնք: Բայց երբ Ընկերը գայ՝ ճշմարտութեան Հոգին, Ան կը բռնէ ձեր ձեռքը եւ կ'առաջնորդէ ձեզ ամէն ճշմարտութեան մէջ...» (Յովհաննէս 16.12-13, MSG):

Յիսուս ամենագէտ է. Ան կրնայ տարբեր ճշմարտութիւններով բաժնեկցիլ Իր աշակերտներուն հետ, բայց Ան գիտէր, որ անոնք դեռ չէին կրնար հասկնալ Իր ըսածները: Անոնց ժամանակ մը պէտք էր՝ հոգեւորապէս աճելու համար: Երբ Ան մահացաւ, յարութիւն առաւ ու Երկինք համբարձաւ, Հայրը Իր Հոգին ուղարկեց՝ օգնելու մեզի, որ աստիճանաբար Անոր շնորհքով աճինք:

Արդեօք լաւ ծնողը կ'ակնկալէ, որ իր նորածին զաւակը հասկնայ, թէ ինչ է բազմապատկումը, կամ այդ զաւակը, որ նոր քալել կը սորվի, կարենայ տուրքային տեղեկանք լրացնել: Ո՛չ: Նմանապէս, Սուրբ Հոգին կը սպասէ, մինչեւ մենք բաւականաչափ հասունանանք՝ հասկնալու համար այն ճշմարտութիւնը, որ Ան պէտք է ըսէ մեզի: Ան ոչ միայն կ'առաջնորդէ մեզ ողջ ճշմարտութեան մէջ Սուրբ գիրքին մասին, այլ նոյնպէս կ'առաջնորդէ դէպի ճշմարտութիւնը, մեր, մեր մանուկներուն, մեր առողջութեան, մեր հանգամանքներուն եւ շատ ատելիին մասին:

Աստուծոյ խօսքին համաձայն՝ մենք հոգեւորապէս կ'աճինք (Յիսուսին նման կը դառնանք)՝ աճելով հաւատքի եւ փառքի մէկ մակարդակէն միւսը³: Մենք մեր բաժինը ունինք այս գործընթացին

մէջ, ինչպէս եւ Սուրբ Հոգին՝ Իրենինը: Ուշադրութեամբ խոկացէ՛ք Փիլիպպեցիս 1.6, 2.12-13, Ա. Թեսաղոնիկեցիս 5.23-24 եւ Եբրայեցիս 13.20-21 խօսքերուն շուրջ: Հոգին այս խօսքերուն մէջ ձեզի ինչ կը յայտնէ՝ Քրիստոսին մէջ հոգեւորապէս աճելու մասին: Արդե՞ծք կրկնուող միտք մը կը նկատէք այս խօսքերուն մէջ:

Չարիզ Սփէրճընը Անգլիայի ամենայայտնի քարոզիչն էր տասնիններորդ դարու երկրորդ կիսուն: Ան պտղաբեր գրող էր, որ բազմաթիւ թեմաներով կը գրէր, ներառեալ՝ Սուրբ Հոգիին եւ հոգեւոր աճին մասին: Սփէրճընը ըսած է.

«Մենք կը վստահինք Յիսուսին բոլոր այն բաներուն մէջ, որ չենք կրնար ընել: Եթէ մեր սեփական ուժերը բաւական ըլլային, ինչո՞ւ պէտք է բան մը սպասէինք Անորմէ: Մեր գործը հաւատալն է, իսկ Տէրոջ [Սուրբ Հոգիին] գործը՝ մեզի նորանոր կերպով ստեղծելը: Ան մեր փոխարէն պէտք չէ հաւատայ, ոչ ալ մենք պիտք է վերածնունդի աշխատանքը Անոր փոխարէն կատարենք: Մեզի համար բաւական է հնազանդիլ այս շնորհալի պատուիրանին: Տէրն է, որ վերստին ծնունդը պիտի ներգործէ մեր մէջ»⁴:

Թերեւս մտածէք. *«Ես պէտք է հոգեւորապէս աւելի հասուն ըլլամ»*: Առիթ եւ տեղ մի՛ տաք այդ մտքին. ատիկա ճիշդ չէ: Դուք ընդամենը դատապարտութիւն կը զգաք եւ ձեր հոգեւոր ուժերը կը կորսնցնէք: Կեցէ՛ք եւ աղօթեցէ՛ք. «Սուրբ Հոգի, ըստ Քեզի, ո՞ր եմ ես հիմա (իմ հոգեւոր հասունութեան մակարդակը ո՞ր մէկն է)»: Ինչ կ'ըսէ Ան ձեզի:

⁴Պէտք է դուք ձեզ տեսնէք այնպէս, ինչպէս Հոգին կը տեսնէ: Իննորեցէ՛ք Անորմէ, որ շնորհ տայ ձեզի, որպէսզի ընդունիք ձեր ներկայ հոգեւոր վիճակը եւ շարունակէք ձեր աճումը:

Արդե՞ք խելայեղօրէն փորձած էք դուք ձեզ փոխել: Եթէ այո, ապա ինչպէ՞ս: Ի՞նչը ուրիշ ձեւ կը տեսնէք հիմա:

ԱՐԺԵՒՈՐԵՑԷՔ ԱՅՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ, ՈՐ ԱՆ ԿԸ ՍՏԵՂԾԷ

*«Միրեցէ՛ք ձեր ինքնութեան կեդրոնէն. մի՛ կեղծէք:
...Եղէ՛ք լաւ ընկերներ, որոնք խորապէս կը սիրեն.
սորվեցէ՛ք ըլլալ երկրորդական դերի մէջ»:*

— (Հոովմայեցիս 12.9-10, MSG)

Մենք ստեղծուած ենք, որպէսզի Հօր եւ այլ մարդոց հետ հաղորդակցինք: Ինչպէս կ'ըլլար ձեր կեանքը՝ առանց հաղորդակցութեան: Եթէ ձեր կեանքէն հեռացնէիք բոլոր փոխյարաբերութիւնները, որոնք ձեր կեանքը կ'իմաստաւորեն, ինչ կ'ունենայիք: Միայնակ, դատարկ կեանք:

Փառք Աստուծոյ փոխյարաբերութիւններուն համար: Աստուածապաշտ ընկերը անգնահատելի(անգին) է: Լաւ ընկերը մեր միտքը, զգացմունքներն ու հոգին կը ձեւաւորէ, ինչպէս որ երկաթը կը սրէ երկաթը: Լաւ ընկերը սիրով ցոյց կու տայ սխալը եւ անհրաժեշտ պարագային կը շտկէ: Լաւ ընկերը ձեր յաջողութիւնները կը տօնէ եւ խրախուսէ ձեզ՝ կեանքի դժուարութիւնները անցընելու համար:

«Աւելի լաւ է քեզի համար, որ ընկեր ունենաս, քան լիովին միեակ ըլլաս, որովհետեւ այդ ժամանակ դուն ւաւելի մեծ հաճոյք կը ստանաս անկէ, ինչ որ կը վատրկիս: Եթէ իյնաս, ընկերդ կրնայ օգնել եւ բարձրացնել քեզ: Բայց եթէ իյնաս եւ քովդ ընկեր չունենաս, ուրեմն իսկապէս փորձանքի մէջ ես»:

— (Ժողովողի 4.9-10, CEV)

Մենք գիտցանք, որ կան փոխյարաբերութիւններու երեք մակարդակ՝ ֆիզիքական, շնչաւոր եւ հոգեւոր: Ինչպէս այս մասին գիտելիքը կ'օգնէ ձեզի հասկնալու ձեր ներկայ փոխյարաբերութիւնները: Որո՞նք հետ շփուելէն ւաւելի օգտակար է այս գիտելիքը: Ինչո՞ւ:

Ամենախոր, ամենախիմաստալից շփումը, որ մարդոց հետ կրնաք ունենալ, հոգետոր մակարդակի վրայ է: Նկարագրեցէք այդ տեսակի շփումը: Ինչպիսի առաւելութիւններ ունի հոգետոր մակարդակի շփումը՝ ֆիզիքական կամ շնչաւոր մակարդակներէն աւելի:

Կան արդեօք մարդիկ, որոնց հետ կը փափաքիք աւելի խորացնել եւ զարգացնել ձեր յարաբերութիւնները: Կեցէք եւ աղօթեցէք. «Սուրբ Հոգի, Խնչ կրնամ ընել, որպէսզի աւելի խոր, հոգետոր փոխյարաբերութիւններ ունենամ այն մարդոց հետ, որոնց Դուն կեանքիս մէջ դրած ես»: Լուռ եղէք եւ լսեցէք: Գրեցէք այն, ինչ որ Ան կ'ըսէ ձեզի:

Աղօթք Աստուածային կապերու համար.

Սուրբ Հոգի, ինծի Աստուածային կապեր շնորհէ: Ինչպէս Հովնաթանը Դաւիթին համար էր, ինչպէս Հոուրը՝ Նոյեմիին, եւ ինչպէս Յովհաննէսը՝ Յիսուսին, այնպէս ալ կապեր ստեղծէ՛ իմ եւ այն մարդոց միջեւ, որոնց հետ Դուն կը փափաքիս, որ հաղորդակցիմ: Տո՛ւր ինծի Քու շնորհքը՝ առողջ ընկերութիւններ զարգացնելու համար, որոնց կարգին նաեւ հոգետոր մակարդակի վրայ ընկերութիւններ ըլլան: Յիսուսի անունով: Ամէն:

Հետագայ ուսումնասիրութեան համար...
Առակաց 13.20, 17.9, 17, 27.6, 10, 17, Յովհաննէս 15.13, Ա. Յովհաննէս 1.7, Ա. Թագաւորաց 18.1-4

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑԵՑԷՔ ԱՄԵՆԱԽՈՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱՅ

*«...Սորվի՛ր մտերմօրէն քու նախնիներու Աստուածը ճանչնալ:
Երկրպագէ՛ եւ ծառայէ Անոր քու ամբողջ սրտով եւ յօժար միտքով»:*

— Ա. Մնացորդաց 28.9, NLT

Աստուծոյ մեծագոյն ձգտումը՝ ձեզի մտերմօրէն ճանչնալն է: Ան կ'առաջարկէ, որ ձեր ամբողջ կեանքը Իր հետ անցընէք: Արդե՛ծք անելի լաւ առաջարկ կրնայ ըլլալ: Պօղոս ըսաւ. «Մնացած ամէն ինչը անպէտք է՝ իմ Տէր Քրիստոս Յիսուսը ճանչնալու անսահման արժէքին համեմատ: Յանուն Անոր ես հրաժարած եմ մնացած ամէն ինչէն՝ այդ ամէնը աղբ համարելով, որպէսզի կարենամ Քրիստոսը շահիլ» (Փիլիպպեցիս 3.8, NLT):

Յիսուս Քրիստոսի խորութիւնները ճանչնալը՝ Ժաննա Քիյոնի փափաքն էր: Այս առաքելութիւնը այն աստիճան կարեւոր էր անոր համար, որ ան գիրք մը գրեց՝ ճիշդ այդ վերնագիրով: Տասնեօթերորդ դարի մէջ ապրող այս ֆրանսուհին ազդեցութիւն ձգեց այնպիսի հաւատացելաներու կեանքերուն մէջ, ինչպիսին են Ճոն Վէսլին, Հատսըն Թէյլըրը եւ Վոչմըն Նին: Ան մտերմութեան մասին կը գրէ.

«Թոյլ տուէ՛ք, որ հարցնեմ ձեզի... Արդե՛ծք կը փափաքիք խորապէս ճանչնալ Տէրը: Աստուած այսպիսի վերապրում մը կամ այսպիսի ընթացք մը *կարելի դարձուցած է*, այն շնորհքով, որ տուած է Իր բոլոր *փրկուած* զաւակներուն: Ան Սուրբ Հոգիին միջոցով ըրած է ասիկա: Ուրեմն, ինչպէ՛ս կրնաք գալ Տէրոջ մօտ՝ Անոր խորապէս ճանչնալու համար: Բանալին՝ աղօթքն է»⁵:

Ինչպէ՛ս կը նկարագրէիք աղօթքը՝ որպէս Աստուծոյ մտերմօրէն ճանչնալու միջոց: Ուշադրութեամբ կարդացէ՛ք Յիսուսին աղօթքը Մատթէոս 6.5-15-ին մէջ: Անորմէ ինչ կրնաք սորվիլ եւ գործածել ձեր կեանքին մէջ:

Ինչպէս որ գիտցանք, երբ մենք վերստին կը ծնինք, Սուրբ Հոգին բնակութիւն կը հաստատէ մեր Հոգիին մէջ: Այնպէս որ, Հոգին կը հաղորդակցի մեզի հետ մեր հոգիին միջոցով: Ժաննա Քիյոնը կը շարունակէ.

«Դուք Տէրոջ կրնաք գտնել միայն ձեր Հոգիին ներսը՝ ձեր էութեան ծածուկ անկիւններուն մէջ, ձեր Սրբութեան Սրբոցին մէջ. ահա թէ ուր կը բնակի Ան: Մէկ անգամ Տէրը խոստացաւ, որ կու գայ եւ կը բնակի ձեր մէջ (տես Յովհաննէս 14.23): Ան խոստացաւ, որ կը հանդիպի անոնց, որոնք կ'երկրպագեն Ձինք եւ կը կատարեն Իր կամքը այդտեղ: Տէրը կը *հանդիպի* ձեր հետ, ձեր հոգիին մէջ: Երբ որ ձեր սիրտը ներքուստ դառնայ դէպի Տէրը, դուք կը զգաք Անոր ներկայութիւնը»⁶:

Ամենամտերիմ միջոցը, որմով կրնանք ճանչնալ զԱստուած, Անոր Հոգիովն է՝ Անոր Սուրբ Հոգիով, Որուն Ան տուած է մեզի (տես Ա. Կորնթացիս 2.9-12): Կեցէք եւ աղօթեցէք. «Սուրբ Հոգի, արդե՞ծք իմ ներսը կան որեւէ թիրլըմբոնումներ, բացասական փորձառութիւններ կամ անձնական նախապաշարմունքներ Քու վերաբերեալ, որոնք կ'աղաւաղեն իմ պատկերացումը Քու մասին»: Հանդարտեցէք եւ լսեցէք: Խնդրեցէք Անորմէ՝ հեռացնել որեւէ մտածելակերպ, որ ետ կը պահէ ձեզի Անոր ներկայութենէն: Գրեցէք այն, ինչ որ Ան կը յայտնէ:

Խոկացէք այս ճշմարտութեան մասին. խնդրեցէք Սուրբ Հոգիէն, որ ձեր սրտին մէջ յայտնէ այս հատուածին նշանակութիւնը:

«Բայց երբ ինչ որ մէկը Տէրոջը դառնայ, այդ քօղը կը վերցուի: Որովհետեւ Տէրը՝ Հոգին է, եւ ուր որ Տէրոջ Հոգին է, այնտեղ ազատութիւն է: Այնպէս որ, որու քօղը հեռացուած է, կրնայ տեսնել եւ արտացոլել Տէրոջ փառքը: Եւ Տէրը, որ Հոգին է, մեզի կը դարձնէ ատելի եւ ատելի Իրեն նման, երբ մենք կը փոխուինք Անոր փառաւոր պատկերով»:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Եթե դուք կ'ուսումնասիրեք «Սուրբ Հոգի. Ներածություն» գիրքը՝ որպես «Մեսենճր Հաաքաճոյ»ի ամբողջական դասընթացքի մաս, կը խնդրենք, որ ուսումնական 3-րդ տեսանիւթը դիտէք:

- 1| Յիսուս ըսաւ, որ փարիսեցիները մարդոց աւանդութիւնները աւելի կը կարեւորեն, քան Աստուծոյ Խօսքին հեղինակութիւնը: Ինչ են մարդոց աւանդութիւնները, եւ ինչու ատոնք Արարիչին հետ ունեցած մեր փոխյարաբերութիւնները կը վնասեն: Առնուազն մէկ ժամանակակից օրինակ բերէք այն մասին, թէ ինչպէս մարդոց աւանդութիւնները Աստուծոյ Խօսքի ճշմարտութենէն աւելի կը կարեւորուին:
- 2| Սուրբ Հոգին կը փափաքի մեր լաւագոյն ընկերը ըլլալ եւ նախանձաւոր է մեզի հետ մտերմօրէն շփուելու համար: Այս աշխարհին մէջ բաներ կան, որոնք գողցած են Եկեղեցւոյ (հաւատացեալներու) ուշադրութիւնը եւ սէրը Հոգիին հանդէպ: Ձեր կարծիքով, որոնք են ատոնք: Ինչ կը կատարուի, եթէ մենք սիրախաղեր ընենք այս աշխարհին հետ՝ ձգտելով աշխարհի հաճոյքներուն, ունեցուածքին եւ կարգավիճակին աւելի, քան Հոգիին հետ հաղորդութեան:
- 3| Ինչ կը յայտնէ Յիսուս Թովմաս առաքեալին՝ Յովհաննէս 20.29-ին մէջ: Այս ճշմարտութիւնը ինչպէս կը կապուի Պօղոս առաքեալի խօսքերուն հետ Բ. Կորնթացիս 5.16-ին մէջ: Համաձայն այս ճշմարտութեան՝ մեր մտերիմ շփումը Տէրոջ հետ ինչնով աւելի գերազանց է:
- 4| Անուանեցէք եւ նկարագրեցէք մարդոց հետ ձեր ունեցած *փոխյարաբերութիւններուն երեք մակարդակները*: Ո՞րն է ամենախոր մակարդակը, եւ ինչնո՞ւ: Ինչպէս մենք կրնանք մարդոց հետ կապ հաստատել ամենախոր այս մակարդակով:
- 5| Մեզի աներեւակայելի պարգեւ տրուած է Սուրբ Հոգիին մէջ՝ Աստուծոյ մտերմօրէն ճանչնալու կարողութիւնը: Ուշադրու-

թեամբ կարդացէք Ա. Կորնթացիս 2.11-16-ը: Սուրբ Հոգին ինչ կը յայտնէ այս հատուածին մէջ՝ Աստուծոյ ճշմարտապէս ճանչնալու մասին:

- 6| Պետրոսը եւ միւս աշակերտները եզակի փորձառութիւն ունէին. անոնք անձամբ հաղորդակցած էին Յիսուսին հետ: Պօղոսը այդ փորձառութիւնը չունէր, սակայն ան նոյնպէս զօրաւոր կերպով օգտագործուեցաւ Աստուծոյ կողմէն: Ինչպէս կարելի էր ասիկա:

Կարդացէք անելին. Յովհաննէս 20.29, Բ. Կորնթացիս 5.16 եւ Բ. Պետրոս 3.15-16:

- 7| Ինչպիսին կ'ըլլան մեր եւ Աստուծոյ փոխյարաբերութիւնները, եթէ մենք չձգտինք Սուրբ Հոգիին հետ հաղորդակցութիւն ունենալու: Եթէ կը կամենաք, բաժնեկցեցէք ձեր խումբին հետ որոշ գործնական միջոցներով, որոնցմով դուք հաղորդակցած էք Սուրբ Հոգիին հետ եւ վերապրած էք Անոր զարմանալի ընկերութիւնը:

ԳԼՈՒԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Եթե կը փափաքինք Աստուծոյ հետ խորունկ, մտերիմ փոխյարաբերութիւն ունենալ, մենք պէտք է ճանչնանք Անոր՝ Անոր Հոգիով:
- Միայն Հոգին գիտէ եւ միայն Ան կը յայտնէ Աստուծոյ սրտի մտքերը, զգացումներն ու նպատակները:
- Մեզի տրուած է Աստուծոյ Հոգին. Ան մեծագոյն Ուսուցիչն է, որ կ'առաջնորդէ մեզ ողջ ճշմարտութեան մէջ:
- Սիրել այս աշխարհը (եսասիրաբար ձգտիլ կարգավիճակի եւ հաճոյքներու) կը նշանակէ՝ ըլլալ Աստուծոյ թշնամին:
- Սուրբ Հոգին՝ ազնուական (ճենթըլմէն) է. Ան մեզի Իր կամքը կամ ընկերութիւնը չի պարտադրեր:
- Փոխյարաբերութիւններու երեք մակարդակները հետեւեալն են. ֆիզիքականը (ամենաստորինը եւ ամենամակերեսայինը), շնչաւորը (կամ՝ անձնականը) եւ հոգեւորը (ամենախորը եւ ամենամտերիմը):
- Մենք կրնանք խորապէս եւ մտերմօրէն ճանչնալ զԱստուած՝ Անոր Հոգիին միջոցով, քան մարմնաւորուած Յիսուսին հետ ֆիզիքապէս շփուելով:



Յ Ի Ս ՈՒ Մ Ի անունը

Մեր կեղրոնացու՛մը, փափաքն ու նպատակը՝ Աւետարանն է



Մ Ո Ր Վ Ե Ց Ն Ե Լ

Հրահանգել, իրատել, մարզել, փոխանցել կամ ցուցադրել






Մեր յանձնարարականն է՝
փոխանցել կեանքեր փոխող

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ՄԻՋՈՑՆԵՐ

Մարտավարական կերպով տրամադրուած՝ հովիւներուն ու աւագներուն ամբողջ աշխարհի տարածքին





ՀԱՄԱՆԻ ԵՄՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԻՆ ԿԱՍՏԱՍԱՏՆԵԼ, ԿԱՅԻՆ ԿԱՍՏԱՍԱՏՈՒՆԵԼ, ԿԱՅԻՆ ԿԱՍՏԱՍԱՏՈՒՆԵԼ

Հայի, կապ հաստատունել, տարածուիլ կամ ուղերձ փոխանցել

2018 ՆԱԳՆՆԵՐ

Կեանքեր փոխել՝ ազգերու
վրայ ազդեցութիւն ձգելու համար





Ուրեմս գացե՛ք բոլոր ազգերը աշակերտեցե՛ք...
ստրվեցուցե՛ք անոնց, որ այն բոլոր բաները պահեն՝
ինչ որ Ես ձեզի պատուիրեցի:
Մատթեոս 28.19,20

ՆԱԽԻՊՈՒՅԻՆ ԵՐԱՆՔԱՆԵՐԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Իմացե՛ք անեղին՝ @ www.CloudLibrary.org

Զօրացած՝ Հոգիով

Օր 1

Մտքով պատկերացուցէք միջնադարեան թագաւոր մը: Փորձեցէք տեսնել այդ միջավայրը, որուն մէջ ան կ'ապրէր. ամբողջ եւ աշտարակները, ասպետները եւ արքունական տիկիները, անոր պատերազմները, անոր թագաւորութիւնն ու փառքը: Յաճախ կը համարուէր, որ թագաւորին դիրքը եւ տոհմը սահմանուած էին Աստուծոյ կողմէն, այնպէս որ ենթակաները մեծ երկիւղածութիւն կը տածէին թագաւորներուն հանդէպ, եւ անոնք մեծ հարստութեան մէջ կ'ապրէին: Թագաւորին խօսքը՝ օրէնք էր. անոր որոշումները վերջնական էին: Լաւ թագաւորը կը հասկնար, որ ան պարտաւոր է պաշտպանելու իր թագաւորութեան սահմաններուն մէջ ապրող մարդոց: Ան նոյնպէս պէտք է թագաւորութեան շահերը պաշտպանէր՝ ընդլայնելով իր երկրին սահմանները եւ ձեռք բերելով յաւելեալ միջոցներ:

Այս պաշտօնը անպատմելի պատասխանատուութիւն կ'ենթադրէ եւ, հետեւաբար, թագաւորին հսկայական իշխանութիւն կը տրուէր, իսկ երբեմն՝ նոյնիսկ լիակատար իշխանութիւն: Յիշեցէք՝ ես չեմ խօսիր ձեռական ղեկավարներուն մասին (որոնք բնորոշ են մեր ժամանակաշրջանին, երբ ժողովրդավարական եւ հանրապետական համակարգերը կառավարութեան ամենատարածուած ձեւերն են): Ես բացարձակ մենիշխանութեան մասին կը խօսիմ: Այժմ պատկերացուցէք, որ այսպիսի թագաւոր մը մերժէ այդ իշխանութիւնը, որ իր դիրքին հետ տրուած է, կամ լիովին անտեղեակ է այդ մասին: Ի՞նչ կը կատարուի անոր թագաւորութեան հետ: Շուտով թշնամիները երկիրը կը գրաւեն, կը ստրկացնեն բնակիչները եւ կը տիրանան երկրի բոլոր ունեցուածքներուն ու պաշարներուն: Բաւական չէ, որ թագաւորը պարզապէս զբաղեցնէ իր դիրքը (այսինքն՝ ընդամենը գեղեցիկ կեանք վայելէ իր պալատին մէջ): Ան պէտք է կատարէ *թագաւորին պարտականութիւնները*, որոնք կարելի է իրականացնել միայն *իր զբաղեցուցած դիրքին յարուկ իշխանութեամբ*: Թագաւորին զբաղեցուցած դիրքը ապարդիւն կ'ըլլայ, եթէ Ան չօգտագործէ այն իշխանութիւնը, որ իրեն տրուած է այդ դիրքին հետ:

Որպէս Աստուծոյ զաւակներ՝ մենք Քրիստոսի հետ ժառանգակիցներ դարձած ենք: Հոռմէացիներուն ուղղուած թուղթին մէջ

գրուած է. «Եւ քանի որ մենք Անոր որդիներն ենք, մենք Անոր ժառանգներն ենք: Իրականութեան մէջ, մենք Աստուծոյ փառքի ժառանգներն ենք՝ *Քրիստոսի հետ միասին*» (Հռովմայեցիս 8.17, NLT): Այս դիրքին մասին պարզօրէն գրուած է նաեւ Եփեսացիս 2.6-ին մէջ. «[Աստուած] Անոր հետ մեզի յարութիւն տուաւ, եւ Անոր հետ նստեցուց երկնաւորներուն մէջ Քրիստոս Յիսուսի մէջ»: Մենք Քրիստոսի մէջ եւ Անոր միջոցով նոր դիրք զբաղեցուցած ենք: Մենք այլեւս այս աշխարհի զաւակները չենք, այլ՝ թագաւորական ընտանիքի անդամներ եւ ժառանգներ Երկինքի թագաւորութեան մէջ: Որպէս այս թագաւորութեան ժառանգներ՝ մենք պատասխանատու ենք մեր Տէրոջ առաքելութիւնը իրականացնելու համար: Անոր նուաճած տարածքները եւ Անոր թագաւորութիւնը մերը դարձած են, որովհետեւ մենք որդեգրուեցանք՝ ընդգրկուելով Անոր տոհմին մէջ: Ինչպիսի գնցող ճշմարտութիւն: Բայց ինչպէս թագաւորը՝ վերոյիշեալ օրինակին մէջ, եթէ մենք կը փափաքինք արդիւնաւէտ ըլլալ այն դիրքին մէջ, որ Քրիստոսին մէջ ունինք, մենք պէտք է յայտնաբերենք եւ գործադրենք այն իշխանութիւնը, որ այդ դիրքին հետ տրուած է: Այս գլուխին մէջ մենք կ'ուսումնասիրենք, թէ ինչով Աստուած զօրացուցած է մեզի, որպէսզի մեր դերը կատարենք Անոր թագաւորութիւնը տարածելու մէջ:

Պետրոս յայտարարեց.

«Դուք թագաւորական քահանաներ էք, սուրբ ազգ, Աստուծոյ սեփականութիւնը: Որպէս արդիւնք՝ դուք կրնաք ցոյց տալ ուրիշներուն Աստուծոյ բարութիւնը, որովհետեւ Ան կանչեց ձեզ խաարէն Իր հրաշալի լոյսին մէջ» (Ա. Պետրոս 2.9, NLT):

Նախքան շարունակելս, կարեւոր է հետեւեալը նշել. դիրքը մշտապէս կը նախորդէ զօրութեան: Մենք պէտք է Քրիստոսին մէջ ըլլանք, մինչեւ որ կարենանք որեւէ մէկ բան մը ընել Անոր թագաւորութեան համար:

Այն զօրութիւնը, որ անհրաժեշտ է մեզի համար

«Եւ անոնց հետ մէկտեղ գտնուած ատենը կ'ապսպրէր անոնց, որ Երուսաղէմէն չհեռանան, հապա սպասեն Հօրը խոստումին, որ ըսաւ. «Ինձմէ լսեցիք, վասնզի իրաւ Յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք ասկէ շատ օրեր չանցած՝ Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք» (Գործք 1.4-5):

Յիսուս աշակերտներուն *չառաջարկեց*, որ սպասեն Խոստումը, եւ ոչ ալ *խորհուրդ* տուաւ անոնց, որ Իր հրահանգին հետեւին: Փոխարէնը՝ Ան «պատուէր կու տար անոնց՝ Երուսաղէմէն չհեռանալ», մինչեւ Խոստումին գալը: Յիսուս ստիպուած էր այդ աստիճան կարեւորելու Իր հրահանգը, որովհետեւ Հոգիին զօրութիւնը էապէս կարեւոր էր Աստուծոյ թագաւորութեան ողջ գործին համար: Ան գիտէր, որ աշակերտները Իր յարութեան բարի լուրը պատմելու մեծ ցանկութիւն ունէին, եւ թերեւս չհամբերէին՝ սպասելով Սուրբ Հոգիին խոստումը: Մենք կը տեսնենք Գործք 1.3-ին մէջ, որ անոնք Յիսուսին հետ օրեր անցուցին՝ լսելով, թէ ինչպէս Ան կը սորվեցնէր Աստուծոյ թագաւորութեան մասին: Աստուածաշունչը կը պնդէ, որ առաքեալները ստացան Անոր յարութեան «անհերքելի ապացոյցները» (Գործք 1.3, NKJV): Պէտք չկար համոզելու անոնց, որ Յիսուսին յարութիւնը իրական է, որովհետեւ անոնք անձամբ ականատես եղան, թէ ինչպէս Քրիստոսը յաղթեց մահուան: Այլ խօսքերով՝ անոնք պատրաստ էին գործի անցնելու:

Բայց Յիսուս նայեցաւ անոնց եւ ըսաւ. «Մի՛ սկսիք ձեր ծառայութիւնը: Մի՛ սկսիք աշխարհով մէկ քարոզել Աւետարանը, ոչ ալ եկեղեցիներ սկսէք, մինչեւ որ Հոգիին զօրութիւնը չհագնիք» (Ղուկաս 24.49, հեղինակին բառափոխումը): Աստուծոյ Խօսքին համաձայն՝ ես կը հաւատամ, որ Յիսուս յանձնարարեց այս պատուէրը մօտ հինգ հարիւր մարդու (տես Ա. Կորնթացիս 15.6): Բայց Գործք 1.15-ին մէջ մենք կը տեսնենք, որ մարդոց թիւը վերնատան մէջ պակասած էր՝ հասնելով հարիւր քսանի: Ի՞նչ կատարուեցաւ մնացեալ երեք հարիւր ութսունին հետ: Անձամբ ես կը հաւատամ, որ ամէն օր աւելի շատ մարդիկ կը հեռանային սկիզբի հինգ հարիւրէն, մինչեւ որ մնացին միայն հարիւր քսանը: Թերեւս այն երեք հարիւր ութսունը, որ հեռացան կը մտածէին. «*Եկէ՛ք վերադառնանք ժողովարաններ, սկսինք եկեղեցիներ եւ պարմենք Յիսուսի յարութեան հրաշալի լուրը: Ի վերջոյ, ճիշդ չէ վարնել նոյնիսկ մէկ օր՝ այս բարի լուրը չպարմելով*»: Միայն հարիւր քսանը պատրաստակամօրէն սպասեցին, ինչպէս որ Տէրը պատուիրած էր:

Այժմ դուք կրնաք մտածել. «*Այո, ճո՛ն, անշուշտ՝ անոնք պէտք է Սուրբ Հոգին սպասէին: Անոնք տրակաւին չէին ստացած Ձինք: Այսօր այդպէս չէ, որովհետեւ մենք Սուրբ Հոգին կը ստանանք, երբ կը փրկուինք*»:

Կարդացէք Յովհաննէս 20.21-22-ը.

«Խաղաղութիւն ձեզի, ինչպէս Իմ Հայրը ուղարկեց Ձիս, Ես ալ ձեզ կ'ուղարկեմ»: Եւ այս ըսելով՝ փչեց անոնց վրայ եւ ըսաւ. «Առէք Սուրբ Հոգին»:

Յիսուսը փչեց աշակերտներուն վրայ եւ ըսաւ. «Առէք Սուրբ Հոգին»: Յունարէնին մէջ «առէք» բառը կը նշանակէ՝ «ստանալ անմիջապէս կամ ճիշդ հիմա»¹: Ասիկա նախանշանը չէր բանի մը, որ տակաւին պէտք է տեղի ունենար: Աշակերտները իսկապէս Սուրբ Հոգին *սփացան*, մինչեւ որ Յիսուս Երկինք համբարձաւ: Բայց անոնք զօրութիւն չէին հագած, մինչեւ որ Սուրբ Հոգիով *լեցուեցան*, ինչ որ Պենտեկոստէի օրուան մէջ տեղի ունեցաւ:

Պենտեկոստէի օրը

«Եւ երբ Պենտեկոստէի օրը հասաւ, ամէնն ալ միաբան մէկտեղ էին: Ու յանկարծակի Երկինքէն ձայն մը եղաւ՝ սաստկաշունչ հովի մը ձայնին պէս, եւ բոլոր տունը լեցուց՝ ուր նստած էին: Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց, որպէս թէ կրակէ, ու ամէն մէկուն վրայ նստաւ: Եւ ամէնն ալ Հոգով Սրբով *լեցուեցան*, ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս Հոգին անոնց խօսիլ կու տար» (Գործք 2.1-4):

Ես գիտեմ, որ մեզմէ շատերը այս իրադարձութիւնը նկարագրող պատկերները կիրակնօրեայ դպրոցի դասերուն ժամանակ տեսած են: Սովորաբար մէկտեղ հաւաքուած հաւատացեալներու գլխավերեւ փոքրիկ կրակէ լեզուներ պատկերուած են: Կարելի է ըսել, որ այս պատկերացումը տեղի ունեցածը լաւագոյն ձեւով չի ներկայացներ: Հին կտակարանին մէջ կրակը յաճախ Աստուծոյ ներկայութիւնը կը խորհրդանշէ: Գրելով «լեզուներ՝ *ինչպէս կրակէ*», հեղինակը կը նկարագրէ Աստուծոյ ներկայութեան դրսեւորումը: Յիսուսին հետեւորդները՝ թէ՛ տղամարդիկ, եւ թէ՛ կանայք, կ'լանուած էին Աստուծոյ ներկայութեամբ կամ մկրտուած էին Աստուծոյ ներկայութեան մէջ: Այս յայտնուած ներկայութիւնը նոյնպէս դրսեւորուեցաւ «սաստիկ փչող հովով»: Ինչպէս ըսինք առաջին գլուխին մէջ, Սուրբ Հոգին՝ «սաստիկ փչող հով» չէ. Ան Անձ է: Այնուամենայնիւ, Անոր վերնատուն ժամանումը դրսեւորուեցաւ սաստիկ փչող հովով:

Այն բառը, որ Գործք 2.4-ին մէջ թարգմանուած է որպէս «լեցուե-

ցան», բառացիորեն կը նշանակե՛ «յազեցան»²: *Յազեցնել* բառը կը սահմանուի որպէս «լրացնել չափէն անելի» իմաստով: Վերնաստուն ներկայ գտնուողները *չափէն անելի* Սուրբ Հոգիով լեցուեցան: Բոլորը Աստուծոյ դրսեւորուած ներկայութիւնը անելի մեծ չափով վերապրեցան: Կրակի եւ հովի դրսեւորումներուն հետ մէկտեղ, Սուրբ Հոգիով լեցուելու եւս մէկ նշան՝ հաւատացեալները սկսան այլ լեզուներով խօսիլ:

Օր 2

Ինչո՞ւ լեզուներ

«*Լեզու*» բառը այս պարագային պարզապէս կը նշանակե՛ լեզու, որմով կը խօսին: Եթէ ես Սպանիայի մէջ ըլլայի եւ ինչ որ մէկուն հանդիպէի, որ ակնյայտօրէն սպաներէն չէր խօսեր, ես կրնայի հարցնել անոր. «Ո՞րն է ձեր մայրենի լեզուն»: Միւս կողմէն, եթէ ինչ որ մէկուն հանդիպէի, որ անգլերէն կը խօսէր, պէտք չէր ըլլար անոր մայրենի լեզուին մասին հարցնելու. ես կը հասկնայի անոր, քանի որ անգլերէնը իմ մայրենի լեզուն է: Այդ իսկ պատճառով, անգլերէնը «յայտնի» լեզու է ինծի համար, մինչդեռ ես միւս լեզուն կրնայի «անյայտ» համարել: Քիչ մը անելի ուշ մենք ասոր մասին անելի մանրամասն կը խօսինք:

Պենտեկոստէի օրը, Երուսաղէմի մէջ տարբեր երկիրներէն հրեաներ հաւաքուած էին՝ կրօնական տօնակատարութեան համար: Այդ հրեաները բազմաթիւ երկիրներու եւ տարածաշրջաններու մէջ կ'ապրէին, եւ այդ պատճառով բազմաթիւ «մայրենի լեզուներ» ունէին:

«Եւ Երուսաղէմի մէջ բնակող հրեաներ կային՝ աստուածավախ մարդիկ երկնքի տակ եղած բոլոր ազգերէն ժողովուած: Ու երբ որ այս ծայնը եղաւ, բազմութիւնը մէկտեղ եկաւ եւ շփոթեցաւ, վասնզի կը լսէին որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին: Եւ ամէնքը կը սքանչանային, կը զարմանային, եւ իրարու կ'ըսէին. «Չէ՞ որ ահա ասոնք ամէնքն ալ, որ կը խօսին, գալիլիացի են: Ուրեմն ինչպէ՞ս կը լսենք մենք մեր ամէն մէկ լեզուովը, որուն մէջ ծնած ենք» (Գործք 2.5-8):

Ուշադրութիւն դարձուցէք. Աստուածաշունչը կը պնդէ, որ «երբ որ այս ձայնը եղաւ, բազմութիւնը եկաւ մէկտեղ ու շփոթեցաւ»: Անիկա շատերուն գրաւեց դէպի լեզուներով խօսող աշակերտները: Բազմութիւնը ցնցուած էր, որ գալիլիացիները (որոնցմէ շատերը անուա եւ անկիրթ մարդիկ կը համարուէին) տարբեր լեզուներով կը խօսին: Աստուծոյ Հոգիին այսպիսի դրսեւորումը նշան էր անոնց համար, որոնք տակաւին Յիսուսին հետեւորդները չէին:

«...կը լսենք, որ մեր լեզուներով կը պատմեն Աստուծոյ մեծամեծ բաներուն մասին»: Կը սքանչանային ամէնքն ալ ու տարակուսած իրարու կ'ըսէին. «Ինչ պիտի ըլլայ այս»» (Գործք 2.11-12):

Հոգիին այս թափումը հնարաւորութիւն ստեղծեց Պետրոսին՝ քարոզելու Աստուածաշունչին մէջ ամենայայտնի քարոզներէն մէկը, որուն մէջ ան ըսաւ. «Աստուած այս Յիսուսը յարուցանեց, Որուն մենք ամէնքս ալ վկայ ենք: Ուստի Աստուծոյ աջ ձեռքով բարձրանալով, ու Սուրբ Հոգիին խոստումը Հօրմէն առնելով՝ տարածեց ասիկա, որ հիմա դուք կը տեսնէք եւ կը լսէք» (Գործք 2.32-33): Ուշադրութիւն դարձուցէք, որ բոլորը եւ կը *տեսնէին* եւ կը *լսէին* Սուրբ Հոգիին զօրութեան ապացոյցը:

Քանի մը խօսք վերջ գրուած է՝ հաւաքուածները պատասխանեցին.

«Երբ ասիկա լսեցին, իրենց սրտերուն մէջ զղջացին, ու ըսին Պետրոսին ու միւս առաքեալներուն. «Մարդիկ եղբայրներ, ինչ ընենք»» (Գործք 2.37):

Պետրոս պատասխանեց.

«Ապաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերու թողութեան համար, եւ Հոգւոյն Սրբոյ պարգեւը պիտի ընդունիք: Վասնզի խոստումը ձեզի է ու ձեր որդիներուն, եւ ամէն հեռու եղողներուն համար, որոնց մեր Տէրը Աստուածը պիտի կանչէ» (Գործք 2.38-39):

Հռչակելով բարի լուրը փրկութեան մասին, որ շնորհուած էր բոլոր Տէրոջ անունը կանչողներուն (Հռովմայեցիս 10.13)՝ Պետրոս յստակ յայտնեց, որ Սուրբ Հոգիին պարգեւը նոյնպէս շնորհուած է

իրաքանչիր հաւատացեալի: Որքան զարմանալի է: Այս խոստումը կը վերաբերի իրաքանչիր հաւատացեալի՝ անցեալին, ներկային եւ ապագային:

Չորս դէպք

Գործք առաքելոց գիրքին մէջ չորս դէպք կայ այն մասին, որ մարդիկ Սուրբ Հոգիով կը լեցուին Պենտեկոստէի օրէն յետոյ: Այս դէպքերը ուսումնասիրելու ընթացքին ես կը փափաքիմ, որ յատուկ ուշադրութիւն դարձնէք երկու հանգամանքի: Առաջինը՝ բոլոր դէպքերուն, բացի մէկէն, Սուրբ Հոգիով լեցուելու իրադարձութիւնը անջատ է փրկութեան փորձառութենէն: Երկրորդը՝ այն մարդիկ, որոնք ներկայ էին, երբ նորադարձերը Սուրբ Հոգիով կը լեցուէին, անոնք եւ *կը տեսնէին*, եւ *կը լսէին* Հոգիին ներկայութեան ապացոյցը նորադարձերուն մէջ:

Փիլիպպոսը եւ սամարացիները

Առաջին դէպքը Գործք 8-ին մէջ նկարագրուած է: Փիլիպպոսը Սամարիա ուղարկուեցաւ՝ Յիսուս Քրիստոսին Աւետարանը քարոզելու համար: Ան Աւետարանը հռչակեց, եւ ամբողջ քաղաքը արթնութիւն վերապրեց: Կաղերը կը բժշկուէին, պիղծ ոգիները դուրս կ'ելլէին, եւ շատերը կ'ընդունէին Աստուծոյ փրկութեան հրաշալի լուրը:

«Բայց երբ անոնք հաւատացին Փիլիպպոսին, երբ ան կը հռչակէր Աստուծոյ թագաւորութեան բարի լուրը եւ Յիսուս Քրիստոսի անունը, անոնք մկրտուեցան՝ թէ՛ այրեր եւ թէ՛ կիներ: Սիմոն ինքն ալ հաւատաց ու մկրտուեցաւ: Եւ ան կը հետեւէր Փիլիպպոսին ամէնուր՝ զարմացած այն մեծ նշաններով եւ հրաշքներով, որ կը տեսնէր» (Գործք 8.12-13, NIV):

Արդեօք սամարացիները վերստին ծնամ, երբ հաւատացին Յիսուս Քրիստոսի բարի լուրին: Անշուշտ: Երբ մարդը կը հաւատայ Աւետարանին, ան Յիսուս Քրիստոսը կ'ընդունի եւ Աստուծոյ զաւակ կը դառնայ: Այս նորահաւատները ջուրով մկրտուեցան՝ որպէս

Քրիստոսի հանդէպ ունեցած հաւատքի նշան: Այնուամենայնիւ, հետագայ խօսքերէն ի յայտ կու գայ, որ առաջին եկեղեցիին առաջնորդները գիտէին, որ մէկ բան եւս կար: Դարծի գալու եւ ջուրի մկրտութեան հետ մէկտեղ նորահաւատները Սուրբ Հոգիին մկրտութիւնը պէտք է ընդունէին:

«Երուսաղէմի մէջ եղող առաքեալները երբ լսեցին, թէ Սամարիան Աստուծոյ խօսքը *[փրկութիւնը]* ընդունեց, անոնք Սամարիա ուղարկեցին Պետրոսն ու Յովհաննէսը: Հոն հասնելուն պէս՝ անոնք աղօթք ըրին այնտեղ գտնուող նորահաւատներու համար, որպէսզի *անոնք կարենային սրանալ Սուրբ Հոգին*, որովհետեւ Սուրբ Հոգին դեռեւս չէր իջած անոնցմէ՝ ոեւէ մէկուն վրայ. անոնք պարզապէս մկրտուած էին Տէր Յիսուսի անունով *[ջուրի մկրտութիւն]*» (Գործք 8.14-16, NIV):

Այդ մասին լսելով, որ Սամարիան Աւետարանը ընդունած էր՝ առաքեալները որոշեցին Պետրոսն ու Յովհաննէսը ուղարկել այնտեղ գտնուող նորահաւատներուն քով: Ինչո՞ւ առաքեալները իրենց երկու ամենապատուելի անդամները ուղարկեցին սամարացիներուն աղօթելու համար: Չէ՞ որ սամարացիները արդէն ընդունած էին այդ փրկութիւնը եւ ջուրով մկրտուած էին: Պետրոսն ու Յովհաննէսը յատուկ աղօթելու համար ուղարկուեցան, «որպէսզի անոնք կարենային Սուրբ Հոգին ստանալ» (խօսք 15): Մտապահեցէ՛ք, որ Սամարիան գրեթէ յիսունվեց քիլոմէթրով Երուսաղէմէն հեռու է³: Այսօր այդ հեռաւորութիւնը մեծ չի սեպուիր, բայց առաքեալները ինքնաշարժներ չունէին, եւ ոչ ալ կրնային ժամանակակից հասարակական փոխադրամիջոցներէն օգտուիլ: Անոնք պէտք է այդ յիսունվեց քիլոմէթրը ոտքով կամ որեւէ մէկ կենդանիի միջոցով երթային առնուազն մէկ կամ երկու օրուան տեւողութեամբ: Հասկնալի է, որ ատիկա կարճ ճանապարհ մը չէր:

Կրկին կարեւոր է նշել, որ նորահաւատները Տէր Յիսուսի անունով մկրտուած էին եւ արդէն անոնք Աստուծոյ զաւակներ էին: Այնուամենայնիւ, փրկութեան պարգեւին մէջ մաս մը կար, որ անոնք դեռ չէին վերապրած: Թերեւս դուք մտածէք. «Ճո՛ն, մէկ վայրկեան սպասէ՛, ես կը կարծէի, որ Յիսուս Քրիստոսի Հոգին մեր սրտերուն մէջ կը բնակի, երբ որ մենք փրկութեան պարգեւը կ'ընդունինք»: Անշուշտ, ատիկա ճիշդ է: Առաջին Կորնթացիս 12.3-ին մէջ պարզօրէն գրուած է. «Ոչ մէկը կրնայ Յիսուսին Տէր ըսել, եթէ ոչ Սուրբ Հոգիով»:

Մենք չենք կրնար Յիսուսը որպես Տէր դաւանիլ՝ առանց Սուրբ Հոգիի ազդեցութեան, սակայն ասիկա նոյնը չէ, ինչ Անորմով *լեցուիլը*:

Աստուածաշունչը պարզօրէն կը յայտնէ, որ բոլոր անոնք, որոնք Քրիստոսի մէջ են, սրբուած եւ կնքուած են Սուրբ Հոգիով (տես Ա. Պետրոս 1.2, Եփեսացիս 1.13): Այնպէս որ, կասկած չկայ, որ Սուրբ Հոգիին ներբնակուող *ներկայութիւնը* փրկութեան մաս կը կազմէ: Նայելով ձեզի՝ Աստուած Իր Որդիին Հոգին կը տեսնէ: Յիշեցէք, որ փրկութիւն ստանալով՝ դուք Քրիստոսի մէջ նոր դիրք կը գրաւէք. դուք Անոր ժառանգութեան եւ Անոր թագաւորութեան մէկ մասը կը դառնաք: Այնուամենայնիւ, դուք Հոգիի *զօրութեամբ* չէք լեցուիր, քանի դեռ ասիկա Հօրմէն չէք խնդրած:

Յիսուս ըսաւ.

«Ուստի, եթէ դուք, որ չար էք, գիտէք՝ ինչպէս աղէկ ընծաներ տալ ձեր զաւակներուն, որքան աւելի ձեր երկնային Հայրը կու տայ Սուրբ Հոգին անոնց, որոնք *Անորմէ կը խնդրեն*»: (Ղուկաս 11.13, NKJV)

Յիսուս անուանեց Աստուծոյ «ձեր երկնային Հայրը»: Ակնյայտ է, որ Ան հաւատացեալներուն մասին կը խօսի: Մենք գիտենք ասիկա, որովհետեւ Յովհաննէսի Աւետարանին մէջ Յիսուս կ'ըսէ. «...Ճշմարտութեան Հոգին, որ այս աշխարհը չի կրնար ընդունիլ, որովհետեւ ան ո՛չ կը տեսնէ Անոր, ո՛չ ալ կը ճանչնայ...» (Յովհաննէս 14.17, ESV): «Աշխարհը» այն մարդիկն են, որոնք Աստուծոյ թագաւորութեան մէջ չեն: Ակնյայտ է՝ իրաքանչիւրը, որ Յիսուսի իշխանութեան չէ հնազանդած, չի կրնար Սուրբ Հոգին ընդունիլ: Այնպէս որ «ձեր Հօրը» խնդրելու հրահանգը փրկութեան չի վերաբերիր: Փոխարէնը, անիկա կը վերաբերի հետագայ լեցունութեան, որ կրնան ստանալ միայն անոնք, որոնք փրկուած են արդէն:

Այժմ վերադառնանք Գործք առաքելոց 8-րդ գլուխին.

«Այն ժամանակ Պետրոսն ու Յովհաննէսը իրենց ձեռքերը դրին այս հաւատացեալներուն վրայ, եւ անոնք Սուրբ Հոգին ստացան: Երբ Սիմոն *տեսաւ*, որ Հոգին տրուեցաւ, երբ առաքեալները ձեռնադրեցին մարդոց, ան ստակ առաջարկեց անոնց՝ այս զօրութիւնը գնելու համար: «Թոյլ տուէ՛ք, որ ես նոյնպէս ունենամ այս զօրութիւնը,- բացականչեց ան,- որպէսզի երբ ձեռնադրեմ մարդոց, անոնք Սուրբ Հոգին ստանան (Գործք 8.17-19, NLT):

Պետրոսն ու Յովհաննէսը իրենց ձեռքերը հաւատացեալներուն վրայ դրին, եւ անոնք Սուրբ Հոգին ստացան: Հոգիով լեցուիլը բնական զգայարաններուն համար ակնյայտ է, որովհետեւ Աստուածաշունչին մէջ գրուած է, որ «Սիմոն տեսաւ, որ Հոգին տրուեցաւ, երբ առաքեալները իրենց ձեռքերը մարդոց վրայ դրին»: Սիմոնը, որ հաւատացեալ էր, այնքան զարմացաւ հաւատացեալներուն մէջ Սուրբ Հոգիին *զօրութեան* դրսեւորումէն, որ առաքեալներուն զումար առաջարկեց, որպէսզի անոնք սորվեցնէին իրեն այս զօրութիւնը փոխանցել: (Սիմոնին կողմէն այսպիսի արծագանգ տեղին չէր, եւ Պետրոս արագօրէն յանդիմանեց զինք):

Ամբողջ Գործք առաքելոց գիրքին մէջ Հոգիով լեցուիլը սովորաբար արտաքին դրսեւորումով կ'ուղեկցուի, որ կարելի էր *տեսնել* եւ *լսել*, աւելի շատ՝ լեզուներու կամ մարգարէութեան տեսքով: Ահա թէ ինչու առաքեալները յաճախ կ'ըսէին, որ Սուրբ Հոգին «հաւատացեալներուն *վրայ կու գար*»: Սամարիայի մէջ տեղի ունեցած դէպքի նկարագրութեան մէջ յատկապէս չի նշուիր, որ Հոգիով լեցուելուն կը յաջողդէին լեզուները կամ մարգարէութիւնը: Այնուամենայնիւ, մենք կրնանք եզրակացնել, որ նման դրսեւորում մը տեղի ունեցած է. հակառակ պարագային, Սիմոնը, որ նախկին կախարդ էր, Հոգիի ներկայութեան ապացոյցը հաւատացեալներուն մէջ չէր տեսներ:

Օր 3

Տարսննցի Սողոսը

Սողոսի դարձի գալու պատմութիւնը ամենաուշագրաւ հատուածներէն մէկն է Սուրբ գիրքին մէջ: Ես կը փափաքիմ այս զարմանալի հանդիպման վրայ կեդրոնանալ, սակայն ոչ այնքան նկատելի կողմի մը վրայ: Գործք 9-ին մէջ Սողոսը Դամասկոս կը ճամբորդէր՝ այդտեղ գտնուող հաւատացեալներուն հալածելու համար:

«Երբ կ'երթար ու Դամասկոսի մօտեցաւ, յանկարծ իր բոլորտիքը երկնքէն լոյս մը փայլատակեց. եւ ինք, գետին իյնալով, ծայն մը լսեց,

որ կ'ըսէր. «Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ Զիս կը հալածես»: Եւ անիկա ըսաւ. «Ո՛վ ես Դուն, Տէր»: Եւ Տէրը ըսաւ. «Ես եմ Յիսուսը, որ դուն կը հալածես. դժուար բան է քեզի խթանի դէմ կից զարնել»: Ան ալ դողալով ու ապշութեամբ ըսաւ. «Տէր, ի՞նչ կ'ուզես, որ ընեմ»: Տէրը ըսաւ անոր. «Ելի՛ր ու քաղաքը մտի՛ր, եւ քեզի պիտի ըսուի՝ ինչ որ պարտիս ընել...» (Գործք 9.3-7):

Ուշադրութիւն դարձուցէք, որ Սողոս Յիսուսին «Տէր» անուանեց: Երբ Յիսուս Քրիստոսը մեր կեանքին Տէրը կը դառնայ, մենք անմիջապէս վերստին կը ծնինք: Ես կը հաւատամ, որ Սողոսը հաւատացեալ դարձաւ այդ պահուն, երբ Յիսուսին իշխանութիւնը ճանչցաւ:

Տէրոջ հետ այս հանդիպումէն յետոյ Սողոսը երեք օր ծոմապահութեան մէջ անցուց՝ սպասելով հետագայ կարգադրութիւնները: Տէրը խնդրեց աշակերտէ մը, որուն անունը Անանիա էր, այցելել Սողոսը: Անանիան մտահոգուեցաւ այդ յանձնառութենէն, որովհետեւ շատ պատմութիւններ լսած էին այն մասին, թէ որքան խստօրէն Սողոսը հաւատացեալները կը հալածէր: Աստուած ըսաւ անոր. «Գնա՛ դուն, վասնզի անիկա Ինծի ընտիր աման մըն է, Իմ անունս կրելու...» (Գործք 9.15): Երբ Անանիան այն տունը եկաւ, ուր Սողոսն էր, ան իր ձեռքերը Սողոսին վրայ դրաւ եւ ըսաւ. «... *Սաւուղ եղբայր*, Տէրը զիս ղրկեց՝ այն Յիսուսը, որ ճամբուն մէջ քեզի երեցաւ, երբ կու գայիր, որպէսզի տեսութիւնդ ստանաս, ու *Սուրբ Հոգիով լեցուիս*» (Գործք 9.17): Ակնյայտ է՝ Անանիան գիտէր, որ Սողոս փրկուած էր, որովհետեւ ան «Սաւուղ եղբայր» անուանեց անոր: Այնուամենայնիւ, թէեւ Սողոսը արդէն հաւատացեալ էր, Աստուած Անանիան ուղարկեց՝ յատուկ աղօթելու համար, որպէսզի Սողոսը բժշկութիւն ստանար եւ Սուրբ Հոգիով լեցուէր:

Այս պատմութեան մէջ մենք կրկին կը տեսնենք, որ Սուրբ Հոգիով լեցուիլը փրկութեան պարգեւը ստանալէն ետք տեղի ունեցաւ: Դուք չէք գտներ որեւէ մէկ յիշատակում Գործք 9-ին մէջ այդ մասին, որ Սողոս (կամ՝ Պողոս) լեզուներով խօսեցաւ: Այնուամենայնիւ, նոյնիսկ կասկած չկայ, որ Պողոսը լեզուներով կը խօսէր, որովհետեւ ատելի ուշ ան գրեց. «Ես Աստուծմէ կը գոհանամ, որ բոլորէդ ատելի լեզուներով կը խօսիմ» (Ա. Կորնթացիս 14.18, ESV): Անձամբ ես կը հաւատամ, որ Պողոս սկսաւ լեզուներով խօսիլ այն պահէն, երբ Անանիան աղօթեց իրեն համար: Պողոսը պէտք է այս լեցունութիւնը ստանար, թէեւ ան փրկուած էր արդէն: Սուրբ Հոգիով զօրացումը կենսականօրէն կարեւոր էր Պողոսին ծառայութեան մէջ, որն էր՝ Յիսուսին անունը

հռչակել հեթանոսներուն, թագաւորներուն եւ Իսրայէլի զաւակներուն առջեւ (տե՛ս Գործք 9.15):

Պետրոսն ու Կոռնելիոսը

Գործք առաքելոցի 10-րդ գլուխին մէջ մենք պահ մը մեր Աստուծոյն կատակի զգացումը կը տեսնենք: Առաջին խօսքը ծանօթացում է մեզի Կոռնելիոսին հետ, որ հռոմէացի սպայ էր: Աստուածաշունչին մէջ կ'ըսուի, որ Կոռնելիոսը բարեպաշտ եւ աստուածավախ մարդ էր. ան ողորմած էր աղքատներուն հանդէպ եւ յաճախ Աստուծոյ կ'աղօթէր: Այդ ժամանակ փրկութեան Աւետարանը դեռ չէր պատմուած հեթանոսներուն, այնպէս որ, Աստուած հրեշտակ մը ուղարկեց՝ Կոռնելիոսին այցելելու համար: Այնուամենայնիւ, հրեշտակը Կոռնելիոսին Աստուծոյ փրկութեան ծրագիրը ջլայտեց, այլ պատուիրեց անոր՝ Պետրոսին կանչել: Ոգեշնչուած Կոռնելիոսը անմիջապէս մարդիկ ուղարկեց՝ գտնելու համար Պետրոսը այն վայրին մէջ, որուն մասին հրեշտակը ըսած էր:

Պետրոսը Հոպպէի մէջ էր, ուր ան մտքի յափշտակութեան մէջ ինկաւ եւ երկինքէն տեսիլք ստացաւ: Այս տեսիլքին մէջ Աստուած շարք մը պատկերներ գործածեց, որպէսզի Պետրոսին յայտնէր, որ ան պէտք չէ անմաքուր անուանէ այն, ինչ Աստուած մաքուր դարձուցած է (տե՛ս Գործք 10.9-15): Ակնյայտ է՝ Աստուած գիտէր, որ Պետրոս ղժուարութեամբ կը հասկնար Իր տեսիլքին իմաստը. ահա թէ ինչու Ան երեք անգամ Պետրոսին ցոյց տուաւ ատիկա: Երբ ան տեսիլքի նշանակութեան շուրջ կը խոկար, Կոռնելիոսի մարդիկը հասան այն տունը, ուր Պետրոսն էր: Սուրբ Հոգին հրահանգեց Պետրոսին, որ անոնց հետ երթայ: Աստուած Պետրոսին չըսաւ, թէ ինչու ան Կոռնելիոսին մօտ կ'ուղարկուէր, թէ՛ւ այդ ժամանակուան սովորութիւններուն հակառակ էր, որ բարեպաշտ հրեաները հեթանոսներուն հետ հաղորդակցին: Կոռնելիոսին տունը հասնելով՝ Պետրոս ըսաւ.

«Դուք գիտէք, թէ մեր օրէնքներուն հակառակ է, որ հրեայ մարդը այսպէս մտնէ հեթանոսներուն տունը կամ հաղորդակցի ձեզի հետ: Բայց Աստուած ցոյց տուաւ ինձի, որ ես այլեւս պէտք չէ մտածեմ, որ ռեւէ մէկը անմաքուր է: Այդ պատճառով, ես առանց առարկելու եկայ, երբ որ կանչուեցայ: Այժմ ըսէք, թէ ի՞նչ բանի համար զիս կանչած էք»: (Գործք 10.28-29, NLT)

Պետրոս սկսած էր նկատել կապը իր տեսիլքի եւ այդ բարեպաշտ հեթանոսին հանդիպելու միջեւ: Ան սկսաւ Աւետարանը քարոզել Կոռնելիոսին: Յանկարծ, Պետրոսի քարոզին ընթացքին, Աստուծոյ Հոգին յայտնուեցաւ, եւ հեթանոսները սկսան լեզուներով խօսիլ: Պետրոս ցնցուած էր, որովհետեւ անցեալին այսպիսի բան մը դեռ տեղի չէր ունեցած:

Աստուած գիտէր՝ Պետրոսը եւ անոր հրեայ ուղեկիցները դժուարութեամբ կ'ընդունէին այն փաստը, որ փրկութեան պարգեւը նաեւ հեթանոսներուն համար նախատեսուած էր: Այդ պատճառով, Ան Իր Հոգին հեթանոսներուն վրայ թափեց, *մինչեւ որ* Պետրոսը անոնց հետ աղօթելու կամ անոնց ջուրով մկրտելու հնարաւորութիւն ունենար: Ասիկա ապացոյց էր այդ մասին, որ Իսրայէլի ժողովուրդին չպատկանող մարդիկ նոյնպէս փրկութեան ծրագիրին մէջ ընդգրկուած էին:

«Այն հրեայ հաւատացեալները, որոնք Պետրոսին հետ եկած էին, զարմացան, որ հեթանոսներուն վրայ ալ Սուրբ Հոգիին պարգեւը թափուեցաւ: Որովհետեւ անոնք *լսեցին*, թէ ինչպէս անոնք ուրիշ լեզուներով կը խօսէին եւ զԱստուած կը փառաւորէին: Ատկէ յետոյ Պետրոս ըսաւ. «Կրնա՞յ ոեւէ մէկը առարկել, որ անոնք մկրտուին հիմա, երբ անոնք Սուրբ Հոգին ալ ընդունեցին, ինչպէս որ մենք ստացանք»: Այնպէս որ ան պատուիրեց, որ անոնք Յիսուս Քրիստոսի անունով մկրտուին» (Գործք 10.45-48, NLT):

Ներկայ հրեաները չէին կրնար ժխտել, որ Աստուած փրկեց այդ հեթանոսները, որովհետեւ անոնք *տեսան* եւ *լսեցին* Աստուծոյ զօրութեան դրսեւորումը (Սուրբ Հոգիով լեցուիլը) անոնց մէջ: Հրեայ հաւատացեալները ցնցուած էին: Աստուած ոչ միայն փրկութիւն շնորհեց հեթանոսներուն, այլեւ Հոգիի լեցունութիւնը ուղարկեց, քանի դեռ անոնք հրապարակային դաւանութիւն կ'ընէին եւ ջուրով կը մկրտէին, ինչ որ սովորաբար կը նախորդէր Հոգիով լեցուելուն: Այս դէպքը միակն է Սուրբ գիրքին մէջ, երբ Աստուած այսպէս կը գործէ:

Մնացեալ բոլոր դէպքերուն մէջ Աստուծոյ Հոգիին թափումը դարձի գալէն *յեպոյ* տեղի կ'ունենայ: Ես կը հաւատամ, որ Աստուած ըրաւ ասիկա, քանի որ գիտէր, թէ հրեաներուն յատուկ նշան մը կը պահանջուի՝ համոզուելու համար, որ Ան Իր փրկութեան պարգեւը նաեւ հեթանոսներուն վրայ կը տարածէ:

Եփեսացիները

Չորրորդ դէպքը, որ կը փափաքիմ հետազօտել, Գործք առաքելոց 19-րդ գլուխին մէջ է: Պօղոսը Եփեսոս եկաւ իր բազմաթիւ ճամբորդութիւններէն մէկուն ընթացքին: Աստուածաշունչին մէջ կ'ըսուի, որ ժամանելուն պէս ան խումբ մը մարդոց հանդիպեցաւ, որոնք Յովհաննէս Մկրտիչի աշակերտներն էին: Ամենաառաջին հարցումը, որ ան այդ մարդոց տուաւ հետեւեալն էր. «Արդեօք Սուրբ Հոգին ընդունեցի՞ք, երբ որ հաւատացիք» (Գործք 19.2): Զարմանալի է: Եթէ ասիկա առաջին հարցումն է, որ Պօղոս տուաւ այս եփեսացիներուն, մենք պէտք է նոյնպէս այս հարցը տանք իւրաքանչիւր նորահաւատի:

Կրկին, ինչո՞ւ Սուրբ Հոգիով մկրտուիլը այդքան կարեւոր էր առաջին Եկեղեցւոյ առաջնորդներուն համար: Պատճառը այն է, որ Սուրբ Հոգիով զօրանալը անփոխարինելի է՝ Քրիստոսի մէջ մեր առաքելութիւնը կատարելու համար: Ինչո՞ւ մեզմէ ոեւէ մէկը պէտք է փափաքի նոյնիսկ 1 ժամ ապրիլ՝ առանց այդ զօրութեան (տէն Գործք առաքելոց 1.8): Հօր թագաւորութեան մէջ արդիւնաւէտ ըլլալու համար՝ մենք պէտք է եւ Քրիստոսի մէջ դիրք ունենանք (փրկութիւնը), եւ զօրացուած ըլլանք Սուրբ Հոգիով (Հոգիի լեցունութիւնը):

Պօղոսը յստակացուց, որ թէեւ այդ եփեսացիները Յովհաննէս Մկրտիչի աշակերտներն էին, անոնք Յիսուսի փրկութեան Բարի լուրը չէին լսած, այնպէս որ, ան Աւետարանը քարոզեց անոնց:

Ինչպէս արդէն նշեցի, Քրիստոսի մէջ մեր դիրք ստանալը մշտապէս կը նախորդէ այն զօրութեան, որ Անոր Հոգիէն կը ստանանք: Նոյնիսկ եթէ զօրութեան արտաքին դրսեւորումը (Հոգիի լեցունութիւնը) կը նախորդէ փրկութեան արտաքին դաւանութեան (ջուրով մկրտութեան տեսքով), ինչպէս Կոռնելիոսին պարագային էր, փրկութիւնը մշտապէս կը նախորդէ զօրացման:

Այդիսկ պատճառով, Պօղոսին խօսքերը լսելէն յետոյ եփեսացիները առաջին հերթին «...Տէր Յիսուսի անունով մկրտուեցան» (Գործք 19.5): Այլ խօսքով՝ անոնք ստացան փրկութիւնը, որ միայն Յիսուս Քրիստոսի մէջ է եւ կը տրուի միայն Անոր միջոցով: Բայց անոնց հանդիպումը Պօղոսին հետ ատորմով չվերջացաւ. «Եւ երբ որ Պօղոս ձեռքը անոնց վրայ դրաւ, Սուրբ Հոգին անոնց վրայ եկաւ, եւ անոնք լեզուներ կը խօսէին եւ կը մարգարէանային» (Գործք 19.6):

Սուրբ Հոգիին լեցունութիւնը եկաւ այն բանէն ետք, երբ նորահաւատները մկրտուեցան մեր Տէր Յիսուսին անունով: Մինչեւ անոնց հանդիպումը Պօղոսին հետ, այս մարդիկ շատ քիչ բան

գիտեին Յիսուսին մասին, բայց հագի որ Հոգիով լեցունեցան, անոնք սկսան *մարգարեանալ*, ինչ կը նշանակե՛ անոնք հոչակեցին Յիսուս Քրիստոսին ուղերձը: Անոնք զօրութիւն ստացան եւ սկսան մարգարեանալ այն բաները, որ ընդհանրապէս քանի մը վայրկեան առաջ չէին գիտեր. այս զօրացումը միայն Հոգիին միջոցով հնարաւոր էր: Անկարելի է, որ ռեւէ հաւատացեալ իշխանութեամբ Աստուծոյ խորհուրդները հոչակե՛ առանց Անոր Հոգին ճանչնալու (տես Ա. Կորնթացիս 2):

Ես այնքան շնորհակալ եմ, որ երբեք ստիպուած պիտի չըլլամ քարոզելու առանց Հոգիի զօրացման: Իմ սեփական ուժերով ես լաւ հրապարակախօս եւ լաւ գրող չեմ: Ես այնքան տկար էի անգլերէնի մէջ, որ ձախողած եմ պետական աւարտական քննութիւններու մէջ՝ ստանալով 800–էն 370 միաւոր: Ինծմէ լաւ ոչ մէկը գիտէ, որ ես ինչ որ եմ, Աստուծոյ շնորհքով եւ Սուրբ Հոգիին զօրութեամբ է: Առանց Հոգիի զօրացման՝ ես չէի կրնար գրել այս գիրքը: Ան իմ կարողութեան եւ զօրութեան աղբիւրն է: Առանց Անոր անհնարին կ'ըլլար Աստուծոյ թագաւորութեան համար ինծի տրուած յանձնարարութիւնը կատարել: Սուրբ Հոգին կու տայ ինծի Իր շնորհքը:

Օր 4

Արդեօք լեզուները դադրած են

«Սէրը բնաւ չի վերջանար: Ինչ կը վերաբերի մարգարեութիւններուն, անոնք կ'անցնին. ինչ կը վերաբերի լեզուներուն, անոնք կ'անցնին. ինչ կը վերաբերի գիտութեան, անկաւ կ'անցնի: Որովհետեւ մենք մասնակի գիտենք եւ մասնակի կը մարգարեանանք, բայց երբ կատարեալը գայ մասնակին կ'անցնի» (Ա. Կորնթացիս 13.8-10, ESV):

Այժմ, երբ մենք ուսումնասիրեցինք Գործք առաքելոց գիրքի պատմութիւնները Սուրբ Հոգիով լեցունելու մասին, ես կը ցանկամ հարցի մը անդրադառնալ, որ ձեզմէ շատերը ունին: Յաճախ կը լսեմ, թէ ինչպէս մարդիկ կ'ըսեն, որ լեզուները դադրած են: Որպէս հիմք անոնք կը վկայակոչեն վերոյիշեալ հատուածի 10-րդ խօսքը: Անոնք, որոնք այս գաղափարին կը համաձայնին, կը հաւատան, որ Պօղոս ի նկատի ունէր Աստուածաշունչը՝ որպէս «կատարեալը», որ պէտք է գար: Ան այսպէս կը գրէ. «...երբ կատարեալը գայ, մասնակին

կ'անցնի»: Անոնք այսպէս կը տրամաբանեն. «Այժմ, երբ կատարեալը (Աստուածաշունչը) եկած է, լեզուները դադրած են»:

Կարելու է, որ ուշադրութեամբ ուսումնասիրենք այս հատուածը՝ որոշելու համար, թէ Պօղոսը ինչ ի նկատի ունէր: Երբ դիտարկենք 10-րդ խօսքի համահատուածը, ականյայտ կը դառնայ, որ այդ եզրակացութիւնը անհիմք է: Եթէ լեզուները դադրած են, ապա գիտութիւնն ու մարգարէութիւններն ալ դադրած են: Արդե՞ծք գիտութիւնն ու մարգարէութիւններն ալ դադրած են: Անշուշտ՝ ոչ: Ուրեմն, ի՞նչ է այն կատարեալը, որուն մասին Պօղոսը կը խօսի: Պատասխանը գրուած է տասներկորդ խօսքին մէջ:

«Որովհետեւ այժմ մենք հայելիի մէջ մշուշոտ կը տեսնենք, բայց այն ժամանակ [երբ Կատարեալը գայ]՝ երես առ երես: Այժմ ես մասնակիօրէն գիտեմ. այն ժամանակ ես կը ճանչնամ լիովին, ինչպէս որ լիովին ճանչցուած եմ» (Ա. Կորնթացիս 13.12, ESV):

Պօղոսը կը խօսի Յիսուսին հետ երես առ երես հանդիպման մասին: Ահա թէ ան ինչ ի նկատի ունի՝ գրելով «Կատարեալը» բառը. ան կը խօսի Յիսուսը ամբողջովին ճանչնալու մասին՝ Իր ողջ փառքով: Արդե՞ծք ներկայիս մենք նման վերապրում ունինք. արդե՞ծք մենք կը տեսնենք Անոր՝ Իր փառքով: Երկրային կեանքի ընթացքին մեր շփումը Յիսուսին հետ նման է պղտոր հայելիի արտացոլքին, բայց գալիք աշխարհին մէջ մենք կը ճանչնանք Յիսուսը այնպէս, *ինչպէս որ Ան կը ճանչնայ մեզ*: Նման խոր մտերմութեան վերապրումը Յիսուսին հետ՝ նշան կ'ըլլայ, որ «Կատարեալը» եկած է: Թէեւ մեր ճանապարհորդութիւնը կը սկսի երկրին վրայ, անիկա չ'աւարտիր, մինչեւ որ մենք երես առ երես տեսնենք Ձինք յափտենականութեան մէջ:

Լեզուներուն չորս տեսակները

Կայ մէկ հարցում եւս, որ յաճախ ինծի կը հարցնեն. «Ճոն, ինչո՞ւ Ա. Կորնթացիս 12.30-ին մէջ գրուած է. «...Արդե՞ծք ամէնքը լեզուներ կը խօսին...»: Չէ՞ որ ասիկա կը նշանակէ, որ ոչ բոլորը լեզուներով կը խօսին»: Այո, այդպէս է, սակայն այս հատուածին մէջ Պօղոս կը խօսի լեզուներու յատուկ *տեսակի* մասին, որմով բոլոր հաւատացեալները չեն խօսիր: Ասիկա հասկնալու համար մենք

պէտք է ուսումնասիրենք լեզուներու չորս տարբեր տեսակները, որոնց մասին Նոր կտակարանին մէջ գրուած է:

Յարմարութեան համար լեզուները կը բաժնեն երկու խումբի՝ *հրապարակային* եւ *անձնական* կիրառութիւն ունեցողներու: Լեզուներէն երկուքը հրապարակային ծառայութեան համար են: «Հրապարակային» ըսելով՝ ես նկատի ունիմ այն դէպքերը, երբ ոեւէ անհատ ինչ որ մարդու կամ մարդոց խումբի կը ծառայէ անորմով, որ ստացած է Հոգիէն: Ի հակադրութիւն անոր՝ երկու «անձնական» լեզուները մեզ՝ որպէս անհատներ, անմիջապէս Աստուծոյ հետ կը կապեն. ատոնք կան կ'օգնեն՝ Անոր հետ աւելի մտերմանալու, կան բարեխօսելու կարողութիւնը կու տան՝ համաձայն Անոր կատարեալ կամքին: Դիտարկենք այս տեսակներէն իրաքանչիւրը:

Առաջին. Լեզուները՝ որպէս նշան անհաւատներուն

Լեզուներուն առաջին տեսակը հրապարակային ցուցադրման համար է:

«Ուրեմն, լեզուները նշանի համար են ոչ թէ հաւատացեալներուն, այլ անհաւատներուն (Ա. Կորնթացիս 14.22)»:

Այս պարզելը կը գործէ, երբ Սուրբ Հոգին կը գերազանցէ մեր միտքը եւ մեզի մէկ ուրիշ երկրային լեզուով խօսելու կարողութիւն կու տայ, յատկապէս այնպիսի լեզուով, որ մենք չենք գիտեր եւ չենք սորված: Լեզուներու այս տեսակը գործեց Պենտեկոստէի օրը առաքեալներուն միջոցով:

Երուսաղէմի մէջ երկինքի տակ գտնուող ամէն ազգէ աստուածավախ հրեաներ կային: Երբ անոնք լսեցին այս ծայնը, շուարած մարդոց ամբոխ մը հաւաքուեցաւ, որովհետեւ իրաքանչիւրը լսեց, թէ ինչպէս իր լեզուով կը խօսին: Անոնք, բոլորովին ապշած, հարցուցին. «Արդեօք բոլոր այս խօսողները զալիլիացիներ չե՞ն: Այդ պարագային ինչպէ՞ս է, որ մեզմէ իրաքանչիւրը անոնց խօսածը իր մայրենի լեզուով կը լսէ: Պարթեացիներ, մարացիներ եւ եղամացիներ. Միջագետքի, Հրէաստանի եւ Կապադովկիայի, Պոնտոսի եւ Ասիայի, Փոնիգիայի եւ Պամփիլիայի, Եգիպտոսի եւ Կիւրենէի մօտ գտնուող Լիպիայի շրջաններու բնակիչներ, այցելուներ Հռոմէն (եւ հրեաներ, եւ յուդայականութեան դարձածներ), կրետացիներ եւ արաբներ՝ մենք

կը լսենք, թէ ինչպէս անոնք Աստուծոյ հրաշալիքները մեր լեզուներով կը պատմեն» (Գործք 2.5-11, NIV):

Այս հրեաները լսեցին, թէ ինչպէս հաւատացեալները իրենցմէ իւրաքանչիւրին մայրենի լեզուով կը խօսին: Այս ցուցադրումը նշան էր, որ Աստուած կը գործէր Յիսուսի Աւետարանին հաւատացողներուն միջեւ, որովհետեւ անկարելի էր, որ անուս գալիլիացիները կարենային կատարելապէս հոչակել Աստուծոյ հրաշալիքները այդքան շատ լեզուներով: Շատերը ճանչցան Յիսուսը՝ շնորհիւ Հոգիի զօրութեան այսպիսի դրսևորման:

Քանի մը տարի առաջ ես կը քարոզէի եկեղեցւոյ մը մէջ՝ Քոլորատո Սփրինկսի մէջ: Ծառայութեան ընթացքին մեր ծառայողական աշխատակազմէն կին մը եկեղեցւոյ դահլիճի ետնամասին մէջ նստած էր: Ամբողջ քարոզի ընթացքին, ան լեզուներով ցած ձայնով աղօթելու մղում կը զգար: Ծառայութեան ամառէն յետոյ պարոն մը, որ նստած էր անոր առջեւի շարքը, մօտեցաւ անոր եւ ըսաւ.

- Դուք կատարեալ ֆրանսերէն կը խօսիք: Դուք նոյնիսկ կը խօսիք հին ֆրանսական բարբառով՝ անզուգական առոգանութեամբ: Ես ֆրանսերէնի ուսուցիչ եմ, եւ աշխատանքային տարիներու ընթացքին երբեք չեմ հանդիպած ոեւէ մէկուն, որ ֆրանսերէն խօսէր այնպէս, ինչպէս դուք:

- Ես ֆրանսերէն չեմ գիտեր,- պատասխանեց մեր ծառայութեան աշխատակցուհին:

Այդ տղամարդը ապշած էր: Ան ըսաւ.

- Դուք ոչ միայն կատարեալ ֆրանսերէն կը խօսէիք, այլ նոյնպէս աստուածաշնչային խօսքեր կը մէջբերէիք ֆրանսերէնով, եւ ձեզմէ յետոյ ճոնը կը խնդրէր, որ հաւաքուած մարդիկ բանային նոյն խօսքերը: Դուք կը մէջբերէիք այդ խօսքերը, նախքան անոր կարդալը:

Այդ փորձառութիւնը նշան էր այդ մարդուն համար: Ան հաստատութիւն ստացաւ այդ ուղերձին վերաբերեալ, որ Աստուած փոխանցած էր իմ միջոցով: Նշան հանդիսացող լեզուներու գլխաւոր նպատակն է՝ գրաւել անոր ուշադրութիւնը, որ դեռ հաւատացեալ չէ:

Երկրորդ. Մեկնութեան լեզուներ

Լեզուներու երկրորդ տեսակը նոյնպէս հրապարակային ծառայութեան համար է: Ի տարբերութիւն որպէս նշան ծառայող լեզուներուն՝ այս լեզուները երկնային են, եւ երկրի վրայ ոչ մէկը գիտէ:

ատոնք: Պօղոսը նկարագրեց մեկնութեան լեզուները որպէս հոգեւոր պարգեւ՝ գրելով «...ուրիշին՝ այլեայլ լեզուներ, ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւններ (կամ՝ մեկնութիւն)» (Ա. Կորնթացիս 12.10): Քանի որ այս լեզուները երկրային չեն, անոնք մեկնութեան կարիքը ունին:

Տարիներ առաջ ես պէտք է քարոզէի Սինկափուրի եկեղեցիներէն մէկուն մէջ: Յանկարծ մարդ մը ծառայութեան ժամանակ սկսաւ անյայտ լեզուով խօսիլ: Ես անմիջապէս հասկցայ, որ այդ լեզուն երկրային չէր, այլ՝ երկնային: Բոլորը դահլիճին մէջ զարմացած էին Հոգիին այսպիսի դրսեւորման պատճառով: Երբ այդ մարդը աւարտեց երկնային լեզուով խօսիլը, ան մեկնեց այն, ինչ որ ըսած էր: Անոր թարգմանութիւնը ճշդօրէն կը համապատասխանէր այն ուղերձին, որ Աստուած տուած էր ինծի այդ եկեղեցիին համար: Ես մտածեցի. «*Աստուած, ես այնքան շնորհակալ եմ այս զարմանալի հաստատութեան համար*»: Աստուած օգտագործեց լեզուներու մեկնութեան պարգեւը, որպէսզի հաստատէր այն խօսքը, որ դրած էր իմ սրտին մէջ: Ատիկա նշան էր եւ ինծի համար, եւ բոլոր անոնց, որոնք այդ դահլիճին մէջ կը գտնուէին:

Ուշադրութիւն դարձուցէք, որ խօսելով լեզուներու այս տեսակին մասին՝ ես կը գործածեմ «մեկնել», եւ ոչ թէ «թարգմանել» բառը: Երկնային լեզուները (որոնց կը պատկանին Նոր կտակարանին մէջ նշուած չորս տեսակի լեզուներէն երեքը) չեն կրնար թարգմանուիլ, քանի որ կը գերազանցեն մեր մարդկային միտքը, սակայն կրնան մեկնուիլ:

Երբ կը գործէ *մեկնութեան լեզուներու* պարգեւը, լեզուները պէտք է մշտապէս մեկնութեամբ ուղեկցուին: Այս տեսակի լեզուն տրուած է յատկապէս եկեղեցիի շինութեան համար (տես Ա. Կորնթացիս 14), իսկ առանց մեկնութեան՝ եկեղեցին չի կրնար շինութիւն ստանալ:

Պօղոս ի նկատի ունէր լեզուներու ճիշդ այս տեսակը, երբ հարցուց. «Արդե՞՞ք ամէնքը լեզուներ կը խօսին»: Իսկ հիմա այս խօսքը համահատուածով (համաթեքսթով) կարդանք.

«Եւ Աստուած եկեղեցիին մէջ դրաւ մէկ քանիները, նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ վարդապետներ, ետքը՝ հրաշքներ գործողներ, ետքը՝ բժշկելու պարգեւ ունեցողներ, օգնողներ, կառավարողներ, լեզուներ խօսողներ: Միթէ ամէնքը առաքեալներ են. միթէ ամէնքը մարգարէներ են. միթէ ամէնքը վարդապետներ են. միթէ ամէնքը հրաշքներ կը գործեն. միթէ ամէնքը բժշկութեան պարգեւներ

ունին. միթե ամէնքը լեզուներ կը խօսին. միթե ամէնքը թարգմանութիւն կ'ընեն» (Ա. Կորնթացիս 12.28-30):

Պօղոսը կը խօսի այն հրապարակային պարգեւներուն մասին, որոնք Աստուած սահմանած է Եկեղեցւոյ մէջ՝ ծառայութեան համար: Արդեօք բոլորը առաքեալներ են: Ո՛չ: Արդեօք բոլորը մարգարէներ են: Ո՛չ: Արդեօք բոլորը ուսուցիչներ են: Ո՛չ: Նմանապէս, արդեօք բոլորը լեզուներով կը խօսին կամ կը մեկնեն ատոնք՝ *հրապարակային ծառայութեան համար*: Ո՛չ: Պօղոսը կը փափաքէր ըսել, որ բոլորս պէտք է զարգացնենք այն յատուկ պարգեւը, որ Աստուած շնորհած է մեզի, եւ գործենք անորմով: Եկեղեցիին մէջ բոլորը չէ, որ լեզուներու մեկնութեան պարգեւը կ'ունենան՝ հրապարակային ծառայութեան համար:

Տարբերութիւնը երկու հրապարակային լեզուներուն միջեւ

Քիչ մը անց Կորնթացիներուն ուղղուած իր նամակին մէջ Պօղոսը կը բացատրէ տարբերութիւնը երկու տեսակի հրապարակային լեզուներուն միջեւ.

«Ուրեմն լեզուները [լեզուները՝ որպէս նշան] նշանի համար են՝ ոչ թէ հաւատացեալներուն, հապա անհաւատներուն... Արդ՝ եթէ բոլոր եկեղեցին մէկտեղ գայ ու ամէնքն ալ օտար լեզուներով [մեկնութեան լեզուներով] խօսելու ըլլան, եւ իոն մտնեն տգէտներ կամ անհաւատներ, պիտի չըսեն, թէ դուք խենթացեր էք (Ա. Կորնթացիս 14.22-23):

Եթէ չհասկնաք, որ կան տարբեր տեսակի լեզուներ, կրնաք մտածել, որ Պօղոսը լիովին կը հակասէր ինքնիրեն՝ գրելով այս հատուածը: Նախ՝ ան կ'ըսէ. «Լեզուները՝ նշան են անհաւատներու համար»: Անկէ ետք՝ անմիջապէս յաջորդ խօսքին մէջ, գրուած է. «Եթէ դուք լեզուներով խօսիք, անհաւատները կը մտածեն, որ խելագարուած էք»: Այնուամենայնիւ, գիտնալով, որ կան չորս տարբեր տեսակի լեզուներ՝ մենք կրնանք հասկնալ, որ Պօղոսը կը գրէ լեզուներու երկու տարբեր տեսակներու մասին:

Առաջին տեսակի լեզուն, որ Պօղոսը կը նշէ (լեզուները՝ որպէս նշան), կը գրաւէ անհաւատներուն, որովհետեւ անիկա որպէս նշան կը ծառայէ անոնց: Լեզուներու երկրորդ տեսակը (մեկնութեան լեզուները) միայն եկեղեցիի շինութեան համար է. այս լեզուները՝ նշան

չեն անհաւատներուն համար: Իրականութեան մէջ, Պօղոս կ'ըսէ, որ եթէ հաւատացեալները խօսին երկրորդ տեսակի լեզուներով՝ առանց մեկնութեան, անհաւատները կը մտածեն, որ անոնք խելագարուած են:

Կրնա՞ք պատկերացնել կիրակնօրեայ ծառայութիւն մը, ուր բոլորը միաժամանակ կը քարոզեն, կը սորվեցնեն եւ կը մարգարէանան: Այսպիսի վարք տարօրինակ եւ ապարդին կ'ըլլայ: Նմանապէս, Պօղոսը կը պատուիրէր եկեղեցիին՝ չստեղծել շփոթութեան մթնոլորտ՝ սխալ գործածելով մեկնութեան լեզուները: Սխալ միջավայրի մէջ լեզուներու այսպիսի դրսեւորումը խառնաշփոթութիւն կը ստեղծէ եւ չի ծառայէր որեւէ նպատակի: Աւելի շուտ նոյն գլուխին մէջ Պօղոսը պարզ կ'ըսէ, որ լեզուներուն նպատակը շփոթութիւն ստեղծելը չէ, այլ՝ հասկացողութիւն եւ յայտնութիւն բերելը:

«Իմ Աստուծմէն կը գոհանամ, որ բոլորէդ աւելի լեզուներով կը խօսիմ, բայց եկեղեցիին մէջ աւելի կ'ուզեմ, հինգ խօսք իմ մտառութեամբ խօսիլ, որպէսզի ուրիշներուն ալ սորվեցնեմ, քան թէ բիրաւոր խօսքեր օտար՝ լեզուով» (Ա. Կորնթացիս 14.18-19):

Ամէն ինչ շատ պարզ է. եթէ մեկնութեան լեզուները կը գործածուին հրապարակային ծառայութեան համար, անոնք պէտք է մեկնուին, որպէսզի ներկաները օգուտ ստանան: Այլապէս, աւելի լաւ կ'ըլլայ պարզապէս որեւէ յայտնի լեզուով մը հաղորդակցիլ:

Օր 5

Երրորդ. Լեզուներ անձնական աղօթքի համար

«Քանզի եթէ ես *աղօթք ընեմ օտար լեզուով*, իմ հոգիս աղօթք կ'ընէ, բայց միտքս անպտուղ է: Ուրեմն ի՞նչ ընելու եմ: Աղօթք ընեմ հոգիով, աղօթք ընեմ մտառութեամբ ալ. սաղմոս երգեմ հոգիով, սաղմոս երգեմ մտառութեամբ ալ» (Ա. Կորնթացիս 14.14-15):

Առաջին երկու տեսակի լեզուները, որոնք մենք դիտարկեցինք, հրապարակային գործածման համար են. անոնց նպատակն է՝ Աստուծմէ որեւէ մէկ ուղերձ մարդուն փոխանցել: Նշանի համար նախատեսուած լեզուներու նպատակն է՝ հասնիլ եւ ծառայել

անհաւատներուն. մեկնութեան լեզուներու նպատակն է՝ ծառայել հաւատացեալներուն: Վերոյիշեալ խօսքին մէջ Պօղոսը կը ներկայացնէ լեզուներու երրորդ տեսակը՝ *անձնական աղօթքի լեզուները*: Ան այլեւս չի խօսիր հրապարակային ծառայութեան մասին, այլ՝ կը սորվեցնէ, որ լեզուները կարելի է գործածել անձնական նպատակներով: Լեզուներու այս տեսակը անձնական շինութեան եւ աղօթքի համար է: Պօղոսը յատկապէս կը պնդէ, որ մենք կրնանք «աղօթել միտքով», ինչը ինծի համար կը նշանակէ՝ աղօթել անգլերէնով: Մենք նոյնպէս կրնանք «աղօթել հոգիով», ինչը կը նշանակէ՝ աղօթել անձանօթ, երկնային լեզուով: Ան նոյնպէս կը պնդէ, որ մենք կրնանք երգել (երկրպագել) այս երկու ձեւերով:

Կորնթացիներու առաջին թուղթի 14-րդ գլուխի սկիզբը գրուած է. «Որովհետեւ լեզուներով խօսողը մարդոց հետ չի խօսիր, այլ՝ Աստուծոյ հետ» (խօսք 2): Մենք գիտենք, որ Հոգիի այս դրսեւորումը չի կրնար վերաբերիլ նշան հանդիսացող լեզուներուն, որովհետեւ Պենտեկոստէի օրը աշակերտները կը խօսէին մարդոց հետ՝ հոշակելով Աստուծոյ զարմանալի գործերը օտար լեզուներով: Պօղոսը նոյնպէս չէր կրնար ի նկատի ունենալ մեկնութեան լեզուները, որովհետեւ այդ պարագելը գործածելու պարագային հաւատացեալը իր խօսքը կ'ուղղէ որեւէ մէկ եկեղեցիի անյայտ երկնային լեզուով (որ մեկնութեան պէտք ունի): Այստեղ Պօղոսը յատկապէս ի նկատի ունի անհատը, որ հոգիով «մարդոց հետ չի խօսիր, այլ՝ Աստուծոյ հետ»:

Անձնական աղօթքի մէջ լեզուներով խօսիլը՝ մասնաւոր շփում է Աստուծոյ եւ աղօթող մարդուն միջեւ: Այս լեզուներուն նպատակը՝ աղօթող մարդուն զօրացնելն է: «Բայց դուք, սիրելիներ, ձեր ամենասուրբ հաւատքով ձեզ շինելով եւ Սուրբ Հոգիով աղօթելով՝ Աստուծոյ սիրոյն մէջ մնացէք» (Յուդա 1.20-21, ESV): Ուշադրութիւն դարձուցէք՝ Յուդան կը յայտարարէ, որ երբ մենք Սուրբ Հոգիով (լեզուներով) կ'աղօթենք, մենք շինութիւն կու տանք մենք մեզի. այնուամենայնիւ, երբ մենք եկեղեցւոյ հաւատացեալներուն հետ մեկնութեան լեզուներով կը խօսինք, մենք օգուտ կամ շինութիւն կու տանք եկեղեցիին (տես Ա. Կորնթացիս 14.5): Աստուած կը ցանկայ երկուքն ալ, եւ երկուքն ալ կարեւոր են:

Շատ հաւատացեալներ հարց կու տան. «Արդե՞ծք հնարաւոր է, որ ես լեցուած ըլլամ Սուրբ Հոգիով եւ չաղօթեմ լեզուներով: Այո, ես կը հաւատամ, որ մարդը կրնայ լեցուած ըլլալ Սուրբ Հոգիով եւ չաղօթել լեզուներով: Այնուամենայնիւ, ես կ'աւելցնեմ, որ իրաքանչիւրը, որ լեցուած է Սուրբ Հոգիով, լեզուներով աղօթելու կարողութիւն ունի:

Շատ հաւատացեալներ չեն գործածեր այս պարգեւը, որովհետեւ դեռեւս հաւատքով չեն տրուած անոր: Աստուծոյ իրաքանչիւր պարգեւ կ'ընդունուի եւ կը գործածուի հաւատքով:

Պատկերացուցէք, որ երկու մարդ գետի մէջ կը մտնեն: Անոնցմէ մէկը կ'որոշէ կենալ հոսանքի մէջ, իսկ միւսը որոշած է տրուիլ գետի հոսանքին: Ե՛ւ ան, որ կեցած է ջուրին մէջ, ե՛ւ ան, որ տրուած է հոսանքին, գետի մէջ են, բայց միայն վերջինն է, որ հոսանքին կը հետեւի: Լեզուներով աղօթող մարդուն կարելի է նմանցնել անոր, որ տրուած է հոսանքին. այն հաւատացեալը, որ դեռ չ'աղօթեր լեզուներով, նոյնպէս գետի մէջ է, բայց դեռ չ'է տրուած հոսանքին: (Եթէ կը փափաքիք իմանալ, թէ ինչպէս կրնաք տրուիլ Հոգիին, մենք կը քննարկենք ասիկա յաջորդ գլուխին մէջ):

Հաղորդութիւնը Սուրբ Հոգիին հետ՝ այն բազմաթիւ օրհնութիւններէն մէկն է, որ հասանելի է մեզի՝ Յիսուսի մահուան եւ յարութեան շնորհիւ: Այնուամենայնիւ, փրկութիւն ստանալու ժամանակ մենք ինքնաբերաբար չենք վերապրիր այս հաղորդութեան լիարժէք չափը: Յաւօք, շատ հաւատացեալներ չեն վայելեր փրկութեան պարգեւի որոշ կողմերը: Անսահման կարեւոր է, որ մենք ձգտինք *այն ամէնուն*, ինչ Աստուած պատրաստած է մեզի համար: Մենք պէտք է բացայայտենք այն ամէնը, ինչ որ Յիսուս տուած է մեզի Իր մահուան միջոցով. ասիկա մեր քրիստոնէական ընթացքի կարեւորագոյն նպատակներէն մէկն է: Ինչպէս արդէն ըսինք, Սուրբ Հոգին կը զօրացնէ եւ կը սպառազինէ մեզ, որպէսզի կատարենք այն առաջադրանքները, որոնք վստահուած են մեզի Աստուծոյ թագաւորութեան մէջ: Եթէ մենք անտեսենք այն պարգեւները, որոնք Հոգին շնորհած է մեզի, չենք ունենար թէ՛ ամէլի խոր մտերմութիւն Աստուծոյ հետ, եւ թէ՛ այն զօրութեան չափը, որուն կարիքը ունինք՝ Անոր պատշաճ կերպով ծառայելու համար:

Չորրորդ. Բարեխօսական լեզուներ

«Նոյնպէս ալ Հոգին օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն մէջ. քանզի ինչո՞ւ եւ ինչպէ՞ս աղօթելու ենք չենք գիտեր. բայց *Ինքը՝ Հոգին, բարեխօս կ'ըլլայ մեզի համար անբարբառ հառաչանքներով*: Եւ սրտերը Քննողը գիտէ Հոգիին ինչ խորհիլը, քանզի Աստուծոյ կամքին համեմատ բարեխօսութիւն կ'ընէ սուրբերուն համար» (Հռովմայեցիս 8.26-27):

Պօղոս այս հատուածը սկսած է՝ ըսելով, որ «Հոգին կ'օգնէ մեր *տկարութիւններուն մէջ*»: Ինչ տկարութիւններու մասին ան կը խօսի: «Որովհետեւ թէ ինչ բանի համար աղօթք պիտի ընենք... չենք գիտեր, բայց Ինքը՝ Հոգին, անբարբառ հառաչանքով բարեխօս կ'ըլլայ»: Պարզապէս, մեր տկարութիւնը հետեւեալն է. մենք սահմանափակ հասկացողութիւն ունինք այն մասին, թէ ինչ կը կատարուի մեր շուրջը: Այդ իսկ պատճառով, կան պահեր, երբ մենք չենք գիտեր՝ ինչպէս աղօթել: Բայց երբ մենք կը վստահինք Հոգիին եւ կը բարեխօսենք Հոգիով (որ ամէն ինչ գիտէ), Ան կ'աղօթէ Աստուծոյ կատարեալ կամքը մեր միջոցով:

«Փուրտյու» համալսարանին մէջ սորվելու ընթացքին ես Աստուածաշունչի ուսումնասիրութեան դասեր կ'անցընէի, որոնց կը մասնակցէին համալսարանի տղաներու եւ աղջիկներու հանրակացարաններուն մէջ ապրող ուսանողները: Այդ դասերուն կը յաճախէր մօտ վաթսուն ուսանող. ոմանք նախկինին չէին յաճախած որեւէ մէկ եկեղեցի, իսկ միւսները տարբեր եկեղեցական յարանուանութիւններէն էին: Յաճախող աղջիկներէն մէկը մեծցած էր յարանուանութեան մը մէջ, ուր կը հաւատային, թէ լեզուները դադրած են: Երեկոյ մը, երբ ես Սուրբ Հոգիին մասին կը սորվեցնէի, ան հասկցաւ. «Լեզուները կան նաեւ այսօր: Աստուածաշունչին մէջ գրուած է այս մասին»: Այդ երեկոյ ան Սուրբ Հոգիով լեցուեցաւ:

Յաջորդ օրը ես արթնցայ հեռախօսազանգէ մը, ժամը 6:30-ին՝ շատ աւելի շուտ, քան ես՝ համալսարանի ուսանողս, կը փափաքէի արթննալ: Այդ աղջիկը, որ Աստուածաշունչի ուսումնասիրութեան դասերուն կը յաճախէր, խնդրեց որ հանդիպիմ իրեն: Ան կ'ապրէր աղջիկներու հանրակացարանին մէջ, որ տղաներուն հանրակացարանի փողոցին հակառակ կողմն էր: Ես հագի անկողինէն ցառքեցի, շէնքէն դուրս ելայ եւ գացի այն փողոցը, ուր ան զիս կը սպասէր:

Ես կիսաքունոտ եւ քիչ մը վրդոված էի՝ այդքան շուտ քունս ընդհատուելուն պատճառով, իսկ ան անսահման ոգեշնչուած էր: Ես հարցուցի.

- Ինչ պատահած է:

- Աստուած արթնցուց զիս առաւօտեան ժամը հինգին, - պատասխանեց ան: - Չգացի, որ պէտք է լեզուներով աղօթեմ, եւ պարզապէս սկսայ աղօթել: Ես հասկցայ, որ կը բարեխօսէի, եւ խնդրեցի Աստուծմէն, որ ցոյց տայ, թէ ինչու այդքան ջանասիրաբար լեզուներով կ'աղօթեմ: Տէրը ըսաւ. «Դուն կ'աղօթես եւ կը բարեխօսես

տարեց մարդու մը կեանքին համար»: Ես շարունակեցի լեզուներով աղօթել: Ժամը վեցին իմ սենեակակից աղջկան արագ զանգեցին եւ ըսին, որ անոր մեծ հայրը հիւանդանոց տեղափոխուած էր՝ սրտի կաթուածով անհանգստանալուն պատճառով, եւ բժիշկները յաջողած էին անոր կեանքը փրկել:

Այնուհետեւ այդ աղջիկը շարունակեց.

-Սուրբ Հոգին ինձի ըսաւ. «Դուն կ'աղօթէիր այդ մարդուն համար»:

Ասիկա բարեխօսական լեզուներու գործածութեան կատարեալ օրինակ է: Ան գաղափար անգամ չունէր, որ այդ մարդուն կեանքը վտանգուած էր, բայց Սուրբ Հոգին գիտէր այդ մասին: Եթէ ան միայն միտքով աղօթէր, ոչ մէկ պարագային չէր կրնար բարեխօսել այդ տարեց մարդուն համար:

Մայրս Ֆլորիտա կ'ապրի, եւ ես չեմ գիտեր, թէ ինչ կը կատարուի անոր կեանքին մէջ տուեալ պահուն: Ես չեմ գիտեր, թէ ինչ կը կատարուի քրոջս կեանքին մէջ, որ Քալիֆորնիայի մէջ կ'ապրի: Բայց Սուրբ Հոգին գիտէ Աստուծոյ կատարեալ կամքը անոնց համար, եւ Ան կը բարեխօսէ իմ միջոցով, եթէ ես վստահիմ Անոր եւ համագործակցիմ Անոր հետ աղօթքի մէջ: Հոգին կը քննէ ամէն ինչ եւ գիտէ ամէն ինչ: Բացի անկէ, մենք կը լեցուինք մեծ խաղաղութեամբ՝ գիտակցելով, որ թոյլ կու տանք Սուրբ Հոգիին մեր միջոցով աղօթելու:

Պարզաբանում «անձնական» լեզուներուն մասին

Կարեւոր է նշել բացառութիւն մը՝ կապուած երկու տեսակի «անձնական» լեզուներուն հետ: Հոգիով լեցուած հաւատացեալները յաճախ կը հաւաքուին՝ միասին լեզուներով աղօթելու համար: Երբ հաւաքոյթներուն ներկայ են միայն հոգիով լեցուած հաւատացեալները, թոյլատրելի է, որ բոլորը Հոգիով աղօթեն: Այնուամենայնիւ, կան ուրիշ դէպքեր, երբ հաւատացեալները պէտք չէ հրապարակաւ գործածեն իրենց աղօթքի լեզուները: Պողոս հետեւեալը ըսաւ.

«Արդ՝ եթէ բոլոր եկեղեցին մէկտեղ գայ, ու ամէնքն ալ օտար լեզուներով խօսելու ըլլան, եւ հոն մտնեն *տրգէտներ* կամ *անհաւաստներ*, պիտի չըսեն թէ դուք խենթացեր էք» (Ա. Կորնթացիս 14.23):

Այս հատուածին մէջ գրուած է մարդոց երկու խումբերուն մասին: Նախ՝ Պողոսը կը յիշատակէ *անհաւաստներուն*: Խօսքը այն

մարդոց մասին է, որոնք չեն ընդունած Յիսուս Քրիստոսը որպես Տէր, այսինքն՝ դուրս են հաւատքէն: Երկրորդ խումբը՝ տգէտները՝ (անտեղեակ մարդիկ) են: Այս մարդիկը կը հաւատան Յիսուսին, բայց անոնց չեն սորվեցուցած Սուրբ Հոգիի լեզուներու մասին: Երկու խումբերուն պատկանող մարդիկն ալ անյարմար կը զգան իրենք իրենց այնպիսի մթնոլորտի մը մէջ, ուր մարդիկ միասին լեզուներով կ'աղօթեն: Անոնք դիւրութեամբ կրնան մտածել կամ ըսել. «Դուք խելագարներ էք»:

Յաւօք, մէկ կամ երկու անգամ ես ականատես եղած եմ, թէ ինչպէս բազմաթիւ մարդիկ բարձրաձայն լեզուներով կ'աղօթէին կիրակնօրեայ առաւօտեան ծառայութիւններու *ժամանակ*: Առաջնորդները կը խրախուսէին հաւատացեալները, որ այդպէս վարուին: Նոյնիսկ ես առաջնորդած եմ մարդոց այսպիսի աղօթքի մէջ՝ գիտութեան պակասի պատճառով: Նման ծառայութիւններուն, ինչպէս նաեւ բոլոր կիրակնօրեայ առաւօտեան ծառայութիւններուն, սովորաբար նորեկներ կ'ըլլան, որոնց մեծ մասը կը պատկանի *անհաւատներու* կամ *անտեղեակներու* խումբերուն: Անոնք, հաւանաբար, կը մտածեն. «Այս մարդիկ խելագարուած են»: Ես նկատած եմ, որ այսպիսի եկեղեցիներ աճելու եւ հանրութեան հասնելու դժուարութիւն ունին:

Թերեւս պատճառը այն է, որ անոնք չեն վարուած ըստ Ա. Կորնթացիս 14.23-ին մէջ գրուած իմաստութեան: Համոզուած եմ՝ եթէ անոնք շարունակեն այդպէս վարուիլ, անհաւատ եւ անտեղեակ մարդիկ անոնց քով չեն վերադառնար:

Անշուշտ, եկեղեցիները նաեւ աղօթքի ծառայութիւններ կ'անցընեն, ուր ներկայ կ'ըլլան միայն հաւատացեալները (օրինակ՝ շաբաթ առաւօտեան կամ երկուշաբթի երեկոյեան): Այս հաւաքոյթներուն բոլորը թէ՛ *տեղեկացուած* են, թէ՛ *հաւատացեալ* են: Այս հաւաքոյթներուն նպատակն է՝ Տէրոջը միաբան ծառայելը կամ բարեխօսելը, այնպէս որ ներկաները ազատօրէն կրնան լեզուներով աղօթել:

Պարզ ըսելով՝ Պօղոս չ'ըսեր, որ հաւատացեալները երբեք եւ ոչ մէկ տեղ կրնան հաւաքուիլ ու միաբան խօսիլ «անձնական լեզուներով»: Ան պարզապէս կը նշէ, որ երբ մեր միջեւ ներկայ են *անհաւատ* կամ *անտեղեակ մարդիկ*, պէտք է պատշաճ կերպով գործածել լեզուներու պարզելը:

Աստուծոյ ցանկութիւնը՝ ձեզի համար

«Ուստի, եղբայրներ, մարգարէութիւն ընելու նախանձախնդիր եղէք ու *լեզուներ խօսիլն ալ մի՛ արգիլէք*: Միայն թէ ամէն բան վայելչութեամբ եւ կարգաւ թող ըլլայ» (Ա. Կորնթացիս 14.39-40):

Պօղոսը գիտէր, որ եկեղեցին սխալ կերպով պիտի գործածէր լեզուներու զարմանալի պարգելը, այդ իսկ պատճառով, ան կը յորդորէ մեզ. «Գործածեցէք ճիշդ տեսակի լեզուն ճիշդ միջավայրին մէջ, եւ մի՛ արգիլէք լեզուներով խօսիլը այն պատճառով, որ որոշ հաւատացեալներ սխալ կերպով գործածած են Հոգիին այս արտասովոր պարգելը»: Դժբախտաբար, Եկեղեցին անտեղեակ է Հոգիին բազմաթիւ ճշմարտութիւններէն: Ասիկա ողբերգական է, որովհետեւ Սուրբ Հոգին՝ Ան է, որ ուղարկուած է՝ Եկեղեցին զօրացնելու համար: Աստուած ընտրեց Իր Եկեղեցին՝ որպէս Իր թագաւորութիւնը տարածելու միջոց: Եթէ մենք չարթնանք այն զօրութեան համար, որ մեզի կը պատկանի շնորհիւ Քրիստոսի մէջ մեր ունեցած դիրքին, մենք կը նմանինք թագաւորի մը, որ իր իշխանութիւնը կ'անտեսէ:

Որքան հաւատացեալներ Հոգիին զարմանալի պարգելները ունենալու հնարաւորութիւնը կը փախցնեն, որովհետեւ կը հաւատան, որ լեզուները դադրած են: Աստուած պարզօրէն Իր սրտի ցանկութիւնը ցոյց կու տայ. «Կ'ուզեմ, որ դուք ամէնքդ լեզուներ խօսիք» (Ա.Կորնթացիս 14.5): Ոմանք կը վիճարկեն ասիկա՝ ըսելով. «Այս խօսքերը Պօղոսը կը գրէ, ոչ թէ Աստուած»: Ամբողջ Սուրբ գիրքը Աստուծոյ շունչով գրուած է, եւ այս խօսքը՝ բացառութիւն չէ (տես Բ. Տիմոթէոս 3.16):

Երբեք մի՛ մոռնաք, որ լեզուներու պարգելը Սուրբ Հոգիի զօրացումին կենսականօրէն կարեւոր գործօններէն մէկն է, ինչպէս եւ Աստուծոյ հետ մտերմօրէն հաղորդակցելու սքանչելի կողմերէն մէկը: Այնպէս որ, ես կը փափաքիմ ձեզի նոյնը, ինչ որ Պօղոսը կը փափաքէր. ես կ'աղօթեմ, որ այս սքանչելի պարգելը ընդունիք, որ ամէն օր Հոգիի զօրութեամբ աճիք եւ աւելի շատ Անոր ներկայութիւնը վերապրիք:

ՀՈԳԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԿԸ ՄՂԷ

«Աստուած հասարակաց այդ ուղերձը՝ փայլով նշաններ ու փարսաբեասկ հրաշքներ եւ Սուրբ Հոգին պարգեւները, երբ կամեցաւ»:

— (Եբրայեցիս 2.4, NLT)

Սուրբ Հոգին յարատեւ գործողութեան կը մղէ մեզ: Ան բազմաթիւ զարմանալի կերպերով կը յայտնուի: Սուրբ գիրքին մէջ Ան ներկայացած է *աղանիի, կրակի, հովի եւ գինիի* խորհրդապատկերներով: Հասկնալով այս դրսեւորումները՝ մենք աւելի լաւ կը ճանչնանք Անոր բնատրոյթինը եւ այն, թէ ինչպէս Ան կը փափաքի գործել մեր մէջ ու մեր միջոցով:

Հոգին՝ որպէս աղանի. Բոլոր չորս Աւետարաններուն մէջ գրուած է, որ Հոգին Յիսուսին վրայ աղանիի պէս կ'իջնէ: Աղանիները մեղմ ու հեզ բնատրոյթին ունին. անոնք շատ երկչոտ են, եւ անոնց դիւրութեամբ կարելի է քշել: Անոնք հանգստանալու համար կ'իջնեն միայն այնտեղ, ուր ապահով եւ հանգիստ կը զգան իրենց: Ջոյգ ընտրելու առեւն, մինչեւ իրենց կեանքին վերջը իրարմէ չեն բաժնուիր: Ինչպէս այս փաստերը կ'օգնեն ձեզի՝ աւելի լաւ հասկնալու Սուրբ Հոգին եւ աւելի մտերմօրէն Անոր հետ հաղորդակցելու:

Կարդացէք Մատթէոս 3.16-17, Մարկոս 1.9-11, Ղուկաս 3.21-22, Յովհաննէս 1.32-33

Հոգին՝ որպէս կրակ. Ան Մովսէսին յայտնուեցաւ վառած մորենիին մէջէն, իսկ Իսրայէլին՝ որպէս կրակէ սին¹: Պենտեկոստէի օրը մարդիկ Հոգիով մկրտուեցան եւ «...բաժնուած լեզուներ երեւցան՝ որպէս թէ կրակէ» (Գործք 2.3): Ան՝ այն կրակն է, որ Յիսուս այս երկիրը բերաւ, եւ մենք պէտք է զգոյշ ըլլանք, որ չմարենք անիկա: Մտածեցէք կրակի յատկանիշներուն մասին. անիկա կը մաքրէ, լոյս եւ ջերմութիւն կու տայ, եւ ամէն ինչ կը կլլէ: Ինչպէս այս նիւթին շուրջ գիտելիքը կ'օգնէ ձեզի հասկնալու Աստուծոյ Հոգիին կրակը ձեր կեանքին մէջ: Ինչը կը բռնկեցնէ կրակը եւ ինչը կ'օգնէ թեժացնելու անիկա:

Կարդացէք Գործք 2.3-4, Ղուկաս 12.49, Ա. Թեսաղոնիկեցիս 5.19-21, Մատթէոս 3.11-12, Ղուկաս 3.16-17, Երեմեայ 20.9, Եբրայեցիս 12.29

Հոգին՝ որպէս հով. Ան Պենտեկոստէի օրը ոչ միայն որպէս կրակ, այլ նաեւ՝ որպէս հով յայտնուեցաւ: Հովերը տարբեր են՝ մեղմ զեփիտէն մինչեւ փոթորիկը: Մտածեցէք այն մասին, թէ հովը ինչ կ'ընէ: Ինչպէ՞ս կրնայ Հոգիին հովը գործողութիւն յառաջացնել ձեր կեանքի տարբեր ժամանակաշրջաններու մէջ: Ինչ կրնայ ընել ատիկա ձեր կեանքին մէջ:

Կարդացէք Յովհաննէս 3.5-8

Հոգին՝ որպէս գինի. Պենտեկոստէի օրը աշակերտները լեզուներով խօսեցան՝ հոչակելով Աստուծոյ հրաշալի գործերը: Այս դրսեւորումը այնքան ուշագրաւ էր, որ ոմանք ըսին, թէ անոնք գինովցած են, բայց Պետրոս ըսաւ, որ Անիկա Հոգին էր: Կեցէք եւ մտածեցէք: Ինչպէ՞ս կ'ազդէ գինի խմելը մարդու մը զգացումներուն վրայ: Ինչպէ՞ս Հոգիի «նոր գինին» կրնայ ձեր վրայ ազդել:

Կարդացէք Գործք 2.13-18, Ղուկաս 5.37-38 (նոյնպէս՝ Մարկոս 2.22, Մատթէոս 9.17), Եփեսացիս 5.18-19, Եսթեր 1.10, Երեմեայ 31.11-13

«Երկինքը չի կրնար Սուրբ Հոգին տեղատրել. բայց եւ այնպէս, Ան Իր ծառաներուն սրտին մէջ կը բնակի: Մենք Անոր փաճարն ենք: Անոր ներգործութիւններէն իրաքանչիւրը գոհութիւն եւ փառաբանութիւն կը յառաջացնեն մեր մէջ: Եթէ Ան հովի պէս է, մենք զանգակներու պէս կ'ըլլանք, որոնք հովի ժամանակ կը դողանջեն. եթէ Ան ցօղի պէս է, մենք կը ծաղկինք ծաղիկներու պէս. եթէ Ան կրակ է, մենք ջերմեռանդօրէն կը վառինք: Ինչպէս այլ Ան շարժի մեր մէջ, մենք պատրաստակամօրէն կ'արձագանգենք Անոր ձայնին»:

—(Չարլզ Սփէրճըն)²

Սերտողութիւն. Օր 2

ԱՆՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

«Հոգիի ներկայութեան վկայութիւնը տրուած է իւրաքանչիւր մարդու՝ բոլորի օգտին համար»:

— (Ա. Կորնթացիս 12.7, GW)

Աստուծոյ Հոգիին ներկայութիւնը մշտապէս վկայութեամբ կ'ուղեկցուի: Գետերը եւ ծովերը ետ կը քաշուին, ու կը մնայ ցամաքը: Կոյր աչքերը եւ խուլ ականջները կը բացուին: Կաղերը կը քալեն, եւ համրերը՝ կը խօսին: Վախը կը պարտուի, եւ կրկին յոյս կը ծնի: Բազմապիսի նշանները եւ հրաշքները հետքեր կը ձգեն մեր կեանքի ընթացքին վրայ, երբ մենք մտերմօրէն Աստուծոյ Հոգիին հետ կը հաղորդակցինք:

Կրկին ու կրկին, Գործք առաքելոց գիրքի պատմութիւնները կը հաստատեն, որ երբ Սուրբ Հոգին ներկայ էր, մարդիկ կը լսէին եւ կը տեսնէին վկայութիւնը այդ մասին: Ետ նայեցէք ձեր կեանքին. Հոգիի ներկայութեան ինչպիսի՞ վկայութիւններ կրնաք յիշել: Մէկ կամ երկու նախադասութիւն գրեցէ՛ք՝ նկարագրելով այն իրավիճակները, որոնց մէջ Հոգին յայտնուած է շրջադարձային կերպով փոխած է ձեր կեանքը:

Ես կը յիշեմ, երբ _____

Ես կը յիշեմ, երբ _____

Ես կը յիշեմ, երբ _____

Մի՛ շտապէ՛ք: Խոկացէ՛ք Աստուծոյ բարութեան մասին: Թոյլ տուէ՛ք, որ Հոգին նոր կեանք եւ աշխուժութիւն հաղորդէ ձեզի, մինչեւ որ յիշէք, թէ որքան հաւատարիմ եղած է Ան ձեր հանդէպ:

*«Եւ մէկ անգամ կը վերյիշեմ այն, ինչ որ Աստուած ըրած է.
 կրկին կը մտաբերեմ հին հրաշքները. ես կը խոկամ ամէն ինչին
 մասին, որ Դուն կատարած ես, եւ երկարատեւ, սիրով լեցուն հայեացք
 մը կը ներեմ Քու գործերուն վրայ:
 Ո՛վ Աստուած. Քու ճանապարհը սուրբ է: Ոչ մէկ աստուած այնքան մեծ
 է, որքան Աստուած: Դուն այն Աստուածն ես, որ կը գործէ. Դուն ցոյց
 տուիր բոլորին, թէ ինչ կրնաս ընել»:*

— (Սաղմոս 77.11-14, MSG)

Սուրբ Հոգին օգնած է ձեզի առաջ, եւ Ան կը փափաքի նորէն ընել ատիկա: Արդե՞ծք պէտք ունիք, որ Ան օգնէ ձեզի հիմա, եւ ինչպէ՞ս: Լռութեամբ մօտեցէք Անոր եւ խնդրեցէ՛ք, որ Ան կրկին օգնէ: Խնդրեցէ՛ք Անորմէ, որ վկայութիւն տայ այն մասին, թէ Ան իրական է եւ իրապէս կը հոգայ ձեր եւ ձեր շուրջը գտնուող մարդոց մասին: Լուռ մնացէ՛ք: Ի՞նչ կ'ըսէ Ան ձեզի:

Կեցէ՛ք եւ փառաբանութիւն մատուցանեցէ՛ք Տէրոջ: Փառաբանութեան եւ գոհութեան **աղօթք գրեցէ՛ք** Անոր համար: Ան արժանի է:

ԼԵՑՈՒԻԼԸ՝ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՊՐՈՒՄ Է

*«Մի՛ արբենաք գինիով, որովհետեւ արիկա կը կործանէ ձեր կեանքը:
Փոխարէնը՝ Սուրբ Հոգիով լեցունեցէ՛ք»:*

— (Եփեսացիս 5.18, NLT)

Աստուծոյ պատուէրը Սուրբ Հոգիով լեցուելու մասին, որ Ան տուաւ Պետրոսին միջոցով, կենսականօրէն կարեւոր է: «Լեցուիլ» բառը յունարէնով «պլերոօ» բառն է, որ կը նշանակէ՝ «լեցուիլ եւ բոլորովին տարածուիլ ինչ որ մէկու մը անձին մէջ»³: Այս բային ձեւը նոյնպէս կարեւոր նշանակութիւն ունի. առիկա **կրաւորական սեռի** է, հրամայական եղանակով եւ ներկայ ժամանակով: Կրաւորական սեռը կը նշանակէ, որ ասիկա պէտք է կատարուի ձեր՝ գործողութեան առարկային հետ. **հրամայական եղանակը** պարզ կը դարձնէ, որ ասիկա պատուիրան է, ոչ թէ առաջարկ, եւ **ներկայ ժամանակը** ցոյց կու տայ, որ ասիկա շարունակական գործողութիւն է:

Եփեսացիս 5.18-ը՝ ընդլայնուած է «Էմփիլֆայտ» Աստուածաշունչին մէջ (AMP), աւելի կը շեշտադրէ այս ճշմարտութիւնը. «Եւ մի՛ արբենաք գինիով, որովհետեւ անառակութիւն է, բայց **մշտապէս լեցունեցէ՛ք** եւ քաջալերուեցէ՛ք [Սուրբ] Հոգիով»: Հոգիով լեցուելու շարունակական վերապրումը կու տայ մեզի այն ամէնը, ինչի կարիքը որ ունինք, որպէսզի Յիսուսին նման ապրինք եւ Աստուծոյ կամքը երկրի վրայ բերենք այնպէս, ինչպէս անիկա Երկնքի մէջ է: Աւետարանիչ **Սմիթ Վիկկլսվորթն** ըսաւ.

«Ես երբեք պիտի չկարենամ լիարժէք կերպով գնահատել, թէ Սուրբ Հոգիով մկրտութիւնը ինչ է ինձի համար... Հոգիով լեցումը ըլլալը՝ շքեղութիւն է, բայց միեւնոյն ժամանակ՝ աստուածային պատուիրան է մեզի համար... Սուրբ Հոգիով մկրտումը ըլլալով՝ ես մշտապէս *կը լեցուիմ*, դուք պէտք է լեզուներով խօսիք առաւօտեան, կէսօրին եւ երեկոյեան: Երբ Հոգիին մէջ ապրիք եւ ձեր տան աստիճաններէն իջնէք, աստանան ստիպումը կ'ըլլայ ձեր առջեւէն հեռանալ: Դուք կ'ըլլաք աւելին, քան յաղթող՝ աստանային հանդէպ:

...Ապրելով Հոգիին մէջ՝ դուք կը շարժիք, կը գործէք, կ'ուտէք, կը խմէք եւ կ'ընէք ամէն ինչ Աստուծոյ փառքին համար: Մեր ուղերձը մշտապէս հետեւեալն է. «Հոգիով լեցուեցէք»: Կեանքը Հոգիին մէջ՝ այն վայրն է, որ Աստուած պատրաստած է ձեզի համար. այն շատ աւելի բարձր է բնական կեանքէն, ինչպէս որ երկինքը բարձր է երկրէն: Աստուծոյ նուիրուեցէք, որպէսզի Ան լեցնէ ձեզ»⁴:

Պետրոսը, Յովհաննէսը եւ ուրիշ աշակերտներ Հոգիով մկրտուեցան Պենտեկոստէի օրը: Անոնք կրկին անգամ կարճ ժամանակ ետք, աղօթքի ընթացքին Հոգիով լեցուեցան: Ուշադրութեամբ կարդացէք Գործք 4.23-31-ը: Ինչ կրնաք սորվիլ այս պատմութենէն՝ մշտապէս Հոգիով լեցուած ըլլալու համար:

Աստուած Պողոսին միջոցով կ'ըսէ. «Անփութօրէն մի՛ վերաբերիր այն պարգեւին» (Սուրբ Հոգիի պարգեւին), այլ՝ «բորբոքէ այն ներքին կրակը, որ Աստուած տուած է քեզի» (Ա. Տիմոթէոս 4.14, Բ. Տիմոթէոս 1.6, Ֆիլիպսի թարգմանութիւնը): Ուշադրութեամբ կարդացէք Եփեսոսացիս 5.18-19, 6.18 եւ Յուդա 20 խօսքերը: Հոգին ինչ ցոյց կու տայ ձեզի՝ Իր կրակը ձեր մէջ բորբոքած պահելու մասին:

«Այնպէս որ, տես թէ ինչ կը փափաքիմ, որ ընէք՝ Աստուծոյ օգնութեամբ. Վերցուցէք ձեր սովորական, ստօրեայ կեանքը՝ ձեր քունը, սնուիլը, աշխատանքի երթալը, ձեր կեանքի ընթացքը, եւ անհկա Աստուծոյ առջեւ դրէք՝ որպէս զոհաբերութիւն: Լաւագոյն բանը, որ կրնաք Աստուծոյ համար ընել, հետեւեալն է. ընդունեցէք այն, ինչ որ Ան կ'ընէ ձեզի համար: Մի՛ յարմարիք ձեր մշակոյթին այն սարիճան, որ նմանիք անոր՝ առանց նոյնիսկ մտածելու: Փոխարէնը՝ ձեր ուշադրութիւնը Աստուծոյ վրայ ուղղեցէք: Դուք կը փոխուիք՝ ներսէն դուրս»:

— (Հոովմայեցիս 12.1-2, MSG)

ԱՆ ՊԱՐԳԵԻՆԵՐ ՏՈՒԱԻ ՁԵՁԻ ՅԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՈՎ

«Ամէն մարդու տրուած է ինչ որ բան՝ ընելու համար, ինչը ցոյց կու տայ, թէ ով է Աստուած. բոլորը ունին իրենց դերը. բոլորը օգուտ կը ստանան»:

(Ա. Կորնթացիս 12.7, MSG)

Սուրբ Հոգին յատուկ պարգեւներ տուած է մեզի, որպէսզի շարունակենք այն աշխատանքը, որ Յիսուս սկսաւ: Թէեւ պարգեւները բազմապիսի են, «Մէկ եւ միակ Հոգին է, որ կը բաժնէ այդ բոլոր պարգեւները: Միայն Ան կ'որոշէ, թէ ինչ պարգեւ պէտք է ունենայ իւրաքանչիւրը» (Ա. Կորնթացիս 12.11, NLT):

Արդեօք այդ պարգեւները կը գործեն այսօր: Արդեօք մենք պէտք է ընենք այդ գործերը, որոնք Յիսուս ըրաւ: Անշուշտ: Աւետարանիչ **Ռէյնհարտ Պոնկէն**, որուն ծառայութեան շնորհիւ միլիոնաւոր մարդիկ ընդունած են Քրիստոսը ամբողջ ափրիկեան մայրացամաքին մէջ, կը հոչակէ.

«Ես հաստատ համոզուած եմ, որ Աստուած՝ Իր ժողովուրդին հրաշագործն է: Ես կը հաւատամ՝ այն նշանները, որոնք կը հետեւէին Յիսուսին, երբ ան կը քալէր այս երկրի վրայ, կրնան իրական ըլլալ, եւ այսօր ալ պէտք է իրական ըլլան մեր կեանքերուն մէջ: Յիսուս ըսաւ Իր աշակերտներուն. «*Ինծի հաւատացողը՝ այն գործերը, որ ես կը գործեմ, ան ալ կը գործէ, եւ անոնցմէ ալ ւսելի մեծ բաներ կը գործէ, որովհետեւ ես իմ Հօր մօտ կ'երթամ*»⁵:

Ուշադրութեամբ կարդացէք **Հռովմայեցիս 12.3-8-ը** եւ անուանեցէք այս հատուածին մէջ նշուած պարգեւները: Ընդհանուր առմամբ, ինչպէս կը նկարագրէք այս պարգեւները (անոնց նպատակը եւ գործառոյթը):

Այժմ կարդացե՛ք Ա. Կորնթացիս 12.4-11-ը եւ ինը պարգեւները առանձնացուցե՛ք: Ընդհանուր առմամբ, ինչպէս կը նկարագրէք այս պարգեւները (ատոնց նպատակը եւ գործառոյթը):

Ուսումնասիրեցէ՛ք այն պարգեւները, որոնք այս երկու հատուածներուն մէջ նշուած են: Արդե՛՞ծք այս պարգեւներէն որեւէ մէկը ձեր մէջ կը գործէ:

Կը դժուարանա՞նք պատասխանելու: Այս պարգեւներէն որոնք կ'ոգեշնչեն ձեզ: Խնդրեցէ՛ք Սուրբ Հոգիէն, որ ցոյց տայ, թէ ինչպիսի պարգեւներով Ան օժտած է ձեզ:

Երբ կը գործէք այն պարգեւներով, որոնցմով Հոգին օժտած է ձեզ, կարելոր է ձեր վերաբերմունքը մարդոց հանդէպ: Աստուած կ'ըսէ. «Թող ինքը՝ Քրիստոսը, ըլլայ ձեր օրինակը այն ամէնուն մէջ, թէ ինչպիսին պէտք է ըլլայ ձեր վերաբերմունքը» (Փիլիպպեցիս 2.5, Ֆիլիպսի թարգմանութիւնը): Ռէյնհարտ Պոնկէն կը հաստատէ ասիկա՝ ւաւելցնելով.

«Աստուծոյ գործին յաջողութիւնը կախուած չէ մեզմէ ոեւէ մէկէն: ...Ամէն ինչ կը կատարուի Անորմէ կախուած ըլլալու միջոցով: ... Ես ոչինչ եմ, եւ Աստուած կրնայ գործածել ինծի ճիշդ այդ պատճառով, որ ես կ'արժեւորեմ Անոր ձայնը՝ միւս բոլոր ձայներէն ւաւելի: ...Ես երբեք պէտք չէ համարեմ, որ ւաւելին եմ, քան Աստուծոյ ծառաներէն ոեւէ մէկը»⁶:

Ուշադրութեամբ կարդացէ՛ք Ա. Կորնթացիս 12.12-26 եւ Հռովմայեցիս 12.3-5 հատուածները: Հոգին ձեր վերաբերմունքին մասին ի՞նչ կը յայտնէ: Որքան կարելոր է իւրաքանչիւր մարդու պարգելը, ներառեալ՝ ձերը: Ի՞նչ կը կատարուի Քրիստոսի Սարմինին հետ, եթէ դուք ձեր պարգելը անտեսէք:

Հետագայ ուսումնասիրության համար ...
Ճիշդ վերաբերմունք ունենալու մասին. Փիլիպպեցիս 2.1-8,
Բ. Կորնթացիս 8.9, Մատթեոս 23.11-12
Հոգին նոյնպես հաւատացեալներուն ծառայութիւններու մէջ կը
նշանակէ՝ յատուկ նպատակով Ա. Կորնթացիս 12.28-31, Եփեսացիս
4.11-14

ԹՈՅԼ ՏՈՒԷՔ ԱՆՈՐ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ ՁԵՐ ՄԻՋՈՅՈՎ ԱՂՕԹԵԼՈՒ

«Աստուծոյ Հոգին ճիշդ մեր քովն է եւ մշտապէս կ'օգնէ մեզի: Եթէ մենք չենք գիտեր, թէ ինչպէս կամ ինչ աղօթենք, արիկա կարելոր չէ: Ան մեր փոխարէն կ'աղօթէ՝ մեր մէջէն եւ մեզի համար, աղօթք կազմելով մեր անխօս հաստատարներէն, մեր ասարիկ հոգոցներէն»:

— (Հռովմայեցիս 8.26, MSG)

Երբեք պատահած է, որ այնքան համակուած կ'ըլլաք զգացումներով եւ այնքան կոտրուած կ'ըլլաք կեանքի հանգամանքներէն, որ ինչպէս աղօթէք, չէք գիտեր: Դուք մինակ չէք: Անթիւ սուրբեր այսպիսի աստուծոյ ունեցած են: Այդ պահերուն Աստուած կը փափաքի, որ *Իր մօտ վազէք*, ոչ թէ փախիք Իրմէ: Ան կը փափաքի, որ դուք բացուիք՝ զոգուելու փոխարէն: Երբ չգիտնաք՝ ինչ ըսել կամ ինչպէս աղօթել, Քրիստոսի Հոգին, որ ձեր մէջ կ'ապրի, Ա՛ն գիտէ:

Անսահման կարելոր է, որ ոչ միայն ձեր մտքին, այլ նաեւ ձեր սրտին մէջ իմանաք, թէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կ'ապրի: Ժամանակ յատկացուցէք հետեւեալ խօսքերուն շուրջ խոկալու: Սուրբ Հոգին ինչպիսի իմաստութիւն կը յայտնէ ձեզի:

Խոկացէք հետեւեալ խօսքերուն շուրջ. Գաղատացիս 4.6, Հռովմայեցիս 8.16, Ա. Կորնթացիս 6.19, Յովհաննէս 14.23, Ա. Յովհաննէս 3.24, 4.12-13: Խնդրեցէք Հոգիէն, որ օգնէ ձեզի իրապէս ճանչնալու Ձինք:

Աստուած կը փափաքի, որ մենք «Հոգիով աղօթենք ամէն ժամանակ եւ ամէն իրավիճակի մէջ» (Եփեսացիս 6.18, NLT): **Վոչմըն Նին**, որ համարձակութեամբ մարմնական գրկանքներ կրած եւ տարիներ շարունակ բանտարկուած եղած էր, կը գրէ.

«Գոհութիւն Աստուծոյ, որ ամենակարող Սուրբ Հոգին մեզի հետ է՝ մեզի օգնելու համար: Մենք պէտք է յենինք ներբնակուող Սուրբ Հոգիին վրայ, որ զօրութեամբ կը գործէ մեր ներսը, որովհետեւ Ան մեր օգնութիւնն է տկարութեան եւ անիրազեկութեան պահերուն: Թէեւ մենք չենք գիտեր, թէ ինչպէս աղօթենք, ներբնակուող Սուրբ

Հոգին, որ անձամբ գիտէ Աստուծոյ կամքը, կը սորվեցնէ մեզի աղօթել՝ Աստուծոյ մտքին համաձայն»⁷:

Կեցէք եւ մտածեցէք: Որքան յաճախ կ'իմանաք՝ ինչպէս պէտք է աղօթել ձեզի համար, այլ մարդոց համար, նաեւ այն իրավիճակներուն համար, որոնց հետ կը բախիք: Ամէն անգամ, երբ կ'աղօթենք, ինչպիսին պէտք է ըլլայ մեր վերաբերմունքը եւ մօտեցումը Աստուծոյ հանդէպ:

Կարդացէք Առակաց 3.5-8, 28.26, Ղուկաս 18.9-14, Յակոբոս 4.6-10:

Կը փափաքիք Աստուծոյ կարարեալ կամքին մէջ բնակիլ: Հոգին կ'օգնէ ձեզի. Ան ձեր միջոցով կ'աղօթէ՝ աղաղակներով, հառաչանքներով, հոգոցներով եւ երկնային լեզուներով: «Եւ Հայրը, որ գիտէ բոլոր սրտերը, գիտէ, թէ Հոգին ինչ կ'ըսէ, որովհետեւ Հոգին կը խնդրէ մեր՝ հաւաքացեալներուս համար, համաձայն Աստուծոյ կամքին» (Հռովմայեցիս 8.27, NLT): Ուշադրութեամբ կարդացէք այս հատուածը: Հոգին ինչ կը յայտնէ ձեզի այս խօսքերուն միջոցով:

«Որովհետեւ եթէ լեզուներով խօսելու կարողութիւն ունիք, դուք միայն Աստուծոյ հետ կը խօսիք... Դուք Հոգիի զօրութեամբ կը խօսիք, բայց այդ ամէնը խորհրդաւոր կերպով կ'ըլլայ: Այն մարդը, որ լեզուներով կը խօսի, անձնապէս կը զօրանայ... Որովհետեւ եթէ ես լեզուներով կ'աղօթեմ, իմ հոգին կ'աղօթէ, բայց ես չեմ հասկնար, թէ ինչ կ'ըսեմ: Ուրեմն ինչ ընեմ: Ես կ'աղօթեմ Հոգիով, եւ նոյնպէս կ'աղօթեմ այն բառերով, որոնք կը հասկնամ: Ես կ'երգեմ Հոգիով, եւ նոյնպէս կ'երգեմ այն բառերով, որոնք կը հասկնամ»:

— (Ա. Կորնթացիս 14.2, 4, 14-15, NLT)

«Երբ Հոգիին անձնատուր ըլլաք, Ան կը ներկայացնէ ձեզ եւ ձեր կարիքը Հօր գահին առջեւ: Սուրբ Հոգին գիտէ Աստուծոյ կարարեալ միտքը եւ կամքը: Ան, որ կը քննէ ձեր սիրտը եւ գիտէ ձեզի ատելի լաւ, քան դուք, այդ կարիքը կը բերէ Աստուծոյ գահին առջեւ: Դուք չէք կրնար սխալիլ, երբ Սուրբ Հոգին ձեր միջոցով կ'աղօթէ»:
— Բեթրին Քուլման

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Եթե դուք «Սուրբ Հոգի. Ներածություն» գիրքը կ'ուսումնասիրեք՝ որպես «Մեսենճր Հաաքաճոյ»ի ամբողջական դասընթացքի մաս, կը խնդրենք, որ ուսումնական տեսանիւթ թիւ 4-ը նայիք:

- 1| Կարեւոր է հասկնալ, որ փրկութեան պահուն Սուրբ Հոգիին ներբնակութիւնը մեր մէջ եւ Սուրբ Հոգիով լեցուիլը՝ տարբեր փորձառութիւններ են: Ինչպէս կը նկարագրէիք այս երկու արտասովոր փորձառութիւնները:
- 2| Ձեր կարծիքով, ինչո՞ւ Յիսուս պատուիրեց Իր աշակերտներուն, որ Սուրբ Հոգիով լեցուիլը սպասեն, մինչեւ Իր թագաւորութեան համար որեւէ բան մը ընելը (տես Գործք 1.4-5): Ինչ կրնաք սորվիլ «սպասել՝ ի վերուստ զօրութիւնը ընդունելու համար» սկզբունքէն: Ատիկա ինչպէս կրնաք կիրառել այսօր:
- 3| Սուրբ Հոգիով լեցուիլը մեզ կը զօրացնէ այլ լեզուներով խօսելու համար: Մենք չենք գիտեր այն լեզուները, որոնցմով կը խօսինք: Պատկերացուցէք, որ այն բարեպաշտ հրեաներէն մէկն էք, որոնց մասին Գործք 2-րդ գլուխին մէջ գրուած է, եւ Երուսաղէմ եկած էք որեւէ օտար երկրէ՝ Պենտեկոստէի օրուան առթիւ: Ձեր կարծիքով, ինչպէս կ'արձագանգէիք՝ լսելով, որ հաւատացեալները ձեր մայրենի լեզուով կը խօսէին այն փրկութեան մասին, որ Յիսուս Քրիստոսով է:
- 4| Երբ հաւատացեալները Սուրբ Հոգիով կը լեցուին, գրեթէ իրաքանչիւր դէպքի մէջ ինչ երկու դրսեւորումներ տեղի կ'ունենան: Ո՞րն էր պատճառը, որ Աստուած միաժամանակ շնորհեց փրկութիւնը եւ Սուրբ Հոգիին լեցունութիւնը Կոռնելիոսին եւ անոր ընտանիքին: Պատմեցէք որեւէ մէկ պատմութիւն, այն մասին, թէ ինչպէս Աստուած դուրս եկաւ այն «կրօնական կաղապարէն», որուն մէջ դուք Անոր դրած էիք, եւ ընդլայնեցէք ձեր պատկերացումը Իր մասին:

5| Եթէ մարգարէութեան եւ լեզուներ խօսելու դրսետրումները նաեւ ժամանակակից հաւատացեալներուն կը վերաբերին, Պօղոսը ինչ նկատի ունէր՝ ըսելով, որ *ոչ բոլորը լեզուներով կը խօսին* (տե՛ս Ա. Կորնթացիս 12.27-30), եւ որ *լեզուները կը դադրին* (տե՛ս Ա. Կորնթացիս 13.8-12): Ուշադրութեամբ կարդացէ՛ք այս խօսքերը եւ բացատրեցէ՛ք:

6| Աստուածաշունչը չորս տեսակ լեզուներու մասին կը խօսի: Կարդացէ՛ք հետեւեալ հատուածները եւ թուեցէ՛ք լեզուներուն չորս տեսակները՝ բացատրելով, թէ ինչո՞ւ Աստուած տուած է Սուրբ Հոգիին այս տարբեր դրսետրումները Իր Եկեղեցիին:

Ա. Կորնթացիս 14.22

Ա. Կորնթացիս 12.10

Ա. Կորնթացիս 14.14-15

Հռովմայեցիս 8.26-28

Ինչո՞ւ կարեւոր է հասկնալ տարբերութիւնները լեզուներու տեսակներուն միջեւ:

7| Կրնա՞յ որեւէ մէկ հաւատացեալ Սուրբ Հոգիով լեցուիլ, բայց լեզուներով չխօսի: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ: Ինչո՞ւ այսպիսի բան մը տեղի կ'ունենայ: Թուեցէ՛ք քանի մը պատճառներ:

ԳԼՈՒԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Հոգիին զորացումը էապես կարելի է Աստուծոյ թագաւորութեան ամբողջ աշխատանքին համար:
- Սուրբ Հոգիին լեցունութիւնը առանձին վերապրում է, որ փրկութեան կը հետեւի:
- Փրկութիւնը նոր դիրք կը շնորհէ մեզի Քրիստոսի մէջ. Հոգիի լեցունութիւնը կը զորացնէ մեզի՝ Անոր նման ապրելու համար:
- Լեզուները չեն դադրած. անոնք պիտի գործեն՝ քանի դեռ մենք երես առ երես Յիսուսին չենք տեսած:
- Կան չորս տեսակի լեզուներ. լեզուներ՝ որպէս նշան անհաւատներուն համար, մեկնութեան լեզուներ, լեզուներ՝ անձնական աղօթքի համար եւ բարեխօսական լեզուներ: Առաջին երկուքը հրապարակային գործածութեան համար են, իսկ միւս երկուքը՝ անձնական:

Հոգիի լեզուն

«Եթէ դուք անձնական լեզուներով Աստուծոյ կը փառաբանէք, Ան կը հասկնայ ձեզի... որովհետեւ դուք **մերերանաբար** կը շփուիք Անոր հետ»:

— (Ա. Կորնթացիս 14.2, MSG)

Օր 1

Ինծի համար հաճելի է, թէ ինչպէս «Ուղերձ» (Մեսէճ) Աստուածաշունչը (MSG) կը ներկայացնէ Աստուծոյ հետ մեր անձնական հանդիպումը: *Լեզուներու* այսպիսի գործածութեան միջոցով հրաշալի շփում տեղի կ'ունենայ «միայն ձեր եւ Անոր [Աստուծոյ] միջեւ»:

Նախորդ գլուխին մէջ մենք դիտարկեցինք լեզուներու չորս տեսակները, որոնք Նոր կտակարանին մէջ նկարագրուած են. լեզուները՝ որպէս անհաւատներուն նշան, մեկնութեան լեզուներ, որոնք եկեղեցիին մէջ կը գործածուին, անձնական աղօթքի լեզուներ եւ բարեխօսական լեզուներ: Լեզուներու առաջին երկու տեսակը պէտք է հրապարակային ծառայութեան ժամանակ գործածուի (երկու կամ աւելի մարդոց ներկայութեան պարագային), իսկ միւս երկու տեսակը՝ անձնական է: Այս գլուխին մէջ մենք կը շարունակենք ուսումնասիրել Սուրբ Հոգիին հետ մեր *անձնական* շփման գործառոյթներն ու բնոյթը, որ կ'ընդգրկէ խօսիլը եւ լեզուներով, եւ միտքով: Միասին այս աղօթքի արտայայտութիւնները կը կազմեն Հոգիի լեզուն:

Թոյլ տուէք նորէն պարզաբանել. անուանելով այս դրսեւորումները «անձնական»՝ ես նկատի չունիմ, որ անոնք պէտք է գործածուին միայն այն ատեն, երբ մարդը մինակ է: Ես կը փափաքիմ ըսել, որ անձնական դրսեւորումները երկնային լեզուներով պէտք է գործածել՝ զգայուն ըլլալով այն մարդոց հանդէպ, որոնց Աստուածաշունչը «անտեղեակներ» կամ «անհաւատներ» կ'անուանէ: Այսպիսի դրսեւորումներ կրնան գործածուիլ, երբ մարդը առանձին է կամ այլ հաւատացեալներու հետ է, որոնք կը հասկնան Սուրբ Հոգիին

այս դրսեւորումը: Օրինակ՝ իմ ընտանիքին մէջ կան *անձնական* թեմաներ, որոնք ես իմ նոր ծանօթներուն հետ չէի քննարկեր, քանի որ անոնք չէին հասկնար զիս (տես Ա. Կորնթացիս 14.22-25-ը՝ ասելի խորը ընկալելու համար):

Ուշադրութիւն դարձուցէք, որ Ա. Կորնթացիս 14.2-ին մէջ Պօղոսը լեզուներու այս գործածութիւնը «անձնական լեզու» կ'անուանէ: Յաւոք, բազմաթիւ եկեղեցական խումբեր սխալ ընկալած կամ լիովին մերժած են անձնական լեզուներու զարմանալի պարզելը, որովհետեւ չեն հասկցած, որ մտերմութիւնը պատշաճ *ժամանակ* եւ *վայր* կը պահանջէ:

Ոեւէ մէկ զոյգ յատուկ ժամանակ եւ վայր ունի՝ մտերիմ յարաբերութիւններու համար: Արդե՞ծք ատիկա ամուսնութենէն առաջ տեղի կ'ունենայ: Ո՛չ: Թերեւս՝ որեւէ հասարակական վայրի մէջ: Անկասկած՝ ո՛չ: Այն, ինչ որ գեղեցիկ է եւ Աստուծոյ կողմէն միջավայրի մը մէջ սահմանուած, կրնայ տհաճ եւ անպատշաճ ըլլալ մէկ այլ միջավայրի մէջ: Աստուած նախատեսած է, որ մտերիմ սեռական յարաբերութիւնները ծածուկ վայրի մը մէջ տեղի ունենան եւ միայն ամուսնական ուխտերու փոխանակումէն յետոյ: Նմանապէս, լեզուներու որոշ տեսակները պէտք է միայն ծածուկ վայրի մէջ գործածուին, որովհետեւ անոնց նպատակը՝ մտերիմ յարաբերութիւններն են: Հոգեւոր մտերմութեան, ինչպէս եւ մարմնական մտերմութեան պատշաճ արտայայտութիւնը պէտք է որոշակի ժամանակի եւ որոշակի վայրի մէջ տեղի ունենայ: Արդե՞ծք քրիստոնէաները պէտք է սեռական յարաբերութիւններու պարզելէն հրաժարին այն պատճառով, որ մարդկութիւնը աղաւաղած է Աստուծոյ սկզբնական մտադրութիւնը եւ նպատակը ատոր վերաբերել: Անշուշտ՝ ո՛չ: Նմանապէս, մենք չենք կրնար անտեսել կամ անարգել լեզուներու պարզելը:

Ես գիտեմ, որ շատերը եկեղեցիին մէջ տեսած են, թէ ինչպէս լեզուներու պարզելի տեսակները սխալ գործածուած կամ նոյնիսկ չարաշահուած են: Այնուամենայնիւ, պէտք չէ հրաժարինք Յիսուս Քրիստոսի Մարմինը կրթելէն եւ հաւատացեալներուն այս պարզելին մասին սորվեցնելէն ճիշդ այն պատճառով, որ ոմանք սխալ հասկցած կամ սխալ գործածած են այս պարզելը: Ահա թէ ինչու այս գլուխին մէջ ես կը փափաքիմ հետազօտել մեր երկնային լեզուի մտերիմ բնոյթը եւ օգնել ձեզի, որպէսզի ասելի լաւ հասկնաք անոր նպատակն ու կարեւորութիւնը:

Յիշեցէք, որ Սուրբ Հոգին՝ ճշմարտութեան Հոգին է: Երբ Աստուծոյ Խօսքի իմաստութեան նուիրուիք, Հոգին ձեզի *ամբողջ* ճշմարտութիւնը կը յայտնէ: Պահ մը կեցէք եւ հրաւիրեցէք Անոր, որ ձեր հետ ըլլայ այս ուսուցման նուիրուած ժամանակին ընթացքին: Ինդրեցէք Անորմէ, որ ձեր մտքէն հեռացնէ որեւէ մէկ կանխակալ գաղափարներ կամ համոզմունքներ, որոնք Անոր Խօսքին հակառակ են: Դուք երբեք չէք կրնար Աստուծոյ լիութիւնը վերապրիլ, եթէ թոյլ տաք ձեր սահմանափակ մտքին՝ սահմանելու եւ սահմանափակելու Անոր անսահման մեծութիւնը:

Նախագահը եւ թագաւորը

Որպէս Միացեալ Նահանգներու քաղաքացի՝ ես մեծ պատիւ կը համարէի, եթէ մեր երկրի նախագահին հետ ընթերլու հրաւէր մը ստանայի: Մեր երկրի նախագահը՝ ամենայայտնի եւ ամենաազդեցիկ մարդոցմէ մէկն է ամբողջ աշխարհի մէջ: Հաշուի առնելով այն բազմաթիւ գործակալութիւնները, որոնք անոր տրամադրութեան տակ են, շատ քիչ տեղեկութիւններ կան, որ ան չի կրնար ստանալ: Մեր նախագահին գիտելիքները երկրի գործերուն մասին մեծապէս կը գերազանցեն իմ գիտելիքները. ան՝ Գլխաւոր հրամանատարն է, իսկ ես՝ պարզ քաղաքացի, որ ոչ մէկ կառավարական պաշտօն կը զբաղեցնէ: Այդ իսկ պատճառով, մեր երկրի գործերը քննարկելու համար նախագահը հարկադրուած կ'ըլլայ խօսելու ինծի հետ իմ գիտելիքներու մակարդակին համեմատ: Եթէ ան այդպէս չի վարուի, ես չեմ կրնար անոր հետ հաղորդակցիլ, որովհետեւ յաջողակ հաղորդակցութեան համար մենք պէտք է ընդհանուր թեմաներու շուրջ խօսինք:

Նմանապէս, տիեզերքի Թագաւորին հետ հաղորդակցելով՝ ես ոչ մէկ պարագային կրնամ Անոր հետ հաղորդակցիլ Անոր մակարդակին համեմատ: Թերեւս ԱՄՆ-ի նախագահը շատ տեղեկութիւններ ունենայ մեր երկրին մասին, բայց Աստուած ամէն ինչ գիտէ, եւ ոչ մէկ բան պահուած է Անորմէ: Երբ Աստուծոյ իմ մտքով կ'աղօթեմ, ես կը սահմանափակուիմ անորմով, ինչ որ կը տեսնեմ եւ գիտեմ: Աստուծոյ համար բաւարար չէր մտերիմ շփումի սահմանափակ մակարդակը Իր զաւակներուն հետ. ուստի, Ան հնարաւորութիւն

տուաւ մեզի Իր հետ *Իր մակարդակին համեմատ հաղորդակցելու*: Ան ըրաւ ասիկա Իր Հոգիի պարգեւին միջոցով: Աստուած կարծես թէ ըսէր. «Ես չեմ փափաքիր Իմ զաւակներուն հետ հաղորդակցիլ այնպիսի մակարդակի վրայ, որ շատ անելի ցած է Իմ գիտելիքներէն, հասկացողութենէն եւ իմաստութենէն: Ես կը փափաքիմ, որ անոնք Ինծի հետ մտերմօրէն հաղորդակցելու կարողութիւնը ունենան: Ճիշդ այդ պատճառով ես Իմ զաւակներուն պիտի տամ Օգնական՝ Իմ Հոգին»: Սուրբ Հոգիին ներկայութիւնը եւ Անոր հետ հաղորդութիւնը հնարաւորութիւն կու տան մեզի՝ Արարիչին հետ խոր մտերմութիւն վերապրելու:

Աստուծոյ կամքը եւ ճանապարհները մեր սահմանափակ միտքը կը գերազանցեն, բայց Հոգիով աղօթելու ժամանակ մենք չենք աղօթեր մեր մտքին համաձայն, այլ՝ համաձայն Իր Հոգիի կամքին: Դուք հասկցամք ասիկա: *Հոգիով աղօթելու ժամանակ, մենք կ'աղօթենք համաձայն Աստուծոյ կատարեալ կամքին*:

Պատերազմական լեզու

«Որովհետեւ մենք չենք պայքարիր մարմնի եւ արեան դէմ, այլ՝ ընդդէմ տէրութիւններու, ընդդէմ իշխանութիւններու, ընդդէմ տիեզերական զօրութիւններու, որոնք կ'իշխեն ներկայ խաւարին մէջ, ընդդէմ չար հոգեւոր ուժերուն՝ երկնային վայրերու մէջ» (Եփեսացիս 6.12, ESV):

Երբեմն մենք դիրտութեամբ կը մոռնանք, որ սատանան մարդկութեան դէմ պատերազմ յայտարարած է՝ օգտագործելով բոլոր ուժերը եւ միջոցները, որոնք իր տրամադրութեան տակ են: Անոր մարտավարութեան նպատակը մշտապէս եղած է՝ մեզ մեր Արարիչէն բաժնել, որ Կեանքի Աղբիւրն է: Բայց Աստուած գիտէ թշնամիին հնարքը: Իր անսահման իմաստութեամբ, Ան գաղտնի մարտավարութիւն մշակած է՝ սատանային ծրագիրները խափանելու համար: Պօղոս այդ մարտավարութիւնը կը նկարագրէ Ա. Կորնթացիս 2.7-8-ին մէջ. «Այն իմաստութիւնը, որուն մասին մենք կը խօսինք, Աստուծոյ *խորհուրդն է՝* Անոր ծրագիրը, որ նախկինին ծածկուած էր, թէեւ Ան կազմած էր այն մեր վերջնական փառքին համար մինչեւ աշխարհի սկիզբը: Բայց այս աշխարհին իշխանները չհասկցան այն. եթէ հասկնային, անոնք չէին խաչէր մեր փառաւոր Տէրը» (NLT):

Պօղոս խաչին զօրութիւնը կը նկարագրէ, որ այն խորհուրդը, որ «առաջ ծածկուած էր», բայց Յիսուսին մահէն եւ յարութենէն յետոյ յայտնուեցաւ: Յիսուսին զոհը խաչին վրայ հնարաւորութիւն տուաւ մեզի անելի մտերիմ հաղորդակցութիւն ունենալու Աստուծոյ հետ՝ այս ձեւով խափանելու համար մեր թշնամիին վաղուց կազմած ծրագիրները:

Աստուծոյ ծրագիրը խաչին համար՝ միակ խորհուրդը չէր, որ պահուած էր այս աշխարհի իշխաններէն: Աստուծոյ իմաստութիւնը (Անոր Խօսքը) ունի շատ ծածկուած կողմեր, որոնք կրնան միայն Անոր Հոգիով զանազանուիլ կամ բացայայտուիլ:

Մենք՝ հաւատացեալներս, կրնանք այդ խորհուրդները գիտնալ Հոգիին հետ հաղորդակցութեան միջոցով: Ինչպէս արդէն այս գլուխին մէջ յիշատակեցի, Աստուած չբաւարարուեցաւ պարզապէս մեզ «փրկելով»: Աստուած նաեւ դիրք շնորհեց մեզի *Քրիստոսի մէջ* եւ իշխանութիւն ու զօրութիւն տուաւ նոյն թշնամիին վրայ, որ արդէն երկար ժամանակ է, որ կը չարչարէր մեզի: Այժմ մենք Աստուծոյ թագաւորութեան ժառանգներն ու պատերազմողներն ենք, եւ մեր նպատակն է՝ տարածել Քրիստոսի գործը: Իր իմաստութեամբ, Աստուած մէկ միջոց ստեղծեց, որուն շնորհիւ կրնայ գաղտնի կերպով հաղորդել Իր կատարեալ ծրագիրը այն հաւատացեալներուն, որոնք Իր նպատակներուն համար կը պայքարին:

Պատերազմներու ժամանակ զինուորականները «լեզուներ» կը մշակէին՝ իրենց ծրագիրները եւ տեղեկութիւնները գաղտնի կերպով հաղորդելու համար: Յաճախ անոնք բարդ ազդանշանային համակարգեր կը հնարէին եւ պաշտպանուած յաճախականութիւններով տեղեկութիւններ կը հաղորդէին: Ինչն էր պատճառը: Գաղտնի ըլլալու շնորհիւ, անոնց կեանքերուն վտանգ չէր սպառնար, եւ անոնց ծրագիրները յաջողութեամբ կը պսակուէին: Եթէ թշնամին անոնց ծրագիրները բացայատէր, ան կրնար տեղեկացուած հակագրոհ իրականացնել: Մենք Աստուծոյ զաւակներն ենք, եւ մեզի տրուած է Երկնքի գաղտնի յաճախականութիւնը Հոգիին միջոցով, որ թոյլ կու տայ մեզի՝ բացայայտելու Աստուծոյ մարտավարական խորհուրդները՝ մեր Հրամանատարին ծրագիրները առանց թշնամիին յայտնելու: Պօղոս կը շարունակէ.

«Աղօթեցէք Հոգիով ամէն ժամանակ եւ ամէն իրավիճակի մէջ: Մշտապէս զգօն եւ հետեւողական եղէք ձեր աղօթքներուն մէջ բոլոր հաւատացեալներուն համար» (Եփեսացիս 6.18, NLT):

Աստուած մեզի պատուիրեց աղօթել յատուկ պատճառով: Մենք Անոր զինուորներն ենք երկրի վրայ, եւ պէտք է խաւարի ուժերուն դէմ պայքարինք: Մեր ամենասահարկու զէնքերէն մէկը՝ Հոգիով աղօթքն է: Երբ Հոգիով կ'աղօթենք, թշնամին անտեղեակ է Աստուծոյ մարտավարութեան, ծրագիրներուն եւ նպատակներուն մասին:

Ժամանակ առ ժամանակ Աստուած ոեւէ մէկ մօր սրտի հետ կրնայ խօսիլ, որպէսզի ան իր որդիին համար բարեխօսէ: Թերեւս ան չգիտնայ, թէ ինչ կը կատարուի իր որդիին կեանքին մէջ, բայց Հոգիին մղումով ան կը հասկնայ, որ պէտք է աղօթէ: Երկնային լեզուներով բարեխօսած ժամանակ ան հրամաններ կ'արձակէ հոգեւոր իրականութեան մէջ եւ Աստուծոյ կատարեալ կամքը կը հոչակէ իր որդիին կեանքին մէջ: Ահա թէ ինչու գրուած է. «Վարէ պատերազմը իմաստուն խորհուրդով» (Առակաց 20.18, NKJV):

Մեր երկնային լեզուն կը գերազանցէ մեր միտքը եւ սահմանափակուած չէ ժամանակի կամ տարածութեան մէջ: Հոգիով աղօթած ժամանակ մենք կը դադրինք մեր միտքին վրայ յենուելէն եւ փոխարէնը Անոր անսահման իմաստութեան մեծութեան վրայ կը յենինք: Ասիկա այդ բազմաթիւ պատճառներէն մէկն է, թէ ինչու Պօղոս ըսաւ. «Ես կը կամենամ, որ դուք ամէնքդ լեզուներով խօսիք»: Թշնամին կարողութիւն չունի մեր երկնային լեզուն գաղտնազերծելու, քանի որ ատիկա մտերիմ փոխանակում է Աստուծոյ եւ Անոր զաւակներուն միջեւ. այդ իսկ պատճառով, անիկա շատ արդիւնաւէտ միջոց է՝ թշնամիին չար ծրագիրները մեր եւ մեր հաւատակիցներուն կեանքներուն մէջ խափանելու համար:

«Ահա ձեզի իշխանութիւն տուի... թշնամիին ամբողջ զօրութեան վրայ» (Ղուկաս 10.19, ESV):

Մենք՝ հաւատացեալներս, սպառազինուած ենք, որպէսզի ուժով Աստուծոյ թագաւորութիւնը տարածենք (տես Մատթէոս 11.12): Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է այս երկրի վրայ: Ինչպէս արդէն տեսանք, Յիսուս այլեւս այս երկրին վրայ չէ: Մենք Աստուծոյ թագաւորութեան դեսպաններն ու պատերազմողներն ենք: Մենք

կը կրենք Անոր վերափոխող զորութիւնը եւ կը մատակարարենք այն մարդոց, որոնք վերականգնման, ազատութեան եւ փրկութեան կարիքը ունին: Բայց մենք երբեք չենք կրնար Քրիստոսի Մարմինը ըլլալ այս կորսուած եւ մահացու աշխարհին մէջ՝ առանց Անոր Հոգիին զօրացման: Սատանան եւ անոր դիւային զօրքերը չեն վախնար ձեզմէ. Անոնք սարսափած են ձեր *ինքնութենէն Քրիստոսի մէջ եւ այն զօրութենէն, որ կը պատկանի ձեզի՝* որպէս Բարձրեալի որդի կամ դուստր:

Օր 2

Մտերմութեան լեզու

Կինս եւ ես բաւական երկար ժամանակ միասին ապրած ենք եւ զարգացուցած ենք մեր սեփական փոքրիկ լեզուն: Ես պարզապէս կրնամ «ՍՄԱ» ըսել, եւ կինս հասկնայ, թէ ես ինչ նկատի ունիմ: Միտքն այն է, որ երբ նոր ամուսնացած էինք, կը թուար՝ բոլոր նորաստեղծ քրիստոնէական ծառայութիւններու անուանումները կ'ընդգրկէին «Միջազգային Աւետարանչական» արտայայտութիւնը: Այնպէս որ, ես եւ Լիզան որոշեցինք սկսիլ «Սիրունիկ Միջազգային Աւետարանչական» ծառայութիւնը («ՍՄԱ»): Մենք կրնայինք մէկս միսին նայելով, ըսել. «ՍՄԱ», եւ երկուքս ալ գիտէինք, որ պէտք է գրկախառնուինք կամ համբուրուինք: Եթէ ինչ որ մէկը լսէր մեզի, թերեւս մտածէր. «*Ի՞նչ կը խօսին ասոնք*»: Այդ լեզուն քիչ մը ծիծաղելի էր, բայց ատիկա մեր մտերիմ լեզուն էր, որ միայն ես եւ Լիզան գիտէինք: Ասիկա պարզապէս օրինակ մըն է այն բազմաթիւ մտերիմ հաղորդակցման միջոցներէն, որ մենք ունինք:

Նմանապէս, մենք կրնանք մտերմօրէն հաղորդակցիլ Աստուծոյ հետ, երբ կ'աղօթենք մեր երկնային լեզուով: Ինչ որ մէկը կրնայ ըսել. «Բայց ճոն, ես չեմ հասկնար այն, ինչ որ կ'աղօթեմ: Արդե՞ծք նոյնիսկ Աստուածաշունչին մէջ գրուած չէ. «... քանզի եթէ ես աղօթք ընեմ օտար լեզուով, իմ հոգին աղօթք կ'ընէ, բայց միտքս անպտուղ է» (Ա. Կորնթացիս 14.14)»: Այո, ճիշդ է, բայց նախորդ խօսքին մէջ գրուած է. «... ան որ լեզուով կը խօսի, աղօթք թող ընէ, որ թարգմանէ

(կամ՝ մեկնէ) ալ» (խօսք 13): Երբ ես Աստուծոյ կ'աղօթեմ կամ Անոր հետ լեզուներով կը հաղորդակցիմ, ես կը խնդրեմ Անորմէ, որ աղօթքներուս մեկնութիւնը տայ ինծի: Գիտէ՞ք, թէ ինչ տեղի կ'ունենայ այն ժամանակ: Գաղափարները, իմաստութիւնը եւ յայտնութիւնը կը սկսին բարձրանալ հոգիէս: Լաւագոյն ձեւը, որ կրնամ նկարագրել հետեւեալն է. այդ մտքերը օդային պղպջակներու կը նմանին, որոնք ծովի խորքէն կը բարձրանան: Անոնք իմ ներսի մարդու խորքէն կը բարձրանան՝ մտքիս մակերեսին հասնելով:

Թոյլ տուէ՛ք օրինակ մը բերելու: Երբ որեւէ աստուածաշնչային խօսք մը կարդամ եւ չհասկնամ, ես կ'ըսեմ. «Սուրբ Հոգի՛, սորվեցուր ինծի», եւ կը սկսիմ լեզուներով աղօթել: Թերեւս յայտնութիւնը անմիջապէս չգայ. սովորաբար անիկա ւաւելի ուշ կու գայ, օրինակ, երբ ես մեքենայ կը վարեմ, լոզնամ, պարզապէս երբ կը հանգստանամ կամ կոլֆ կը խաղամ: Յանկարծ ներսս փայլատակում մը տեղի կ'ունենայ: Այս յայտնութիւնները Սուրբ Հոգիին հետ մտերմութեան արդիւնք են. ես կը խնդրեմ, որ Ան Իր իմաստութիւնը յայտնէ ինծի: Աստուած Իր խորհուրդները խոնարհներուն կը յայտնէ. երբ մենք խոնարհեցնենք մեզ (Սուրբ Հոգիին առաջնորդութիւնը խնդրելով), մենք ւաւելի խոր մտերմութիւն պիտի վերապրինք Անոր հետ եւ ւաւելի մեծ հոգեւոր յայտնութիւն պիտի ստանանք:

Նոյնը ճշմարիտ է հոգեւոր զօրութեան համար: Պօղոս գրեց այս խօսքերը, որոնք անմիջապէս Աստուծոյ Հոգիէն ստացած էր:

«Իմ շնորհքը հերիք է քեզի. վասնզի Իմ զօրութիւնը [շնորհքը] տկարութեան մէջ կատարեալ կը դառնայ»: Այդ իսկ պատճառով, ես ւաւելի մեծ ուրախութեամբ կը պարծենամ իմ տկարութիւններով, որպէսզի Քրիստոսի զօրութիւնը կարենայ հանգչիլ իմ վրայ» (Բ. Կորնթացիս 12.9, ESV):

Աստուծոյ շնորհքը, որ Անոր զօրութիւնն է, նոյնպէս խոնարհներուն կը տրուի (Պօղոս ցոյց կու տայ, որ խոնարհ է՝ խոստովանելով իր «տկարութիւնը»): Աստուծոյ զօրութիւնը ւաւելի մեծ չափով կը հանգչի ձեր վրայ, երբ դուք ձեզ խոնարհեցնէք՝ անձնատուր ըլլալով Անոր Հոգիին անսահման իմաստութեան: Ասիկա նոյնպէս Հոգիին հետ մտերմութեան արդիւնք է:

Արեւմտեան հասարակութիւնը արդիւնքներու վրայ կեդրոնացած

է: Յաճախ, երբ ջանքերու կամ ներդրումներու արագ արդիւնքներ չենք տեսներ, մենք մեր վճռակամութիւնը կը կորսնցնենք: Մենք պէտք է հասկնանք, որ Հոգիով աղօթելով մեր ապագային մէջ ներդրում կը կատարենք: Երբեմն որոշ ժամանակ կը պահանջուի, մինչեւ, որ յայտնութիւնը բարձրանայ մեր միտքի «մակերեսը»: Հոգիով աղօթելու համար հաւատք կը պահանջուի, որովհետեւ անհկա կը սկսի այնտեղ, ուր մեր բնական միտքը կ'աւարտի: Հոգիով աղօթքը մեր հաւատքը եւ մեր կարողութիւնը կ'աւելցնէ՝ Աստուծոյ իմաստութիւնը հասկնալու համար:

Մտքով Աղօթել

Այս գլուխը՝ Հոգիով աղօթելու մասին է, սակայն մտքով աղօթելը նոյնպէս խիստ օգտաւէտ է: Պօղոսը պարզ յայտնեց, որ մենք պէտք է աղօթենք թէ՛ մտքով, թէ՛ Հոգիով:

«Ուրեմն ինչ ընեն: Աղօթք ընեն հոգիով, աղօթք ընեն մտառութեամբ ալ. սաղմոս երգեն հոգիով, սաղմոս երգեն մտառութեամբ ալ» (Ա. Կորնթացիս 14.15):

Երբ ես մտքով կ'աղօթեմ, այսինքն՝ հասկնալի լեզուով, իմ միտքը անմիջապէս շինութիւն կը ստանայ: Այս աղօթքը մեծ ոգեւորութիւն եւ ջերմեռանդութիւն կը յառաջացնէ իմ մէջ: Այս աղօթքը կը կապէ ինձի այն մարդուն հետ, որուն համար կ'աղօթեմ՝ Լիզային, զաւակներուս, ընկերներուս, իմ աշխատակազմին, եւայլն: Նմանապէս, երբ ես իմ միտքէն կը խօսիմ՝ հռչակելով իմ Հօր մեծութիւնը, ես կը լեցուիմ գոհութեան եւ շնորհակալութեան զգացումներով:

Բացի անկէ, երբեմն ես միտքով կ'աղօթեմ՝ Հոգիի առաջնորդութեան համաձայն: Իրականութեան մէջ, ասիկա Հոգիով աղօթելու մէկ ուրիշ ձեւ է: Բայց ամէնէն յաճախ նախ՝ ես Հոգիով կ'աղօթեմ, իսկ յետոյ Աստուած մեկնութիւն կամ գիտութիւն կու տայ այն մասին, թէ ինչ աղօթած եմ, եւ խօսքերը մտքիս մէջ գետի պէս կը յորդին:

Գրելով Հոգիով աղօթելու կարեւորութեան մասին՝ ես ոչ մէկ պարագային կը նուազեցնեմ միտքով աղօթելու անհրաժեշտութիւնը: Ընդհակառակը՝ ես կը փափաքիմ ցոյց տալ, որ առողջ աղօթքի կեանքը կ'ընդգրկէ թէ՛ Հոգիով, եւ թէ՛ միտքով եղած աղօթքը: Աստուծոյ մէջ երկուքն ալ կենսականօրէն կարեւոր են մեզի համար:

Մեր կեանքի աղբիւրը

Առակաց 20.27-ին մէջ գրուած է. «Մարդուն հոգին Տէրոջը լոյսն է, ան սրտին բոլոր շտեմարանները կը քննէ»: Աստուծոյ Հոգիին հրաշալիքները կը լուսաւորուին եւ սկզբնականօրէն մեր հոգիին մէջ կը յայտնուին, ոչ թէ մտքին: Ահա թէ ինչու, երբ Հոգիով կ'աղօթենք մենք պէտք է նոյնպէս մեկնութեան հաւատանք եւ խնդրենք անիկա: Յայտնութիւնը, որ Սուրբ Հոգին մեր Հոգիին կու տայ, կը բարձրանայ մեր մտքի մակերեսը:

Առակաց 20.5-ին մէջ գրուած է. «Մարդու մը սրտին խորհուրդը [իմաստութիւնը, առաջնորդութիւնը, նպատակը] խորունկ ջուրերու պէս է, բայց խելացի մարդը [կամ՝ կինը] զանիկա դուրս կը հանէ»: Իսաչի զօրութեամբ Աստուած մեզի նոր սիրտ տուած է (տես Եզեկիել 36.26): Այժմ մենք կրնանք դուրս հանել Աստուծոյ խորհուրդը (Սուրբ Հոգիին անուններէն մէկը՝ Խորհրդական է) մեր նորոգուած սրտի խորքերէն: Յիսուսին խօսքերը Յովհաննէս 7.38-39-ին մէջ կը հաստատեն այս միտքը.

Իրաքանչիւր անձ, որ կը հաւատայ Ինձի, կրնայ գալ եւ խմել: Որովհետեւ Սուրբ գիրքը կը հոչակէ. «Կենդանի ջուրի գետերը պիտի հոսին *Մտք սրտէն*»: («Կենդանի ջուր» ըսելով՝ Ան կը խօսի Հոգիին մասին, որ իրաքանչիւր հաւատացող անձի կը տրուէր: Բայց Հոգին դեռեւս տրուած չէր, որովհետեւ Յիսուս տակաւին Իր փառքին մէջ չէր մտած») (NLT):

Այս խօսքը նոյնպէս Եսայեայ 12.3 խօսքը կը յիշեցնէ.

«Դուք ուրախութեամբ պիտի խմէք, մինչեւ յագենալը, փրկութեան աղբիւրէն [կենդանի ջուրէն]» (NLT):

Յովհաննէսը պարզ նշեց՝ «կենդանի ջուրը», որ, ինչպէս Յիսուսը ըսաւ, մեր սրտերէն կը հոսի, «Հոգին» է: Ինչհոգի Յիսուս համեմատեց Հոգին՝ ջուրին հետ: Զուրը կեանք եւ կենսական ուժեր կը պարունակէ. առանց ատոր կեանքը այս երկրին վրայ կը դադրէր: Հոգին «կենդանի ջուր» անուանելով՝ Յիսուս ի նկատի ունէր, որ Ան կեանքի էութիւնն է:

Աստուած կ'ըսէ. «Իմ ժողովուրդը բնաջինջ եղաւ տգիտութեան

պատճառով» (Ովսեայ 4.6): Ինչպիսի գիտութեան մասին կը խօսի Աստուած: Ան մասնաւորապէս Իր ճամբաները եւ նպատակը իմանալու մասին կը խօսի: Հրաշալի է, որ Աստուած Իր Հոգին ուղարկեց, որպէսզի մենք կարենանք կեանքի լիութեամբ ապրիլ՝ Անոր սիրտը ճանչնալով:

Անկարելի է ծառայել Աստուծոյ՝ առանց նախ հասկնալու, թէ ով է Ան, ինչպէս որ իմ ծառայողական խումբի անդամները չեն կրնար ճիշդ կերպով ծառայել ինծի՝ առանց իմ սիրտը սկիզբէն ճանչնալու: Երբ մենք Աստուծոյ խօսքը կը կարդանք եւ աղօթքի մէջ ժամանակ կ'անցընենք, Հոգին մեզի Աստուծոյ սիրտը կը յայտնէ: Ասիկա այն զօրութիւնն է, որ անհրաժեշտ է ուրախութեամբ լեցուն կեանք մը ապրելու համար: Նէեմեայ 8.10-ին մէջ գրուած է. «Տէրոջ ուրախութիւնը՝ ձեր զօրութիւնն է»: Ուրիշ խօսքերով՝ երբ մենք Անոր մէջ ուրախութիւն կ'ապրինք (կը վերապրինք Անոր Հոգիին թարմութիւնը), մենք զօրութիւն կը ստանանք այն ամէն ինչին համար, որ ապագային մեզի կը սպասուի: Չեմ գիտեր՝ ինչպէս դուք, բայց ես նոյնիսկ մէկ օր չեմ ցանկար ապրիլ առանց Անոր ուրախութեան:

Աստուծոյ խորհուրդները

Վերոյիշեալ խօսքերուն մէջ՝ Առակաց գիրքէն եւ Յովհաննէս Աւետարանէն, մենք կրնանք տեսնել, որ մեր սրտէն բխող կենդանի ջուրը Աստուծոյ խորհուրդները կամ ծածուկ իմաստութիւնը կը պարունակէ: Մենք նոյնպէս գիտենք, որ Աստուած Իր իմաստութիւնն ու խորհուրդները կը յայտնէ Իր Հոգիով: Այնպէս որ, մէկ անգամ եւս կարդանք Պօղոսին խօսքերը Ա. Կորնթացիս 2.7-ին մէջ. «Հապա՛ Աստուծոյ ծածուկ իմաստութիւնը կը խօսինք *խորհուրդով...*»:

Այն յունարէն բառը, որ թարգմանուած է որպէս «*խորհուրդ*», չի նշանակեր «հանելուկային» կամ «անորոշ». անիկա կը նշանակէ՝ «ծածկուած կամ ոչ ամբողջովին բացայայտուած»¹:

Պատկերացուցէք, որ շատ թանկարժէք ճաշարանի մէջ էք: Աւագ խոհարարը կը մօտենայ ձեր սեղանին՝ ձեր նախընտրութիւնները գիտնալու համար: Անկէ յետոյ ան նախընտրած ճաշը կը պատրաստէ՝ ձեր ճաշակին համաձայն: Երբ ճաշը պատրաստ է, մատուցողը

կը մօտենայ ձեր սեղանին եւ կափարիչով ծածկուած ափսէն ձեր առջեւ կը դնէ: Բայց այդ ճաշարանը այնքան կանոնաւոր է, որ ճաշը ծածկուած կը մնայ, մինչեւ որ կափարիչը բարձրացնելու ժամանակը գայ: Դուք գիտէք, որ ձեր առջեւ դրուածը՝ ձեր նախընտրած ճաշն է, բայց աստոր պարունակութիւնը խորհուրդ է ձեզի համար:

Երբ ճիշդ ժամանակը գայ, մատուցողը կը մօտենայ եւ կափարիչը կը բարձրացնէ: Այժմ դուք կրնաք տեսնել այդ ուտեստը, որ աւագ խոհարարը վարպետօրէն ձեզի համար պատրաստած է: Անանկ չէ, որ անհկա գոյութիւն չունէր մինչեւ կափարիչ բարձրացնելը. այդ կերակուրը ձեր քովն էր նոյնիսկ մինչեւ ձեր գիտնալը, թէ ինչ էր անհկա: Մատուցողը բացայայտեց ձեր ընթրիքի *խորհուրդը*: Անհկա միշտ յայտնի էր աւագ խոհարարին, բայց ծածկուած էր ձեզմէ, մինչեւ կափարիչ բարձրացնելը:

Իր Հոգիով Աստուած կը հեռացնէ ծածկոցը Իր ծածուկ ծրագրին՝ Իր խորհուրդին վրայէն: Այժմ մենք Հոգիին հետ կը համագործակցինք, եւ...

«...Աստուծոյ ծածուկ իմաստութիւնը կը խօսինք *խորհուրդով* ...որպէսզի ճանչնանք այն բաները, որոնք Աստուծմէ տրուեցան մեզի: Որոնց մասին կը խօսինք՝ ոչ թէ մարդկային իմաստութեան սորվեցուցած խօսքերովը, հապա Սուրբ Հոգիին սորվեցուցածներով՝ հոգեւորները հոգեւորներուն հետ համեմատելով» (Ա. Կորնթացիս 2.7, 12-13)

Աւելի ուշ նոյն նամակին մէջ Պօղոս գրեց. «Վասնզի ով որ օտար լեզուով կը խօսի, ո՛չ թէ մարդոց կը խօսի, այլ՝ Աստուծոյ. վասնզի մէկը չկայ որ իմանայ, բայց անհկա հոգիով *խորհուրդներ* կը յայտնէ» (Ա. Կորնթացիս 14.2): Դուք կը տեսնէք այն կապը, որ կայ այստեղ: Լեզուներով խօսելու ժամանակ մենք Աստուծոյ խորհուրդները կը խօսինք: Մենք արդէն գիտենք, որ այս խորհուրդները պահուած են մեր սրտի խորքերը (տես Առակաց 20.5), եւ դուրս կ'ելլեն, երբ Հոգիի իմաստութեան կենդանի ջուրը բխի մեզմէ (տես Յովհաննէս 7.38-39): Ահա թէ ինչու լեզուներով աղօթելը շինութիւն կու տայ մեզի. անհկա դուրս կը հանէ «կենդանի ջուրը»՝ կեանքի էութիւնը, որպէսզի մենք կարենանք Հոգիին ամենաճաճուկ խորհուրդները հասկնալ:

Ինչպէս արդէն նշեցի, յաճախ ես Աստուածաշունչին մէջ շատ խօսքերու հանդիպած եմ, որոնք չեմ կրցած հասկնալ: Երբ

այդպիսի բան մը տեղի կ'ունենայ, ես Հոգիով կ'աղօթեմ, եւ յետոյ այդ մասին հասկացողութիւն կը ստանամ: Բազմաթիւ անգամներ, որեւէ գիրք մը գրելու ընթացքին, յանկարծ փակուղիի առջեւ կը կենայի: Այդ պահերուն կը թուայ, թէ այլեւս ըսելիք չունիմ: Միակ բանը, որ կրնամ այսպիսի իրավիճակի մը մէջ ընել, հետեւեալն է. ես իմ համակարգիչին առջեւէն կը հեռանամ եւ կը սկսիմ լեզուներով աղօթել: Ընելով ասիկա՝ ես յաճախ նոր յայտնութիւն մը կը ստանամ: Ինչ կը կատարուի այդ պահերուն: Իմ սրտէն Աստուծոյ Հոգիին կենդանի ջուրը կը հոսի:

Եթէ դուք Աստուծոյ հետ հաղորդութիւն չունիք, որոշ խորհուրդներ ձեր բնական միտքէն ծածկուած կը մնան: Ահա այդ խորհուրդներէն քանի մը օրինակ. ի՞նչ եկեղեցին պէտք է երթաք, որո՞նք հետ պէտք է ամուսնանաք, ի՞նչ աշխատանք պէտք է ընտրէք, ի՞նչ տունը պէտք է գնէք, ձեր առաջնորդներուն համար ինչպէ՞ս պէտք է աղօթէք, ինչպէ՞ս ատելի լաւ ամուսին կամ կին պէտք է ըլլաք, ինչպէ՞ս պէտք է յաղթահարէք այն դժուարութիւնները, որ ձեր պզտիկներուն հետ ունիք, ինչպէ՞ս պէտք է գերազանց կերպով կատարէք ձեր աշխատանքը եւ ատելին: Արդե՞՞ք ուրախ չէք, որ Աստուած չէ ձգած մեզի, որ պարզապէս հոգանք մեր մասին մեր սեփական հասկացողութեամբ: Իր Հոգիին միջոցով մենք կրնանք բացայայտել Անոր ծրագիրները (այն, ինչ որ լաւագոյնն է) մեր կեանքին համար, եւ վայելել Անոր խոստացուած խաղաղութիւնը:

Օր 3

Խաղաղութիւն. մտերմութեան պարգեւը

Գաղատացիս 5-րդ գլուխին մէջ գրուած է, որ խաղաղութիւնը՝ Հոգիին ներկայութեան եւ համաձայնութեան նշանն է: Անիկա զարմանալի օրհնութիւն է, որ բազմաթիւ գործնական կիրառութիւններ ունի առօրեայ կեանքին մէջ:

Երբ տակաւին ամուրի էի, ինձի կը հարցնէին, թէ ով պիտի ըլլայ իմ ապագայի կինը: Այդ ժամանակ ես Լիզա Տօսկանօ անունով աղջկայ մը հետ կը ժամադրուէի: Ան շատ հաճելի էր ինձի համար:

Անոր կը հաւնէի՝ որպէս անհատականութիւն, եւ բացի այդ՝ ան շատ գրաւիչ էր ինծի համար: Այնուամենայնիւ, ես կը փափաքէի ամուսնանալ այն աղջկան հետ, որուն Աստուած ընտրած էր ինծի համար: Լիզան Արիզոնա կ'ապրէր, իսկ ես՝ Տեխաս: Երկուքս ալ կը փափաքէինք ստանալ Աստուծոյ առաջնորդութիւնը՝ ապագայի մեր փոխյարաբերութիւններուն համար: Այնպէս որ, ես Լիզային առաջարկեցի.

- Եկնոր երեսուն օր՝ օրական երեսուն վայրկեան Հոգիով աղօթենք: Լսէ՛ սրտիդ: Եթէ տհաճ կամ անհանգիստ զգացում ունենաս, ուրեմն Աստուած կ'ընէ մեզի, որ այլեւս մեր յարաբերութիւնը չջարունակենք: Բայց եթէ խաղաղութեան զգացում ունենաս, ուրեմն Սուրբ Հոգին կը խրախուսէ մեզ, որ մեր յարաբերութեան յաջորդ քայլը առնենք:

Աղօթած ժամանակ երկուքս ալ կը լեցուէինք խաղաղութեամբ, որ ուրախալի ակնկալիքով կ'ուղեկցուէր: Երբ երեսուն օր անցաւ, մենք անկեղծօրէն քննարկեցինք, թէ աղօթքի ընթացքին ինչ կը զգայինք, եւ պարզեցինք, որ երկուքս այդ նոյն բանը վերապրած ենք: Մենք շարունակեցինք մեր յարաբերութիւնը եւ ի վերջոյ ամուսնացանք:

Արդէն աւելի քան երեսուն տարի անցած է, եւ ես անսահման շնորհակալ եմ այդ խաղաղութեան զգացումին համար:

Հռովմայեցիս 8.14-ին մէջ գրուած է. «Որովհետեւ, անոնք, որ Աստուծոյ Հոգիովը կ'առաջնորդուին, անոնք Աստուծոյ որդիներն [ու աղջիկներն] են»: Այս հատուածին շարունակութիւնը կը բացատրէ, թէ ինչպէս Հոգին Աստուծոյ զաւակները կ'առաջնորդէ. «Նոյն Ինքն՝ Հոգին, վկայութիւն կու տայ մեր Հոգիին հետ» (8.16): Ահա այդ գլխաւոր միջոցը, որմով Հոգին կ'առաջնորդէ մեզ. Իր խաղաղութեամբ կամ վկայութեամբ:

Արդեօք երբեք փափաքած էք որեւէ քայլի դիմել, որ ճիշդ եւ տրամաբանական կը թուայ, բայց ամէն անգամ, երբ այդ մասին մտածած էք, տհաճ եւ անհանգիստ զգացում մը ունեցած էք: Թերեւս դուք ձեզի հարցուցած էք. «Ի՞նչն է պատճառը: Ինչո՞ւ ես ինծի այսպէս կը զգամ: Այս որոշումը այնքան ճիշդ կը թուայ»: Եթէ այդ ժամանակ դուք հաղորդութիւն ունենցած էք Սուրբ Հոգիին հետ, Ան ձեզի այդ տհաճ զգացողութեան միջոցով ըսած է. «Այդպէս մի՛ վարուիր»: Ես շատ անգամներ վերապրած եմ ասիկա: Երբեմն Հոգիին առաջնորդութեան հետեւելու որոշումս անիմաստ կը թուար, որովհետեւ նոյնիսկ տարիներ անցնելէն ետք ամէն բան չէր պարզաբանուեր: Ես սորվեցայ վստահիլ Անոր այսպիսի դէպքերու մէջ: Յիշեցէք՝ Անոր Իմաստութիւնը ժամանակով կամ տա-

րածութեամբ չի սահմանափակուիր, իսկ ասիկա կը նշանակէ, որ առաջնորդելով ձեզ այսօր՝ Ան մշտապէս ձեր ապագային մասին կը մտածէ:

Այլ պարագաներուն ես մեծ խաղաղութիւն զգացած եմ այնպիսի որոշումի վերաբերեալ, որ կայացնելը վտանգաւոր կը թուար. այսպիսի պահերուն ընթացքին, սրտիս մէջ Քրիստոսի խաղաղութիւնը կ'իշխէր: Կարդացէք Պօղոս առաքեալին հետեւեալ խօսքերը:

«Եւ թոյլ տուէք, որ խաղաղութիւնը (անձի ներդաշնակութիւնը, որ կու գայ) Քրիստոսէն, իշխէ (վարուի մարզական դատաւորի պէս) ձեր սրտերուն մէջ (որոշելով եւ վերջնականապէս պարզելով բոլոր այն հարցերը, որոնք ձեր մտքերուն մէջ կը յառաջանան այդ խաղաղ վիճակին մէջ), որուն համար, որպէս մէկ մարմին [Քրիստոսի մարմնին անդամները], դուք նոյնպէս կանչուած էք [ապրելու]» (Կողոսացիս 3.15, AMP):

Ես կը հաւնիմ, թէ ինչպէս ընդլայնուած «Էմփիլիֆայտ» թարգմանութիւնը (AMP) Սուրբ Հոգին կը նմանցնէ մարզական դատաւորի: Լաւմարզական դատաւորը անվարան կերպով յանձնարարութիւններ կու տայ: Նմանապէս, Սուրբ Հոգին վճռականօրէն կը պարզէ բոլոր հարցերը (որոշումները, մտահոգութիւնները, եւայլն), որոնք ձեր մտքին մէջ կը բարձրանան: Ան կը բաժնեկցի ձեզի հետ Իր իմաստութեամբ, եթէ առիթ տաք Անոր, որ յանձնարարութիւններ տայ ձեզի: Շատ անգամ Անոր յանձնարարութիւնը կը հաղորդուի այնպիսի խաղաղութեամբ, որ մարդկային միտքէն վեր է. ասիկա Հոգիին վկայութիւնն է: Սուրբ գիրքը կ'ըսէ.

«Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ վեր է, պիտի պահպանէ ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Յիսուսի մէջ» (Փիլիպպեցիս 4.7):

Մենք Քրիստոս Յիսուսի մէջ ենք, կը նշանակէ՝ մենք կրնանք ունենալ այդ խաղաղութիւնը, որ շատ հազուագիւտ է մեր օրերուն մէջ: Յիսուս Խաղաղութեան Իշխանն է եւ խաղաղութիւն խոստացած է անոնց, որոնք Իր մէջ են: Երբ Սուրբ Հոգին հրաւիրենք՝ մեզի հետ որոշումներ կայացնելու, Ան մշտապէս վկայութիւն կու տայ Յիսուս Քրիստոսի խաղաղութեան միջոցով:

Խաղաղութիւնն ու որոշումներ կայացնելը

Որպէս «Մեսէնճր Ինթընաշընլ» ծառայութեան ղեկավար՝ ես շատ որոշումներ կայացուցած եմ, որոնք միայն Անոր խաղաղութեամբ հաստատուած են: Թերեւս մեր առջեւ դրուած առաջադրանքը անկարելի թուար, բայց Աստուծոյ խաղաղութիւնը թոյլ չէ տուած, որ «Մեսէնճր Ինթընաշընլ»-ի հնարաւորութիւնները սահմանափակեմ իմ մտքով:

Եղած են ժամանակներ, երբ պարզօրէն լսած եմ, թէ ինչպէս Հոգին խօսած է հետս: Օրինակ, երբ կը պատրաստուէի այս գիրքը գրելու, իրականութեան մէջ ես բոլորովին ուրիշ նիւթով գիրք մը գրել կը ծրագրէի: Աղօթքի եւ ծումի ժամանակ Սուրբ Հոգին պատուիրեց ինձի, որ որոշուած նիւթի փոխարէն Անոր զարմանալի Անձին մասին գրեմ:

Իմ որոշումներուն մեծ մասը կ'առաջնորդուի Աստուծոյ խաղաղութեամբ (որ մշտապէս Իր Խօսքին հետ համաձայնած է), ոչ թէ որեւէ անմիջական կարգադրութեամբ: Այնուամենայնիւ, եղած են ժամանակներ, երբ Աստուծոյ Հոգին խօսած է հետս: Ես պարզած եմ, որ սովորաբար ատիկա տեղի կ'ունենայ, երբ Աստուած կ'առաջնորդէ ինձի բոլորովին նոր ուղղութեամբ: Թոյլ տուէք քանի մը օրինակ բերելու:

«Մեսէնճր Ինթընաշընլ» ծառայութեան առաջնային նպատակը՝ տեղական եկեղեցիներուն շինութիւն տալն է: Մենք կը հաւատանք, որ տեղական եկեղեցին Աստուծոյ մեծագոյն մարտավարական միջոցն է՝ կորսուածներուն հասնելու, կարիքաւորներուն յոյս ու մատակարարում տալու եւ ազգերուն աշակերտելու համար: Աւելի, քան 20.000 եկեղեցիներ Հիւսիսային Ամերիկայի մէջ գործածած են մեր դասընթացքները: Տարիներ շարունակ, մեր հիմնական նպատակն էր՝ հասնիլ եկեղեցիներուն Միացեալ Նահանգներու, Քանատայի, Աւստրալիայի եւ Միացեալ Թագաւորութեան մէջ:

Սակայն 2010 թ.-ի Մայիս 31-ին, Աստուած հետս խօսեցաւ, երբ ես Դանիէլին գիրքը կը կարդայի.

- Դուն հաւատարիմ եղար անգլիախօս աշխարհի տեղական եկեղեցիին հասնելու մէջ: Այժմ ես կ'ուղարկեմ քեզի ողջ աշխարհով մէկ՝ դէպի բոլոր ազգերը:

Այդ պահը հրաշալի էր, բայց ես գաղափար անգամ չունէի, թէ ատիկա ինչպէս տեղի պիտի ունենար: Ես մեր ծառայութեան տնօրէնները հանդիպումի մը հրաւիրեցի, պատմեցի այն տեսիլքը, որ Աստուած իմ սրտին մէջ դրած էր, եւ անոնց ըսի, որ 2011 թուականի

ընթացքին ես կը փափաքիմ 250.000 գիրք բաժնել զարգացող երկիրներու քրիստոնէական առաջնորդներուն: Բոլորը ցնցուած էին: Մենք երբեք այդքան գիրք չէինք բաժնած մէկ տարուան ընթացքին: Իմ գլխաւոր գործառնական տնօրէնը եւ այլ բաժիններու տնօրէնները սկսան բազմաթիւ հարցումներ տալ ինծի՝ վիճարկելով այդ ծրագիրը: Վերջապէս, գլխաւոր գործառնական տնօրէնը խնդրեց ինծմէ, որ աղօթքով այդ նպատակը Աստուծոյ առջեւ բերեմ:

Ես Աստուծմէ պարզ լսած էի, որ մենք պէտք է հասնինք հովիւներու՝ ամբողջ աշխարհով մէկ, բայց Աստուած յատկապէս չէր ըսած ինծի, որ առաջին քայլը դէպի այդ նպատակը պէտք է 250.000 գիրք բաժնելը ըլլար եկող տարուան ընթացքին: Այդ պատճառով, ես այդ նպատակը աղօթքով բերի Անոր առջեւ: Անշուշտ, ես խաղաղութիւն զգացի: Սուրբ Հոգին պէտք չունէր խօսելու ինծի հետ լսելի ձայնով, որովհետեւ ես գիտէի, որ այս նպատակը կը համապատասխանէր Անոր սկզբնական ցուցմունքին: Ես զգացի Անոր *վկայութիւնը* այդ հարցին մէջ: Երբ իմ խումբին պատմեցի ասոր մասին, անոնք անմիջապէս սատարեցին իմ տեսիլքը: Անկասկած, Աստուած հրաշալի կերպերով գործեց, եւ այդ տարի մենք կրցանք բաժնել անելի քան 270.000 գիրք 47 երկիրներու մէջ գտնուող հովիւներուն եւ աւագներուն:

2011-ին Պէյրութի՝ Լիբանանի մէջ, իրաքցի հովիւի մը հանդիպեցայ (եւ Մերձաւոր Արեւելքի մէջ էի եւ 2.500 հովիւի եւ աւագի կը քարոզէի): Անոր եկեղեցին ամենամեծն էր քաղաքին մէջ. այդ երիտասարդ հովիւը, որ ընդամէնը երեսունվեց տարեկան էր, ըսաւ ինծի.

-Պարոն Պիվիր, Դուք կարծես իմ հայրը ըլլաք: Ես կարդացած եմ ձեր բոլոր գիրքերը, որոնք որ կրցած եմ գնտել եւ նոյնիսկ իմ պանքի քարտը օգտագործած եմ, որպէսզի ձեր կայքէջէն նիւթեր ներբեռնեմ:

Երբ ան ըսաւ այս խօսքը, ես փափաքեցայ գետինը մտնել: Այս մարդը պատերազմէն կեղեքուած երկրի մը մէջ կ'ապրէր եւ շատ մեծ դրամական դժուարութիւններ ունէր: Այնուամենայնիւ, ան կ'ընէր ամէն ինչ՝ «Մեւէնճր Ինթընաշընլ»ի նիւթերը ձեռք բերելու համար: Այս դէպքը դրոճեց ինծի մէկ անգամ եւս աղաղակելու Աստուծոյ: Ես իմաստութիւն խնդրեցի, որպէսզի կարենամ օգնել այդ տեղական եկեղեցիներուն՝ անոնց առաջնորդները զօրացնելու միջոցով: Հոգիով աղօթելու ընթացքին ես գաղափար մը ստացայ այն մասին, որ մենք կրնանք զարգացող երկիրներու հովիւներուն ոչ միայն գիրքեր, այլ՝ ամբողջական դասընթացքներ տալ: Յաջորդ տարի մենք 1.3 միլիոն նիւթեր բաժնեցինք այդ եկեղեցիներու հովիւներուն եւ աւագներուն: Այդ ժամանակէն ի վեր, նիւթերու քանակը հետզհետէ կ'աւելնար:

Այս խճապատկերի ամենակարեւոր մասը, որ ես Հոգիով աղօթած ժամանակ ստացայ, CloudLibrary.org կայքէջն էր, որ թոյլ կու տար տեղական եկեղեցիներու հովիւներուն եւ աւագներուն, ինչպէս նաեւ անոնց եկեղեցական համայնքներու անդամներուն, անվճար ներբեռնելու միջոցները իրենց մայրենի լեզուներով: 2011թուականին մենք բաժնեցինք ւեյլի քան 270.000 նիւթեր, իսկ այժմ ամէն ամիս այդ թիւը կը բազմապատկուի: Ահա թէ Աստուած ինչպիսի աշխատանք կրնայ տանիլ մեզմով եւ մեր միջոցով, երբ մենք Սուրբ Հոգիին խաղաղութեան *վկայութեան* կը հետեւինք:

Օր 4

Առաջնորդութիւն ստանալը:

Բնագաւառ մը կայ, որ կը թուայ, թէ հաւատացեալներու մեծամասնութեան կը մտահոգէ. խօսքը Աստուծոյ առաջնորդութիւնը ստանալու մասին է: Մարդիկ յաճախ կ'ըսեն ինծի. «Ես չեմ գիտեր, թէ Աստուած ինձմէ ինչ կ'ուզէ»: Յակոբոսը կ'ըսէ, թէ ինչպէս պէտք է վարուինք, եթէ առաջնորդութիւն կը փափաքինք ստանալ. «...եթէ ձեզմէ մէկը իմաստութեան պակաս ունի, թող Աստուծմէ խնդրէ...» (Յակոբոս 1.5): «Իմաստութիւն» բառը յունարէնով «սոփիա»ն է, որ կը սահմանուի որպէս «հասկնալու եւ, որպէս արդիւնք՝ իմաստութեամբ գործելու կարողութիւն»²: Ասիկա կը նշանակէ, որ Աստուծոյ իմաստութեամբ մենք կրնանք նախ՝ հասկնալ, իսկ *յեպոյ՛* գործել:

Ո՛վ է մեզի Աստուծոյ իմաստութիւնը հասկնալու եւ գործադրելու կարողութիւն տուողը՝ Սուրբ Հոգին: Ես այնպիսի հանգամանքներու մէջ եղած եմ, որոնց մէջ իսկապէս առաջնորդութեան պէտք ունէի: Երբ լեզուներով սկսած եմ աղօթել, Աստուծոյ իմաստութիւնը եւ առաջնորդութիւնը բարձրացած են իմ հոգիէս դէպի միտքս: Լեզուներով աղօթքը կը լուսաւորէ մեզ՝ յայտնելով Աստուծոյ առաջնորդութիւնը մեզի համար:

Նորէն Առակաց 20.5-ը կարդանք.

«Մարդու մը սրտին խորհուրդը խորունկ ջուրերու պէս է, բայց խելացի մարդը [կամ՝ կինը] զանիկա դուրս կը հանէ»: Որոշ անգլերէն թարգմանութիւններու մէջ «խորհուրդ» բառի փոխարէն՝ «նպատակ» բառը կը գործածուի: Քրիստոսի մէջ դուք ստացած էք

առաջադրանք կամ նպատակ մը, որ միմիայն ձերն է: Այս նպատակը կ'որոշէ, թէ ինչպէս դուք պէտք է վարուիք, եւ ատիկա պահուած է ձեր սրտին խորքը: Երբ Հոգիով կ'աղօթէք եւ Աստուծոյ խորհուրդը կը բացայայտէք, Ան պիտի յայտնէ ձեր կեանքին նպատակը: Ասիկա մէկ օրուան մէջ չի կատարուիր, այնպէս որ, համբերատար եղէք: Երբ ժամանակ անցընէք Աստուծոյ Խօսքին եւ աղօթքի մէջ, Ան կը յայտնէ ձեր կեանքի նպատակը: Իմ որդիներէն մէկը այսպէս կ'ըսէ. «Աստուածաշունչը՝ մեր քարտէզն է, իսկ Հոգին մեր Զբօսավարը (Առաջնորդը, Guide)»:

Աստուծոյ առաջնորդութեան պարզելը ձեր կեանքի իւրաքանչիւր բնագաւառի համար է: Եթէ ձեր պզտիկներէն մէկը անկառավարելի դարձած է, կեցէք եւ ժամանակ յատկացուցէք՝ Հոգիով աղօթելու համար: Ան ցոյց կու տայ ձեզի, թէ ինչ ընէք: Եթէ պաշտօնեայ էք եւ չէք գիտեր, թէ ինչպէս վարուիք, փակեցէք ձեր գրասենեակին դուռը եւ իմաստութիւն խնդրեցէք Անորմէ, որ ամէն ինչ գիտէ: Ան արդէն ձեր մէջ կը բնակի. այժմ պարզապէս դուրս հանեցէք այն, ինչ որ տակաւին յայտնուած չէ ձեզի: Ան կը փափաքի առաջնորդել ձեզ: Եսայեայ 48.17-ին մէջ գրուած է. «...Ես եմ քու Տէր Աստուածդ, որ քեզի օգտակար եղածը կը սորվեցնեմ, քալելու ճամբուդ մէջ քեզ կ'առաջնորդեմ»: Աստուած կը փափաքի, որ Իր թագաւորութեան համար ձեր նպատակը իրականացնէք, եւ ատիկին՝ Ան կը փափաքի քայլ առ քայլ առաջնորդել ձեզ ատոր մէջ:

Երբեմն մարդիկ կ'ըսեն ինծի. «Ճո՛ն, անիկա պարզապէս չափէն դուրս «հոգեւոր» է, եւ քիչ մը տարօրինակ: Մենք չենք կրնար նման բաներ Աստուծմէ խնդրել: Ան միայն ծառայողական հարցերու մասին կը հոգայ»: Նախ եւ առաջ՝ Աստուծոյ մէջ ոչ մէկ տարօրինակ բան կայ, եւ այդ պատճառով բոլորովին տարօրինակ չէ, եթէ Ան մասնակցութիւն ունենայ մեր կեանքի իւրաքանչիւր բնագաւառին մէջ: Մարդիկ կրնան տարօրինակ ըլլալ, բայց ոչ՝ Աստուած: Նոյնպէս, մենք ոչ մէկ պարագային պէտք է Աստուծոյ խոստումը անտեսենք ընդամենը այն պատճառով, որ որոշ մարդիկ աղաւաղած կամ չարաշահած են Անոր Հոգիին դրսեւորումներէն որեւէ մէկը:

Երկրորդ՝ Աստուած կը պատուիրէ մեզի. «Անդադար աղօթք ըրէք» (Ա. Թեսաղոնիկեցիս 5.17): Շատ քրիստոնեաներ չեն ուսումնասիրած այս խօսքին համահատուածը՝ հասկնալու համար, թէ ինչ կը նշանակէ այդ: Ակնյայտ է, որ Պօղոսը չի փափաքիր ըսել. «Թող ձեր շուրթերը շարժին եւ աղօթեն ամբողջ օրը՝ ամէն վայրկեան»: Ի վերջոյ, Աստուածաշունչը կը պատուիրէ՝ Աւետարանը պատմել

մարդոց եւ մէկս միւսին քաջալերել: Մենք չենք կրնար ոչ առաջինը, ոչ միւսը ընել, եթէ ամէն վայրկեան մեր շուրթերը Աստուծոյ աղօթելով շարժենք:

Իրականութեան մէջ, այս խօսքով Պօղոսը ի նկատի ունի *Աստուծոյ Հոգիին հետ մշտական հաղորդութիւն ունենալ*: Ինչպէս հասնիլ ասոր: Պօղոս կը յայտնէ պատասխանը՝ շարունակելով «Հոգին մի՛ մարէք» (խօսք 19): Անդադար աղօթելը կը նշանակէ՝ երբեք չմարել Սուրբ Հոգիին ներկայութիւնը: Ասիկա կը նշանակէ, որ դուք գիտէք Անոր ներկայութեան մասին եւ Անոր ծայնին հանդէպ զգայուն էք: Այլ խօսքերով, մի՛ մերժէք Անոր մասնակցութիւնը ձեր կեանքին մէջ: Հոգին կը փափաքի ձեր կեանքի իւրաքանչիւր բնագաւառին մէջ ներգրաւուած ըլլալ: Ան կը փափաքի առաջնորդել ձեզ: Ան կը փափաքի մշտական հաղորդութիւն ունենալ ձեզի հետ, որուն շնորհիւ ձեր կեանքին մէջ կ'ըլլան Անոր խաղաղութիւնը, զօրութիւնը եւ առաջնորդութիւնը:

Ես կանչուած չեմ գործարար ըլլալու համար, բայց եթէ կանչուած ըլլայի, ես շատ ժամանակ պիտի անցընէի՝ իմ գործին համար Սուրբ Հոգիով աղօթելով: Անկէ յետոյ ես որոշում պիտի կայացնէի՝ իմ սրտի խաղաղութեան հետեւելով: Երբեք կասկածի մի՛ ենթարկէք Արարիչէն ստանալու ձեր կարողութիւնը պարզապէս այն պատճառով, որ դուք «լրիւ ժամանակուայ ծառայութեան» մէջ չէք: Ան կ'առաջնորդէ ձեր ճանապարհը ճիշդ այնպէս, ինչպէս եւ իմը:

Անձնական աղօթքի ժամանակը

Ես յայտնաբերած եմ, որ իմ աղօթքի ժամանակը շատ աւելի արդիւնաւէտ կ'ըլլայ, երբ Աստուածաշունչ կարդալով սկսիմ: Աստուծոյ խօսքը իմ միտքը կը պարզէ. անիկա կարծես ճամբայ կը բանայ հոգիէս դէպի միտքս: Կարդալէն ետք ես շատ աւելի Սուրբ Հոգիին հետ կապուած կը դառնամ, եւ աղօթքիս ժամանակը յագեցած կ'ըլլայ Անոր յայտնուած ներկայութեամբ:

Ես նոյնպէս յայտնաբերեցի, որ Աստուած արագօրէն Ինքզինքը կը յայտնէ, երբ ես գիտակցաբար Անոր ներկայութիւնը կեանքիս մէջ կը պատուեմ: Երբ սկսիմ խոկալ Անոր մեծութեան եւ բարութեան շուրջ, յանկարծ Սուրբ Հոգին կը յայտնէ Իր Անձը: Ինչո՞ւ: Սաղմոսերգուն այս հարցումին կը պատասխանէ. «Աստուծոյն... պէտք է երկիւղածութեամբ վերաբերին բոլորը, որոնք կը շրջապատեն Անոր»

(Սաղմոս 89.7, NKJV): Եթէ կը փափաքիք Աստուծոյ ներկայութիւնը վերապրիլ, դուք պէտք է երկիւղածութեամբ մօտենաք Անոր: Աստուծոյ ներկայութեան դրսեւորումը ընդհատելու ամենաարագ միջոցը Անոր անարգելն է՝ Անոր Հոգիին սովորականի պէս վերաբերելով:

Երբ Յիսուս Իր աշակերտներուն սորվեցուց (որոնց կարգին նաեւ մենք ենք)՝ ինչպէս աղօթել, Ան սկսաւ՝ ըսելով «Հայր մեր, որ Երկինքն ես, սուրբ ըլլայ Քու անունը» (Մատթէոս 6.9): Ուրիշ ձեւով՝ երբ մենք մեր Հօրը կը մօտենանք, մենք նախ՝ պէտք է Անոր ներկայութեան մէջ մտնենք սուրբ երկիւղով: Երբ այդպէս վարուինք, Սուրբ Հոգին կը յայտնէ Իր ներկայութիւնը, քանի որ Ան գիտէ, որ մենք երկիւղածութեամբ կը վերաբերինք Իրեն: Անոր ներկայութիւնը ողջախոհութիւն, իմաստութիւն, գիտութիւն եւ զօրութիւն կու տայ մեզի: Ան իրապէս մեր Կեանքի Աղբիւրն է: Ինչո՞ւ մենք պէտք է փափաքինք բաժնուիլ Անորմէ:

Հոգիով Բարեխօսել

Ժամանակ մը ես պարբերաբար հովիւի մը հետ կ'աղօթէի, որ իմ ընկերն էր: Աղօթքի ժամանակ մենք յաճախ լեզուներով կը բարեխօսէինք: Մէկ անգամ աղօթած ժամանակ՝ մենք հրահանգներ կու տայինք տարածաշրջանի մը վերաբերեալ Մերձաւոր Արեւելքի մէջ: Յաջորդ օրը մենք գիտցանք, որ Թուրքիայի մէջ խոշոր երկրաշարժ տեղի ունեցած է: Ես համոզուած եմ՝ ընկերս եւ ես այդ ժողովուրդին համար կը բարեխօսէինք: Մենք կապ ունէինք անոնց հետ Հոգիին միջոցով, որովհետեւ նոյն Հոգին կը բնակի բոլոր հաւատացեալներուն մէջ: Աստուած Իր կամքը մեր միջոցով Թուրքիայի մէջ գտնուող մարդոց համար կը հոչակէր:

Այս հոգեւոր բարեխօսութիւնը ծայրաստիճան կարեւոր է Աստուծոյ թագաւորութիւնը տարածելու համար: Թշնամին կ'ատէ այն փաստը, որ մենք կրնանք Աստուծոյ կամքը հոչակել մեր եղբայրներուն եւ քոյրերուն կեանքին մէջ, որոնք մեզմէ շատ հեռու կը գտնուին: Անոր նպատակն է՝ բաժնել եւ մասնատել Եկեղեցին, եւ անոր նախասիրութիւնն է սահմանափակել մեր բարեխօսութիւնը մեր մտաւոր գիտելիքներով:

Թերեւս դուք երբեք չէք հասկցած, թէ որքան կապուած էք ամբողջ աշխարհին մէջ սփռուած հաւատացեալներուն հետ: Բոլորովին հնարաւոր է, որ դուք անսխալաբար բարեխօսէք այլ երկիրներու

մէջ ապրող հաւատացեալներուն համար՝ առանց անոնցմէ որեւէ տեղեկութիւն մը ունենալու:

Մէկ անգամ, երբ Քենիա էի, ես մարդու մը հանդիպեցայ Մասսայի ցեղէն: Աւելի ուշ ան Միացեալ Նահանգներ այցելեց եւ հիւրընկալուեցաւ իմ ընկերներու տունը՝ Փենսիլվանիայի մէջ: Այդ մարդը մնաց ընկերներուս հետ մօտաւորապէս մէկ ամսուան տեւողութեամբ: Քանի մը անգամ ան նորութիւններ պատմեց իրեն հիւրընկալող մարդոց՝ իր ընտանիքի անդամներուն մասին, որոնք Ափրիկէ էին: Ի վերջոյ, տանտիրուհին հարցուց.

- Ուրկէ գիտէք, թէ ինչպէս են ձեր ընտանիքի անդամները: Անոնք նոյնիսկ հեռախօս չունին:

Ան պատասխանեց.

- Պօղոսը գիտէր, թէ Կողոսիայի եւ Կորնթոսի եկեղեցիներուն մէջ ինչ կը կատարուէր, երբ շատ հեռու էր իրենցմէ: Երբ ես Հոգիով կ'աղօթեմ, Տէրը ցոյց կու տայ ինծի, թէ ընտանիքիս անդամներուն հետ ինչ կը կատարուի:

Ան ի նկատի ունէր հետեւեալ աստուածաշնչեան խօսքերը. «Որովհետեւ թէեւ ես մարմնով բացակայ եմ, բայց հոգիով ձեզի հետ եմ եւ կ'ուրախանամ՝ ձեր բարի վարքը տեսնելով...» (Կողոսացիս 2.5), եւ «Թէեւ անձամբ ձեզի հետ չեմ, բայց ես ձեզի հետ եմ Հոգիով» (Ա. Կորնթացիս 5.3 NLT): Պօղոսը կապ ունէր այդ եկեղեցիներուն հետ, եւ տեղեակ էր անոնց գործերուն մասին՝ առանց ֆիզիքապէս ներկայ գտնուելու:

Յաճախ ես գիտցած եմ, որ իմ խումբի անդամներէն կամ գործընկերներէն ուե՛կ մէկը աղօթած է ինծի համար: Երբեմն դժուար եւ վտանգաւոր հանգամանքներու մէջ կ'ըլլամ, երբ յանկարծ Աստուած հրաշքով մը կը միջամտէ: Ես գիտեմ, որ այսպիսի իրավիճակներուն մէջ ինչ որ մէկը իմ պաշտպանութեան համար աղօթած եւ Հոգիով բարեխօսած է ինծի համար:

Հանգիստ

«Եղբայրներ, միտքով տղայ մի՛ ըլլաք... Օրէնքին մէջ գրուած է, թէ՛ «Օտար լեզուներով եւ օտար շրթունքներով այդ ժողովուրդին հետ պիտի խօսիմ...» (Ա. Կորնթացիս 14.20-21):

Հաւանաբար, արդէն ուշադրութիւն ըրիք, որ Պօղոս շատ կը գրէր լեզուներուն մասին Ա. Կորնթացիս 14-րդ գլուխին մէջ: Այս խօսքերուն

մէջ Պօղոսը բառափոխութեան կ'ենթարկէ Եսայեայի խօսքերը, որովհետեւ Եսայեայ 28.11-12-ին մէջ գրուած է.

«Յիրաւի թոթովախօս շրթունքով եւ օտար լեզուով պիտի խօսի Ան այս ժողովուրդին հետ: Ան որ անոնց ըսաւ. «Ասիկա է ձեր յոգնածին հանգստացնելու *հանգստութիւնը*», եւ «Ասիկա է մխիթարութիւնը...»:

Աստուած մարգարէացաւ Եսայեայ մարգարէի միջոցով, որ լեզուներով խօսիլը հանգիստ պիտի պարգեւէ: Մէկ անգամ ընկերներէս մէկը, որ մեծ եկեղեցիի հովիւ է, կը խօսէր մէկ ուրիշ եկեղեցւոյ հովիւի հետ: Երկրորդ հովիւը ըսաւ ընկերոջս.

-Ես կը պատրաստուիմ ձգելու ծառայութիւնը: Ես յոգնած եւ ուժասպառ եղած եմ: Ես թուցած եւ տկարացած եմ:

- Դուն դադրեցուցած ես Սուրբ Հոգիով աղօթելը, այնպէս չէ՛,- պատասխանեց ընկերս:

- Տէ...- կմկմաց այդ հովիւը:

-Որքա՛ն ժամանակ կ'անցընես Հոգիով աղօթելով,- շարունակեց ընկերս:

Միւս հովիւը դեռ չէր փափաքեր խոստովանիլ եւ ըսաւ.

-Տէ, ես միշտ քարոզներ կը պատրաստեմ եւ շատ գործեր ունիմ 15.000 անդամ ունեցող եկեղեցիին մէջ, եւ...

- Դուն կ'աղօթե՛ս Հոգիով,- կրկին հարցուց ընկերս:

Ի վերջոյ, այդ հովիւը պատասխանեց.

-Ո՛չ. ես իսկապէս անկեղծ կ'ըլլամ քեզի հետ՝ ո՛չ:

- Սկսիր աղօթել լեզուներով,- ըսաւ ընկերս:

Կարճ ժամանակ ետք այդ հովիւը, որ ժամանակ մը թուցած եւ տկարացած էր, այլեւս չէր փափաքեր հեռանալ ծառայութենէն: Այսօր թէ՛ ան, եւ թէ՛ անոր եկեղեցին ծաղկունք կ'ապրին:

Ինչո՞ւ այդքան կարեւոր է, որ հովիւները լեզուներով աղօթեն: Մենք գերբնական հանգիստ եւ վերականգնում կը ստանանք, երբ Հոգիով աղօթենք:

Ինչպէ՛ս սօքթոր Չօն կրնայ 800.000 անդամ ունեցող եկեղեցին առաջնորդել եւ երբեք չսպառիլ: Ան Հոգիով կ'աղօթէ: Ես չեմ կրնար մտաբերել հովիւ մը, որուն ուսերուն աւելի շատ ճնշում եւ պատասխանատուութիւն կայ, քան սօքթոր Չօն: Անոր եկեղեցին բոլորովին վերափոխեց Հարաւային Քորիան,

Եւ ան ամենայարգարժան հովիւներէն մէկն է ամբողջ աշխարհի տարածքին: Ուեւ մէկ տղամարդու կամ կնոջ համար անկարելի կ'ըլլար կրել այս ծանրութիւնը սեփական կարողութեամբ, բայց ես գիտեմ, որ տօքթոր Չօն չի յենիր իր մտքին վրայ: Ան առաջնային կը համարէ իր աղօթքի ժամանակը եւ ամէն օր ժամեր շարունակ Հոգիով կ'աղօթէ: Աղօթքի ժամանակը մեծ զօրութիւն եւ հանգիստ կու տայ անոր:

Լէսթըր Սամրալը հզօր ծառայող էր: Քանի մը անգամ անոր հետ ժամանակ անցընելու արտօնութիւն ունեցած եմ: Տօքթոր Սամրալը ընդամէնը չորս ժամ կը քնանար եւ կրնար միաժամանակ չորս գիրք գրել: Ան անելի շատ ուժ ունէր, քան իր ծառայողական անձնակազմի անդամները (որոնք անելի երիտասարդ էին անորմէ) եւ շատ երիտասարդ քարոզիչներ: Ուրկէ՞ անոր այդ ուժերը. ան շատ ժամանակ կ'անցընէր Հոգիով աղօթքի մէջ:

Կը խնդրեմ, հասկցէ՞ք, որ մենք երբեք պէտք չէ չարաշահենք մեր մարմինները: Աստուած պարզօրէն կը պատուիրէ մեզի՝ պատուել եւ պահել Շաբաթ օրը: Բոլորս ալ պէտք է հանգիստ տանք մեր մարմիններուն: Ես կոլֆ կը խաղամ, որովհետեւ անիկա կը հեռացնէ ուշադրութիւնս աշխատանքէն եւ կը թարմացնէ միտքս ու մարմինս: Այդ խաղը հանգիստի հրաշալի աղբիւր է ինձի համար: Բայց Շաբաթ օրուան հանգիստը պահելու հետ մէկտեղ, Հոգիով աղօթքը հանգստութիւն կը պարգեւէ մեր մարմնին եւ անձին: Դժբախտաբար, շատերը ժամանակէն շուտ սպառած են, քանի որ հանգիստ չեն գտած Հոգիին մէջ:

Օր 5

Մեր ներսի մարդը

«Լեզուով խօսողը իր անձը կը շինէ» (Ա. Կորնթացիս 14.4)

«Շինել» բառը յունարէնով «*օյկոյոմիօ*»ն է, որ բառացիօրէն կը նշանակէ. «կառուցել կամ շինել»³: Երբ Հոգիով կ'աղօթենք, մենք կ'աւելցնենք մեր կարողութիւնը, որ մեր ներսն է՝ Աստուծոյ

ներկայությունը եւ զօրութիւնը տեղաւորելու համար: Յիսուս նոյն յունարէն բառը օգտագործեց, երբ ըսաւ. «Արդ, ով որ այս Իմ խօսքերը կը լսէ եւ կը գործադրէ զանոնք, նման է իմաստուն մարդու մը, որ իր տունը կը շինէ [օյկոյրոսիօ] վէմի վրայ» (Մատթէոս 7.24, NIV):

Նմանապէս, Աստուած Յուդայի միջոցով կ'ըսէ.

«Բայց դուք, սիրելիներ, ձեր անձերը ձեր սուրբ հաւատքին վրայ շինեցէք՝ Սուրբ Հոգիով աղօթք ընելով» (Յուդա 20):

Կը յիշեմ, որ ընկերներէս մէկուն որդին ծանր հիւանդացած էր: Բժիշկները չէին կրնար հասկնալ, թէ պզտիկին հետ ինչ կը կատարուէր, իսկ ընկերս չէր գիտեր՝ ինչ ընէր: Ի վերջոյ ան իր գրասենեակը գնաց եւ հինգ ժամ Սուրբ Հոգիով աղօթեց: Ան գրասենեակէն դուրս ելաւ, տուն եկաւ ինքնաշարժով եւ անմիջապէս իր որդիին ննջասենեակը մտաւ: Մեծ իշխանութեամբ ան իր որդիին պատուիրեց անկողինէն վեր ելլել: Այդ պահէն ետք անոր որդին բոլորովին բժշկուեցաւ: Ինչ տեղի ունեցաւ: Այն ժամերը, որ ընկերս Հոգիով աղօթելուն տրամադրեց, անցուցին անոր կարողութիւնը՝ բարեխօսելու եւ իր որդիին ծառայելու համար: Այն ամէնը, ինչ մենք Աստուծմէ կը ստանանք, հաւատքով է: Պարզապէս ուրիշ ճանապարհ չկայ: Հոգիին հետ անցուցած այդ ժամանակը մեր կարողութիւնը կ'անցնէ՝ Աստուծոյ խոստումները եւ յայտնուած ներկայութիւնը ստանալու համար, որովհետեւ Հոգիով աղօթքը շինութիւն կու տայ մեր ներսի մարդուն

Աւելի խորունկ երկրպագութիւն

«Մեր երկնային լեզուով աղօթելը հնարաւորութիւն կու տայ մեզի՝ փառաբանելու եւ երկրպագելու Աստուծոյ անելի խորունկ մակարդակի վրայ: Պօղոս կը գրէ.

«Եթէ դուն հոգիով օրհնութիւն ընես, անիկա որ տգէտի պէս կայներ է, ինչպէս «ամէն» պիտի ըսէ քու գոհութիւն տալու ատենդ, վասնզի ան քու ըսածդ չի հասկնար: *Թէպէտ դուն աղէկ օրհնութիւն կ'ընես...*» (Ա. Կորնթացիս 14.16-17):

Պօղոս կը խօսի խմբային փառաբանութեան մասին եւ կը նշէ, որ երբ «Հոգիով կ'օրհնենք» (լեզուներով Աստուծոյ կը փառաբանենք), մենք մեր քովինն ոչ մէկ օգուտ կու տանք: Քանի որ լեզուներով փառաբանելը անձնական արտայայտութիւն է, անիկա շինութիւն կու տայ անձին, ոչ թէ խումբին: Պօղոսը Աստուծոյ լեզուներով փառաբանելը չ'արժեզրկեր: Անիկա պարզապէս կ'ըսէ, որ անոր համար կայ տեղ եւ ժամանակ:

Ուշադրութիւն դարձուցէք, թէ ինչպէս Պօղոս կ'եզրափակէ իր խօսքը. «Թէպէտ դուն աղէկ օրհնութիւն կ'ընես»: Երբ մենք լեզուներով Աստուծոյ կը փառաբանենք, մենք Հոգիին լիարժէք կերպով թոյլ կու տանք Աստուծոյ հրաշալիքները եւ առեղծուածները մեր միջոցով մեծարելու:

Երկրպագութեան աւելի խորունկ մակարդակ կայ. այդ տեսակի երկրպագութիւնը տեղի կ'ունենայ, երբ մենք երկնային լեզուով Աստուծոյ կը փառաբանենք: Ահա թէ ինչու Պօղոսը եւ Հոգիով, եւ միտքով կ'երգէ (տես Ա. Կորնթացիս 14.15):

Իրաքանջիւր անձ կրնայ Հոգիով լեցուիլ

Իմ սիրտը կը տրտմի, երբ քրիստոնեաները կ'անարգեն ուրիշ հաւատացեալներ այն պատճառով, որ անոնք լեզուներով չեն խօսիր կամ չեն աղօթեր: Այդ եղբայրները եւ քոյրերը պարզապէս Քրիստոսի մէջ դեռ չեն վերապրած Հոգիին այս զարմանալի պարգեւը: Պէտք չէ ամչցնել կամ թերազնահատել անոնց, որովհետեւ բոլորս մէկ ենք Քրիստոսի մէջ:

Ինչպէս նախորդ գլուխին մէջ նշեցինք, լեզուներով խօսելու պարգեւը հասանելի է իրաքանջիւր հաւատացեալի, եւ անոնք, որոնք դեռ լեզուներով չեն խօսիր, չեն զրկուած այս խոստումէն: Յիսուս ըսաւ. «Անոնք, որ կը հաւատան, այս նշանները անոնց հետ պիտի երթան... նոր լեզուներ պիտի խօսին...» (Մարկոս 16.17): Պօղոս ըսաւ. «Կ'ուզեմ, որ դուք *ամէնքդ* լեզուներ խօսիք» (Ա. Կորնթացիս 14.5): Աստուած սրտանց կը փափաքի, որ Իր բոլոր զաւակները մեր երկնային լեզուներու զարմանալի առաւելութիւնները վայելեն:

Սուրբ Հոգին ինչպէս ընդունիլ

Մինչեւ շարունակելը, նախ թոյլ տուէք, որ նշեմ, թէ իմ ընկերներէն շատերը Հոգիին լեցունութիւնը ընդունած են ինքնաշարժի, տունի եւ նոյնիսկ իրենց գրասենեակներուն մէջ: Մենք պէտք է միայն խնդրենք, եւ մեր երկնային Հայրը Իր Հոգին կու տայ մեզի: Եթէ դուք արդէն խնդրած էք այս պարգեւը, ապա պէտք է պարզապէս սորվիլ, թէ ինչպէս յանձնուիլ ասոր:

Նախ եւ առաջ, մինչեւ կարենաք ընդունիլ Սուրբ Հոգիին լեցունութիւնը, դուք պէտք է Յիսուս Քրիստոսը ընդունիք՝ որպէս ձեր Տէր եւ Փրկիչ: Յիսուս ըսաւ, որ այս աշխարհը (անոնք, որոնք փրկութիւնը չեն ընդունած) չի կրնար Սուրբ Հոգին ընդունիլ (տէս Յովհաննէս 14.17): Եթէ դուք Յիսուսը չէք ընդունած՝ որպէս ձեր կեանքին Տէր, դուք ճիշդ հիմա կրնաք հնազանդիլ Իր իշխանութեան: (Եթէ կը փափաքիք գիտնալ, թէ ինչպէս ընել աստիկա, կարդացէք Յաւելուածը):

Եթէ դուք արդէն Աստուծոյ զաւակ էք, բայց ձեր կեանքին մէջ *գիտակցուած* եւ շարունակական մեղք կայ, անիկա կը խոչընդոտէ, որ Հոգիին լեցունութիւնը վայելէք: Աստուած կու տայ Սուրբ Հոգին «Իրեն հնազանդողներուն» (Գործք 5.32): Ասիկա չի նշանակեր, որ դուք պէտք է կատարեալ ըլլաք, այլ՝ պարզապէս պէտք է խոնարհեցնէք դուք ձեզ Անոր առջեւ՝ նուիրուած ըլլալով Անոր կամքին: Երբ խոնարհեցնէք դուք ձեզ, Աստուած Իր շնորհքը կու տայ, որպէսզի յաղթահարէք մեղքի որոգայթները, եւ դուք մէկ անգամ եւս պատրաստ կ'ըլլաք Հոգիին լեցունութեան համար:

Անհնազանդութեան մեծագոյն որոգայթներէն մէկը շատ հաւատացեալներու կեանքին մէջ՝ վիրաւորանքն է: Դուք պէտք է գիտակցաբար ներէք անոնց, որոնք սխալ վարուած են ձեր հանդէպ: Ես նկատած եմ, որ երբ վիրաւորուած հաւատացեալը կը փափաքի Հոգիին լեցունութիւնը ընդունիլ, կը ներէ, Հոգին անմիջապէս կը յայտնէ Ինքզինք. ասիկա օրինաշափութիւն է՝ առանց բացառութեան: Ճիշդ հիմա պահ մը կեցէք. ներեցէք անոնց, որոնք սխալ ձեռով վարուած են ձեզի հետ, եւ խնդրեցէք Աստուծմէ, որ ձեզի տայ Իր սրտի վերաբերմունքը անոնց հանդէպ: (Ես մանրամասնօրէն վիրաւորանք թեման կը քննարկեմ իմ «Սաղանայի խայծը» գիրքին մէջ):

Պարզապէս հաւատքով խնդրեցէ՛ք...

«Ձեզմէ ղվ է այն հայրը, որմէ իր որդին հաց ուզէ, միթէ քմր պիտի տայ անոր. կամ եթէ ձուկ ուզէ, միթէ ձուկին տեղ զձ պիտի տայ անոր. կամ եթէ հաւկիթ ուզէ, միթէ կարի՛ճ պիտի տայ անոր: Ուստի եթէ դուք չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, որչա՛մի անելի ձեր Հայրը երկնքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ Իրմէ կը խնդրեն» (Ղուկաս 11.11-13):

Ոմանք սորվեցուցած են, որ խնդրելով Սուրբ Հոգին՝ դուք կրնաք չար հոգի ստանալ: Յիսուսին խօսքերը պէտք է բոլորովին այդ վախը փարատեն: Աստուած ամէն *բարի* եւ *կապարեալ* պարգեւները տուողն է (տե՛ս Յակոբոս 1.17): Եթէ դուք Հօրմէն Սուրբ Հոգին կը խնդրէք, Ան դեւ չի տար ձեզի: Ան իր Հոգին կու տայ ձեզի: Այնպէս որ, մի՛ վախնաք բանալու ձեր սիրտը՝ Անոր Հոգիով լեցուելու համար:

Ձեր սիրտը Սուրբ Հոգիին առջեւ բանալէն ետք մի՛ ակնկալէք, որ Ան ձեր լեզուէն կը բռնէ եւ կը ստիպէ, որ խօսիք: Ան ազատ կամք տուած է ձեզի: Հոգին ազնուական է (ճենթըլմէն), որ երբեք չի ստիպեր ձեզի: Սատանան կը ստիպէ, բայց Սուրբ Հոգին կ'առաջնորդէ: Հոգին կու տայ ձեզի բառեր (թերեւս ամէն ինչ կը սկսի վանկերէ, հնչիւններէ կամ կմկմոցի նմանող բառերու կապակցութիւններէ), բայց դուք պէտք է յանձնէք Անոր ձեր շուրթերը, լեզուն եւ ձայնալարերը: Այդ ժամանակ երկնային լեզուն կը սկսի ձեր հոգիէն բխիլ: Թերեւս սկիզբը դուք միայն մէկ վանկ արտաբերէք, բայց եթէ հաւատքով այդ վանկը խօսիք, կու գայ անելին: Այն ամէնը, ինչ որ մենք Աստուծմէ կը ստանանք, հաւատքով է, եւ լեզուներու պարգեւը բացառութիւն չէ: Պարզապէս խօսեցէ՛ք այն, ինչ որ Հոգին կու տայ ձեզի հաւատքով, թէկուզ կմկմացող շրթունքներով սկսիք, բայց այն, ինչ որ կ'արտաբերէք, լիովին ձեւաւորուած լեզու պիտի դառնայ:

Անելի բարձր մակարդակներ

Վերջին երկու գլուխներու մեծամասնութիւնը լեզուներու պարգեւին նուիրեցի յատուկ նպատակով: Ես համոզուած եմ՝ Աստուած կը ցանկայ, որ մենք երկնային լեզու ունենանք, որ անելի խորունկ մակարդակով կապ կը հաստատէ Իր եւ Իր ժողովուրդին հետ՝

Իր թագաւորութեան նպատակներուն համար: Սուրբ Հոգին կը փափաքի, որ բոլորը ճանչնան Յիսուսը: Երբ մենք աւելի մտերմանանք եւ աւելի սերտօրէն համագործակցինք Անոր հետ, Ան կը բարձրացնէ մեր հայեացքը եւ ցոյց կու տայ այս աշխարհը նոր լոյսով: Մենք կը տեսնենք, որ այս յուսահատ աշխարհը Քրիստոսին պէտք ունի, բայց նոյնպէս կը տեսնենք եւ կ'իմանանք Անոր Հոգիով, թէ որն է մեր դերը՝ Քրիստոսը յայտնելու մէջ:

Յոյսով եմ՝ ձեզի համար հաճելի էր այս ներածութիւնը Աստուծոյ Հոգիին մասին: Այն ամէնը, ինչ դուք սորվեցաք այս գլուխներուն ընդմէջէն, իրականութեան մէջ Անոր անսահման, յաւիտենական, անզուգական եւ հրաշալի էութեան փոքրիկ մասնիկն է: Ան կը փափաքի ամէն օր ձեզ աւելի բարձր մակարդակներու վրայ տանիլ: Ես կը քաջալերեմ ձեզ, որ ժամանակ առ ժամանակ կրկին այս գիրքը կարդաք, որպէսզի Հոգին կարենայ ձեր սիրտը արթնցնել՝ Իրեն նոր ձեւով եւ աւելի խորունկ մակարդակի վրայ ճանչնալու համար:

Սուրբ Հոգին ուրախութիւն կ'ապրի՝ Յիսուսը ձեզի յայտնելով: Պատուեցէք Անոր ներկայութիւնը եւ հրաւիրեցէք Ձինք ձեր կեանքի իրաքանչիւր բնագաւառի, ոչ թէ միայն «հոգեւոր» բնագաւառներու մէջ: Ան խոստացած է երբեք չձգել եւ չլքել ձեզ, այնպէս որ վայելեցէք այդ զարմանալի խոստումը ամէն օր եւ ամէն վայրկեան: Կարդալով Աստուծոյ Խօսքը եւ ժամանակ անցընելով Անոր ներկայութեան մէջ՝ դուք աւելի ու աւելի մտերմօրէն պիտի ճանչնաք Հոգին: Կայ ոգեշնչող լուր. Անոր ճանչնալու ընթացքը անվերջ է: Միշտ կ'ըլլայ աւելին, որ Ան կը փափաքի յայտնել ձեզի: Մի՛ բաւարարուիք անորմով, ինչ լսած, տեսած կամ իմացած էք: Մարտահրաւէր նետեցէք ձեր մտքի սահմաններուն՝ թոյլ տալով, որ Յիսուս Քրիստոսի Հոգին իշխէ ձեր կեանքին մէջ: Ես համոզուած եմ՝ եթէ այդպէս վարուիք, դուք կը տեսնէք Աստուծոյ փառքը եւ մեծութիւնը ձեր կեանքին մէջ, ինչպէս երբեք:

Սերտողութիւն. Օր 1

Հոգիով աղօթքը... ԴՌՈՒ ԿԸ ԲԱՆԱՅ ԱԻԵԼԻ ԽՈՐՈՒՆԿ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«Եթէ դուք անձնական լեզուներով Աստուծոյ կը փառաբանէք, Ան կը հասկնայ ձեզի..., որովհետեւ դուք մերերմարար կը շփուիք Անոր հետ»:

— Ա. Կորնթացիս 14.2, MSG

Հոգիին լեզուով աղօթելու մեծագոյն օրհնութիւնը՝ աւելի խորունկ մտերմութիւնն է Աստուծոյ հետ: Արարչագործութեան Տէրը այնքան կը ցանկայ շփուիլ եւ հաղորդութիւն ունենալ մեզի հետ, որ Իր Հոգին մեր հոգիներուն մէջ դրաւ՝ զօրացնելով մեզ, որպէսզի հաղորդակցինք Անոր հետ Իր մակարդակին համեմատ: Որքան զարմանալի է: Հովիւ **Քենըթ Հեկըն Ասագը** կը գրէ.

«Աստուած Հոգի է: Երբ լեզուներով կ'աղօթենք, մեր հոգին անմիջական կապի մէջ կը մտնէ Աստուծոյ հետ, որ Հոգի է: Մենք կը խօսինք Անոր հետ աստուածային, գերբնական միջոցով: ...Այլ լեզուներով խօսիլը ոչ միայն Սուրբ Հոգիին լեզունութեան *սկզբնական* վկայութիւնն է, այլ նոյնպէս *շարունակական* փորձառութիւն է, որ կը տեւէ մինչեւ մեր կեանքին վերջը: Ատոր նպատակն է օգնել մեզի՝ Աստուծոյն երկրպագելու մէջ:

Առ Աստուած լեզուներով աղօթելն ու Անոր երկրպագելը մեզի կ'օգնէ՝ մշտապէս գիտակցելու մեր ներսը բնակուող Անոր ներկայութիւնը: Եթէ ես կարենամ իմ ներսը բնակուող Աստուծոյ ներկայութիւնը ամէն օր գիտակցիլ, ատիկա անպայման իմ կեանքի ոճին վրայ պիտի ազդէ»¹:

Հոգիով աղօթելու ժամանակ մենք կ'աղօթենք ոչ թէ մեր մտքով, այլ՝ Աստուծոյ մտքով: Անոր Հոգին մեր միջոցով Աստուծոյ կատարեալ կամքը կ'աղօթէ:

Ամէն օր Հոգիով աղօթելն ու Աստուծոյ Խօսքով սնուիլը շատ կարեւոր են, որովհետեւ այսպէս մենք մտերմօրէն Անոր հետ կը կապուինք: Արդե՞՞ք Աստուծոյ հետ ամէն օր կը հաղորդակցիք. եթէ

այո, ապա ո՞ր եւ որքա՞ն ժամանակով: Ինչպէ՞ս Հոգին ցոյց տուած է ձեզի Իր խորունկ եւ անձնական սէրը:

Եթէ դուք աղօթքի համար ժամանակ եւ վայր չունիք, աղօթեցէք եւ հարցուցէք Սուրբ Հոգիին, թէ ո՞ր եւ ե՞րբ Ան կը փափաքի հանդիպիլ ձեզի հետ՝ յայտնելու Իր խորունկ սէրը:

Արդե՞ծք անտեսած կամ անարգած էք լեզուներով խօսելու պարգեւը: Եթէ այո, ապա ինչո՞ւ: Արդե՞ծք այս դասը օգնեց ձեզի դիտարկելու Հոգիի լեզուն դրական լոյսի տակ:

Եթէ դուք անտեսած կամ անարգած էք լեզուներու պարգեւը, խնդրեցէք Աստուծմէ, որ ներէ եւ նոր ձեռով լեցնէ ձեզ Իր Հոգիով:

Ոմանք կը դժուարանան իրենց աղօթքի լեզուները գործածելու մէջ, որովհետեւ ընդամէնը մէկ կամ երկու բառ ունին: Արդե՞ծք ասիկա ձեզի կը վերաբերի: Եթէ այո, պատկերացուցէք, որ Հոգին մեղմօրէն կ'ըսէ. *«Ես կը սիրեմ քեզ: Պիտի գործածեն այն, ինչ որ ես փուած եմ քեզի: Արդե՞ծք պիտի սիրես եւ պիտի պատուես Ձիս՝ խօսելով այն բառերը, որ ունիս: Թէ՛ն ափոնք քիչ են, բայց յափուկ են Իմ եւ քու միջեւ»:*

Մի համեմատէք ձեր աղօթքի մտերիմ լեզուն այլ մարդոց լեզուներուն հետ: Եղէք այն բառերուն տնտեսը, որ Հոգին տուած է ձեզի: Երբ դուք հաւատարիմ ըլլաք քիչի մէջ, Ան պիտի տայ ձեզի աւելին՝ տնտեսելու համար: **Կարդացէք** Մատթէոս 25.14-23-ը՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով 20-23 խօսքերուն:

Սերտողութիւն. Օր 2

Հոգիով աղօթքը... ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԷ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

*«Գիտութիւնը երկինքի թագաւորութեան խորհուրդներու մասին
տրուած է ձեզի: ...Անոնք, որոնք կը հասկնան այս խորհուրդները,
աւելի շար գիտութիւն կը սրանան, եւ անոնք գերազանցութեան կը
հասնին՝ հասկնալով ապոնք...»:*

— Մատթէոս 13.11-12, GW

Յիսուս ըսաւ, որ դուք հնարաւորութիւն ստացած էք՝ հասկնալու
Իր թագաւորութեան գաղտնիքները եւ խորհուրդները: Ինչպէս կը
ստանաք եւ կը հասկնաք այս գաղտնիքները. բնակելով Իր Հոգիին
հաղորդութեան մէջ: Աստուծոյ խորհուրդները կը յայտնուին, երբ
դուք Հոգիով կ'աղօթէք եւ ժամանակ կ'անցընէք Անոր հետ:

Օգվալթ Չէմպրըսը հեղինակ եւ քարոզիչ էր. բացի այդ՝ ան
մտերմօրէն Աստուծոյ նուիրուած էր: Իր յայտնի գիրքին մէջ, որ կը
կոչուի «Այն ամէնը, ինչ որ կրնամ՝ Անոր փառքին համար», ան կը
գրէ.

«Ո՞րն է ընկեր ըլլալու նշանը: Որ ան կը պատմէ ձեզի իր ծածուկ
ցաւերը: Ո՛չ, այլ ան որ կը պատմէ ձեզի իր ծածուկ ուրախութիւնները:
Շատերը կը վստահին ձեզի իրենց ծածուկ ցաւերը, բայց մտերմութեան
վերջին նշանը՝ ծածուկ ուրախութիւնները վստահին է»²:

Ո՞րն է Աստուծոյ ամենազարմանալի խորհուրդներէն մէկը, որ
Հոգին յայտնած է ձեզի: Ինչո՞ւ անիկա յատուկ է ձեզի համար:

Արդեօք Հոգիին հետ կը կիսուիք ձեր անձնական միտքերով,
զգացումներով եւ ցանկութիւններով: Արդեօք երբեք կը խօսիք Անոր
հետ ձեր մեծ երազանքներուն կամ վախերուն մասին: Ընկերները
այսպիսի նիւթերով կը խօսին: Կեցէք եւ Անոր հետ կիսուեցէք այն
բանով, որ արժէքաւոր է ձեզի համար, որ դուք նախկին օրերուն չէիք
պատմած կամ երկար ժամանակ է, որ չէիք յիշատակած:

Եթե դուք մտերմորեն չէք գրուցեր Հոգիին հետ, ապա ինչն է պատճառը: Խնդրեցէք Սուրբ Հոգիէն, որ ցոյց տայ, թէ ինչը կը խոչընդոտէ ձեզի, եւ օգնէ, որ ազատօրէն ձեր սիրտը բանաք Անոր առջեւ:

Աստուծոյ հետ հաղորդակցութիւնը միայն խօսիլը չէ, այլ նոյնպէս՝ *լսելը*: Շփումի այս երկու կողմերը հաւասարակշռուած պէտք է ըլլան: Եթէ ժամանակ չատկացնենք լսելու համար, մենք չենք լսեր, թէ Հոգին ինչ կ'ըսէ: Չէմպըրսը կը շարունակէ.

«Արդեօք երբեք թոյլ տուած ենք, որ Աստուած պատմէ մեզի Իր ուրախութիւններէն որեւէ մէկը, թէ՛ այնքան շատ Աստուծոյ կը պատմենք մեր գաղտնիքները, որ Ան մեզի հետ խօսելու հնարաւորութիւն չ'ունենար: Մեր քրիստոնէական կեանքի սկիզբը այնքան բան կը խնդրենք Աստուծմէ, սակայն յետոյ կը պարզենք, թէ Աստուած կը փափաքի, որ սկսինք հաղորդակցիլ Իր հետ եւ ծանօթանանք Իր նպատակներուն: Արդեօք մենք այնքան նուիրուած ենք Յիսուս Քրիստոսի այս աղօթքի գաղափարին՝ «Քու կամքը ըլլայ», որ կը որսանք Աստուծոյ գաղտնիքները»³:

Աստուած կ'ըսէ, որ ամէն ինչի համար ժամանակ կայ, ինչ կը նշանակէ, որ աղօթքի մէջ կայ խօսելու եւ լռելու ժամանակ (տե՛ս Ժողովողի 3.1-7): Հարցուցէք Հոգիին. «Արդեօք ես անդադար կը խօսիմ աղօթքի ժամանակ: Արդեօք կը գողնամ ժամանակդ, երբ Դուն կը փափաքիս խորհուրդներդ յայտնել: Արդեօք Դուն փորձած ես ինչ որ բան մը ըսել ինծի, որ ատիկա լսելու համար ես բաւականաչափ լուռ չեմ մնացած: Եթէ այո, ապա ինչ»: Լուռ մնացէք եւ լսեցէք: Սուրբ Հոգին ինչ կ'ըսէ ձեզի:

Ասիկա իմ աղօթքն է: «Որ Աստուած... ձեզի հոգեւոր իմաստութիւն եւ խորթափանցութիւն տայ՝ Անոր մասին ասելին գիրնաւորու համար, որ դուք կարենաք Հոգիին այդ ներքին լուսաւորումը ստանալ, որ կը դրդէ ձեզի՝ գիրակցելու, թէ որքան մեծ է այն յոյսը, որ Ան ձեզի կը կանչէ, այն ժառանգութեան մեծութիւնը եւ ճոխութիւնը, որ խոստացուած է քրիստոնէականներուն, եւ որքան մեծ է այն զօրութիւնը, որ հասանելի է մեզի, բոլոր անոնց, որոնք Աստուծոյ կը հաւատան»:

— (Եփեսացիս 1.17-19, Ֆիլիպսի թարգմանութիւն)

Հոգիով աղօթքը... ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՌԱՋԱՅՆԷ ՄԵՐ ՆԵՐՍԸ

*«Բայց Սուրբ Հոգին այսպիսի պրոտի կը յառաջացնէ
մեր կեանքերուն մէջ. ...խաղաղութիւն...»*

— Գաղատացիս 5.22, NLT

Ինչ է խաղաղութիւնը: Երբեմն որեւէ երեւոյթ հասկնալու համար, անհրաժեշտ է իմանալ, թէ այն ինչ չէ: Ճշմարիտ խաղաղութիւնը, որ Յիսուս կու տայ Իր Հոգիով, չի նշանակեր՝ ունենալ մեծ պանքային հաշիւ, կատարեալ առողջութիւն, գեղեցիկ տուն, ճոխ ունեցուածք, կամ փոխյարաբերութիւններ՝ առանց բախումներու:

Ճշմարիտ խաղաղութիւնը՝ Աստուծոյ խաղաղութիւնը, չի սահմանափակուիր արտաքին հանգամանքներով կամ պայմաններով: Անիկա կայունութիւն է՝ դժուարութիւններու մէջ: Անիկա զգացմունքային կերպով, ֆիզիքապէս եւ հոգեւորապէս հանդարտ եւ սթափ մնալու կարողութիւնն է՝ խնդիրներու մէջ:

Կեցէք եւ դուք ձեզի հարցուցէք. *«Ես խաղաղութիւնը ինչպէ՞ս կը պատկերացնեմ: Ի՞նչի վրայ խարսխուած է իմ խաղաղութիւնը: Ինչպէ՞ս խաղաղութեան մասին իմ պատկերացումը կը տարբերի Հոգիին ճշմարիտ խաղաղութենէն: Ես ինչ պէտք է փոխեմ»:*

Քրիստոսի զոհին շնորհիւ՝ մենք *Աստուծոյ հետ* խաղաղութիւն ունինք: Շնորհիւ Սուրբ Հոգիին լեցունութեան՝ մեզի տրուած է *Աստուծոյ* խաղաղութիւնը: Յիսուս ըսաւ.

«Ես ձեզի հետ խաղաղություն կը թողում, Ես Իմ խաղաղությունը կու տամ ձեզի, եւ Իմ պարգեւը բոլորովին չի նմանիր այս աշխարհի խաղաղութեան: Դուք պէտք չէ մտահոգուիք եւ վախնաք»:

— (Յովհաննէս 14.27, Ֆիլիպսի բարգմանութիւնը)

Ինչ պէտք է ընենք այն խաղաղութեամբ, որ ստացած ենք Խաղաղութեան Իշխանէն:

«Եւ թոյլ տուէ՛ք, որ խաղաղութիւնը (անձի ներդաշնակութիւնը, որ կու գայ) Քրիստոսէն, իշխէ (վարուի մարզական դատարարի պէս) ձեր սրտերուն մէջ [որոշելով եւ վերջնականապէս պարզելով բոլոր այդ հարցերը, որոնք ձեր մտքերուն մէջ կը յառաջանան, այդ խաղաղ վիճակին մէջ], որուն համար, որպէս մէկ մարմին [Քրիստոսի մարմնին անդամները], դուք նոյնպէս կանչուած էք [ապրելու]:»:

— (Կողոսացիս 3.15, AMP):

Պատկերացուցէ՛ք, որ հարուածող էք պէյսպոլ խաղի ժամանակ եւ կեցած էք ձեր դիրքին մէջ: Խաղաղութեան Դատաւորը ձեր ետեւն է, իսկ իւրաքանչիւր գնդակ, որ կը նետեն ձեզի՝ այն որոշումն է, որ դուք պէտք է կայացնէք: Այժմ կրկին անգամ ուշադիր կարդացէ՛ք Կողոսացիս 3.15-ը: Որքան կարեւոր են մարզական դատաւորի հրահանգները: Սուրբ Հոգին ինչ ցոյց կու տայ ձեզի. ինչպէ՛ս պէտք է թոյլ տաք Անոր՝ ըլլալու ձեր Խաղաղութեան Դատաւորը:

Գլխաւոր միջոցը, որմով Հոգին կ'առաջնորդէ մեզի դէպի Աստուծոյ կատարեալ կամքը՝ մեր ներսի խաղաղութեան զգացումն է: Ահա թէ Սուրբ գիրքը ինչ ի նկատի ունի, երբ կ'ըսէ. «Նոյն Ինքը՝ Հոգին կը վկայէ մեր հոգիին հետ...» (Հռովմայեցիս 8.16): Արդե՞ծք ներկայիս որոշումներ կան, որոնք կայացնելու համար Աստուծոյ առաջնորդութեան կարիքը ունիք: Կեցէ՛ք եւ Հոգիով աղօթեցէ՛ք: Անկէ յետոյ սպասեցէ՛ք Անոր խաղաղութեան վկայութիւնը: Ինչ կ'ըսէ Ան ձեզի:

Հոգիով աղօթքը... ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԿՈՒ ՏԱՅ

«Եթէ դուք կ'ուզէք գիրնալ, թէ Աստուած ինչ կը ցանկայ, որ ընէք ինչորեցէք Անորմէ, եւ Ան ուրախութեամբ կ'ըսէ՝ ձեզի, որովհետեւ Ան միշտ պատրաստ է առաջօրէն իմաստութիւն փալու անոնց, որոնք կը ինչորեն Իրմէ. Ան չի վրդովիր արոր համար»:

— Յակոբոս 1.5, TLB

Ո՞վ է իմաստութիւն եւ առաջնորդութիւն տուողը: Սուրբ Հոգին: Եսայեան կ'անուանէ Անոր իմաստութեան եւ հանճարի Հոգի, գիտութեան Հոգի եւ խորհուրդի Հոգի: Յիսուս ըսաւ, որ Ան մեր Ուսուցիչն է, որ կ'առաջնորդէ մեզ ողջ ճշմարտութեան մէջ: Ո՞ր կ'ապրի մեր Ուսուցիչը: Մեր մէջ՝ Իր տաճարին ներսը: Երբ իմաստութեան պակաս ունենաք եւ չգիտնաք, թէ ինչպէս պէտք է վարուիք, աղօթեցէք ձեր միտքով ու *Հոգիով*, եւ Ան պիտի տայ ձեզի այն առաջնորդութիւնը, որուն պէտքը ունիք:

Ժամանակ յատկացուցէք՝ խոկալու այս զօրաւոր խոստումներուն շուրջ. յիշեցէք, որ Տէրը եւ Հոգին նոյնն են:

«Ահա թէ ինչ կ'ըսէ Տէրը... «Ես՝ Տէրս, Քու Աստուածն եմ, որ կը սորվեցնէ քեզ այն, ինչ որ բարի է քեզի համար, եւ կ'առաջնորդէ քեզ այն շահիղներով, որոնցմով դուն պէտք է երթաս»»:

— (Եսայեայ 48.17, NLT)

«Թէ՛ աջ թեքիս, եւ թէ՛ ձախս, քու ականջները ետեւէդ ձայն մը պիտի լսեն, որ կ'ըսէ՝ «Ասիկա է ճամբան, ասով քայլէ»:

— (Եսայեայ 30.21, NIV84)

«Ես [Տէրը] կ'ուսուցանեմ եւ կը սորվեցնեմ քեզ այն ճանապարհին մէջ, որմով դուն պիտք է երթաս: Ես կը խրատեմ, եւ Իմ աչքը վրադ կ'ըլլայ»:

— (Սաղմոս 32.8, AMP)

«Ընկերը՝ Սուրբ Հոգին, Որուն Հայրս Իմ խնորանքով պիտի դրկէ, ամէն ինչ յստակ պիտի դարձնէ ձեզի համար»:

— (Յովհաննէս 14.26, MSG)

«Երբ ճշմարտության Հոգին գայ, ամեն ճշմարտության մէջ պիտի առաջնորդէ ձեզ»:

— (Յովհաննէս 16.13, NLT)

«Յոյց տնոր ինծի այն ճամբան, որմով ես պէտք է երթամ, ղվ Տէր. մատնացոյց ըրէ ճիշդ ճանապարհը, որմով ես պէտք է քալեմ: Առաջնորդէ ինծի. սորվեցնոր ինծի. որովհետեւ Դուն այն Աստուածն ես, որ փրկութիւն կու տաս ինծի: Միայն Քեզի կը յուսամ: ...Ան կը սորվեցնէ այն ճանապարհները, որոնք արդար են եւ լաւագոյնն են անոնց համար, որոնք խոնարհաբար կը դառնան Անոր: ...Ու՛ր է այն մարդը, որ կը վախճայ Տէրոջմէն: Աստուած կը սորվեցնէ անոր՝ ինչպէս ընտրել լաւագոյնը»:

— (Սաղմոս 25.4-5, 9, 12, TLB)

Ո՛ր բնագաւառի համար իմաստութեան ու առաջնորդութեան պէտքը ունիք. աշխատանքի, առողջութեան, ամուսնութեան, պզտիկներուն, դրամներուն, ընկերային յարաբերութիւններուն: Ինչպէս ալ ըլլայ ձեր իրավիճակը, փորձեցէք այս քայլերը կատարել:

1. *Յայտնեցէք Աստուծոյ, թէ ինչի համար իմաստութիւն կը խնդրէք՝* գոհանալով այն առաջնորդութեան համար, որ Ան տուած է ձեզի անցեալին (տես Փիլիպպեցիս 4.6-7):
2. *Աղօթեցէք Հոգիով:* Գործածեցէք լեզուներու պարգելը՝ աղօթելով այնքան ժամանակ եւ այնքան ջերմեռանդօրէն, որքան որ Հոգին կը փափաքի աղօթել ձեր միջոցով (տես Եփեսացիս 6.18, Հռովմայեցիս 8.26-27):
3. *Խնդրեցէք Հոգիէն մեկնութիւնը:* Ան կը յայտնէ ձեզի ձեր աղօթքի խորհուրդը (տես Ա. Կորնթացիս 14.13):
4. *Գրեցէք այն, ինչ որ Ան կը յայտնէ* (մտապահեցէք, որ թերեւս յայտնութիւնը անմիջապէս չգայ, բայց անպայման պիտի գայ):
5. *Շնորհք խնդրեցէք Սուրբ Հոգիէն,* որպէսզի վարուիք ըստ այն առաջնորդութեան, որ Ան կու տայ:

Առաջին կարգին ինծի իմաստութիւն եւ առաջնորդութիւն հարկաւոր է հետեւեալ հարցին մէջ.

Ահա այն իմաստութիւնը եւ առաջնորդութիւնը, որ Սուրբ Հոգին կու տայ ինծի.

Հոգիով աղօթքը...
ԿՐ ԶՕՐԱՅՆԷ ԵՒ
ՇԻՆՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ ՁԵՋԻ

«Այն մարդը, որ լեզուներով կը խօսի, կը զօրանայ իր անձին մէջ...»

— Ա. Կորնթացիս 14.4, NLT

Ինչո՞ւ թշնամին այդքան յամառօրէն կը պայքարի, որ առիթ չտայ ձեզի լեզուներով աղօթելու: Առաջին Կորնթացիս 14.4-ին մէջ կարելոր պատճառ մը յիշուած է. ան չի ցանկար, որ դուք զօրացած ըլլաք: Որքան ատելի ձեր հոգիին մէջ զօրանաք, այնքան ատելի ուժեղ կը դառնաք Քրիստոսի մէջ, եւ ատելի մեծ սպանալիք կ'ըլլաք սատանայի թագաւորութեան համար:

Ինչպէս որ ձեր ինքնաշարժի ճենըրէյթըրը իր մարտկոցը (battery) կը վերալիցքաւորէ, այնպէս ալ Հոգիով աղօթքը ձեր հոգին կը վերալիցքաւորէ: Անիկա կը քշէ վախը, ընկճուածութիւնը, եւ բացասական տրամադրուածութիւնը: Անիկա շինութիւն կու տայ ձեզի անբացատրելի կերպերով: Երբ լեզուներով կ'աղօթէք, դուք կ'աւելցնէք ձեր այն կարողութիւնը, որ ձեր ներսն է՝ Աստուծոյ ներկայութիւնը եւ զօրութիւնը տեղաւորելու համար:

Դուք *պարբերաբար* կ'աղօթէք Հոգիով, թէ՛ *հազուադէպ*: Եթէ պարբերաբար կ'աղօթէք, *ինչ յաճախականութեամբ* եւ *որքան ժամանակ*: Եթէ հազուադէպ կ'աղօթէք, *ինչն է պատճառը*:

Ինչ կը կատարուի ձեր ներսը, երբ ժամանակ կը յատկացնէք լեզուներով աղօթքի համար: Արդե՞ծք ձեր կեանքին մէջ արտայայտուած է Սուրբ Հոգիին պտուղը. արդե՞ծք վերապրած էք Հոգիին այլ դրսեւորումները ատոր արդիւնքով: Այդ ամէնը կը քաջալերէ՞ ձեզ, որ աղօթէք:

Սովորաբար ինչպէս կ'արձագանգէք այդ պարագային, երբ դուք ձեզ ընկճուած եւ սպառուած կը զգաք: Արդե՞ծք փորձած էք լեզուներով աղօթել: Կեցէ՛ք եւ աղօթեցէ՛ք. «Սուրբ Հոգի՛, լեզուներով աղօթքի միջոցով փոխէ՛ իմ բնական բացասական արձագանգը՝ գերբնական դրական արձագանգի: Լեցո՛ւր ինձի Քեզմով այնպէս, ինչպէս երբեք»:

Սուրբ Հոգին ինչպիսի՞նք քայլեր կը պատուիրէ, որ ձեռնարկէք, որպէսզի Ան ամէլի շատ ներգրաւուած ըլլայ ձեր առօրեայ կեանքին մէջ: Գրեցէ՛ք եւ կատարեցէ՛ք ատոնք:

Անկասկած, թշնամին միտքեր տուած է ձեզի եւ տարբեր զգացումներ յառաջացուցած է ձեր մէջ, որպէսզի թոյլ չտայ լեզուներով աղօթելու: Ան այսպէս կը վարուի շատ հաւատացեալներու հետ: Ստորեւ յիշուած են քանի մը տարածուած պատճառաբանութիւններ եւ արդարացումներ, որոնք ան կ'առաջարկէ: Արդե՞ծք ասոնք ծանօթ են ձեզի: Գրեցէ՛ք քանի մը հատ եւս, որ կրնաք յիշել, իսկ յետոյ աղօթեցէ՛ք եւ խնդրեցէ՛ք, որ Սուրբ Հոգին զօրաւոր պատասխան մը տայ Աստուծմէն իւրաքանչիւր սուտին, որ թշնամիէն կու գայ:

Ասիկա Աստուած չէ, այլ դուն հնարած ես:

Ես այնպիսի անհեթեթ զգացում ունիմ / անհեթեթ բառեր կ'ըսեմ:

Դուն պարզապէս կը կրկնես այն, ինչ որ ուրիշը կ'ըսէ:

Ասիկա անօգուտ զբաղմունք է:

Ես պարզապէս չեմ ցանկար լեզուներով աղօթել:

Ես ընդամենը մէկ կամ երկու բառ ունիմ:

Ի՞նչ կը մտածէին Իմ մասին այսինչ մարդիկ, եթէ լսէին ինձի:

Ընկեր, թոյլ մի՛ տաք, որ թշնամին խաբէ ձեզ՝ համոզելով, որ դուք պէտք չէ լեզուներով աղօթէք: Մէկ կողմ նետեցէք այն միտքերը եւ վանեցէք այն զգացումները, որ իրմէ են: Բացէք ձեր բերանը ամէն օր եւ «զգուշօրէն անձերնիդ շինեցէք այս ամենասուրբ հաւատքին մէջ՝ Սուրբ Հոգիով աղօթելով» (Յուդա 20, MSG):

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Եթէ դուք կ'ուսումնասիրէք «Սուրբ Հոգի. Ներածութիւն» գիրքը՝ որպէս «Մեսէնճը Հաւաքածոյ»ի ամբողջական դասընթացքի մաս, կը խնդրենք, որ ուսումնական տեսանիւթ թիւ 5-ը դիտէք:

- 1| Լեզուներով (Հոգիի լեզուով) աղօթելը խիստ օգտաւետ է: Քանի մը վայրկեան յատկացուցէք, որպէսզի թուէք լեզուներով աղօթքի այնքան առաւելութիւններ, որքան որ կրնաք յիշել: Ներկայիս այդ առաւելութիւններէն ճիշդ է ամենաարժէքաւորը ձեզի համար: Եթէ յարմար կը գտնէք, ըսէք, թէ ինչու:
- 2| Պատճառներէն մէկը, թէ ինչու Աստուած մեզի լեզուներու պարգեւը տուած է, այն է, որ թշնամին տեղեակ չըլլայ մեր գործունէութեան մասին: Աստուած ամենագէտ է, իսկ սատանան՝ ոչ: Սատանան չի հասկնար Հոգիի լեզուին աստուածային յաճախականութիւնը: Պատմեցէք որեւէ յատուկ դէպք(եր), երբ դուք լեզուներով աղօթած (բարեխօսած) եւ յաղթած էք սատանային ծրագիրներուն ձեր կեանքին եւ այլ մարդոց կեանքերուն մէջ:

Աագներու համար. Խօսքեր, որոնք կարելի է կարդալ. Ղուկաս 10.19, Եփեսացիս 6.10-18, Բ. Կորնթացիս 10.3-5, Մատթէոս 11.12, Յայտնութիւն 12.11:

«Աղօթեցէ՛ք Հոգիով ամէն ժամանակ եւ ամէն իրավիճակի մէջ: Մշտապէս զգօ՛ն եւ հեղեղողական եղէ՛ք ձեր աղօթքներուն մէջ ամէնուր գրնտող բոլոր հասարացեալներուն համար»:

— (Եփեսացիս 6.18, NLT)

- 3| Սուրբ Հոգիով աղօթելը կենսականօրէն կարեւոր բանալի է աստուածային առաջնորդութիւն ստանալու համար այդ իրավիճակներուն մէջ, որոնց մէջ մենք իմաստութեան պէտք ունինք: Ուշադրութեամբ կարդացէք Առակաց 20.5, Ա. Կորնթացիս 14.13 եւ Յովհաննէս 7.38-39 հատուածները: Նկարագրեցէ՛ք, թէ լեզուներով աղօթելը ինչպէ՛ս կը յայտնէ Աստուծոյ խորհուրդը, որ մեր սրտերուն մէջ աւանդուած է:

- 4| Շնորհիւ Սուրբ Հոգիին հետ մշտական հաղորդութեան՝ ծածուկ «խորհուրդները» մեզի կը յայտնուին: Այս խորհուրդները հետեւեալը կ'ընդգրկեն. ո՞ր եկեղեցին մենք պէտք է յաճախենք, որո՞նք հետ պէտք է ամուսնանանք, ինչ աշխատանք պէտք է ունենանք, ո՞ր տունը պէտք է գնենք. ատկէ զատ՝ ինչպէ՞ս պէտք է աղօթել ուրիշ մարդոց համար, ինչպէ՞ս պէտք է ատկի լաւ ամուսին կամ ծնողք ըլլալ, աշխատավայրին մէջ դժուարութիւնները ինչպէ՞ս յաղթահարել: Եթէ կը փափաքիք, պատմեցէք, թէ ինչպէս Հոգիով աղօթելը պատասխաններ տուած է՝ նշուած իրավիճակներէն մէկուն կամ քանի մը հատի պարագային:
- 5| Ա. Կորնթացիս 14.15-ին մէջ մենք կը տեսնենք, որ կարեւոր է թէ՛ մտքով, եւ թէ՛ հոգիով աղօթելը: Մտքով աղօթելու քանի մը առաւելութիւններ թուեցէք: Հոգիով աղօթքը ինչպէ՞ս կ'օգնէ ձեզի ատկի ճշգրտօրէն աղօթելու մտքով:
- 6| Ա. Թեսաղոնիկեցիս 5.17-ը կը յանձնարարէ մեզի «անդադար աղօթք ընել»: Արդե՞՞ծ ասիկա կը նշանակէ, որ մենք պէտք է օրը քսանչորս ժամ եւ շաբաթը եօթ օր աղօթենք, թէ՛ մէկ ուրիշ բան: Կարդացէք Ա. Թեսաղոնիկեցիս 5.16-19-ը եւ քննարկեցէք, թէ Աստուած ինչ կ'ըսէ մեզի:
- 7| Որոշ հաւատացեալներ, որոնք Սուրբ Հոգիով լեցուած են, անարգած են անոնց, որոնք այս զարմանալի պարգեւը չեն ստացած՝ անոնց երկրորդ-կարգի քրիստոնեաներ համարելով: Արդե՞՞ծ ձեզի հետ նման ձեռով վարուած են: Եթէ այո, ապա ասիկա ինչպէ՞ս ազդած է Աստուծոյ եւ այլ հաւատացեալներու հետ ունեցած ձեր փոխյարաբերութիւններուն վրայ: Արդե՞՞ծ դուք երբեք ինչ որ մէկուն հետ վարուած էք այսպէս՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար: Ինչպիսի՞ն պէտք է ըլլայ մեր վերաբերմունքը Սուրբ Հոգիով լեցուելու վերաբերեալ:

ԳԼՈՒԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Հոգիին հետ մտերմության արտայայտությունները, ներառեալ՝ լեզուներով աղօթելը, պատշաճ տեղ եւ ժամանակ ունին:
- Մի անտեսէք եւ մի՛ անարգէք լեզուներու պարգեւը: Մի հրաժարիք լեզուներու պարգեւէն այն պատճառով, որ ոմանք սխալ կերպով կիրառած են անիկա:
- Լեզուներով աղօթած ժամանակ դուք Աստուծոյ խորհուրդները կը խօսիք, եւ կրնաք խնդրել Անորմէ ձեր աղօթքներուն մեկնութիւնը:
- Հոգիի զօրութիւնը խոնարհներուն կը տրուի: Խոնարհութիւնը Աստուծոյ խորհուրդները կը բացայայտէ:
- Մենք կրնանք Հոգիով աղօթել, երբ իմաստութեան պէտք ունինք, երբ կը փափաքինք Աստուծոյ աւելի խորունկ մակարդակի վրայ երկրպագել կամ մարդոց համար բարեխօսել: Հոգին բոլոր այս բնագաւառներուն մէջ մեր կարողութիւնները կ'ընդլայնէ:
- Աստուծոյ առաջնորդութիւնը յաճախ խաղաղութեան տեսքով կու գայ. երբ մենք Հոգիով կ'աղօթենք եւ խաղաղութիւն կը զգանք որեւէ մէկ հարցի մը մէջ, այդ խաղաղութեամբ Սուրբ Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիներուն՝ քայլ առնելու համար:
- Լեզուներով աղօթքը կը թարմացնէ, կը վերականգնէ եւ շինութիւն կու տայ մեր ամբողջ էութեան: Ժամանակ յատկացուցէք՝ ամէն օր Հոգիով աղօթելու համար:

Յաւելեալ գլուխ.

Հարցումներ եւ պատասխաններ

Հերեւեալ նիւթը վերցուած է «Հարցումներ եւ պատասխաններ» հաղորդումէն, որ ձայնագրուած է Ճոն եւ Լիզա Պիվիրներու մասնակցութեամբ: Այս հաղորդումը հասանելի է ձայնային եւ տեսաձեւաչափերով՝ որպէս «Մեսէնճը Հաւաքածոյ»ի «Սուրբ Հոգի. Երաժուտին» ամբողջական դասընթացքի մաս:

Լիզա. Դուն կը խօսէիր այն մասին, որ որոշ եկեղեցիներ այնքան կեդրոնացած են լաւ մթնոլորտ ստեղծելու վրայ, որ անտեսած են Սուրբ Հոգիին ներկայութիւնը: Շատ եկեղեցիներ կը ցանկան գիտնալ, թէ ինչպէս կրնան կրկին անգամ Սուրբ Հոգիին ներկայութիւնը հրաւիրել՝ առանց վերադարձնելու «տարօրինակ» կամ անսահման երկար ծառայութիւնները, որոնց պէտքը չկայ: Ինչպէս անոնք կրնան ընել ատիկա:

Ճոն. Պէտք է պարզապէս խնդրել: Ինչպէս ես արդէն ըսի, Սուրբ Հոգին ազնուական է (Ճենթըլմէն): Ան թոյլ կու տայ, որ առաջինը մենք քայլ առնենք:

Յաճախ, երբ ես եկեղեցիներուն մէջ կը ծառայեմ, եւ մարդիկ առջեւ կու գան՝ փրկութիւն ստանալու համար, ես կ'ըսեմ. «Սուրբ Հոգի, կը խնդրեմ, հայիր անոնց»: Ընդամէնը քանի մը վայրկեան կը պահանջուի, որպէսզի Անոր ներկայութիւնը յայտնուի, եւ մարդիկ ամբողջ եկեղեցիին մէջ կը սկսին լալ: Ես կը սիրեմ ատիկա, որովհետեւ Աստուածաշունչը կը խօսի երկնային պարգեւը ճաշակելու մասին (տես Եբրայեցիս 6.1-6), եւ ես պարզած եմ, որ մարդիկ շատ աւելի հազուադէպ կը նահանջեն, եթէ երկնային պարգեւը՝ Սուրբ Հոգիին ներկայութեան դրսեւորումը ճաշակած են:

Մէկ անգամ ես մեծ եկեղեցիի մը մէջ էի, որ հեռացած էր այդ ձեւերէն կամ դրսեւորումներէն, որոնք կրնային յիշեցնել մեզի աւելի հին խարիզմաթիք ծառայութիւնները: Հաւաքոյթներէն մէկուն ըն-

թացքին Աստուծոյ Հոգին յայտնեց Իր ներկայութիւնը: Մարդիկ սկսան լալ ամբողջ եկեղեցիով մէկ. Աստուծոյ ներկայութիւնը այնքան շօշափելի էր: Տէրը ըսաւ ինծի. «Իսկ հիմա ըսէ մարդոց, որ Աստուծմէ գոհանալու եւ Անոր փառաբանելու ժամանակն է»: Ես այդպէս ալ վարուեցայ եւ աւարտեցի ծառայութիւնը: Քիչ ետք եկեղեցւոյ հովիւր ըսաւ ինծի. «Որքան լաւ էր: Ես մտածեցի. *«Մենք մէկ ժամ ես պիտի մնանք այսպէս: Այդ փարօրինակութիւնները նորէն պէտք է դրսևորուին, ինչպէս որ անցեալին»*: Ան շարունակեց. «Ինծի համար հիանալի էր, թէ Աստուած ինչպէս առաջնորդեց քեզ: Երբ ըսիր, որ Աստուած աւարտած է Իր գործը, ես զգացի ատիկա, կարծես Ան իրագործած էր Իր նպատակը: Անմիջապէս անկէ ետք ըսիր. «Եկէք ծառայութիւնը աւարտենք»»:

Ես տեսայ, թէ ինչպէս Աստուծոյ Հոգիին ներկայութիւնը յայտնուեցաւ մօտաւորապէս երկու վայրկեանուան մէջ եւ խորապէս դպաւ մարդոց»:

Լիզա. Ճոնը եւ ես վերջերս թեմայի մը շուրջ կը գրուցէինք: Երբեմն մեզի ընդամէնը երեսունհինգ վայրկեան կը տրուի՝ որեւէ ծառայութեան մը մէջ քարոզելու համար, բայց իրականութեան մէջ այդ երեսունհինգ վայրկեանը մեզի կը պատկանի: Այնպէս որ, երեսունհինգ վայրկեան քարոզելու փոխարէն ...

Ճոն. Քարոզեցէք երեսուն վայրկեան:

Լիզա. Քարոզեցէք երեսուն վայրկեան կամ կեցէք ձեր ուղերձի կիսուն եւ ժամանակ տուէք Սուրբ Հոգիին: Թոյլ տուէք, որ Սուրբ Հոգին գործէ: Երբեմն ծառայողները այնքան զբաղած են՝ փորձելով որքան կարելի է շատ տեղեկութիւններ գետեղել իրենց ուղերձներուն մէջ, որ կը մոռնան հետեւեալը. իրենց ուղերձները պէտք է Հոգիով յագեցած ըլլան:

Լիզա. Դուն շատ խօսած ես այն մասին, թէ ինչպէս Սուրբ Հոգին «կը լեցնէ մեզ», բայց կրնան այդ մասին խօսիլ, թէ ինչպէս Ան կ'արգիլէ:

Ճոն. Կողոսացիս գիրքը կը սորվեցնէ մեզի. «Աստուծոյ խաղաղութիւնը ձեր սրտերուն մէջ իշխէ...» (Կողոսացիս 3.15): Իսկ Հռովմայեցիս 8-րդ գլուխին մէջ գրուած է. «Որովհետեւ անոնք, որ

Աստուծոյ Հոգիով կ'առաջնորդուին, անոնք Աստուծոյ որդիներն են» (խօսք 14): «Որդիներ» բառը այս խօսքին մէջ յունարէն «*hnyos*»ն է: Անիկա կը վերաբերի թէ որդիներուն, թէ դուստրերուն, եւ կը նշանակէ «հասուն որդիներ»¹: Ամէն քրիստոնեայ չէ, որ Հոգիով կ'առաջնորդուի: Շատերը կ'առաջնորդուին իրենց զգացումներով, իրավիճակներով կամ հանգամանքերով: Աստուած կ'ըսէ, որ *հասուն որդիները եւ աղջիկները* Հոգիով կ'առաջնորդուին: Հոգին ինչպէս կ'առաջնորդէ մեզ: Ան վկայութիւն կու տայ մեր հոգիներուն (խօսք 16): Օրինակ՝ ես կը փափաքիմ որեւէ քաղաք մը երթալ եւ շարունակ անհանգստացնող, գրեթէ վրդովմունք յառաջացնող տհաճութիւն կը զգամ հոգիիս մէջ...

Լիգա. Արդե՞ծք ատիկա երբեք տեղի ունեցած է, երբ զացած ես ինչ որ տեղ մը, ուր պէտք չէր երթայիր:

Ճոն. Այո՛:

Լիգա. Եւ արդիւնքը ինչ եղաւ:

Ճոն. Ես որոշում կայացուցի. «Այլեւս այդպէս պիտի չվարուիմ»: Իրավիճակը աղետալի էր: Ես հասկցայ, որ երբ այսպիսի զգուշացում մը կը ստանամ, պէտք է կենամ:

Մէկ անգամ ես համաձայնեցայ հաւաքոյթի մը երթալ, բայց անկէ յետոյ զգացի, որ Տէրը չի փափաքիր, որ երթամ: Ինչորէ, արդէն խօսք տուած էի: Ես ըսի. «Աստուած իմ, Քու խօսքը կ'ըսէ, որ ես պէտք է այնպիսի մարդ ըլլամ, որ երդում կու տայ եւ կը պահէ անիկա, նոյնիսկ ի վնաս իրեն: Ես պէտք է երթամ այդ հաւաքոյթին, եւ ես պաշտպանութեանդ պէտքը ունիմ»: Ան ջանդիմանեց զիս անոր համար: Այդ ճանապարհորդութիւնը առանձնայատուկ չէր, բայց ես կը զգայի Անոր պաշտպանութիւնը:

Այնուամենայնիւ, աւելի լաւ կ'ըլլար, որ սկիզբէն հասկնայի Անոր զգուշացումը. «Մի՛ ըներ արփկա: Դուն չես ուզեր երթալ այդպէս»: Իսկապէս զարմանալի է, որ դուք կրնաք ճանչնալ Անոր զգուշացումները: Ատոնք շատ արտայայտիչ են: Եւ որքան աւելի Անոր հետ կը հաղորդակցիք, այնքան աւելի զգայուն կը դառնաք Անոր զգուշացումներուն հանդէպ:

Լիգա. Դուն կը խօսէիր տօքթոր Չոյին եւ անոր կատարած զարմանալի գործերուն մասին: Կը պատմէիր, որ ան մշտապէս

Սուրբ Հոգիով կ'աղօթեր՝ լեցունութիւն ունենալու համար: Ես նոյն-պէս գիտեմ այն բանալիներէն մէկը, որ շատերը չեն հասկնար: Տօթթոր Չօն «ո՛չ» կ'ըսէ շատ բաներու, որպէսզի Հոգիին հետ իր ունեցած ժամանակը պաշտպանէ: Սուրբ Հոգին «ո՛չ» կ'ըսէ մեզի որոշ հարցերու մէջ, որոնք *հնարաւոր* են, որպէսզի կարենայ *անհնարը* ընել մեր կեանքին մէջ:

Ճոն. Գործք առաքելոց գիրքի երկրորդ գլուխին մէջ աշակերտները Սուրբ Հոգիով լեցուեցան, յետոյ՝ Գործք 4.8-ին մէջ Պետրոս խօսեցաւ իշխաններու հետ «Սուրբ Հոգիով լեցուած», եւ Գործք 4.31-ին մէջ հաւատացեալները նորէն «Սուրբ Հոգիով լեցուեցան»: Սուրբ Հոգիով լեցուիլը մէկ անգամուայ վերապրում չէ: Աստուած կ'ըսէ «Մի արբենաք գինիով, բայց մշտապէս հոգիով լեցուեցէք» (Եփեսացիս 5.18, AMP): Այնպէս չէ, որ մենք լեցունութեան «արտահոսք» ունինք. պարզապէս մենք կը ցանկանք յարատեւ Հոգիով յագեցած ըլլալ: Մեր ամուսնութեան մէջ եղած են ժամանակներ, երբ մենք յագեցած էինք մէկս միւսին սիրով: Երբեմն մենք հեռու եղած ենք իրարմէ, եւ այնուհետեւ նորէն յագենալու պէտք ունեցած ենք:

Լիզա. Դուք պէտք է գիտակցաբար ընէք ատիկա:

Ճոն. Գիտակցաբար ըրէք ատիկա: Մշտապէս լեցուած եղէք: Հոգիով լեցուիլը՝ շարունակական գործընթաց է, եւ անիկա պիտի արտայայտուի սաղմոսներով, օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով (տես Եփեսացիս 5.18-20): Յանկարծ դուք պարզապէս պիտի սկսիք երգել: Այս շաբաթ ես շատ աւելի երգած եմ, քան...

Լիզա. Անջատեցէք հեռատեսիլը:

Ճոն. Այո, անջատեցէք հեռատեսիլը:

Լիզա. Սահմանափակեցէք այլ բաները, որոնք «կը ցամքեցնեն» ձեզ:

Լիզա. Արդե՛ժք բոլոր հաւատացեալները կրնան գործել հոգեւոր պարգեւներով, թէ՛ միայն ծառայողները:

Ճոն. Ես կը հաւատամ, որ ամէն հաւատացեալ կրնայ գործել Հոգիին իւրաքանչիւր պարգետով: Եթէ ուեւ հաւատացեալ մեծ

հրաշքի պէտք ունի, հրաշագործութեան պարգեւը կրնայ գործել անոր կեանքին մէջ: Աստուած նոյնպէս յատուկ պարգեւներ կը շնորհէ առանձին մարդոց, եւ այդ պարգեւները մշտապէս կը գործեն իրենց կեանքին մէջ:

Լիզան եւ ես մարդ մը կը ճանչնայինք, որ սրտային հիւանդութիւններ բժշկելու պարգեւ ունէր: Այսպէս, սրտային հիւանդութիւններ ունեցող մարդիկ ԱՄՆ-ի տարբեր մասերէն կ'երթային, որպէսզի մասնակցէին անոր հաւաքոյթներուն, եւ բժշկութիւն կը ստանային: Այդ բժշկութեան պարգեւը օգնեց անոր կատարելու այն ծառայութիւնը, որուն համար ան կանչուած էր:

Բայց ես նոյնպէս կը յիշեմ իմ ընկերներէն մէկուն պատմութիւնը, որուն որդին լոգարանի մէջ խեղդուած էր: Ելելտորական հոսանքը սպաննած էր զինք, եւ ան մահացած մնացած էր 45 վայրկեան: Ընկերս կը պատմէր. «Ճոն, ես աղօթեցի երեսուն վայրկեան եւ ոչ մէկ բան կատարուեցաւ: Շտապ օգնութեան աշխատակիցները նողկանքով կը նայէին ինձի: Յանկարծ ինչ որ բան մը զարկաւ գլխուս: Ինչ որ մէկը նայեցաւ աչքերուս միջոցով, եւ որդիիս ըսի՝ Դուն պիտի չմահանաս եւ պիտի ապրիս»: Եւ անոր որդին մեռելներէն յարութիւն առաւ: Ան հաւատաց, եւ «հաւատքի պարգեւն» էր, որ գործեց անոր միջոցով: Այդ պահուն ան այդ պարգեւին կարիքը ունէր:

Լիզա. Եւ այդ ժամանակ ան ծառայող չէր:

Ճոն. Ան ոստիկանութեան մէջ սպայ էր:

Լիզա. Եւ ան ոչ մէկ ծառայութիւն կ'առաջնորդէր:

Ճոն. Ան պարզապէս տուն եկած էր հաւաքոյթէ մը, ուր կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով քարոզած էր:

Լիզա. Ես կը փափաքիմ հասկնալի դարձնել, որ...

Ճոն. Հաւատացեալները: Իրաքանչիւր հաւատացեալ:

Լիզա. Իրաքանչիւր հաւատացեալ, որ Սուրբ Հոգիով լեցուած է՝ իր կեանքի ուզած պահուն:

Ճոն. Եւ պէտք չկայ, որ սպասէք ինչ որ մէկուն, որ բժշկութեան պարգեւ ունի: Յիսուս ըսաւ. «Անոնք ալ, որ Ինձի հաւատացին, այս

նշանները անոնց պիտի հետեւին. Իմ անունով... հիւանդներուն վրայ ձեռք կը դնեն...» (Մարկոս 16.17-18): Ասիկա կը նշանակէ, որ դուք պէտք է հաւատքով աղօթէք մարդոց բժշկութեան համար, եւ Աստուած կը պատուէ ձեր քայլը, որովհետեւ Ան կը պատուէ Իր Խօսքը:

Լիզա. Պէտք չկայ, որ ձեր հովիւը ամպիոնի մօտ կեցնէ ձեզ: Պէտք չկայ, որ սպասէք, թէ երբ պիտի հանդիպիք ինչ որ ծառայողի մը եկեղեցոյ նախարարին մէջ: Դուք կրնաք գործածել Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ խոստումները ձեր սովորական առօրեայ կեանքին մէջ: Եւ եթէ դուք զգաք, որ Հոգին կ'առաջնորդէ ձեզ՝ խօսելու ինչ որ մէկուն հետ, դանալու ինչ որ մէկուն, աղօթելու ինչ որ մէկու մը համար, կամ առատածեռն ըլլալու ինչ որ մէկու մը հանդէպ (թերեւս դուք պարզապէս պէտք է սկսիք առատածեռն ըլլալ), ասիկա հրաշալի է: Մենք կրնանք հետեւիլ Անոր առաջնորդութեան:

Ճոն. Ի դէպ, տալու պարգեւը կամ առատածեռնութիւնը՝ Աստուծոյ պարգեւներէն մէկն է:

Լիզա. Մենք գիտենք, որ Սուրբ Հոգին եկած է՝ Յիսուսը մեզի յայտնելու համար: Վերջին երկու տասնամեակներու ընթացքին մենք բազմաթիւ դրսեւորումներու ականատես եղանք՝ ցնցուիլը, ծիծաղիլը, յատակին գալարիլը եւ իյնալը, ինչպէ՛ս անոնք Յիսուսը կը յայտնեն:

Ճոն. Աստուածաշունչը կը խօսի անսովոր նշաններու մասին, բայց որպէս կանոն, անոնք կարճատեւ են: Կան ժամանակներ, երբ անսովոր նշաններ եւ հրաշքներ տեղի կ'ունենան, եւ ատոնք կը գրաւեն մարդոց դէպի Յիսուսը: Ինծի համար անսահման տհաճ է, երբ մարդոց աւելի շատ կը գրաւեն դրսեւորումները, քան դրսեւորումները Պարգետողը:

Մէկ անգամ Սինկափուր էի՝ եկեղեցիի մը մէջ ծառայելու համար: Նախքան իմ երթալը, աւետարանիչ մը եկած էր այդ եկեղեցին, որ բժշկութեան պարգեւ ունէր, որուն դրսեւորման ժամանակ մարդիկ խելայեղօրէն կը ծիծաղէին:

Մեր ծառայութեան ժամանակ ես յանկարծ զգացի, որ Աստուծոյ ներկայութիւնը կ'իջնէ այդ մեծ եկեղեցոյ վրայ: Յանկարծ մարդիկ սկսան ծիծաղիլ. ատիկա այնքան տհաճ էր, որ կը նմանէր գամը գրատախտակին քսելու. ես ճիշդ ատիկա զգացի հոգիիս մէջ:

Լիզա. Թերեւս անոնք կ'ընէին ճիշդ բանը՝ սխալ ժամանակ:

Ճոն. Ես ըսի. «Դադրեցէք: Դուք կեցած էք այդ դրսետրման վրայ: Դուք չէք հետեւիր Աստուծոյ Հոգիին: Այս անգամ Ան չէր պատրաստուէր այդպէս գործելու: Ան կը պատրաստուէր խորապէս դպնալու բոլորին Տէրոջ երկիւղով: Այժմ մենք կը յուսանք, որ Աստուծոյ Հոգին կը վերադառնայ եւ կը ծառայէ ձեզի»: Անկէ յետոյ ես կրկին աղօթքի մէջ մարդիկ առաջնորդեցի: Աստուծոյ Հոգին եկաւ, եւ ամբողջ դահլիճի մէջ բոլորը սկսան լալ:

Այսպիսի իրավիճակներուն մէջ, երբ մարդիկ կը սկսին գրեթէ ցուցադրական կերպով վարուիլ, այդ դրսետրումները հակակրանք կը յառաջացնեն եւ հակազդեցութիւն կը ձգեն: Ամուսնացած զոյգը մտերիմ յարաբերութիւններ չ'ունենար բոլորին առջեւ: Մարդիկ կը ցուցադրեն այն մտերմութիւնը, որ Աստուած տուած է իրենց՝ կարծես թէ ուզելով ըսել. «Նայեցէք: Մենք հոգեւոր ենք»: Ես յայտնաբերած եմ հետեւեալը. որքան անելի կը ճանչնամ Սուրբ Հոգին, այնքան անելի կը ցանկամ պաշտպանել Անոր (Անոր պարգեւները, Անոր կարողութիւնը եւ Անոր զօրութիւնը) յարգալից, արժանաւոր կերպով՝ չմարելով Անոր կրակը: Աստուածաշունչը կը խօսի Հոգին մարելուն մասին Ա. Թեսաղոնիկեցիս 5.19-21-ին մէջ: Դուք կը մարէք Հոգին, երբ կը մարէք Անոր զօրութիւնը եւ Անոր պարգեւները: Այդպէս մի՛ վարուիք: Փոխարէնը՝ պատուեցէք Ձինք: Մի՛ ցուցադրէք Ձինք, կարծես Ան՝ աժան ազդեցութիւն կամ զօրութիւն է:

Լիզա. Ես կը փափաքիմ նշել, որ մենք պէտք է խնդրենք Աստուծմէ եւ հրաւիրենք Անոր՝ ընելու այն, ինչ որ կը ցանկայ: Ես յայտնաբերած եմ, որ երբեմն Սուրբ Հոգին կը գործէ այն կերպով կամ այն ժամանակ, որ, թերեւս, անյարմար ըլլայ մեզի համար, բայց Ան երբեք բան մը ստիպելով, խորամանկելով կամ ձանձրացնելով չ'ընէր: Ան ոչ մէկ պարագային կը ձգտի մարդոց հանդէպ ուշադրութիւն գրաւելու,

այլ կը ձգտի ուշադրութիւն գրաւելու միայն Աստուծոյ հանդէպ: Սովորաբար պէտք է համապատասխան մթնոլորտ եւ ներկայութիւն ըլլայ, որպէսզի Ան գործէ:

Վերջերս ես խումբ մը մարդոց հետ էի՝ տարբեր յարանուանութիւններէ: Ես լսեցի, թէ ինչպէս անոնցմէ ոմանք կը ծաղրէին այն դրսետրումները, որոնք, համոզուած եմ, իրական եղած են ժամանակ մը, իսկ յետոյ մարդիկ պարզապէս պահպանած են ատոնք, քանի որ յոյս ունեցած են, որ Աստուած կը շարունակէր օրհնել այն, ինչ օրհնած էր անցեալին: Դրսետրումներուն գործառոյթը կորսուած էր ժամանակի ընթացքին, բայց ձեւը մնացած էր, եւ անոնք կը ծաղրէին այդ ձեւը: Մենք չենք ծաղրեր այդ դրսետրումներէն որեւէ մէկը: Մենք կը փափաքինք այն ամէնը, ինչ Սուրբ Հոգիէն է, բայց որ ամէն ինչ հաւատքով ըլլայ: Մենք կը ցանկանք, որ դրսետրումները պատշաճ կերպով ըլլան եւ Աստուծոյ ներկայութեամբ ուղեկցուին:

Լիզա. Արդե՞ք հնարաւոր է, որ մարդը իրապէս խաղաղութիւն զգայ ինչ որ բանի մը վերաբերեալ, բայց ատիկա Աստուծմէ չըլլայ:

Ճոն. Այո, անշուշտ: Եզեկիելի 14-րդ գլուխին մէջ Աստուած կը խօսի այն մարդոց մասին, որոնք Անոր քով կու գան իրենց սրտերուն մէջ ունեցած կուռքերով: Ինչ է կուռքը: Նոր կտակարանին մէջ կռապաշտութիւնը ազահութիւնն է (տես Կողոսացիս 3.5), այսինքն՝ ինչ որ բան մը սխալ ձեւով ցանկալը: Այն մարդիկ, որոնց սրտերուն մէջ կուռքեր կան, նոյնիսկ ոեւէ մարգարէի քով կ'երթան եւ կ'ըսեն. «Կը խնդրեմ, աղօթեցէք ինծի համար եւ Տէրոջ խօսքը խօսեցէք կեանքիս մէջ»: Աստուած ըսաւ. «Ես կը պատասխանեմ անոնց՝ իրենց կուռքերուն շատութեանը համեմատ» (տես Եզեկիել 14.4): Երբ Աստուծոյ ներկայութեան մէջ կու գամ եւ ինչ որ բան մը կը խնդրեմ, ես պէտք է համոզուած ըլլամ, որ իմ սիրտը չէզոք դիրքի մէջ է: Եղած են դէպքեր, երբ ես չեմ հետեւած այս սկզբունքին: Քանի որ իմ սիրտը չէզոք դիրքի մէջ չէր, ես ունէի խաղաղութիւն, որ Աստուծմէ չէր: Հետագային ես շատ զոջացած եմ այդ շրջանի մէջ կայացուցած որոշումներուս համար:

Ահա թէ ինչու ուրախ եմ, որ Լիզան եւ ես տարբեր քաղաքներու մէջ էինք այն ժամանակ, երբ նոր սկսած էինք հանդիպիլ: Մենք միասին աղօթեցինք երեսուն օր, թէ արդե՞ք պէտք է շարունակենք մեր յարաբերութիւնը: Ես այնքան հրապուրուած էի անորմով, որ

ինձմէ, հաւանաբար, քսանհինգ օր պահանջուեցաւ, մինչեւ որ կրցայ յաղթահարել այդ հրապուրանքը: Բայց այդ երեսուն օրուան ընթացքին հասայ այնպիսի կէտի մը, որ գիտէի. եթէ Աստուած «ոչ» ըսէր, ես պիտի չառարկէի: Ես գիտէի՝ ատիկա կը նշանակէր, որ Տէրը ուրիշ կին մը ունէր ինձի համար, եւ ուրիշ տղամարդ մը՝ անոր համար: Հազիւ որ ես հասայ այդ չէզոք դիրքին, իսկապէս սկսայ լսել Աստուծմէ:

Եթէ ես երթամ իմ ծածուկ աղօթքի վայրը եւ զգամ, որ չունիմ սրտի չէզոք դիրք, ես պէտք է աշխատիմ ատոր վրայ Աստուծոյ Խօսքով եւ աղօթքով, մինչեւ որ ձեռք բերեմ այդ չէզոք դիրքը: Ես պէտք է կարենամ լսել թէ «այո»ն, թէ «ոչ»ը, որովհետեւ եթէ կողմնակի մօտեցում ունենամ, կեղծ խաղաղութիւն պիտի ստանամ:

Լիզա. Մենք յաճախ ըրած ենք ասիկա մեր կեանքի այն փուլերուն մէջ, երբ կը մտածէինք. *«ամէն ինչ պիտի դասաւորուի մեր որոշած կերպով, մեր որոշած ժամանակ եւ մեր որոշած տեղը»*, իսկ յետոյ հասկցած ենք, որ ոչ մէկ բան պիտի ըլլայ ըստ մեր պատկերացումին: Մենք պէտք է ջնջենք «ամբողջ գրատախտակը» եւ ըսենք. «Աստուած, ըրէ՛ այն, ինչ որ կը ցանկաս»:

Դուն կը խօսիս «գիտութեան» մասին, որ Հոգիէն կու գայ: Երբ ես ուսումնասիրութիւններ կը կատարէի՝ «Կնոջ հոգատարութեան ուժը» գիրքին համար, ես կը փնտռէի «ներըմբռնողութիւն» («անգլերէն՝ ինտուիշըն») բառին սահմանումը: Անիկա յառաջացած է լատիներէն «ին» եւ «տոյօր» բառերէն, որոնք միասին կը նշանակեն՝ «ներքին ուսուցիչ»: Սուրբ Հոգին մեր ներքին Ուսուցիչն է: Ան նոր սիրտ կու տայ (տես Եզեկիել 36.26) եւ կը սկսի սորվեցնել մեզի:

Լիզա. Կեանքին մէջ կան դէպքեր՝ կապուած մարդոց կամ իրավիճակներու հետ, երբ ամէն ինչ ճիշդ կը թուայ, բայց մեր ներսը սխալ զգացողութիւն կայ: Կրնանք խօսիլ ատոր մասին:

Ճոն. Ամէն անգամ, երբ չեմ լսած այդ ներքին Ուսուցիչին ձայնը, երբ հոգիս մէջ զգացած եմ, որ ինչ որ բան սխալ է, բայց արտաքնապէս ամէն ինչ լաւ տեսք ունեցած է, ես ծուղակը ինկած եմ:

Լիզա. Արդեօք սովորաբար դուն սկզբնական արձագանգ կը զգաս, իսկ յետոյ կը սկսիս վիճարկել ատիկա:

Ճոն. Այո: Սովորաբար սկզբնական արձագանգը Աստուծոյ Հոգիէն է: Եւ նոյն խնդիրները յառաջացած են, երբ ես անտեսած եմ քու խորհուրդը, Լիզա:


Թոյլ տո՛ւր՝ ամուսիններուն եւ կիներուն հետեւեալը ըսելու: Երբ Լիզան եւ ես նոր ամուսնացած էինք, ես կ'աղօթէի օրական մտաւորապէս մէկ ու կէս ժամ: Որքան գիտէի, Լիզան օրական 10 վայրկեան կ'աղօթէր, լոգանքի պահուն:

Լիզա. Ես լրիւ դրոյքով կ'աշխատէի:

Ճոն. Յաճախ կը պատահէր, որ ես կ'առաջարկէի. «Լիզա՛, ես համոզուած եմ, որ մենք պէտք է այսպէս վարուինք: Ինծի կը թուայ, որ պէտք է այսպիսի քայլ առնենք», բայց ան կը պատասխանէր. «Չեմ զգար, որ պէտք է այդպէս ընենք»: Արդիւնքով ան ճիշդ դուրս կու գար բոլոր հարցերու գրեթէ կէսէն: Ատիկա շատ կը յուսահատեցնէր զիս:

Օր մը ես ըսի. «Աստուած, ամէն առտու ես մէկ ու կէս ժամ կ'աղօթեմ, իսկ Լիզան՝ տասը վայրկեան՝ բաղնիքին մէջ: Սակայն ան ճիշդ կեցուածք կ'ունենայ մեր հարցերուն աւելի քան կէսին մէջ»:

Տէրը ըսաւ ինծի. «Կլոր մը գծէ»: Ես կլոր մը գծեցի թուղթի մը վրայ: Աստուած շարունակեց. ««x» տառեր գծէ կլորին մէջ»: Ես սկսայ «x» տառեր գծել կլորին մէջ: Ան շարունակեց. «Այժմ գիծ քաշէ շրջանակին մէջտեղը»: Ես գիծ քաշեցի անմիջապէս կլորին մէջտեղէն:



Ան ըսաւ. «Դուն ուշադրութիւն դարձուցի՛ր, որ «x»երուն կէսը մէկ կողմով յայտնուեցաւ, իսկ միւս կէսը՝ միւս: Ճոն, երբ դուն ամուրի էիր, դուն կատարեալ էիր Իմ մէջ եւ քու մէջ: Բայց դուն մէկ մարմին դարձար Լիզային հետ, եւ այս շրջանակը կը ներկայացնէ երկուքդ՝ դուն եւ Լիզան: Դուն ծախ կէսն ես, իսկ ան՝ աջը»:

Անկէ յետոյ Աստուած ըսաւ. «Գիտե՛ս, թէ «x»երը ինչ կը նշանակեն: Անոնք ինծմէ կկող այն տեղեկութիւններն են, որոնց պէտքը դուն

ունիս՝ հիմաստուն որոշումներ կայացնելու համար: Ինդիորը անիկա է, որ դուն կը կայացնես բոլոր որոշումները տեղեկություններու կէսի հիման վրայ: Դուն պէտք է սորվիս, թէ ինչպէս վերցնես կնոջմէդ այն, ինչ որ Ես անոր կը յայտնեմ, որպէսզի դուն՝ տունին գլուխը, կարենաս որոշումներ կայացնել՝ բոլոր տեղեկությունները ունենալով»:

Ինչ կը վերաբերի ներըմբռնողութեան, ապա՝ այո, Ես տուժած եմ, երբ առաջին զգուշացումը ստացած ես անտեսած եմ: Բայց նոյնպէս եղած են դէպքեր, երբ Լիզան որոշ բաներ ըսած է ինծի եւ Ես անտեսած եմ ատոնք, թէեւ սրտիս մէջ գիտէի, որ անոր ըսածը Հոգիէն էր: Ես գիտէի ատիկա, որովհետեւ Հոգին վկայութիւն կու տայ մեզի:

Երբեմն Լիզան այնպիսի բաներ կ'ըսէ (եւ ատիկա ընդամենը քանի մը տարին անգամ մը տեղի կ'ունենայ), որ Ես գիտեմ՝ *այդ խօսքերը հաւատքէն չեն, այլ՝ վախէն, եւ չեմ համաձայնիր արոնց հետ*: Բայց հիմնականը, երբ Լիզան կը խօսի, Ես գիտեմ հոգիիս խորքէն, որ *ան ճիշդ է*: Եթէ անտեսեմ այդ վկայութիւնը, ապա անպայման պիտի վճարեմ ատոր համար:

Լիզա. Կը կարծեմ՝ ճոնը շատ մեծահոգի է, բայց Ես կը փափաքիմ, որ մարդիկ հետեւեալը հասկնան. երբ Աստուած ինչ որ բան մը կ'ըսէ իրենց, իրենք կրնան վստահիլ Անոր խօսքերուն: Որոշ հետազօտողներ կ'ըսեն, որ հոգին շատ աւելի շուտ կը զգայ, քան որ մենք կը հասկնանք: Երբ մենք մեր միտքով կը միջամտենք եւ կը սկսինք ուրիշ տարբերակներ առաջարկել, մենք ոչ թէ մեզի կասկածի կ'ենթարկենք, այլ՝ Աստուծոյ: Երբ Աստուած ինչ որ բան մը կ'ըսէ մեզի, մենք պէտք է համաձայնինք Անոր ըսածին հետ:

Վերջերս ինծի հետ դէպք մը պատահեցաւ, երբ հանրակառքի մէջ էի խումբ մը մարդոց հետ. պէտք է ըսեմ, որ կ'ատեմ հանրակառքերը: Մեր խումբը իսկապէս երկար մնաց օդակայանը՝ հանրակառքի մէջ: Պատճառը այն էր, որ կին մը մեր խումբէն չէր կրնար գտնել հանրակառք տանող ճամբան: Մենք կը կանչէինք զինք, բայց չէինք կրնար գտնել:

Վերջապէս Ես տեսայ անոր. ան կը թռչկոտէր եւ իր ձեռքերը կը թափահարէր հեռուն կեցած թաքսիներուն քով, ուր մենք պէտք չէր հաւաքուէինք: Ներսս զայրոյթ բարձրացաւ, բայց նայելով անոր՝ Ես անմիջապէս մտածեցի. «*Ես կը սիրեմ զինք*»: Մեր սրտերուն միջեւ

ակնթարթային կապ ստեղծուեցաւ: Ես սիրեցի զինք, հազիւ որ զինք տեսայ, եւ մեր միջեւ շատ զօրաւոր կապ հաստատուեցաւ:

Աստուած կը բերէ այսպիսի մարդիկ ձեր կեանքին մէջ: Բնական տեսանկիւնէն՝ ամէն ինչ կ'ըսէր. «Ինչո՞ւ ես պէտք է սիրեմ այդ կինը»: Բայց ես սիրով վերաբերմունք ցուցաբերեցի անոր հանդէպ: Այսօր ես երկար ելեկտրոնային նամակ ստացայ այդ կնոջմէն. ան գրած էր. «Դուք անմիջապէս սիրեցիք զիս, եւ այդ սէրը օգնեց ինծի, որ Աստուծոյ սէրը զգամ կեանքիս մէջ այդ պահուն, երբ ես ինծի առանձին կը զգայի»: Ահա թէ ինչ կ'ընենք մենք՝ պարզապէս ըլլալով այնպիսի մարդիկ, որոնք ունակ են մարդոց հետ այսպիսի կապեր հաստատելու, ոչ թէ առիթ տալու, որ հանգամանքները թելադրեն իրենց:

Սակայն եղած են ժամանակներ, երբ ճոնը ըսած է ինծի ինչ որ մէկու մը մասին. «Լիզա՛, ես վատ նախզգացում մը ունիմ այդ կնոջ հանդէպ»: Ես պատասխանած եմ. «Թանկագինս, դուն կին չես: Կան բաներ, որ դուն չես հասկնար այնպէս, ինչպէս որ ես»: Ան այդ կերպով զգուշացուցած է ինծի գրեթէ երեք կամ չորս անգամ, եւ ես տուժած եմ ամէն անգամ, երբ չեմ լսած զինք:

Ճոն. Թոյլ տո՛ր, որ հետեւեալը ըսեմ. Գործք 15-րդ գլուխին մէջ Պօղոսը եւ Բառնաբասը տարածայնութեան հանդիպեցան այն հարցին վերաբերեալ, թէ արդե՞ծք հեթանոս հաւատացեալները պէտք է հետեւին Մովսէսի օրէնքին: Եկեղեցին Երուսաղէմ ուղարկեց անոնց՝ հանդիպելու առաքեալներու եւ երէցներու հետ: Ինչո՞ւ Պօղոսը եւ Բառնաբասը անձամբ որոշում չկայացուցին այդ հարցին վերաբերեալ: Ինչո՞ւ անոնք ստիպուած էին երթալու Երուսաղէմի առաջնորդներուն քով: Պատճառը այն է, որ զօրութիւնը եւ առաջնորդութիւնը միաբանութեան մէջ են: Այս պատճառով, ամուսիններն ու կիները պէտք է ընեն այն ամէնը, ինչ իրենց ուժերու մէջ է՝ միաբան մնալու համար: Միաբանութեան մէջ կրնանք պարզ պատասխաններ ստանալ Աստուծմէ:

Լիզա. Ինչն է տարբերութիւնը Հոգիի *պարգեւներուն* եւ Հոգիի *պտուղներուն* միջեւ:

Ճոն. Հոգիին պարգեւը այնպիսի բան է, որուն միջոցով Աստուած օժտած է մարդուն: Պէտք չկայ, որ անիկա մշակուի կամ

զարգացուի: Անիկա ինքնաբերաբար կը գործէ: Միակ բանը, որ պէտք է զարգացուի, այն է, թէ տուեալ անձնաւորութիւնը *ինչպէս* կը գործածէ այդ պարգեւը: Ի տարբերութիւն աստոր՝ Հոգիին պտուղը պէտք է մշակուի: Այնպէս որ, պարգեւները կը տրուին, իսկ պտուղը կը մշակուի:

Հոգիին պտուղը՝ Հոգիով առաջնորդուող կեանքի արդիւնքն է: Երբ Հոգիով կը վարուիք, ձեր մէջ պտուղը կը ձեւաւորուի, եւ դուք կը լեցուիք անելի մեծ ուրախութեամբ, խաղաղութեամբ, համբերութեամբ, սիրով, եւայլն (տես Գաղատացիս 5.22-23): Ձեր՝ Հոգիով քալելու շնորհիւ այդ սէրը, ուրախութիւնը կամ խաղաղութիւնը պիտի ճառագայթեն ձեզմէ եւ ազդեցութիւն պիտի ձգեն ձեր անձնական կեանքին վրայ: Հոգիին պտուղը այն հիմքն է, շնորհիւ անոր դուք ապահովութիւն կ'ունենաք ձեր ծառայողական կեանքին մէջ: Իսկ Հոգիին պարգեւները կապուած են ձեր ծառայողական կեանքին հետ, եւ դժբախտաբար, շատերը անելի կը ձգտին այդ պարգեւներուն, քան պտուղներուն:

Ես այսպէս աղօթած եմ. «Աստուած իմ, ոչ մէկ պարագային կը ցանկամ, որ այն պարգեւները, որոնք տուած ես ինձի, արտայայտուին անելի, քան պտուղը, որ զարգացուցած ես մէջս»: Ես աղօթած եմ այդպէս, որպէսզի կարենամ բարեյաջող կերպով իմ ընթացքը ասարտել, քանի որ յաճախ կը պատահի, որ մարդիկ կը սկսին ձգտիլ պարգեւներուն: Աստուածաշունչին մէջ կ'ըսուի. «Սիրոյ ետեւէն գացէ՛ք ու հոգեւոր պարգեւներուն նախանձախնդիր եղէ՛ք» (Ա. Կորնթացիս 14.1, NKJV), սակայն մարդիկ կը ձգտին պարգեւներուն եւ կ'անտեսեն պտուղը (սէրը):

Պարգեւները չունին մարդոց ապահովութեան մէջ պահելու յատկութիւն եւ, ի վերջոյ, կրնան կործանել անոնց: Յուդան դեւեր կը հանէր եւ հիւանդներ կը բժշկէր, սակայն ան դժոխքի մէջ է: Յիսուս ըսաւ. «Անոր համար անելի լաւ կ'ըլլար, եթէ ընդհանրապէս ծնած չըլլար» (Մատթէոս 26.24, NET): Յուդային կեանքին մէջ հոգեւոր պարգեւները կը գործէին, բայց ակնյայտ է՝ ան չէր զարգացուցած Հոգիին պտուղը:

Լիզա. Կան մարդիկ, որոնք զօրաւոր պարգեւներով կը գործեն, սակայն անոնց կեանքի պտուղը լիովին կը հակասէ անոնց պարգեւներու զօրութեան: Ինչպէս կարելի է ասիկա:

Ճոն. Պարզապէս յիշէ Բաղասամը: Ան մարգարէութեան պարգեւը ունէր: Աւելին՝ անոր մարգարէութիւնները Աստուածաշունչին մէջ գրուած են: Այն խօսքերը, որ ան կ'ըսէր, Աստուծոյ խօսքերն էին: Սակայն Աստուած պատուիրեց սպաննել Բաղասամը անոր իսկ թուրով, որովհետեւ ան չար էր եւ անհնազանդ: Սաւուղ թագաւորը խելագար էր: Ան իսկապէս խելքը կորսնցուցած էր: Կար ժամանակ, երբ ան կը հետապնդէր Դաւիթը՝ Աստուծոյ օծեալը, որպէսզի զինք սպաննէր: Չնայած անոր, օր մը ան մարգարէացաւ մարգարէներու հետ (տե՛ս Ա. Թագաւորաց 19):

Այն փաստը, որ հոգեւոր պարգեւները մարդու կեանքին մէջ կը գործեն, տակաւին չի նշանակեր, որ Աստուած կը հաւնի զինք: Յիսուս ըսաւ, որ շատերը կ'ըսեն Ինձի, թէ՛ դէւեր հանեցինք Քու անունով, հրաշքներ գործեցինք Քու անունով, մեծ գործեր ըրինք Քու անունով, մարգարէացանք եւ քարոզեցինք Քու անունով: Իսկ Ան կ'ըսէ՛ հեռացէ՛ք Ինձմէ, Ես երբեք չեմ ճանչցած ձեզ՝ անօրէնութիւն գործողներ: Դուք պտուղը չէք զարգացուցած ձեր կեանքին մէջ» (տե՛ս Մատթէոս 7.22-23): Մէկ օր Տէրը խօսեցաւ հետս եւ ըսաւ. «Դուն նկատեցի՞ր, որ անոնք չըսին. «Չէ՛ որ մենք աղքատները կերակրեցինք Քու անունով: Մենք բանտարկեալները այցելեցինք Քու անունով»: Այն մարդիկ, որոնք այսպիսի գործեր կ'ընեն, պտուղը կը զարգացնեն իրենց կեանքին մէջ»: Հոգեւոր պտուղ զարգացնելը՝ ապահովութիւն է, որուն շնորհիւ մենք բարեյաջող կերպով կ'աւարտենք մեր ընթացքը:

Առաջին անգամ, երբ այս ճշմարտութիւնը հասկցայ, մեծ եկեղեցիի մը մէջ կ'աշխատէի, որ աշխարհի տարածքին ամենայայտնի եկեղեցիներէն մէկն էր: Մեզի ամենանշանաւոր քարոզիչները կ'այցելէին, նոյնպէս ալ բազմաթիւ ոչ շատ յայտնի քարոզիչներ՝ այսինքն՝ բազմապիսի քրիստոնեայ ծառայողներ: Իմ պարտականութիւններուն մէջ կը մտնէր դիմաւորել այդ քարոզիչները օղակայանին մէջ եւ հիւրընկալել անոնց: Ես նկատեցի, որ երբ որոշ ծառայողներ իմ ինքնաշարժը կը նստէին, այնպիսի տպաւորութիւն էր, որ կարծես Յիսուս կողքիս նստած էր: Երբ անոնք քարոզելու կը բարձրանային, այնպիսի տպաւորութիւն էր, որ Յիսուսը բարձրացած կը քարոզէր:

Երբ ուրիշ ծառայողներ կը նստէին ինքնաշարժս, ես կը մտածէի. *«Ի՞նչ կարարուեցաւ: Ինչո՞ւ այդքան աղոթող կը զգամ ես ինձի: Ինչո՞ւ անոնք այդքան անպարկեշտ ձեւով կը խօսին»:* Իսկ յետոյ անոնք բեմ

կը բարձրանային, եւ մարդիկ կը փրկուէին, կը բժշկուէին եւ Աստուծմէ խօսք կը ստանային: Այդ փրկութիւնները կամ բժշկութիւնները կեղծ չէին. ասոնք տեղի կ'ունենային Սուրբ Հոգիին զօրութեամբ: Ես կը մտածէի. «*Աստուծ, ես չեմ հասկնար ասիկա: Ի՞նչ կը կատարուի: Ինչպէս անոնք կրնան այդպիսի վարք ունենալ, երբ ինծի հետք են, իսկ յետոյ կը բարձրանան քարոզելու, եւ փրկութիւններու ու բժշկութիւններու ականատես կ'ըլլան*»: Ահա թէ երբ Աստուած ցոյց տուաւ ինծի, որ Յուդան քարոզեց Աստուծոյ թագաւորութեան մասին, դեւեր հանեց, հիւանդներ բժշկեց եւ հրաշքներ գործեց, սակայն ան հիմա դժոխքի մէջ է: Բաղասմը մարգարէացաւ, բայց Աստուած թուրով սպաննեց զինք: Սաւուղը նոյնպէս մարգարէացաւ, բայց բարեյաջող կերպով ընթացքը չաւարտեց: Տէրը ըսաւ ինծի. «Աստուծոյ օծութիւնը՝ Աստուծոյ պարգեւները, որոնք կը գործեն մարդուն կեանքին մէջ պարտադիր չէ, որ Աստուծոյ հաւանութեան նշանը ըլլան»: Դուք կը ճանչնաք զանոնք, իրենց պտուղով (տես Մատթէոս 7.16):

Լիզա. Այդ պարագային, կարելի է ըսել, որ պարգեւը կը տրուի մարդուն, իսկ պտուղը կը զարգանայ մարդուն ներսը եւ անոր ներքին բնաւորութիւնն է:

Ճոն. Այո, դրն շատ ճիշդ ըսիր:

Լիզա. Դուն կը խօսէիր այն մասին, որ կարելի է առաջնորդուիլ ներքին խաղաղութեամբ, նաեւ զգալ, թէ ինչպէս Հոգին կ'արգիլէ զգուշացման միջոցով, որ նման է տհաճ կամ անհանգիստ զգացումին: Բայց ոմանք նոյնիսկ կը վիճարկեն այն փաստը, որ այսօր Աստուած կը խօսի մեզի հետ: Անոնք կը հաւատան, որ Աստուած միայն Սուրբ գիրքին միջոցով կը խօսի: Դուն կը հաւատամ, որ Աստուած կը խօսի այսօր, եւ արդեօք Ան միայն Իր Խօսքին համաձայն կը խօսի:

Ճոն. Նախ եւ առաջ, Պօղոսը ըսաւ Կորնթոսի եկեղեցիին. «...անձայն կուռքերու քով կը տարուէիք, ինչպէս որ կ'առաջնորդուէիք» (տես Ա. Կորնթացիս 12.2): «Անձայն» բառը կը նշանակէ «համր»: Այլ խօսքով՝ այն աստուածները, որոնց կորնթացիները կը ծառայէին, չէին խօսեր: Պօղոս կ'ըսէ. «Տարբերութիւնը այն է, որ մեր Աստուած կը խօսի»: Եւ Ան պարզ կը խօսի:

Աստուած ինչպէս կը խօսի: Նոր կտակարանը ցոյց կու տայ բազմապիսի միջոցներ, որոնցմով Ան մեզի հետ կը խօսի: Առաջին հերթին, Աստուած կը խօսի *ներքին վկայութեան*՝ խաղաղութեան զգացումին միջոցով:

Լիզա. Նոյնիսկ ատելի, քան Իր խօսքով:

Ճոն. Ո՛չ, Աստուծոյ խօսքը միշտ կը համապատասխանէ ատոր: Եթէ դուք խաղաղութեան զգացում ունիք ինչ որ խնդիրի մը մէջ, որ չի համապատասխանիր Աստուծոյ խօսքին, ուշադրութիւն մի՛ դարձնէք այդ զգացումին: Ակնյայտ է, որ դուք սխալ դրդապատճառներ ունիք ձեր սրտին մէջ. սկիզբը դուք պէտք է վերադառնաք սրտի չէզոք վիճակին: Վերջին խօսքը Աստուածաշունչին կը պատկանի:

Լիզա. Խօսքը միշտ թէ հիմքն է, թէ կառուցուածքը:

Ճոն. Այո, ճիշդ է: Ուրեմն, ներքին վկայութիւնը՝ առաջին միջոցն է: Երկրորդը՝ *մեղմ ու բարակ ձայնն է*, որուն մասին Աստուածաշունչը կը խօսի: Յիսուս ըսաւ, որ Իր գառնուկները Իր ձայնը կը ճանչնան (տես Յովհաննէս 10.27): Աստուծոյ Հոգին կը խօսի այն, ինչ որ Ան Յիսուսէն կը լսէ. ճիշդ ատիկա է մեղմ ու բարակ ձայնը:

Որոշ մարդիկ կապուածութեան մէջ յայտնուած են, որովհետեւ սկսած են ձայներու հետեւիլ՝ առանց որեւէ ներքին վկայութեան: Ամէն անգամ, երբ ես Աստուծոյ ձայնը լսած եմ, ատիկա ներքին վկայութեամբ մը ուղեկցուած է, եւ երկուքն ալ համապատասխանած են Աստուծոյ խօսքին: Ահա այն հիմքը, որ պէտք է ունենաք՝ խօսքը, վկայութիւնը եւ ձայնը: Եթէ դուք ձայն լսած էք, բայց չունիք ներքին վկայութիւն, մի՛ հետեւիք ատոր: Ես ներկայ գտնուած եմ հաւաքոյթներու, ուր ինծի համար մարգարէացած են, բայց Աստուծոյ ներկայութիւնը չեմ վերապրած, ոչ ալ ներքին վկայութիւն ունեցած եմ: Ես ուշադրութիւն չեմ դարձներ այսպիսի մարգարէութիւններուն:

Յաջորդ միջոցը, որուն մասին Նոր կտակարանը կը խօսի, *երազներն* են: Գործք 16-ին մէջ պատմութիւն մը կայ այն մասին, որ Պօղոս երազ տեսաւ: Երազին մէջ մակեդոնացի մը մօտեցաւ Պօղոսին՝ ըսելով. «Կը խնդրեմ, եկրոր եւ օգնէ մեզ»: Սուրբ Հոգին գործածեց այդ երազը՝ ըսելով. «Գնա՛ Մակեդոնիա»: Որոշ մարդոց հետ Աստուած ատելի յաճախ երազներով կը խօսէր, քան միաներուն

հետ: Աստուած յաճախ երազներով կը խօսէր կնոջս հետ, բայց ինձի հետ Ան սովորաբար կը խօսի ներքին վկայութեամբ եւ մեղմ ու բարակ ձայնով:

Ըստ Աստուծոյ խօսքին՝ յաջորդ միջոցը, որմով Աստուած կը խօսի մարդոց հետ, *տեսիլքներն* են: Պօղոս կը նկարագրէր իր տեսիլքը՝ ըսելով, որ չէր գիտեր՝ մարմինին մէջ էր, թէ՛ մարմինէն դուրս (տես Բ. Կորնթացիս 12.2): Տեսիլքի պարագային դուք չէք գիտեր՝ մարմնի մէջ էք, թէ մարմինէ դուրս, բայց դուք բառացիօրէն կը տեսնէք հոգեւոր աշխարհը: 1989 թուականին, երբ իմ հովիւը ըսաւ Լիզային եւ ինձի, որ ժամանակն է մեր ծառայութիւնը սկսելու, ան տեսիլքի շնորհիւ առաւ այդ քայլը: Աշխատակազմի հաւաքոյթին ան ըսաւ. «Անցնող գիշեր ես տեսիլք մը տեսայ, որ կարծես հեռատեսիլի մը պատատառով կը դիտէի: Հովիւներ, ձեզմէ մէկը կարճ ժամանակ ետք կը լքէ մեզ: Դուն պիտի ճամբորդես ամբողջ երկրով մէկ եւ օրհնութիւն պիտի ըլլաս Քրիստոսի Մարմինին համար»: Ան շարունակեց. «Ճոն Պիվիր, դուն ես այդ մարդը»: Աստուած նոյն բանը ըսած էր ինձի աղօթքիս մէջ, մօտաւորապէս ութը ամիս առաջ, այնպէս որ անոր խօսքը հաստատութիւն էր ինձի համար:

Վերջին միջոցը, որ ըստ Նոր կտակարանին, Աստուած կը խօսի մեզի հետ, *միտքի յափշտակութիւնն* է: Պետրոսի հետ միտքի յափշտակութիւն տեղի ունեցաւ Գործք 10-րդ գլուխին մէջ: Միտքի յափշտակութեան պարագային ձեր զգայարանները ժամանակաւորապէս կը դադրին գործելէն: Ահա թէ այն ինչով կը տարբերի տեսիլքէն. տեսիլքի պարագային ձեր զգայարանները լիարժէք կը գործեն. դուք կրնաք տեղաշարժիլ...: Թէ՛ Պօղոսը, թէ՛ Յովհաննէսը կրնային տեղաշարժիլ, երբ երկինք գացին: Միտքի յափշտակութեան մէջ դուք ինչ որ բան մը կը տեսնէք, եւ Աստուծոյ ձայնը կը լսէք: Մնացած բոլոր զգայարանները ժամանակաւորապէս չեն գործեր:

Բայց ինչոր մէկը կրնայ հարցում մը ուղղել. «Իսկ ի՞նչ կ'ըսէք Գեղէօնի բուրդին մասին»: Բուրդը՝ Աստուծմէ լսելու հինկտակարանեան միջոց է: Դուք պէտք է վերցնէք այն ամէնը, ինչ որ Հին կտակարանին մէջ էր, եւ քննէք խաչի տեսանկիւնէն: Խաչը կ'անցընէ, վերատեսութեան կ'ենթարկէ կամ կը ջնջէ ամէն ինչ, որ բերած էք իր առջեւ: Երբ բուրդը կը դիտարկէք խաչի լոյսի տակ, կը տեսնէք, որ խաչը կը ջնջէ անիկա: Աստուածաշունչին մէջ կ'ըսուի. «Որովհետեւ, անոնք, որ *Աստուծոյ Հոգիով* կը վարուին (կամ՝ կ'առաջնորդուին)», ոչ թէ

«անոնք, որ բուրդերով կ'առաջնորդուին» (տե՛ս Հռովմայեցիս 8.14): Հին կտակարանին մէջ Աստուծոյ Հոգին չէր բնակեր մարդոց ներսը, այնպէս որ Աստուած կը խօսէր անոնց հետ ուրիշ կերպով, եւ բուրդը անոր վառ օրինակներէն մէկն է: Անձամբ ես չեմ խրախուսեր Նոր կտակարանի հաւատացեալներուն օգտագործելու բուրդը՝ Աստուծմէ լսելու համար: Աշխատեցէք առաջնորդուիլ խօսքով եւ ներքին վկայութեամբ: Բուրդը ֆիզիքական իրողութեան մէջ է, եւ դուք դժուար թէ փափաքիք շփոթիլ՝ գործելով այդ իրողութեան մէջ: Մենք կանչուած ենք Հոգիին մէջ ապրելու եւ վարուելու համար:

Լիզա. Ես կը փափաքիմ մէկ բան աւելցնել: Բոլոր այս պատասխանները կը վերաբերէին հոգեւոր ճշմարտութեան: Մենք նոյնպէս շատ յստակ պատուիրան ունինք այն մասին, որ եթէ ձեր եղբայրը կարիքի մէջ տեսնէք, մի՛ գոցէք ձեր գուրջը անոնցմէ (տե՛ս Ա. Յովհաննէս 3.16-18): Երբեմն պէտք չկայ, որ ձայն լսէք երկինքէն: Երբեմն դուք պարզապէս պէտք է *տեսնէք* կամ *լսէք* ինչ որ մէկուն կարիքը: Երբ մենք *լսեցինք*, որ մարդիկ կը պատռէին մեր գիրքի էջերը եւ կը փոխանցէին մէկը միւսին, մենք ըսինք. «Ինչպէ՞ս կրնանք մեր գուրջը փակել»: Մենք երբեք չտեսանք ատիկա, բայց երբ *լսեցինք* այդ մասին, ըսինք. «Մենք պիտի պատասխանենք այդ կարիքին»:

Ճոն. Երբ ես լսեցի աղջիկներուն մասին, որոնք թրաֆիքինկի (մարդկային անօրէն առեւտուրի) կ'ենթարկուին, Աստուած չխօսեցաւ ինձի հետ, բայց ես ըսի. «Լիզա, մենք պէտք է օգնենք»:

Լիզա. Ես *կարդացի* այդ մասին ամսագրի մը մէջ, տեսայ ատիկա տարբեր երկիրներու մէջ: Երբեմն մարդիկ նշան, միտքի յափշտակութիւն, տեսիլք կամ երազ կը սպասեն այն պարագային, երբ Աստուածաշունչին մէջ կ'ըսուի. «Եթէ *տեսնես...*»:

Ճոն. «Եթէ տեսնես եղբորդ կարիքի մէջ»:

Լիզա. Եւ մենք կը սկսինք մեր եղբորմէն կամ քրոջմէն, որ կարիքի մէջ է: Մենք կը սկսինք կարիքաւոր քրիստոնեաներէն: Մենք կը սկսինք անոնցմէ, որոնց որ կրնանք տեսնել, անոնցմէ, որոնց կրնանք հպիլ, անոնցմէ, որոնց ձայնը կրնանք լսել, եւ մենք չենք կրնար մեր գուրջը փակել: Ես յայտնաբերած եմ, որ ամէն անգամ, երբ մենք կ'արծագանգենք անոր, ինչ որ կը տեսնենք

Ֆիզիքական իրականության մէջ, Աստուած կը վստահի անելին՝ հոգեւոր իրականության մէջ: Ան կ'ըսէ. «Ես կը տեսնեմ, որ դուն հաւատարիմ ես ասոր մէջ: Ես կրնամ քիչ մը անելին վստահիլ քեզի հաւատքի իրականության մէջ»:

Յաւելեալ պատասխաններ Ճոնէն

Հարցում. Ինչ կը նշանակէ՝ հայիոյութիւն Սուրբ Հոգիին հանդէպ:

Ճոն. Յիսուս կը խօսէր Սուրբ Հոգիին հայիոյելուն մասին Մատթէոս 12.22-32, Մարկոս 3.22-30 եւ Ղուկաս 12.10 խօսքերուն մէջ: Մատթէոսի եւ Մարկոսի Աւետարաններուն մէջ մենք պարզ կը տեսնենք Անոր խօսքերուն համահաստուածը: Կրօնական առաջնորդները մեղադրեցին Յիսուսը, որ Ան դէւեր կը հանէր դէւերու իշխան՝ Բէեղզբբուղի ուժով: Ճիշդ այդ ժամանակ Յիսուս ըսաւ. «Ամէն մեղք եւ հայիոյութիւն կը ներուի մարդոց, բայց Սուրբ Հոգիին դէմ հայիոյութիւնը չի ներուիր մարդոց» (Մատթէոս 12.31): Այդ պատճառով իսկ, հայիոյել Սուրբ Հոգիին կը նշանակէ՝ բացայայտ կերպով չարախօսել Անոր մասին, մասնաւորապէս՝ խօսիլ Սուրբ Հոգիին դրսեւորումներուն մասին այնպէս, ըսես անոնք սատանային գործերն են:

Հարցում. Արդեօք Աստուածաշունչի համաձայն է՝ աղօթել եւ երգել Սուրբ Հոգիին ճիշդ այնպէս, ինչպէս Հօրը կամ Որդիին:

Ճոն. Միանշանակ՝ այո: Սուրբ Հոգին Աստուած է, եւ Անոր պէտք է երկրպագել Աստուծոյ պէս: Յովհաննէս 4.24-ին մէջ գրուած է. «Աստուած՝ Հոգի է, եւ Անոր երկրպագողները պէտք է Հոգիով եւ ճշմարտութեամբ երկրպագեն»: Ես կը հաւատամ, որ դուք պէտք է փառաբանէք եւ երկրպագէք Սուրբ Հոգիին ճիշդ այնպէս, ինչպէս կը փառաբանէք Հայր Աստուծոյ եւ Որդիին Աստուծոյ:

Հարցում. Ինչպէս գիտնալ, թէ ինչպիսի աղօթքներ եւ երգեր պէտք է ուղղել Հոգիին:

Ճոն. Յիսուս ըսաւ Իր աշակերտներուն..

«Տակաւին շատ բան ունիմ ձեզի ըսելու, բայց հիմա չեք կրնար հասկնալ: Բայց երբ որ Ան՝ ճշմարտութեան Հոգին գայ, Ան պիտի առաջնորդէ ձեզ ամէն ճշմարտութեան մէջ, որովհետեւ Իր անձէն չի խօսիր, այլ ինչ որ կը լսէ, կը խօսի, եւ գալու բաները կը պատմէ ձեզի: Ան Ինծի կը փառաւորէ, որովհետեւ Ինծմէ կ'առնէ եւ կը պատմէ ձեզի...

Քիչ մը ժամանակ վերջ, եւ չէք տեսներ Ձիւ. եւ դարձեալ քիչ մը, եւ կը տեսնէք Ինծի, որովհետեւ Ես Հօր մօտ կ'երթամ:

Եւ այն օրը ոչ մէկ բան կը հարցնէք Ինծի. Ճշմարիտ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ՛ ինչ որ Հօրմէն խնդրէք Իմ անունով, կու տայ ձեզի» (Յովհաննէս 16.12-14, 16, 23):

Մենք կը խնդրենք Հայր Աստուծմէ Յիսուսի *անունով* (իշխանութիւնով): Անկէ ետք մենք կը շփուինք Սուրբ Հոգիին հետ (այսինքն՝ կը հաղորդակցինք, կը զրուցենք կամ հարցումներ կ'ուղղենք): Այս գիրքը յատուկ Սուրբ Հոգիին հետ շփուելու մասին է:

Հարցում. Արդե՞ք Աստուածաշունչին կը համապատասխանէ՞ խնդրել Սուրբ Հոգիէն՝ «գալ» հաւաքոյթին կամ ծառայութեան՝ հաշուի առնելով, որ Ան ամենագոյ է:

Ճոն. Այո: Աստուածաշունչը կը սորվեցնէ թէ՛ Աստուծոյ ամենագոյ ըլլալուն, թէ՛ Անոր յայտնուած ներկայութեան մասին: Դաւիթի խօսքերէն մենք կը տեսնենք, որ Աստուած ամենակարող է. .

«Ո՛ր երթամ Քու Հոգիէն,
Եւ Քու երեսէն ո՛ր փախչիմ:
Եթէ Երկինք ելլեմ, Դուն հոն ես.
Եթէ դժոխքը անկողինս ընեմ, ահա Դուն հոն ես.
Եթէ արշալոյսին թեւերը առնեմ
Եւ ծովուն վերջի ծայրերը բնակիմ,
Հոն ալ Քու ձեռքդ ինծի պէտի առաջնորդէ,
Ու Քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ»:
(Սաղմոս 139.7-10)

Աստուածաշունչին մէջ նոյնպէս գրուած է, որ Աստուած երբեք չի ձգեր եւ չի լքեր մեզ (տե՛ս Եբրայեցիս 13.5): Այս խօսքերուն մէջ կրկին գրուած է Անոր ամենագոյութեան մասին՝ Աստուծոյ այն ներկայութեան մասին, որ մշտապէս ամէնուր է:

Բացի այդ, կայ նաեւ Աստուծոյ յայտնուած ներկայութիւնը: *Յայտնել* կը նշանակէ՝ դարձնել անտեսանելին՝ տեսանելի, չլուսածը՝ լսելի, կամ անյայտը՝ յայտնի: Երբ Աստուած կը յայտնէ Իր ներկայութիւնը, մենք կրնանք Անոր մեր զգայարաններով ընկալել (տե՛ս Յովհաննէս 14.19-24): Ես կը հաւատամ, որ այսպիսի խնդրանք մը կը համապատասխանէ Աստուածաշունչին:

Հարցում. Ինչո՞ւ մենք կ'աղօթենք, որ Աստուած թափէ Իր Հոգին: Միթէ՞ Ըն արդէն չէ ըրած ատիկա:

Ճո՞ն. Զաքարեայ 10.1-ին մէջ գրուած է. «Խնդրեցէք Տէրոջմէն անձրեւ, վերջին անձրեւի ժամանակ...»: Սուրբ գիրքին մէջ անձրեւը մշտապէս կը խորհրդանշէ Սուրբ Հոգիին թափման: Ես կը հաւատամ, որ երբ կը խնդրենք Աստուծմէն՝ որ թափէ Իր Հոգին, մենք կը խնդրենք Հոգիին թարմ անձրեւը մեր եկեղեցիներուն, քաղաքներուն եւ ազգերուն վրայ: Մենք կը խնդրենք Անոր յայտնուած ներկայութեան աւելի մեծ դրսեւորում, որ կը զօրացնէ մեզ՝ կատարելու Անոր գործը, եւ կ'առաջնորդէ աւելի մեծ հունձքի՝ Աստուծոյ թագաւորութեան համար:

Հարցում. Ինչպէ՞ս կրնամ աւելի խորունկ փոխյարաբերութիւններ ունենալ Սուրբ Հոգիին հետ: Ինչպէ՞ս կրնամ աւելի շատ վերապրիլ Անոր ներկայութիւնն ու զօրութիւնը:

Ճո՞ն. Ժամանակ անցընելով Աստուծոյ եւ Անոր Խօսքին հետ: Դուք կրնաք աւելի մանրամասն կարդալ այն մասին, թէ Աստուծոյ հետ մտերմութիւնը ինչպէս զարգացնել, այս գիրքին երկրորդ եւ երրորդ գլուխներուն մէջ:

Հարցում. Եթէ Սուրբ Հոգին ամէն ինչ գիտէ, ինչո՞ւ մենք պէտք է Աստուածաշունչը կարդանք:

Ճո՞ն. Աստուած տուած է մեզի Իր կողմէն ոգեշնչուած Սուրբ գիրքերը, որովհետեւ ատոնք «օգտակար են ուսուցման, յանդիմանելու, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, որպէսզի Աստուծոյ ծառան ամբողջովին ամէն բարի գործի համար սպառազինուած ըլլայ» (Բ. Տիմոթէոս 3.16-17, NIV): Սուրբ Հոգին կ'օգտագործէ այս գրուած Խօսքը (յունարէնի մէջ՝ *լոկոս*), որպէսզի մեզի տայ Իր՝ ըսուած Խօսքը (*ռեմա*): Հոգին կը կենդանացնէ *լոկոսը*, եւ այն կը դառնայ *ռեմա*, որն ուղղուած է մեզի: Եթէ մենք ժամանակ չենք անցընել *լոկոսի* մէջ՝ բանալով մեր սրտերը Հոգիին համար, ապա շատ աւելի դժուարութեամբ կը ստանանք *ռեմա* Խօսքը: Չինաստանի ընդատակեայ եկեղեցին լեցուած էր Հոգիով,

բայց տարիներ շարունակ այդ հաւատացեալները յուսահատօրէն Աստուածաշունչերու կարիքը ունէին: Անոնք կը փափաքէին կարգալ Աստուծոյ Խօսքը, որպէսզի Սուրբ Հոգին կարենար խօսիլ իրենց հետ Խօսքի միջոցով եւ կենդանացնէր ատիկա իրենց սրտերուն մէջ: Այնքան կարեւոր է, որ դուք Աստուածաշունչ կարդաք: Աստուծոյ Խօսքը եւ Աստուծոյ Հոգին միասին կը գործեն: Ասիկա՝ համագործակցութիւն է:

Յիշեցէք, որ Աստուածաշունչին մէջ Աստուծոյ խորհուրդները գրուած են, եւ Սուրբ Հոգին այդ խորհուրդները կը յայտնէ մեզի: Եթէ որեւէ հատուած կարդաք Սուրբ գիրքէն՝ առանց Հոգիին ներգործութեան, դուք միայն կը տեսնէք, թէ ինչ գրուած է այդտեղ մարդկային լեզուով: Բայց Հոգիին միջոցով դուք կրնաք հասկնալ այդ հատուածին հոգեւոր նշանակութիւնը, որ կը գերազանցէ մարդկային միտքը, որովհետեւ Հոգիին մէջ մենք Քրիստոսի միտքը ունինք:

«Այլ՝ Աստուծոյ ծածուկ իմաստութիւնը կը խօսինք խորհուրդով, որ Աստուած յափտենականութենէն առաջ սահմանեց ատիկա մեր փառքին համար: Որ այս աշխարհի իշխաններէն ոչ մէկը ճանչցաւ, քանզի, եթէ ճանչցած ըլլային, փառքի Տէրոջը խաչը չէին հաներ: Այլ՝ ինչպէս գրուած է՝ ինչ որ ասք չտեսաւ եւ ականջ չլսեց եւ մարդու սրտին մէջ տեղ չունեցաւ, Աստուած անիկա պատրաստեց Իրեն սիրողներուն համար: Բայց Աստուած մեզի Իր Հոգիով յայտնեց, որովհետեւ Հոգին ամէն բաները կը քննէ եւ Աստուծոյ խորքն ալ: Որովհետեւ մարդոցմէ ղվ գիտէ մարդուն բաները, եթէ ոչ՝ մարդու հոգին, որ իր մէջ է. այնպէս ալ Աստուծոյ բաները ոչ մէկը գիտէ, եթէ ոչ՝ Աստուծոյ Հոգին: Եւ մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առինք, այլ՝ այն Հոգին, որ Աստուծմէ է, որ ճանչնանք այն բաները, որ Աստուծմէ տրուեցան մեզի: Որն ալ կը խօսինք՝ ոչ թէ մարդկային իմաստութեան սորված խօսքերով, այլ Սուրբ Հոգիին սորվեցուցածներով՝ հոգեւորները հոգեւորներու հետ համեմատելով: Բայց շնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չ'ընդունիր, որովհետեւ անոնք յիմարութիւն են իրեն համար, եւ չի կրնար գիտնալ, որովհետեւ հոգեւոր կերպով կը քննուին: Բայց հոգեւոր մարդը ամէն բան կը քննէ, եւ ինք ոչ մէկէն կը քննուի: Որովհետեւ ղվ գիտցաւ Տէրոջ միտքը, որ բան մը սորվեցնէ անոր. բայց մենք Քրիստոսի միտքը ունինք» (Ա. Կորնթացիս 2.7-16):

Հարցում. Այն եկեղեցիին մէջ, ուր ես կը յաճախեմ, հոգեւոր չորութիւն կայ: Ինչ կրնամ ընել՝ որպէս առանձին անդամ, որպէսզի Հոգիին ներկայութիւնը աւելնայ այդտեղ:

Ճոն. Եթէ դուք եկեղեցիին մէջ առաջնորդ չէք, միակ բանը, որ կրնաք ընել՝ աղօթելն է: Առաջինը՝ հրաւիրեցէք Հոգին ձեր կեանքին մէջ, որպէսզի բերէք Անոր յայտնուած ներկայութիւնը եկեղեցի՝ ձեզի հետ: Երկրորդը՝ խնդրեցէք, որպէսզի Աստուած աշխատի ձեր առաջնորդներու սրտերուն հետ, եւ անոնք աւելի բաց դառնան Սուրբ Հոգիի ներկայութեան դրսեւորումներուն հանդէպ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Եթե դուք կ'ուսումնասիրեք «Սուրբ Հոգի. Ներածություն» գիրքը՝ որպես «Մեակնճր Հասարածոյ»ի ամբողջական դասընթացքի մաս, կը խնդրենք, որ դիպեք ուսումնական 6-րդ տեսանիշը:

- 1| Բոլոր հաւատացեալները հոգեւոր պարգեւները գործածելու կարողութիւն ունին: Ինչպէս կարելի է այդ պարգեւները գործածել՝ պաշտօնական «ծառայութեան» շրջանակներէն դուրս:
- 2| Երբ դուք կը հաւատաք, որ Աստուած որեւէ որոշումի վերաբերեալ խաղաղութիւն կու տայ ձեզի, ինչո՞վ կրնաք համոզուած ըլլալ, որ ճշմարտապէս Անորմէ լսած էք:
- 3| Արդե՞ծք Սուրբ Հոգին երբեք ձեր հետ խօսած է ոչ թէ անձամբ, այլ՝ ձեր ամուսինին կամ կնոջ միջոցով: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ան այդ կերպով կը գործէ, եւ արդե՞ծք կրնաք այդ առաջնորդութիւնը ընդունիլ ձեր կեանքին մէջ:
- 4| Երբ ձեր կեանքին մէջ պէտք կ'ունենաք լուրջ որոշումներ կայացնելու եւ կը թուայ՝ առաջնորդութիւն չէք գտներ, ինչ կրնաք ընել:

Կարդացէք Առակաց 11.14, 15:22, 24:6 եւ Հռովմայեցի 8.26-27

- 5| Դուք կը հաւատա՞ք, որ այսօր Աստուած դեռ Իր ժողովուրդին հետ կը խօսի: Ան ինչպէ՞ս խօսած է ձեզի հետ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ինչպէս փրկութիւն ստանալ

«Վասնզի եթէ քու բերնով դասանիս, որ Յիսուսը Տէր է, ու սրբիդ մէջ հասարաս, թէ Աստուած Անոր մտնելներէն յարութիւն Կրուա, պիտի փրկուիս: Որովհետեւ քու սրբի հասարքով է, որ կ'արդարանաս Աստուծոյ առջեւ, եւ քու բերանի դասանաւորով է, որ կը փրկուիս»:

— (Հռովմայեցիս 10.9-10, NLT)

Սուրբ Հոգին կը փափաքի ձեզի հետ ամէն վայրկեան շփուիլ, որպէսզի խրախուսէ եւ սպառազինէ ձեզ՝ զԱստուած ճանչնալու եւ Անոր թագաւորութիւնը տարածելու համար: Բայց առաջին քայլը դէպի Աստուծոյ Հոգիին հետ մտերմութիւն՝ Աստուծոյ Որդի Յիսուս Քրիստոսի միջոցով փրկութիւն ստանալն է:

Յիսուսի մահուան եւ յարութեան միջոցով Աստուած ճանապարհ բացաւ, որպէսզի Անոր թագաւորութեան մէջ մուտք գործէք՝ որպէս սիրելի որդի կամ դուստր: Յիսուսի զոհը խաչին վրայ, ծրիաբար ձեզի յաւիտենական եւ առատ կեանք շնորհեց: Փրկութիւնը՝ Աստուծոյ պարգեւն է ձեզի: Դուք չէք կրնար որեւէ բան ընել՝ փրկութիւնը շահելու կամ ատոր արժանանալու համար:

Այս սուղ պարգեւը ստանալու համար նախ՝ խոստովանեցէք, որ մեղաւոր էք՝ ձեր Արարիչէն անկախ ապրելու մէջ (որովհետեւ ասիկա բոլոր մեղքերու պատճառն է, որ դուք երբեք գործած էք): Մեղքերէն ապաշխարելը՝ փրկութիւնը ստանալու կարեւորագոյն պայմաններէն մէկն է: Պետրոս պարզ ըսաւ ասիկա Գործք առաքելոց գիրքին մէջ. այն օրը, երբ 5.000 հոգի փրկուեցաւ. «Ուրեմն ապաշխարեցէք եւ դարձի եկէք, որ ձեր մեղքերը ջնջուին» (Գործք 3.19, NKJV): Սուրբ գիրքը կը յայտարարէ, որ մեզմէ իւրաքանչիւրը ծնած է՝ որպէս մեղքի ստրուկ: Այդ ստրկութեան արմատը՝ Ադամի մեղքն է, որ առաջինը յամառօրէն Աստուծոյ չհնազանդեցաւ: Ապաշխարութիւնը որոշում է՝ ձգելու հնազանդութիւնը սեփական անձին եւ սատանային, որ սուտի հայրն է, եւ հնազանդելու մեր նոր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսին, որ Իր կեանքը տուաւ մեզի համար:

Ձեր կեանքին մէջ իշխանութիւնը պէտք է Յիսուսին տաք: Յիսուսին Տէր դարձնելը կը նշանակէ՝ դարձնել ձեր կեանքը (հոգին, անձը եւ մարմինը) եւ այն ամէնը, ինչ որ ունիք, Անոր սեփականութիւնը:

Անոր իշխանութիւնը ձեր կեանքին մէջ բացառիկ կը դառնայ: Այն պահուն, երբ կ'ընէք ասիկա, Աստուած կ'ազատէ ձեզի խաւարէն եւ կը տեղափոխէ Իր թագաւորութեան լոյսի եւ փառքին մէջ: Պարզ ըսելով՝ դուք մահէն դէպի կեանք կ'անցնիք. դուք Անոր զաւակը կը դառնաք:

Եթէ կը փափաքիք փրկութիւնը Յիսուսին միջոցով ընդունիլ, կրկնեցէք այս աղօթքը.

Աստուած, որ Երկինքն ես, ես կը գիտակցիմ, որ մեղաւոր եմ եւ ինկած եմ Քու արդար չափանիշէն: Ես յաւիտենական դատաստանի արժանի եմ մեղքի պատճառով: Շնորհակալութիւն, որ ինձի այս վիճակին մէջ չես ձգեր, որովհետեւ ես կը հաւատամ՝ Դուն ուղարկեցիր Քու միածին Որդին՝ Յիսուս Քրիստոսը, որ կոյս Մարիամէն ծնաւ, որպէսզի Ան ինձի համար մահանար եւ Խաչին վրայ իմ դատաստանը կրէր: Ես կը հաւատամ, որ Ան յարութիւն առաւ երրորդ օրը, եւ այժմ նստած է Քու աջ կողմը՝ որպէս Իմ Տէր եւ Փրկիչ: Այսօր ես կ'ապաշխարեմ, որ բաժնուած էի Քեզմէ, եւ հիմա՛ ես իմ կեանքը ամբողջովին Յիսուսի իշխանութեան կը յանձնեմ:

Յիսուս, ես կը դաւանիմ Քեզ՝ որպէս Իմ Տէր եւ Փրկիչ: Եկ՛ր Քու Հոգիով կեանքիս մէջ: Փոխէ՛ անձս՝ Աստուծոյ զաւակ դարձնելով: Ես կ'որանամ այն ամէնը, ինչ որ կատարած է խաւարի հետ եւ ինչին, որ ես ժամանակ մը կը յարէի: Այս վայրկեանէն սկսեալ՝ ես այլեւս ինձի համար չեմ ապրիր, այլ կ'ապրիմ Քու շնորհքով եւ Քեզի համար, քանի որ Դուն մահացար, որպէսզի ես կարենամ յաւիտեան ապրիլ:

Շնորհակալութիւն, Տէ՛ր: Այժմ իմ կեանքը բոլորովին Քու ձեռքերուն մէջ է, եւ համաձայն Քու Խօսքի՛ ես ամօթով չեմ մնար:

Բարի գալնատ Աստուծոյ ընտանիք: Ես կը քաջալերեմ ձեզ, որ այս հրաշալի լուրը այլ հաւատացեալներու պատմէք: Կարեւոր է, որ դուք միանաք տեղական եկեղեցիի մը, ուր կը հաւատան Աստուածաշունչին, եւ հաղորդակցէք այլ մարդոց հետ, որոնք կրնան հաւատքի մէջ քաջալերել ձեզ: Ազատօրէն կապուեցէք ձեր ծառայութեան հետ, որպէսզի օգնութիւն ստանաք՝ ձեր տարածաշրջանին մէջ եկեղեցի գտնելու համար (այցելեցէք MessengerInternational.org):

Դուք ձեր կեանքի ամենաուշագրաւ ճանապարհորդութիւնը սկսած էք, որն է՝ մտերմութիւն Բարձրեալ Աստուծոյ հետ: Ամէն օր աւելի մտերմացէք Անոր հետ:

ՆՇՈՒՄՆԵՐ

Գլուխ 1

1. Ճէյմս Սթրոնկ. հատոր 1, «Յունարէն Նոր կտակարանի եւ երբայերէն Աստուածաշունչի համառօտ բառարան», էջ 44 (Պելինկէմ, Ուաշինկթոն. «Logos Bible Software, 2009 թ.»), (այսուհետեւ՝ Սթրոնկի համառօտ բառարան):
2. Վ. Է. Ուայն, Մերիլ Ֆ. Անկէր եւ Ուիլլիամ Ուայթ Կրտսեր. հատոր 2, «Հին եւ Նոր կտակարաններու բառերու ամբողջական բացատրական բառարան», էջ 29 (Նեշուիլ, Տենեսի. «Thomas Nelson Publishing», 1996թ.), (այսուհետեւ՝ Ուայնի բացատրական բառարան):
3. Նոյնը, էջ 111:
4. Ռիք Ռեննէր. «Յունարէնի գանձեր» (Տալսա, Օքլահոմա «Teach All Nations», 2003թ.), էջ 737 (այսուհետեւ՝ Յունարէնի գանձեր):
5. Նոյնը, էջ 26:

Գլուխ 1 սերտողութիւններ

1. Է. Ու. Թոզէր. «Է. Ու. Թոզէրի գանձարանը» (Հարիսպուրկ, Փենսիլվանիա, «Christian Publications Inc.», 1980թ.), էջեր 290-291:
2. Նոյնը, էջեր 295-296:
3. Էնտրու Մյուրի. «Սուրբ Հոգին՝ Ընդհանրի մէջ», «Herald of His Coming», Փետրուար, 2013թ., էջ 8:
4. Լէսթըր Սամրալ. «Հոգի, շունչ եւ մարմին» (Նիու Քենզինկթըն, Փենսիլվանիա. «Whitaker House», 1995թ.), էջ 113:
5. Ռ. Ա. Տորէյ. «Սուրբ Հոգիին զօրութիւնը հաւատացեալի մէջ», տէս նշում 3, էջ 1:

Գլուխ 2

1. Աստուածաբանութեան տօքթոր Սփիրոս Զոսիաթեսի խմբ., «Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան» (Չատանուկա, Տենեսի, «AMG Publishers», 1992թ.), «մետոքոս» բառայօդուածը:

Գլուխ 2. Սերտողութիւններ

1. Հենրի Թ. Պլեքեյի եւ Քլաուս Վ. Քինկ. «Վերապրել Աստուծոյն» (Նեշուիլ, Տենեսի «Broadman & Holman Publishers», 1994 թ.), էջեր 86-87:
2. Նոյնը, էջ 87:
3. Նոյնը, էջեր 87-88:
4. Եղբայր Լոուրէնս
5. «Գործադրել Աստուծոյ ներկայութիւնը» (Նիու Քենզինկթըն, Փենսիլվանիա, «Whitaker House», 1982թ.), էջեր 61, 65:
6. Նոյնը, էջ 37:
7. Նոյնը, էջեր 41, 46, 47, 49:
8. Քեթրին Քուլման. «Աշխարհի մեծագոյն զօրութիւնը» (Նորթ Պրունսսիք, Նիու Ճըրսի, «Bridge-Logos Publishers», 1997թ.), էջ 122:
9. «Յունարէնի գանձեր», էջ 116:

Գլուխ 3 Սերտողութիւններ

1. Ֆրէնսիս Ֆրէնճիփէյն. «Սրբութիւն, ճշմարտութիւն եւ Աստուծոյ ներկայութիւնը» (Սետար Ռեփիտս, Այովա, «Arrow Publications», 1999թ.), էջեր 56-57:
2. Նոյնը, էջեր 58-59:
3. Կարդացէ՛ք Հռովմայեցիս 1.17, Բ. Կորնթացիս 3.18:
4. Չ. Սիէրճըն. «Ողջ շնորհքը» (Նիու Քենզինկթըն, Փենսիլվանիա, «Whitaker House», 1981թ.), էջ 115:
5. Ժաննա Քիյոն. «Ճանչնալ Յիսուս Քրիստոսի խորութիւնները» Ճեքսընվիլ, Ֆլորիտա, «SeedSowers Publishing», 1975թ.), էջ 3:
6. Նոյնը, էջ 11:

Գլուխ 4

1. Ռիք Ռեննէր. «Տինամիք զոյգ՝ Սուրբ Հոգին եւ դուն», էջ 105 (Լէք Մերի, Ֆլորիտա, «Charisma House», 1994):
2. Ճոզէֆ Հենրի Թայլըր. «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն բառարան՝ Քրիստոսի եւ Վիկտորի «Կլավիս Նովի Տեսարամենտի» աշխատութեան թարգմանութիւնը», էջ 509 (Նիու Եորք, «Harper & Brothers», 1889թ.):
3. Մ. Կ. Իսթըն. «Իսթընի աստուածաշնչեան բառարան» (Նիու Եորք, «Harper & Brothers», 1893թ.):

Գլուխ 4. Սերտողութիւններ

1. Կարդացէ՛ք Ելից 3.2-4, 13.21, 14.24, Սաղմոս 78.14:
2. Չարլզ Սփերճըն. «Չորութիւնը՝ Աստուծոյ փառաբանելու մէջ» (Նիու Քենզինկթըն, Փենսիլվանիա, «Whitaker House», 1998թ.), էջ 31:
3. Ճոզէֆ Հ. Թայլըր, Աստուածաբանութեան սօքթօր. «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն բառարան» (Կրանտ Ռեփիտս, Միչիկըն, «Baker Book House», 1977թ.) էջ 517, փոփոխուած:
4. Սմիթ Վիկկլսվորթ. «Հարաճուն հաւատք» (Սփրինկֆիլտ, Միսսուրի, «Gospel Publishing House», 1971 թ.), էջեր 96-97:
5. Ռէյնհարտ Պոնկէ. «Ապրիլ կրակոտ կեանքով» (Օռլանտո, Ֆլորիտա, «E-R Productions LLC», 2009թ.), էջ 237:
6. Նոյնը, էջեր 274, 369:
7. Վոչմըն Նի. «Եկէ՛ք աղօթենք» (Նիու Եորք, «Christian Fellowship Publishers, Inc», 1997թ.), էջ 71:
8. Քեթրին Քուլման. «Աշխարհի մեծագոյն զօրութիւնը» (Նորթ Պրունսվիլք, Նիու Ճըրսի, «Bridge-Logos Publishers», 1997թ.), էջ 79:

Գլուխ 5

1. Աստուածաբանութեան սօքթօր Սփիրոս Զոտիիաթեսի խմբ., «Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան» (Չատանուկա, Տենեսի, «AMG Publishers», 1992թ.), «միստերիոն» բառայօդուածը:
2. Յովհաննէս Պ. Լոու եւ Եուճին Ալպերթ Նիտա. Հատոր 1, «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն իմաստաբանական բառարան», 2-րդ հրատարակութեան ելեկտրոնային հրատարակութիւն, էջ 383 (Նիու Եորք. «United Bible Societies», 1996թ.):
3. «Սթրոնկի համառօտ բառարան», էջ 51:

Գլուխ 5 Սերտողութիւններ


1. Քենըթ Հեկըն. «Ինչո՞ւ լեզուներ» (Թալսա, Օքլահոմա. «Rhema Bible Church», 1975թ.), էջեր 14-16:
2. Օզվալթ Չէմպլըոս. «Այն ամէնը, ինչ կրնամ՝ Անոր փառքին

համար» (Ուիրիլսսվիլ, Օհայո, «Barbour Publishing, Inc.», 1997թ.,) էջ 155:

3. Նոյնը:

Գլուխ 6

1. «Ուայնի բացատրական բառարան», էջ 585: Տես նշումը այս յօդուածին մէջ, ուր կը քննարկուի տարբերութիւնը «*տեկնոն*»ի եւ «*հոյոս*»ի միջեւ:
2. «Նոյ Վէպսթերի Անգլերէն լեզուի ամերիկեան բառարանի առաջին հրատարակութիւն» (Սան Ֆրանսիսքօ, «Foundation for Americal Christian Education», 1967, 1995թթ.), էջ 113:



ՄԱՏԱՆԱՅԻ ԽԱՅԾԸ

Փախել ք թշնամիին մահացու ծուղակէն: «Սատանայի խայծը» գիրքը կը բացայայտէ ամենախաբուսիկ թակարդը, որ սատանան կ'օգտագործէ՝ հաւատացեալներուն Աստուծոյ կամքէն հեռացնելու համար: Խօսքը վիրաւորանքի մասին է: Շատեր, որոնք կլլած են սատանային խայծը, եւ չեն գիտակցիր: Մի՛ խաբուիք: Դուք կը զարնուիք վիրաւորանքի հետ, բայց ձեզմէ կ'ախուած է, թէ ինչպէս կ'ազդէ ատիկա Աստուծոյ հետ ունեցած ձեր յարաբերութիւններուն վրայ: Ձեր արձագանգը կ'որոշէ ձեր ապագան: Եթէ ճիշդ կերպով յաղթահարէք վիրաւորանքը, դուք կը դառնաք աւելի ուժեղ, ոչ թէ աւելի դառնացած:

Դուք կը գտնէք այնպիսի բարդ հարցերու պատասխաններ, ինչպիսին են.

- Ի՞նչը կը դրդէ ինծի պատմելու պատմութեան իմ տեսանկիւնը:
- Ինչպէ՞ս կրնամ պայքարիլ կասկածանքի եւ անվստահութեան միտքերու դէմ:
- Ի՞նչ կրնամ ընել, որպէսզի դադրիմ վերլիշելէ անցեալի վերքերը:
- Ինչպէ՞ս նորէն վստահիմ անոնց, որոնք խոր վիրաւորանք հասցուցած են ինծի:

Այս գիրքը կ'օգնէ ձեզի խուսափելու թշնամիին «վիրաւորանքի ծուղակէն», ինչպէս եւ կը զօրացնէ ձեզ վիրաւորանքէն ազատ ապրելու համար: Վերջաւորութեան դուք կը կարենաք շփուիլ Աստուծոյ հետ՝ առանց խոչընդոտներու:



ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

Դուք այս կեանքին մէջ զօրութեան համար որոշուած էք: «Անկոտրում Հոգի» գիրքին մէջ դուք կը յայտնաբերէք, թէ ինչպէս պէտք է նայիք դժուարութիւններուն յաղթողի տեսանկիւնէն, եւ կ'իմանաք, թէ ինչպէս պէտք է յաղթահարէք ամէն մէկ նեղութիւն եւ փորձանք, որոնց հետ որ կը զարնուիք:

- Տիրացէ՛ք այն խոստումներուն եւ զօրութեան, որոնք շնորհուած են ձեզի՝ Քրիստոսի մէջ:
- Բացայատեցէ՛ք ձեր նեղութիւններու աղբիւրը:
- Յաղթականօրէն մուտք գործեցէ՛ք Հոգեւոր իշխանութեան մէջ:

Յաւելեալ միջոցներու համար այցելեցէ՛ք

www.CloudLibrary.org



Կը ցանկա՞ք աւելին՝ տեսածրեցէ՛ք պատկերակը:

ԴՈՒՔ ՊԻՏԵՔ ԱՆՈՐ ՄԱՍԻՆ ԲԱՅՅ ԱՐԴԵՕ՞Ք ԿԸ ՃԱՆՉՆԱՔ ՉԻՆՔ

Աշակերտները երեք տարի շարունակ Յիսուսին հետ էին: Անոնք Յիսուսին հետ կը քալէին եւ կը լսէին ամէն ինչ, որ ան կ'ըսէր իրենց: Այնուամենայնիւ, Յիսուս ըսաւ Իր ամենամտերիմ ընկերներուն, որ Ինք պէտք է ձգէր անոնց, որպէսզի Սուրբ Հոգին կարենար գալ, եւ անոնց համար աւելի լաւ կ'ըլլար, եթէ Ինք երթար (Յովհաննէս 16.7, 13-14): Եթէ ասիկա ճշմարիտ է աշակերտներուն համար, որոնք ամէն օր Յիսուսին հետ էին, ապա որքա՞ն աւելի մենք պէտք ունինք, որ Սուրբ Հոգին գործուն մասնակցութիւն ունենայ մեր կեանքերուն մէջ:

Ցաւօք, Հոգիին յաճախ սխալ կերպով կը հասկնան. շատերը անտեղեակ են, թէ Ով է Ան եւ ինչպէս կը յայտնուի մեզի: Սուրբ Հոգին յաճախ կը պատկերացուի որպէս «տարօրինակ» երեւոյթ մը, բայց Սստուածաշունչը պարզօրէն ցոյց կու տայ մեզի, որ Հոգին՝ անանձնական էակ չէ: Ան Անձ է եւ խոստացած է չհեռանալ ձեզմէ: Այս փոխգործուն գիրքին մէջ ճոն Պիվիրը կը հրաւիրէ ձեզ՝ անձամբ յայտնաբերելու ամենէն անտեսուած եւ սխալ հասկցուած անձնատրութիւնը եկեղեցիին մէջ Սուրբ Հոգին:

Չանց մի՛ առնէք այս զարմանալի ներածութիւնը:

Այս փոխգործուն գիրքը կ'ընդգրկէ.

- Սերտողութեան ամէնօրեայ նիւթեր:
- Հարցեր խմբային քննարկման համար:
- Յաւելեալ գլուխ, ուր Սուրբ Հոգիին մասին որոշ բարդ հարցերու պատասխաններ գետեղուած են:



Ճոն Պիվիրը եւ անոր կինը՝ Լիզան, «Մեսենճր Ինթըրնէշընլ» ծառայութեան հիմնադիրներն են: Ճոնը, որ քարոզիչ է հանրաճանաչ գրող է, կը քարոզէ ճշմարտութիւնը առանց փոխզիջումներու, համարձակութեամբ եւ ջերմեռանդութեամբ: Ան կը փափաքի սատարել տեղական եկեղեցիները եւ ապահովել առաջնորդներուն քրիստոնէական նիւթերով՝ անկախ անոնց բնակութեան վայրէն, լեզուն կամ դրամական վիճակէն: Մինչեւ օրս, անոր նիւթերը (գիրքերը) թարգմանուած են աւելի քան 60 լեզուներով: Երբ Ճոնը տունն է, սովորաբար կը փորձէ համոզել Լիզային, միասին կողք խաղան, նաեւ կը հաղորդակցի իր չորս զաւակներուն, հարսին եւ թոռնիկներուն հետ:

Յաւելեալ միջոցներու համար այցելեցէ՛ www.CloudLibrary.org

«Անուկխտուն մ'օրհնեալուդ
ղովբոս մ'անկոնս նի»



**Messenger
International**
MessengerInternational.org

Այս գիրքը նուրբ է հեղինակին կողմէն եւ վաճառքի ենթակա չէ: